



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

338

p-85

17 FEB 2010

338

ԱՌԵԿՏՐԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ
338

Ա Շ Ի Ա Ր Հ



ՊՍ.ՏՐՍ.ՍՏԵՑ

Գ. Ս. ԲՈՒԻՄԱՆԵԱՆ

ms. 1479/1

معارف نظارت جلیله سنک ۶۵۳ نومرولی و ۳۱ تموز
۱۳۱۷ تاریخلو رخصتنامه سیله طبع اولتمشدر



ԻԶՄԻՐ

ՏՊԱԳՐ. ՄԱՍՈՒՐԵԱՆ

1902

19 APR 2013

1p. 505

338
A-80

338
P011V

ԱՐԵՎԻԿԱԿԱՆ-ՏԵԼԵՍԿՈՊԻԿԱՆ
Ա. Շ Խ Ա. Բ Հ




ՊԱՏՐԱՍՏՅՑ

Պ. Ս. ԲՈՒԽԱՆԵՆԵՆԵ



1007
45613
31954

معارف نظارت جلیله سنک ۶۵۳ نومرولی و ۳۱ تموز
۱۳۱۷ تاریخلو رخصتنامه سیله طبع اولمشدر



1272

ԻԶՄԻՐ
ՏՊԱԳՐ. ՄԱՄՈՒՐՆԵՆԵ
1902

APR 28 1899

888

409

Handwritten text and stamps, including a large circular stamp with illegible text.

Handwritten text: 000000000

Handwritten text: 888888888

Handwritten text: 1899

Handwritten text: 1899



Մեծ. Բարեկամս

Գայուս Էժենի Խշեան

Կը յիշե՞ք, ամիսնիր սուսջ, աշնային իրիկուն մը, Չեր-
 տուէր, մեր սովորական խօսակցութեանց պահուն, նիւթերնիս
 նոր, հեղինակութեանց եւ մասնաւորապէս Աշխարհագրութեան
 վրայ երբ դարձաւ, մասնաւորեցիք հարեւոր բաց մը, պակասը
 գործի մը որ հարեւար անիտի կերպով պակերեղ երկրիս
 Տնտեսական, Հարսարական եւ Առեւտրական շարժումը, որ
 սակաւ հսկայ կերպարակ մը կ'առնէ շնորհիւ մարդկային
 համաձայնեղ մտքին եւ ձեռներեց ոգոյն: Հաստատեցի Չեր դի-
 տոյութիւնն ու այլ էս բան մը չըսի. սակայն լոյն ըստե՛ս
 միայն խորհիջ. կրնա՞ն ի գրախ հանել այսպիսի յոգնեցուցիչ
 գործ մը, իբրեւ ուսուցիչ արդէն ծանօթեցնուած՝ աշխա-
 տութիւնով, պիտի կրնա՞ն ասոր համար աշ ժամանակ գտնել:
 Չերկարեմ, որոշունս տուի, բարեկամս Մ. Գայուս Էժ. ա-
 նաջին խնդրակիս պատասխանեց՝ դիտելով V. Deville ի երկ-
 հասոր Manuel de Géographie Commerciale, հարեցի Կ. Պոլսոյ
 Ֆրանս. Chambre Commerciale ի 1899 ի Bulletin- ները, Alma-
 nach Hachette, քանի մը ակզիսական ու վեկեթիկեան հեղինա-
 կութիւններ եւ Ազգ. օրաթերթեր (Բիւզանդիոն եւ այլն) որոնք
 կրնային պարունակել նիւթս ընդգրկող ծանօթութիւններ: Այս
 ամենէն էք կարգն եկաւ ժամանակին, անոր աշ հարը գտայ-
 քերք վերջակէս դրի ձեռն գիշերներ բարեկամներու տուե-
 շիք այցելութիւններուս, սանձանախակեցի կիրակիներու գրօ-
 սանկներս, ինչ մըն աշ գողցայ քանի եւ հանգիստ ժամերէս,
 ու . . . գործս տեսնուած, Չեր գաղափարը մարմնաւորած եր
 գոր անս կը փոքրամ Չեզ նուիրեց:

Ասով, Ազնիւ Խշեան Էժ. շիակասար եւ մասնագիտական
 անթերի գործ մ'ըրած ըլլալու յաւակնութիւնը չունիմ, որով-

հետեւ ո՛չ մասնագէտ մ'եմ, ոչ ալ շայն միջոց ունեի ընկերու համբերասար եւ մանրախոյզ պրպտուներ, սակայն, ստով մեկսեղ, ջանացեր եւ կարեղիութեան սահմանին մեջ՝ զանց չընել անհրաժեշտ՝ անխօսի ամեն կարգի անհասներու հետափրհակ եւ օգտակար ընծայելու :

Երբ համոզուիմ թէ այս փոքրիկ ծառայութիւնս Ձեր եւ ազնիւ հասարակութեան համակրանքին արժանի եղած է, որոշած եւ հրատարակելու նաեւ ուրիշ մեկ ոչ նուազ կարեւոր աշխատութիւնս՝ «Օսմանեան Կայսրութիւն» անուանով՝ առանձին հասորով :

Ահա Ձեզի երկանկեկ բաց նաւակ մը, զոր հարկ համարեցի գրել, կանխաւ գիտնալով Ձեր այն հետաքրքիր թնաւորութիւնը, որով ո՛չ միայն չեմ գոհանար գրուած մը կարդալ, այլ կը սիրեմ գիտնալ նաեւ անոր պատասխանութեան կերպն ու միջոցները :

25 Մայիս 1901

Կիրասոն

Ձերդ

Կ. Ս. ՔՈՒՆՄԱՆԵԱՆ

Տեղե՞ն Կիրասոնի Ա.գ. Երկես Արժարանաց



ԱՌԵՒՏՐԱԿԱՆ - ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԾԽԱՐՀ

Հ Ա Մ Ա Ռ Օ Տ Ծ Ա Ն Օ Յ Ո Ւ Թ Ի Թ Ի Ի Ն Ք
Բ Ն Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Ր Հ Ի

ԳԼՈՒԽ Ա.

Ա. Բ Ն Ա Կ Ա Ն Ե Ռ Ր Ո Պ Ա

Ը Ն Չ Պ Է Ս Գաղաքական, նոյնպէս Առևտրական-Տըն. տեսական Աշխարհի համար կարևոր է գիտնալ բնականը: Ամեն մարդ գիտէ թէ հողը, դիրքն ու կլիման ինչ ազդեցութիւն կրնան ունենալ մշակութեան բաժնին մէջ:

Ընդունուած ճշմարտութիւն մ'է թէ ազդի մը ճարտարագործական յառաջխաղացութիւնը ուղիղ կը համեմատի իր ընդերկրեայ հարստութեանց և մանաւանդ հանքածուխին՝ որ աղբիւրն է բոլոր շարժիչ ուժերու և գլխաւոր միջոցը՝ որով կարելի կը լինի հայթայթել նախնական նիւթեր և կերպարանափոխել զանոնք:

Եւրոպայի տարածութիւնն է 10 միլիոն քառ. քիլոմէթր, այսինքն Ափրիկէի 1/3ը, իսկ Ասիոյ և Ամերիկայի քառորդը: Սակայն եղական է դիրքը, ամեն կողմերէն շրջապատուած ծովերով, որով կը ձևացնէ անթիւ խորշեր, ծոցեր, նեղուցներ, հրուանդաններ, թերակղզիներ և կղզեխումբեր, և որոնք անբաւ դիւրութիւն կ'ընծայեն առևտրական հաղորդակցութեանց: Շնորհիւ գիտութեան և ճարտարութեան, բնաւ արդելք մը չեն

կրնար յարուցանել իր լեռնաշարերը: Անկարելի է գտնել
Եւրոպայի մէջ երկիր մը ընդարձակ, որ լինի ամայի, ինչ-
պէս են Ասիոյ, Ափրիկէի և Աւստրալիոյ մէջ:

Եւրոպայի մէկ ուրիշ տուաւելութիւնն ալ բարեխառն
գօտին ներքև գտնուիլն է, որով ո՛չ բևեռական սառ-
նամանիքը, ո՛չ ալ Հասարակածի տօթը չեն կրնար
ներգործել:

Կեդրոնական Եւրոպա - Ալպեանք. — Ճենովայի ծոցէն
մինչև Պուտա-ֆէշթ, 1500 քիլոմէթր երկայնութեան մը
վրայ կը տարածուին Ալպեան լեռները, 3500-4500 մէթր
բարձր կատարներով, որոնք ծնունդ կուտան ջուրի մեծ
ընթացքներու: Սակայն այս մեծ զի լեռներ երբէք ատեն
մը արդելք եղած չեն հաղորդակցութեանց: Այն կողմի
բնակներ՝ գիւրանցանելի կիրճերու միջոցաւ, կրցած են
յարաբերութեան մտնել՝ զանազան կողմերու հետ:

Միջին գարու սովորական անցքն էր Պրէնըրի կիրճը:
Կը մեկնէր վենետիկէն (երբեմնի մեծագոյն հրապարակը
առուտուրի) կ'անցնէր վերոնէն Ատիճէ, Թիւրոլ, Ինս-
պրուք, ապա Օլիպուրիկէն Լէխ, որ գրամատունի մեծ
հրապարակ մ'էր, և ուրիշ մը՝ Ֆրանքֆորթ: Պրէնըրի
անցքը, հիմա, ակօսուած է երկաթապատ ճամբով մը՝
Աւստրիոյ ձեռամբ:

Գերմանիոյ գրամական աջակցութեամբ Սէն-Կոթար-
տի երկաթուղին կը կապէ Գերմանիոյ և Զուրիցերիոյ
ցանցերը Իտալականին, Ճենովա, Միլան, վենետիկ և
Թրիէստ՝ Համպուրկին, Պրեմայի և Անվերսի:

Կարպաթեան, Ապենինեան և Պիրէնեան լեռնաշղթա-
ները նոյնպէս հարթուած են երկաթուղիի ցանցերով:

Վոլիա, Դանուբ, Տնիսթեր, Տնիբեր, Էպրօ, Ռօն,
Էլպա, Հոննոս, Լուառ, նաւարկելի մեծ գետեր են,
որոնց սանտուներն են այս մեծամեծ լեռնակայտեր:

Բ. ԵՒՐՈՊԱԿԱՆ ՑԵՂԵՐ
ԵՒ
ԲԱԶՄԱՄԱՐԴՈՒԹԻՒՆ

Երկրագնդի հինգ մեծ ցամաքներէն թէև փոքրա-
գոյնը, բայց համեմատաբար՝ ամենէն բաղմամարդն է
Եւրոպա: Ունի 360,000,000 բնակիչ, այսինքն իւրաքան-
չիւր քառակուսի քիլոմէթրի վրայ 36 մարդ: Այս ցամա-
քին վրայ անհաւասար կերպով բաժնուած են մարդիկ,
Պելճիքա 220 բնակիչ առ 1 քու. քլմ. Հոլանտա՝ 149,
Անգլիա՝ 120, Իտալիա՝ 109, Գերմանիա՝ 97, Ֆրանսա՝ 72,
Մալթա՝ 539, Ճիպրալթար՝ (Անգլիոյ) 5000, Հելկոլանտ՝
(Գերմանիոյ) 3335, Թուրքիա՝ 34, Ռուսիա՝ 20, Նորվե-
կիա՝ 6: Աճումի կողմանէ Ֆրանսա ամենէն դանդաղն է:
Ռուսիոյ մէջ՝ մահերու վրայ՝ 1 միլիոն ծնունդ աւելի
տեղի կ'ունենայ տարեկան:

Քացի 20 միլիոնի չափ Թուրք, Մանկոլ, Ֆինլանտայի,
Լարոնացի և Հրէայ ժողովուրդներէ, Եւրոպական բնա-
կիչք երեք մեծ ընտանիքներու կը բաժնուին: Լատին
ընտանիք 107,2 միլիոն, Գերմանական՝ 117,8, Սլաւք 117,8:

Գ. ԵՒՐՈՊԱ ՏՆՏԵՍԱԿԱՆ

Արեւելքի արտադրութիւնք. — Եւրոպայի տենտեսա-
կան կացութեան ոչ նուազ ծանր վտանգ մ'է, իր հրա-
պարակին վրայ, Չինու և Ճաբոնի արտադրութեանց
ժաւալումը: Ամեն տարի բաղմամիւ ճարտարագործ ու-
սանողներ կը զրկուին Եւրոպա ուսանելու, ասոնք իրենց
ցեղին (գեղին) նմանելու և իւրացնելու բնական ընդու-
նակութիւնով՝ կ'ստանան պէտք եղած մտաւոր պաշարը:
Գիւրեմք օգտակար ընծայելու իրենց արտադրութեանց
և զայն դնելու գերազանց վիճակի մէջ՝ քան Եւրոպա-
կանը: Ամենուրեք ուր չինացին մրցումի մտած է եւրո-

պական դործաւորին հետ, փութացեր է ըլլալ ահարկու մրցակից մը, աւերման ու թշուառութեան պատճառ մը: Անխոնջ, հանճարեղ, ճապուկ, համբերատար և սակաւապէտ երկնից Որդիները, իրենց պահանջումի չափաւորութիւնով, ասպարէզ կը կարդան ամեն մրցումի: Մայրադոյն — Արևելքի բոլոր հրապարակները արդէն գրաւուած են իրենց վաճառքներով, շնորհիւ աժնութեան, որուն դէմ շատ դժուարին է մրցիլ:



ԳԼՈՒԽ Բ.

Ա. Բ Ն Ա Կ Ա Ն Ա Ս Ի Ա

ՈՒՐԱԼ լեռն և Ուրալ դեռ կը բաժնեն Եւրոպան Ասիայէն, թէև ասոնք որոշ սահման մը չեն: Այս լեռան երկու կողմերն ալ երկիրը հորիզոնական է, մի և նոյն անսահման, միօրինակ դաշտերը, մի և նոյն ցուրտ կլիման, նոյն փլօրան, նոյն պայիկը: Բայի տարածութեան, երկու ցամաքները կ'ընծայեն շատ մը նմանութիւն լեռներու և դաշտերու դիրքին մէջ: Հիմալայայի վրայ կը թիկնին կեդրոնական Ասիոյ սարահարթերը, Ալպեանց Չուիցերիոյ և ուրիշ սարահարթերուն նման:


Ասիոյ հարաւը վերջաւորած է երեք մեծ թերակղզիներով, Եւրոպայի նման. Արաբիան՝ իր քառանկիւնի ձևով Սպանիոյ, երկու Հնդկաստաններն ունին հանդիսութիւն իտալիոյ, Հիմալայան՝ Ալպեանց, Գանգեսը՝ Բոյի: Հնդկաստանի կից Սէյլանը՝ իտալիոյ կից Սիկիլիոյ, Բայց Եւրոպայի վերին երկիրները աւելի լաւ կազմակերպուած են և աւելի այլազան, քան Ասիոյ անոր համապատասխանող երկիրը:

Մեծ շեռնադաշտը. — Ասիոյ լեռնադաշտերը դաշտերէն աւելի տեղ կը բռնեն:

Կարևորագոյնն է կեդրոնական Մեծ Լեռնադաշտը, որ կը կռթնի Հիմալայայի, որուն կատարն է 9 քիլոմէթր, աշխարհի բարձրագոյն կատարը: Հինտու — Գուշի վրայ՝ Չիան — Շանը. աշխարհի ամենէն բարձր լեռնադաշտը Թիւր (4-4500 մէթր): Մանչուա, Բափը՝ որ իրանի և կեդրոնական լեռնադաշտին միութեան գիծը կը կազմէ: Ասոնց ստորոտները կը ձևացնեն բազմաթիւ դաշտեր, ինչպէս Սեյլան, երկար գետերէ առողուած և ամիսներով սառնապատ, Չինական դաշտերը, Գեղին և կապոյտ գետերէն առողուած, Գանգէսի դաշտը, Թուրքաստան, Ասիական Թուրքիա՝ Եփրատ և Տիգրիսով առողուած եւ:

Չինաստան իր քաղաքակրթութեամբ նշանաւոր եղած է Գրիստոսէ դարեր առաջ, նոյնը եղած են նաև Ասորեստան, Բաբելոն, զոր կը հաստատեն Միջագետքի աւերակները:

Յեղեղ եւ բազմամարդութիւն. — Ասիա ունի 850 միլիոն բնակիչ, երկրագնաի բնակչութեան կէսէն աւելի: Ամենէն խիտ են Չինաստան, Հնդկաստան, Հնդկա-Չին և Ճաբոն: Կը բաժնուին չորս մեծ ցեղերու, Գեղն ցեղ կամ Չինացի, Հնդ-Եւրոպական ցեղ (Արիք և Հնդիկք): Մանչուան ցեղ (Արալի և կասպից ծովերու շուրջ): Սեմական ցեղ (Արաբներ, Հրէայք և Ասորիք):



ԳԼՈՒԽ Գ.

Բ Ն Ա Կ Ա Ն Ա Փ Ր Ի Կ Է


ԱՓՐԻԿԷ իր եզերքները չունի մեծ թերակղզիներ, խոր ծոցեր եւ մեծամեծ տարածութիւններ ծածկուած են աւազով, ճահիճներով, լիճերով, հիւրամերձ և դժուարատանելի: Չեւով կը նմանի Հարաւ Ամերիկայի կողերը շղթայուած են պարսպանման լեռներով, Ափրիկէ մա-

ուսմբ դեռ անծանօթ է, կլիման հեղձուցիչ, բնակուած վայրենի ժողովուրդներով, որոնք միահամուռ խոչընդոտներ են երկրին ներսերը թափանցելու:

Առևտրական նախքաներ. — Գաջարի երկրախոյզներ ամեն կողմէ յարձակած են այս նուազ ծանօթ ցամաքին վրայ: Ասոնցմէ առաջինն է Լէվինկոթըն, որ խուզարկած է Չամպէղի և վերին-Քոնկոյի դաւառները, ապա Գամէրօն՝ անցած Հարաւային Ափրիկէն՝ Արևելքէն Արևմուտք: Մբիք, Կրանտ, Պիւրթըն, Պէյքըք ճանչցած են վերին-Նեղոսի հովիտը, վերջապէս Սթէնլի իջած է Գոնկոյի ակէն մինչև գետաբերանը: Ֆրանսացիք, Գերմանացիք, Անգլիացիք փնտռած են ամենէն ապահով ու դիւրին ճամբաները՝ իրենց ստացուածոց արտադրութիւնները տանելու: Սենեկալի, Նիկէրի, Սուտանի ամենէն հարուստ մասերը կրցեր են դրաւել Անգլիացիք, երկարատև պատերազմներով: 12-14000 քիլօմէթր Գոնկօն արդէն նաւարկելի եղած է: Բայց Նեղոսն է ամենէն կարևոր առևտրական ճամբան:

Այսպէս հիմա ծանօթ են Ափրիկէի գլխաւոր կէտերը, որ կը ձևացնեն անսահման լեռնադաշտեր, Հիւսիսն ու կէդրօնը՝ ուղղանկիւն լեռնադաշտ, Հարաւը՝ եռանկիւն: Հիւսիսային Ափրիկէ ունի չորս պատուարներ, Հարաւէն Ապիսինիոյ լեռնակոյտը, զոր կը փորեն խորապէս Կապոյտ Նեղոսն ու թաքած է Գոնկոյի լեռները՝ ուրկէ կը բզխին Սենեկալ և Նիկեր:

Բազմամարդութիւն և ցեղ. — Տօք. Նախթիկէլ 200 միլիօն բնակիչ կը թուէ Ափրիկէի մէջ: Եգիպտացիներէ, Մաւրիտներէ, Քապիլներէ, Հապէշներէ, և Հարաւ-Ափրիկեցիներէ բնակուած երկիրներէ դուրս, կան ընդարձակ և դեռ անծանօթ մասեր, ուր կը բնակին սևամորթ վայրենիներ:



ԳԼՈՒԽ Դ.

ԲՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱ

ԲՆԱՄԱՍԻ պարանոցով միացած երկու եռանկիւնաձև երկիրներ կը կազմեն Ամերիկան, Հիւսիսէն Հարաւ երկնցած, և նոյն ձևով լեռներէ շղթայուած: Մի և նոյն ատեն Հիւսիս-Ամերիկան աւելի մեծ է քան Հարաւի դրացին:

Առևտրական մեծ նախքաներ. — Հիւսիսային Ամերիկա Ապաուած և Անտան լեռներուն մէջ կը պարփակուի: 1862ին Լինքօլն նախագահին քաջալերութեամբ՝ Առլանտեանը երկաթուղիով կապուեցաւ Խաղաղականին և այնուհետև հետզհետէ բազմաթիւ ցանցեր է մի շղթայեցին Միացեալ-Նահանգաց զանազան դաւառները և քացին հարստութեան լայն պոչոտան:

Քանադացիք ալ երկարեցին ովկիանոսները միացնող իրենց երկաթուղին, առևտրական կարճ ճամբան, թէև երկայն 4932 քիլօմէթր:

Հարաւային Ամերիկայիք նուազ առաջացած են, թէպէտ Արժանթին սկսած է իր երկաթէ բաղուկները երկարել լեռներէ անդին, զանազան դաւառներու մէջ:


Ամերիկա օժտուած է նաև մեծամեծ գետերով. Միսուրի, Միսիսիբի, Ամազոն, Սէն-Լօրան, Բլաթա՝ որոց վրայ կրնան նաւարկել ամենէն խոչոր նաւերը: Այս գետերը, ընդհանրապէս, կը հոսին գէպի Ատլանտեան:

Նոյնպէս անապատները չեն այնքան խտածրեր՝ որքան են Ափրիկէի մէջ գտնուածները:

Ամերիկայի լիճերն ալ մեծ ծառայութիւններ կը մատուցանեն:

Բազմամարդութիւն և ցեղ. — Ամերիկայի բաղմամարդութիւնը 140 միլիօնի կը հասնի, գլխաւորաբար եւրոպական ծագումով: Հիւսիսային Ամերիկա մանաւանդ

բազմամարդուած է Գերման (Անկլո-Սաքսոն, Գերման, Սքանտինավեան), լատին (Սպանիացի, փորթուկէզ, Ֆլորանսացի, Իտալացի) ցեղերէ, վերջինը ուղղուած է գլխաւորաբար կեդրոնական և Հարաւ. Սմերիկա, Պրազիլիա և:



ԳԼՈՒԽ Ե .

Ո Վ Կ Ի Ա Ն Ի Ա

Ո Վ Կ Ի Ա Ն Ի Ա Յ մեծ բաժանումները. — Խաղաղական Ովկէանի մէջ կղզիներէ կը ձևանայ Ովկիանիան, Ասոր ամենէն ընդարձակ, հարուստ և բազմամարդ մասն է Արևմուտքը:

Այս ցամաքը երեք որոշ մասեր ունի.

1⁰ Մալեզիա, 2⁰ Աւստրալիա, 3⁰ Բոլինեզիա:

Մալեզիոյ կղզիներն են. Սումատրա, Ճավա, Պորնէոյ, Չէլէպեան, Փիլիպեան և: Աւստրալիոյ կամ Հարաւային Ասիոյ մասերը. Աւստրալիա (Եւրոպայի մեծութեամբ), կղզիներ և կղզեխումբեր, Նոր-Չելանտա, Նոր-Քալէտոնիա, Ֆիճիի կղզիք, Նոր-Կուէնիա: Մալեզիոյ արևելքն է Բոլինեզիա:

Մալեզիացիք են դեղին ցեղէ, խորամանկ, ախտաժէտ, բայց խելացի. Աւստրալցիք՝ սև ցեղէ, որոնք տալիա կը ձուլուին եւրոպական գաղթականութեանց մէջ. Բոլնեզիացիք ցրուած են կղզիներուն մէջ և կը զանազանուին իրենց երեսի գոյնով՝ միւս ցեղերէն, թեթեալի ձիթագոյն, անարուեստ, կ'ապրին բնութեան պարաստած ուտելիքով և նոյն խկ զգեստով:



ԳԼՈՒԽ Զ .

ԱՇԽԱՐՀԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՄԵՄ ՃԱՄՐԱՆԵՐԸ

Մ Ա Կ Ի Ն Ասիոյ առեւտուրի ճամբաները. — Խորհնութենէ մը ի վեր Ասիա ունեցած է առեւտրական յարաբերութիւն Արևելքի և Արևմուտքի հետ: Օգոստոսի ատեն Չինաստանէն եկաւ դեպքան մը ի Հռոմ: Ե. դարուն՝ Ալարիկ գրաւելով Հռոմը, բարբարոսներուն մատնուեցան մետաքսէ հիւսուածները և մեծաքանակ համեմունքները՝ որ Չինաստանէն բերուած էին: Այս արտադրութիւնները, ինչպէս նաև մարգարիաները և թանկագին քարերը՝ որով կը զարգարուէին տիկիները, և անուշահոտութիւնները՝ զորս անոնք կը գործածէին՝ Արևելքէն կուգային: Բոլինի ատեն (1-2րդ դար) այս ներածութիւնները տարուէ տարի բարձրացած էին միլիոնաւոր ֆրանքի:

Միջին դարն ալ կ'սպառէր Ասիայէն եկած վաճառքները, որով կը հարստանային վենետիկցիք, ճինովացիք, և անուղղակի կերպով՝ Մոնկոլներն ու Մաւրիաները: Որոշ գիտցուած չէ թէ ո՞ր ճամբաներով կը բերուէին այս վաճառքները արևմուտք մինչև ա՛յն ատեն՝ երբ վասքօ - տէ - կամա գտաւ ֆարի ճամբան:

Բակարիա (Բալխ) կեդրոնն էր Հնդիկ արտադրութեանց, որ կը միանար Չինաստանի: Բակարիացիք Միջագետքէն կ'անցնէին Միջերկրական, ճամբուն վրայ մեծ սպառում կ'ունենար Բարելոն, ուսկից՝ կարաւաններ՝ ապրանք կը տանէին Պէրիթ (Պէյրութ), անկէ Յունաստան և իր կղզիները:

Հռոմայեցիք ներկայ թուականին սկիզբները փնտռեցին հաղորդակցութեան միջոցներ՝ ծովի միջոցաւ՝ Արևելքի և Արևմուտքի մէջ. որովհետև Օքսոսի և Սիհունի եղերքները բնակող Ասի կոչուած (ըստ Չինաց) ժողո-

վորդները՝ այս առուտուրին շահը չկորսնցնելու համար՝
ամեն ինչ ըրին որպէս զի արգիլին Հռոմայեցւոց և Չի-
նաց միջև եղած սւղղակի յարաբերութիւնները:

Երկու ծովային ճամբաներ կային. Պարսից ծոցը՝ Եփ-
րատ և Տիգրիս գետերուն միջոցաւ և Կարմիր ծովը ու
Նեղոս գետը: Հռոմայեցիք աւելի այս վերջինով կը հա-
ղորդակցէին Հնդկաց հետ: Աղեքսանդրիա եղաւ այն
ատեն Արևելքի վաճառքներուն մեծագոյն շտեմարանը:
Պմեն տարի 200 նաւեր գետին միջոցաւ կը տանէին
Խտալիոյ, Սիկիլիոյ և ֆոքր-Սսիոյ գիւղերը, մետաղները,
զէնքերը, կերպանները: Այս նաւատորմը կը հասնէր
հիանալի քաղաքներով ծածկուած վերին-Եգիպտոս,
մինչև Գոփղոս, ուրկէ, վաճառքները՝ ցամաքի ճամբով՝
կը փոխադրուէին մինչև Բերլինիկէ և Կարմիր ծովով կը
հասնէին Հնդկաց Ովկիանոս: Աշնան կը վերադառնային
բեռնագինով մը ստանալով մարդարիտ, թանկագին
քարեր, մետաքս, պղպեղ և ուրիշ համեմուկներ, անու-
շահոտ նիւթեր և: Ճամբորդութիւնը տարի մը կը տևէր:

Միջին դարու առևտրական ճամբան Եւրասիայի և
Ասիայ մէջ. — Հռոմի անկումէն ետք Բիզանդացիք՝ Ի-
րենց մայրաքաղաքով՝ միջնորդն եղան Արևելքի և Արև-
մուտքի: Այս դերը կատարեցին մինչև այն ատեն, յո-
րում ճենովացիք և վենետիկցիք տէր եղան Միջերկրա-
կանի և Սև ծովի առուտուրին: Պարսիկներն ուղեցին
արգիլել Չինաց հետ եղած այս հաղորդակցութիւնը, և
այս եղաւ պատճառ ներմուծելու շերամի սերմը յԵւ-
րոպա, յոյն արեղայի մը ճարպիկութեամբ:

Ը. դարուն Արաբներ ամբողջ Արևմտեան Ասիոյ տէր
ըլլալով մինչև Հիմալայա, իրենց ձեռքն անցուցին ծովի
ու ցամաքի առուտուրը: Արևելքի և Արևմուտքի փոխա-
նակութիւններն ըրին Պաղտատէն՝ Պարսից ծոցով: Պաղ-
տատէն կը զրկուէին ապրանքները, ծանօթ ճամբաներով,
Տրապիզոնի, Պրուսայի, Լաթաքիայի, Աքիայի նաւահան-
գիստները, ուր կուգային վենետիկի, Բիզայի, ճենովացի

և ուրիշ վաճառականք: վենետիկ՝ շնորհիւ իր դիրքին՝
այս փոխադրութեան մենաշնորհին տէրն էր գրեթէ,
անկէ կ'երթային այս վաճառքները Պրիւժ, Համպուրկ,
Լիւպէք և ուրիշ տեղեր:

Մոնկոլեան տիրապետութիւնը չափաւորեց այս յա-
րաբերութիւնը, Պաղտատ և Պարսից ծոց կորսնցուցին
իրենց առևտրական գերակշռութիւնը: Ինչպէս վենե-
տիկցիք Եւրոպայի մէջ, նոյն դերը խաղացին Սուտանցիք
Ափրիկէի մէջ: Աղեքսանդրիա անգամ մ'ևս եղաւ մեծ
կապը Արևմուտքի:

Պիստ ֆարիս ճամբուն. — 1498ին վառքո-տէ-կամա
Քափի ճամբան դտնելէ ետք, Միջերկրականը դադրե-
ցաւ նաւարկութեան մեծ ծովը ըլլալէ: Արևելքի արտա-
դրութիւնները ուղղակի Ովկիանոսի միջոցաւ կուգային
Եւրոպա. ասով Ատլանտեանի եզերարևակ պետութիւն-
ները փայլեցան և վենետիկ տկարացաւ: Լիսպոնա եղաւ
ժամադրավայրը Եւրոպայի աուրևառին: Փորթուկացիք
շարունակելով Հնդկաց Ովկիանոսի նաւարկութիւնը՝ ան-
ցան Մալաքքայի նեղուցէն և գտան Համեմուկի կղզի-
ները:

Սուեզի ճամբաք. — 1869ին բացուեցաւ Սուեզի ջը-
րանցքը, որ չափաւորեց ֆափի դժնդակ ճամբորդու-
թիւնը Ի վրաս անոր և Ինչասա Միջերկրականի: Անգլիա
որ ի սկզբան կը հեղնէր այդ ջրանցքին բացումը, դայն
շահագործողներուն առաջինն եղաւ ի վերջոյ: Առևտրա-
կան այս նոր ճամբով փոխադրուիլ սկսաւ, ի մէջ այ-
լոց, հնդկաց ցորենը, որուն արտածութիւնը կը հասնի
1,400,000 թօնոյի: վերջապէս Պոմպան՝ բամբակի մշակու-
թիւնով՝ անգլիական վաճառականութեան մէկ մասն
եղաւ՝ Ծոցրագոյն-Արևելքի մէջ, իր շահաստաններէն:

Եւրոպայի և Ասիայ կցման ճրագիրք. — Առ այժմ՝ Եւ-
րոպա կը հաղորդակցի՝ ծովային ճամբով՝ Չինու, Ճարոնի
և Հնդկաստանի հետ, բայց երկար չպիտի տևէ երկաթա-
ձիւղմը երկաթէ ցանցերուն՝ ցամաքին վրայ: Ռաուլէնսի

ժրագիրն է կցել Կ. Պօլիսը Հնդկաստանի՝ Թէհրանի, Հէրատի, Քապուլի և Բիշապուրի ճամբով: Ռուսիա Սև ծովը կցեց կասպից ծովուն՝ 1500 քիլոմէթր երկաթուղիով. մօտ ատենէն կ'աւարտէ նաև Սիպերական երկաթուղին, որով Եւրոպա պիտի միանայ Չինաստանի և Խաղաղականի՝ այն լուռ ու ամայի դաշտերուն միջոցաւ: Խաքէնտէրունի (Հալէպի նաւահանգիստ) և Գոնիայի երկաթուղիով Պաղտատի միացման ժրագիրը երբ սկսի գործադրուիլ, այն ատեն պիտի տան իրենց իրական արդիւնքը Եփրատի և Տիգրիսի հովիտները և լաւագոյն միջոցը պիտի ընձեռեն Եւրոպայի և Ծայրագոյն-Արևելքի հաղորդակցութեան:

Եւրոպայէն Ասիա՝ Սառուցեալ Ովկիանոսով. — ԺՉ. գարէն վեր Հոլանտացիք աշխատեցան Սիպերիոյ եզերքէն մտնել Ծայր. - Արևելք, այս է անցքը Հ. - Ա. զոր գտած է Նօրաէնսբօլտ գիտունը 1878 - 1879 ին:

Քրիստափոր Քոլումպոս. — Արևելքէն Արևմուտք. — Մինչ վաւրօ-տէ-Կամա Ափրիկէն քերելով կը փնտռէր Հնդկաստանի ճամբան, Քրիստափոր Քոլումպոս կը մտածէր զայն գտնել՝ միշտ դէպի արևմուտք նաւարկելով: 1492ին նա հասաւ Անթիլեան արշիպելագոսը, նշմարեց Օրինոքոյի բերանը և գտնուեցաւ Ամերիկան: Հնդկաստանի ճամբուն խնդիրը բոլորովին տարբեր և նոր կերպարանք մ'առաւ: 1521 ին Մակելլան անցաւ իրեն համանուն նեղուցէն, մտաւ Խաղաղականի մէջ, հասաւ Փիլիպեան կղզիները և Փորթուկալի Հնդկական կալուածները, յետոյ Բարեյուսոյ հրուանդանէն վերադարձաւ Եւրոպա:

Այսպէս գտնուած էր Հնդկաստանի երկրորդ ծովային ճամբան ալ:

Շաւարկութեան յառաջդիմութիւնը. — Հովերու և Էրկու օվկիանոսներու հոսանքներուն — Կիւլֆսթրէմը՝ Ստրանտեանի և Քիւրօ-Սիվօն՝ Խաղաղականի — ուսումնասիրութիւնը անբաւական կը նկատէր առագաստանաւորով ընել այսքան երկարատև ճամբորդութիւն մը:

Արուեստի և ճարտարութեան հրաշալի արդիւնքն եղան շոգենաւերը, որ անհունապէս կարճեցուցին այս ճամբաները: Մինչ 1818 ին Եւրոպայէն Ամերիկա նաւերը կը հասնէին 28 օրէն, այժմ այս թիւն իջած է վեց օրուան:

Յամաքի եւ Տոլի անաբաներ Ափրիկէն եւ Ամերիկայէն. — Շրջաբերութեան տեսակէտով, որ կը հարկւրապատկէ երկրի մը արտադրական ոյժը, ամենէն քիչ բաժնուած երկիրն է Ափրիկէ: Նեղոսէն Հնդկաց Ովկիանոս առևտրական մեծ պողոտան, զոր Անգլիացիք կ'աշխատին բանալ վաճառականութեան, պիտի ըլլայ ամենակարևորներէն մին: Շոգենաւերը արդէն կ'ակօսեն նիկէրը՝ Պաքամոյէն մինչև իր բերանը, և միջին ու վերին Քոնկոյի հոսանքներն ու իրենց օժանդակները պիտի ըլլան լաւագոյն ճամբաները առուտուրին համար, երբ երկաթուղի մը երթայ Սթենլի - Բուլիբոլէն մինչև վարձուրկէ կ'սկսին ջրվէժներն ու հոսանքները: Օրան, Ալճէրի և Թարապուս հրապոյրներն են ճամբաներուն որ, Սահարայի մէջտեղէն, յամբարար կ'առաջանան դէպի Սուտանի ներսերը, տակաւին՝ այս կողմէն՝ Եւրոպայուց անմատչելի:

Ամերիկա արդէն ամեն դիւրութեամբ կ'անհերքուի օժտուած է հաղորդակցութեանց մասին:

Միջերկրականի առևտրական կառնորդ Սուեզական կրագնաի վրայ բոլոր այս ծովային ու ցամաքային ճամբաները, որոցմով մարդիկ կը փոխանակեն իրենց արտադրութիւնները, կը ձգտին դէպի Միջերկրական, որ մեր օրերուն առևտրական մեծ կարևորութիւն ստացած է: Ան է կեդրոնը վաճառականութեան Եւրոպայի և բոլոր աշխարհի: Անգլիա որ տէրն է անոր ելքի ու մուտքի դռներուն, բռնած է նաև անոր մէջ կարևոր կէտեր: Սէն-Կոթարտի անցքին բացումը ճամբայ տուած է գերմանական վաճառականութեան՝ ճինովա և Իտալական նաւահանգիստները: Եւրոպական թուրքիոյ եր-

1001
3194
15612



կաթուղիներուն կցումը՝ Սերպիոյ և Աւստրո-Հուգա-
րիոյ ցանցերուն՝ Սելանիկն ըրած է մեծ շտեմարան
մը Արևելքի սահմանուած գերմանական և աւստրիական
արագորութեանց:



ԳԼՈՒԽ Է.

Ա. ՆԱԻԱՐԿՈՒԹԵԱՆ ՄԵՄ ԳԻՄԵՐ



ՇՍ.ՈՍԹՈՒԹԻՒՆԻ ՇՈՂԵՆՍԻՆԵՐՈՒ

ԱՅՍՕՐ ծովը այլ ևս չէ երբեմնի ահարկու և
մուսլ Ովկիանոսը, նաւաստին կրնայ հետազօտել զայն
գրեթէ իր բոլոր տարածութեան մէջ: Իբր 200,000
նաւեր կ'երթեկեն ամեն կողմ, ծովագնացութիւնք
տակաւ կը բազմանան, հարիւր հազարներով կը հաշուի
թիւը ճամբորդներուն՝ որ ամեն տարի կ'երթան Աա-
լանտեանի մէկ եզերքէն միւսը:

ԺԶ. դարուն ամենէն յանդուզն նաւաստիներն եղան
փորթուկացիք և Սպանիացիք, որոնք իրենց մեծ նաւա-
վարներով ժամանակին ամենէն մեծ յայտնութիւններն
ըրին:

Հոլանտացիք, Անգլիացիք, Ֆրանսացիք այցելեցին
հետազօտուած գաւառները, հիմնեցին հաշուեսեղան-
ներ, գաղթականութիւններ և ժի. դարուն ծովային
մեծ պետութեանց մէջտեղ բռնեցին տեղ մը: ԺԹ. դա-
րուն սկիզբները Ամերիկացիք, հազիւ ճողոպրած Անգ-
լիական լուծէն, նշանաւոր տեղ մը գրաւեցին իբր ծովի
սայլորդներ: Շինեցին արագընթաց առագաստանաւեր
և ծովային ածան փոխադրութեամբ մրցեցան Անգլիոյ
հետ: Իրենցմէ մին, Ֆիլիթըն, շինեց առաջին շոգենաւը,
հնարեցին քառակայմ առագաստանաւը, շոգենաւէն
արագընթաց: Սակայն 1865 ի պատերազմէն ետք չչինե-

ցին այնքան շատ նաւեր, իրենց ծովային վաճառակա-
նութիւնը տակաւ նուազեցաւ և օտար նաւեր սկսան
փոխադրել իրենց վաճառքներուն մէկ մասը: 1840 - 46
Ամերիկացիք ծովով կ'ընէին 86 առ 100 իրենց փոխա-
դրութիւններէն, 1866 ին 30 առ 100, 1882 ին 16 առ 100:
Անգլիացիք բռնեցին անոր տեղը իրենց ամենէն արագ
շոգենաւերով և որոնք են յայտնի տէրը ծովերու և
կ'երթեկեն աշխարհի ամէն կողմերը:

Միջերկրականի գիծ. — Առեւտրական շատ մը պետու-
թիւններ հաւաքուած են այս ներքին ծովուն շուրջը, որ
Ատլանտեանի մէկ ծոցն է: Ֆրանսա կը գրաւէ արեւմա-
տեան աւազանը՝ Մարսիլիա, Սէթ, Օրան նաւահանգիստ-
ներով, Սպանիա՝ նոյն աւազանին վրայ ունի Պարչէլոնա,
Վալանս, Մալիա, և Իտալիա՝ Ճենովա, Լիվուռնոյ, Նա-
բոլի, Բալերմոյ, Մեսինա և Ադրիականի վրայ՝ Վենետիկ,
արևելեան աւազանին մէջ սքանչելի գիրքն ունի Կ-
Պոլիս, Սելանիկ, Զմիւռնիա, Պէյրութ, Իսկէնտերուն,
Բէրսին, Եաֆա, Ադէքսանդրիա, Բորթ - Սայիտ և վեր-
ջապէս Թարսպուսի խարոխատեղիները, Ադրիականի
վրայով Թրիէստէ, Սև ծովով՝ Տրապիզոն, Կիրասոն,
Սամսոն, Վառնա, Պաթուս, Օտեսա և Ռումանիան՝ Գա-
նուբով:

Ճիպրայթար և Վալէթ (Մալթա) են միանգամայն
մեծ մթերանոցները և միջնաքաղաքները առաջնակարգ՝
Անգլիոյ ձեռքը:

Հնդկաց Ովկիանոսի գիծեր. — Այս գիծերը Միջեր-
կրականէն կ'երթան՝ Սուէզի ջրանցքով՝ Կարմիր ծով:
1869 էն առաջ Բաբի ճամբան այլ ևս չունի նախկին
ոգևորութիւնը: Սուէզէն անցան 1870 ին 436 նաւ 436,000
թօնոյ տարողութեամբ: 1888 ին 3440 նաւ 9,440,000 տա-
կառաչափ, իսկ 1889 ին 3425 նաւ 9,605,745 տակառաչափ:

Այս թիւին երեք չորրորդը անգլիական գրօշով.
յետոյ կուգան Ֆրանսա, Հոլանտա, Գերմանիա, որոնց
վաճառականութիւնն ալ տարապայման կերպով աճած

է. Խտալիա, Աւստրո-Հունգարիա, Սպանիա և Ռուսիա: Վերջին տեղը կը բռնեն ճարձն, Պելճիքա, Ամերիկա, փորթուկալ և վերջապէս Խտիվիյէի թղթատարական գիծը:

Անգլիական ընկերութեան գլուխն են «Արևելեան և Թերակղզային ընկերութիւն»ը: Ամեն տարի Մայիսի վերջը՝ Իւրաքանչիւր ընկերութեան նաւ մը կը մեկնի Հանքէուէն և Շանհայէն և արագութեամբ կը մրցի շահելու 250,000 ֆր. Ի Բե՛ջ, զոր կ'ստանայ այն՝ որ առաջին անգամ հասնի Լոնտոնի նաւամատոյցը:

Ֆրանսայի Հնդկա-Չինի և Աւստրալիոյ գծին առաջին կարգը կը գրաւէ Մէսսաժէրի Մարիթիմը, որ կը մեկնի Մարսիլիայէն:

Իտալիոյ գլխաւոր նաւային ընկերութիւնը կը գծէ ճենովայէն Պոմպայ և Սինկափուր:

Գերմանիոյ Համպուրկէն կը մեկնին Հոնկ-Քոնկ և Շայր. - Արևելքի նաւահանգիստները:

Այսպէս թղթատար գիծեր ունին կարգաւ Հոլանտա, Աւստրո-Հունգարիա:

Առչանտեանի գիծերը կը միացնեն Եւրոպան երկու Ամերիկաներուն և Արևմտեան Ափրիկէի: Հրաշալի բարգաւաճում մ'ունի Ամերիկա, ուր տարուէ տարի միլիոնաւոր գաղթականներ կը խոնուին:

1. Հիւսիսային Առչանտ. — Այս մասին մեծագոյն առեւտրական նաւահանգիստն է Նոր-Եօրք, որ առանձինն կ'ընէ Միացեալին արտաքին վաճառականութեան 2/3ը: Անգլիական բազմաթիւ ընկերութիւններ հաստատած են Անդր-Ատլանտեան շոգենաւային գծեր: Ասոր ամենէն հին, ամենէն հարուստ և ամենէն զօրաւոր ընկերութիւնն է Քիւնարա ընկերութիւնը, որուն աթոռն է Լիվրփուլ:

Գաղղիա ունի 5 մեծ թղթատար նաւեր, ամեն շաբթու Հաւրէն Նոր-Եօրք մեկնող:

Գերմանիոյ Համպուրկ-Ամերիկեան ընկերութիւնը սկսած է մրցիլ և գրեթէ հաւասարած է Անգլիականին: Իր նաւահանգիստներն են Համպուրկ, Պրեմա եւ:

Ապա կուգան Պելճականը, Իտալականը, Սպանիականը (Պարչելոնա): Ամերիկա միայն երկու գիծ ունի Ֆլատեւիֆիայէն Լիվրփուլ և Մեքսիկեանը:

2. Հարաւ. Առչանտի գիծեր. — Ասոնք կը քերեն Հարաւ. Ամերիկայի բոլոր եղերքները, Հասարակածէն մինչև Մակեյլանի անցքը, ուսկից կը հասնին Խաղաղական և Արևմտեան Ափրիկէի բոլոր կողերը, մինչև Բարեյուսոյ գլուխ, Ինչպէս և Հնդկաց Ովկէանի քանի մը նաւահանգիստները:

Այս գիծին վրայ ևս Անգլիա կը գրաւէ առաջին տեղը, յետոյ Ֆրանսա, Գերմանիա, Ամերիկա, Սպանիա:

3. Խաղաղականի գիծեր. — Թղթատար նաւեր կրնան երթալ Եւրոպայէն Խաղաղական թէ՛ Սուէզով՝ Հնդկաց Ովկէանէն, թէ՛ Ատլանտեան Ովկէանէն:

Այս գիծերէն մեծագոյն մասին տէրն են դարձեալ Անգլիացիք:

Բ. Ը Ն Գ Ծ Ո Վ Ե Ա Յ - Պ Ա Ր Ա Ն Ն Ե Ր

Օ Գ Տ Ա Կ Ա Բ Ո Ւ Թ Ի Ն Հ Ն Ռ Ա Գ Բ Ա Թ Ե Լ Ի Ն
Ե Ի Ը Ն Գ Ծ Ո Վ Ե Ա Յ - Պ Ա Ր Ա Ն Ն Ե Ր

Ոչ ոք կրնայ ուրանալ թղթատար նաւերու առաւելութիւնը, բայց ի՛նչ մեծ ծառայութիւն կը մատուցանեն անոր հեռագրաթեւերն ու ընդծովեայ-պարանները: Ուր պիտի մնար վաճառականութիւնը եթէ յանկարծ ընդհատէին այս ելեքտրացած թեւերը, Յամաքային հեռագրական գիծերը՝ որ 40 տարիներէ վեր կրկնապատկուած են՝ կը ծածկեն երկիրը թեւերու ցանցով մը, որուն բոլորակները հետզհետէ կը սեղմուին:

1854 ին Կիւրոս-Ֆիլա և Կիսպօրն յղացան գաղափա-

ըր չին ու Նոր ցամաքները ելեքտրական թելով մը կապելու: Չեռնարկն յաջողեցաւ և 1866 ին հեռագիրներ փոխանակուեցան ընդ-ծովեայ պարանով՝ Եւրոպայի և Ամերիկայի միջև: Այն ատենէն ի վեր բազմաթիւ պարաններ ընկղմեցան՝ միացնելով Եւրոպան աշխարհի բոլոր մասերուն հետ:

Երկրագնտի պարաններուն երկայնութեան գումարը 1892 ին 140,344 մղոն էր, իբր 260,000 քիլոմէթր: Իսկ 1898 ին 168,000 մղոն:

Արեւելեան ընդծովեայ - պարաններ. — Ֆէլմութհէն (Անգլիա) Ատելայիա (Սուտրալիա) ընդ-ծովեայ թելն է 36,000 քիլոմէթր: Այս անսահման թելը նախ շունչ մը կ'առնէ Լիսպոնա, անկէ ճիւղալթար, Մալթա՝ ուր կը միանան Եւրոպայի և Ափրիկէի թելերը, Մալթայէն ծովով կը շարունակէ մինչև Ազիքսանգրիա, հոն ցամաքէն անցնելով՝ կը հարցնէ Եգիպտոսի որպիսութիւնը, կ'երևի օգէն նեղուելով կրկին կ'ընկղմի Սուէզի ջրերը, կողջուէ Ատէնը, ուսկից կ'անցնի Պոմպայ Եւրոպայի բարեները հաղորդելու, և պղտիկ փոխառութիւնով մը կը նետուի Մատրաս, ուր դարձեալ ջուրը կ'ընկղմի և կ'ելլէ Սինկափուր: Հոս իր աշխատութիւնը երկու ճիւղի կը բաժնէ՝ իրական անձնուիրութիւնով երկու կտոր կ'ըլլայ, մին կ'ուղղէ ճավայէն և Բալմէրսթընէն՝ Աստրալիոյ վրայ և այս ցամաքին հիւսիսէն կ'անցնէ մինչև հարաւ ու վերջին դարարը կ'առնէ Ատելայիա: Իսկ միւսը կը հասցնէ Չինաստան, ճաբոն, կոխկրտելով Մայկոնը, Հոնկ-Քոնկը, Ամուան, Շանկ-Հայն և Նակագաքին:

Եսպրագոյն-Արևելքի այս մեծ ցանցը կը յանգի վլատիվովօթօք ուր կ'սկսի հեռագրաթելը, որ կ'անցնի Սիպերիոյ մէջէն, երկարելով Թրաքթի ճամբուն երկայնութեամբ և կը հանգուցուի Բերմի ուսսախան հեռագրաթելի ցանցին:

Պարան մը կը մեկնի Սիտնէյէն, կը հասնի Նոր-Ջուլանտա, Ֆիճի կղզիները, Հոնոլուլու, Սանտուիչի կղզի-

ները և կը վերջանայ ի վանքուվըր՝ Գանատական եղիւքին վրայ:


Երազբուած է միացնել Աստրալիան Միացեալ-Նահանգաց հետ: Հարաւ-Ափրիկէի Անգլիական կալուածները կապուած են Հնդկաստանի պարանով մը, որ կ'երթայ Գաիէն Սէյլան, անցնելով Զանգիպարէն, Մօրիսէն ու Ռէիւնիօնէն: Ափրիկէի այս մասը միացուցած է նաև՝ Անգլիոյ Գաի-Լիսպոնա գծով՝ որ կը կոխտէ Սէն-Բօլ-ալ-Լօանտան, Տաքարը, Սէն-Լուին, Գանարեանները և Մատէյրա:

Վերջապէս կ'Պօլիսն է կցման գիծը որ կ'երթայ երեք ուղղութեամբ 1⁰ Ֆաոյի գիծը, 2⁰ Հաննըքէնի կամ Թէհրանի գիծը և 3⁰ Էլ-Արիշ գիծը:

Արեւմտեան ընդծովեայ - պարաններ. — Եւրոպայի և Ամերիկայի միջև արագ հաղորդակցութիւն կը հաստատեն 10 գիծեր, որոցմէ 8՝ Անգլիոյ, 2 Ֆրանսայի կը պատկանին: Լիսպոնա է կցման գիծը՝ որ կը յանգի Բերնամպուր:

Անգլիա՝ իր կղզեցիութեան պատճառով, միացած է ցամաքին բազմաթիւ պարաններով, որ կը յանգին ի Շուէտ-Նորվէկ, Տանըմարքա, Հոլանտա, Գերմանիա, Պելճիքա, Ֆրանսա, Սպանիա և Փորթուկալ, առանց հաշուելու իր և Գաղիոյ միջև գտնուած միւս գիծերը:

Պարան մը կայ Մարսիլիայէն Պարչելոնա, հինգ պարաններ՝ Ֆրանսայէն Ալճերիա:



ԾՐԱԳԻՐ ԳՈՐԾԻՍ

ԱՇԽԱՐՀԻ առևտրական այս մեծ պողոտաներուն ուսումնասիրութիւնը կը դիւրացնէ այս աշխատութեան բաժանումներն ու ծրագիրը:

Նախ պիտի ուսումնասիրուի արտագրող ուժերը

Պետութեանց որ, ինչպէս Ֆրանսան իր Ափրիկեան կա-
լուածներով, Իտալիան, Յունաստանը, Թուրքիան, Պալ-
քանեանք հաստատուած են Միջերկրականով, Արևելք
գնացող առևտրական մեծ ճամբուն վրայ: Անգլիա ևս
մեծ պետութիւնն է այս պողոտային իր անսահման
կալուածներով:

Ռուսիա կը գրաւէ Անգրիոփկասով Թուրքաստանը,
և Սիպերիան, ցամաքի ճամբան՝ որ կը տանի Մայրա-
գոյն - Արևելք, և քաղաքականագէտ ազդեցութիւն
ունենալով Պարսից վրայ կը հրամայէ ճամբաներուն՝ որ
Արևմտեան - Ասիայէն կ'անցնի Հնդկաստան:


Յետոյ կուգան Ափրիկէ, Հնդկաստան որ մեծ դեր կը
խաղայ Անգլիոյ անտեսական վիճակին վրայ, Մայրա-
գոյն - Արևելք՝ Հնդկա - Չին, Չին և Ճաբոն:

Պիտի վերագառնանք անմիջապէս Եւրոպա՝ երկիր-
ներու անտեսագիտական ուսումնասիրութեանց համար:

Ամերիկայի անտեսական աշխարհագրութիւնը պիտի
վերջանայ Ովկիանիոյ բաժնին մէջ: Նոյնպէս Խաղաղա-
կանի կղզիներուն ուսումնասիրութիւնը:



ԱՌԱՋԻՆ ՄԱՍ



Եւրոպա, Ափրիկէ և Ասիա
Միջերկրականի

ԳԼՈՒԻՒ Ա՝

Ֆ Ր Ա Ն Ս Ա

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ.— Տարած. 536408 քառակու-
սի քիլոմէթր. բնակիչ 38,517,975: Ֆրանսա ունի 6,200,000
հէքթար (1 հէքթար=10,000 քա. մէթր) անմշակ գե-
տին, այսինքն ամբողջ մակերեսով ին 11,8 առ 100 մասը,
լեռնոտ, քարուտ ու ճահճային, որոնք ևս չնորհիւ
ճարտարութեան տակաւ կը մշակուին: Անգլիոյ անմշակ
հողը ամենէն նուազն է, բացի Սկոտլանդէն և Իրլանտա-
յէն: Պելճիքայի և Գերմանիոյ մէջ 7-8 առ 100: Մշա-
կուած է 44,500,000 հէքթար, (84 առ 100) 20 միլիոն
բնակիչ Ֆրանսայի մէջ կ'ըրազին կամ կ'ապրին դաշտային
աշխատութեամբ:

Արմախի մշակութիւն.— Երկրին քառորդ մասը յատ-
կացուած է արմախի մշակութեան, որուն արտադրու-
թիւնը կը հասնի 5,400 միլիոն ֆրանքի (4200՝ հացահա-
տիկ, 1200՝ յարդ):

Պելճիքա՝ բազդատմամբ իր տարածութեան՝ անկի
արմախ կը մշակէ քան Ֆրանսա:

Արմտիք արտադրող մեծագոյն երկիրներն են.

1. Միաց.-Նահանգներ	951 միլիոն հէ.քթօլիար (հարեւրաւոր)
2. Ռուսիա	615 » »
3. Ֆրանսա	285 » »
4. Գերմանիա	258 » »
5. Աւստրո-Հունգար.	220 » »
Եւրոպայի արմտեաց չափն է	1,712,000,000 հէ.քթօլար.
Միաց.-Նահանգ.	» » » 951,000,000 »
Հնդկաց և Աւստրալիոյ.	» » » 410,000,000 »
Գումար	3,073,000,000 »

որ կը դնահատուի 33,000 միլիոն ֆրանքի. այս հաշուէն դուրս են Չինու, Հարաւ-Ամերիկայի, Ալիքիկէի արտադրութեանց գումարները: Միացեալ-Նահանգներէն ետք Ֆրանսա աւելի ցորեն կուտայ:

Ներստուծիւն ևս արտաճուծիւն ցորենի. — Զանազան արմտիք արտադրող երկիրներ կը հայթայթեն իւրաքանչիւր տարի իրր 100 միլիոն մէթրական քէնթալ (1 քէնթալ = 100 քիլօկրամ) արտաճութեան, ըստ պաշտօնական տեղեկութեան՝ Բրիտանական Հնդկաստանի, Գանատայի և Միացեալ-Նահանգաց համար և ըստ Շէրդէրի՝ ուրիշ երկիրներու համար:

Արտաճող երկիրներ. — Միացեալ-Նահանգներ 52,719 հէ.քթօլ. ցորենի արտաճութիւն տարեկան. Բանատա՝ 3,009,000, Աւստրալիա՝ 4,072,000, Անգլ.-Հնդկաստան՝ 7,207,000, Ասիական-Թուրքիա՝ 1,920,000, Եգիպտոս՝ 1,025,000, Չիլի՝ 1,833,000, Ալճէրի՝ 945,000, Թունուզ՝ 180,000, Արժանթին՝ 384,000, համագումար 73,294,000 հէ.քթօլիար ցորեն՝ Եւրոպայէն դուրս երկիրներէն, 44,500,000 հէ.քթօլիար ցորեն Եւրոպեան երկիրներէն, ընդամեն 117,794,000 հէ.քթօլիար:

Ռուսիա, Հունգարիա և Գանուբեան պետութիւնը ունին տրամադրելի իրր 24 միլիոն քէնթալ որ չբաւեր լէցնելու պակասը՝ կեդրոնական և արեւմտեան Եւրոպայի պետութեանց և որոնք կ'ստիպուին հայթայթել

մնացած պակասը Նոր-Աշխարհէն, Հնդկաստանէն: Պիտի դայ ժամանակ մը սակայն, յորում Միացեալ-Նահանգաց գաղթականութիւնը բաղձամարդուելով չկրնայ այլ ևս ցորեն արտածել:

Հանար. — Աղքատ երկիրներու բերքն է հաճարը, որ անշոր հողերու մէջ կը մշակուի: Պելճիքա կը մշակէ հաճարը՝ ցորենի հաւասար, Գերմանիա կրկինը, Ռուսիա՝ եռապատիկը: Ծանօթ աշխարհներու մէջ հաճարի հունձքը կը հաանի 500 միլիոն հէ.քթօլիարի, 5-6 միլիառ ֆրարժէքով:

Գարին հաճարէն նուազ կը մշակուի: Ծանօթ երկիրներու արտադրութիւնն է 300 միլիոն հէ.քթօլիար՝ որուն 234 միլիոնը միայն Եւրոպայի:

Ռուսիա՝ 45, 5, Գերմանիա՝ 36, 2, Անգլիա՝ 28, Ֆրանսա՝ 20, Աւստրո-Հունգարիա 18, 2, Պելճիքա՝ 1, 2 միլիոն հէ.քթօլիար կարտադրեն:

Վարսակը ամենէն կարեւոր արմտիքն է՝ ցորենէն ետք: Ֆրանսա կ'արտադրէ 80-90 միլիոն հէ.քթօլ. 1 միլիառ ֆրարժէքով: Եւրոպա կ'արտադրէ տարեկան 565 միլիոն հէ.քթօլ. օտար երկիրներ 176 միլիոն, ընդամեն՝ 800 միլիոն հէ.քթօլիար, 5 միլիառ ֆրարժէքով: (Ռուսիա կ'արտադրէ 200 միլիոն հէ.քթօլիար):

Եգիպտացորենը լաւ չածիր Ֆրանսայի մէջ, որովհետեւ աւելի տաքութիւն կ'ուղէ, հաղիւ 10 միլիոն հէ.քթօլիար կ'արտադրէ:

Ռոլըր Եւրոպայի արտադրութիւնն է 145 միլիառ հէ.քթօլիար եգիպտացորեն, Միացեալ-Նահանգներ կուտան 720 միլիոն:

Ս- ցրենն ալ, կրէնն ալ չունին մեծ կարեւորութիւն:

Ճարտարագործական մշակութիւնք. — Ֆրանսա այս մը շահութեան յատկացուցած է 370,000 հէ.քթար, որ կ'արտադրէ իրր 240,000,000 ֆրանքի արժէք մը:

Խալսահատիկներ. — Ֆրանսայի մէջ կը մշակուին կանձ (colza), շոքսօթ (navette), շոքսօթ և բեռնակոտ (came.

line) տունիկեր: Եւրոպա չարտագրեր պէտք եղածին չափ
իւղահատիկներ: Ֆրանսա տարեկան կը ներածէ 5 միլիոն
քէնթալ, 150-180 միլիոն արժէքով կանճրակ, շուշմայ և
ուրիշ իւղապտուղներ՝ Հնդկաստանէն և Ափրիկէէն:

Հիւսուսաճանիւթ. — Կ'արտագրէ իբր 80 միլիոն ֆրանս-
քի Էւրոպայի վուշ արտագրող երկիրներն են.

Ռուսիա	3,100,000	քուղ (filasse)	վուշ
Աւստրո-Հունգարիա	98,600	»	»
Իտալիա	68,340	»	»
Ֆրանսա	35,000	»	»
Ռուսիա	1,640,000	քուղ կանեփ	
Աւստրո-Հունգարիա	740,000	»	»
Իտալիա	960,000	»	»
Ֆրանսա	394,000	»	»

Բոլոր աշխարհիս արտագրած վուշի և կանեփի կէսէն
աւելի կուտայ Ռուսիա, մինակ կանեփի տարեկան բերքն
է 600 միլիոն քիլոկրամ:

Ճակնդեղի մշակութեան մեծ ոյժ կուտայ Ֆրանսա,
մանաւանդ երբ 1884 ին վերցուեցաւ անոր մաքուր, 1890
ին տուաւ 7 միլիոն թօնօ (1 թօնօ=1000 քիլո), որ կ'ար-
տագրէր 800,000 թօնօ շաքար, իսկ 1898 ին կրկնապատ-
կուեցաւ այդ թիւը:

Գերմանիա աւելի հող յատկացուցած է ասոր մշա-
կութեան: Երկրորդ մշակութիւն և վաճառումը ազատ
չէ, որովհետև կառավարութիւնը իրեն մենաշնորհ քրած
է: 1890 ի սպառումը կը հասնէր 38,000,000 քիլո: որուն
25ը տեղական, մնացածը կը գնուէր Միացեալ-Նահանգ-
ներէն, Ֆուլպայէն, Թուրքիայէն, Փիլիպեաններէն: Այս
գնումին արժէքն էր 36,300,000 ֆր:

Ֆրանսայի մէջ մարդ-գլուխ կ'սպառէ 800 կրամ,
Պելճիքա՝ 2500, Հոլանտա՝ 2000, Գերմանիա՝ 1500, Աւս-
տրիա՝ 1240, Նորվեգիա՝ 1020, Տանրմարք՝ 1000, Հուն-
գարիա՝ 940, Ռուսիա՝ 830 կրամ:

Պելճիքա՝ համեմատաբար՝ ֆրանսայէն աւելի ծխա-
խոտ կը մշակէ, Գերմանիա՝ կրկինը: Եւրոպայէն դուրս
Միացեալ-Նահանգները և Անգլիական Հնդկաստան ա-
ւելի կ'արտագրեն:

Բոլոր աշխարհի ծխախոտի արտագրութիւնն է
780,000,000 քիլոկրամ (200 միլիոնը Եւրոպայէն):

Պալլուի մշակութիւնը ծխախոտէն վերջը կուգայ
արժէքով և տարածութեամբ: Սա կը գործածուի գա-
րեջուրի պատրաստութեան:

Բանջարական մշակութիւնք. — Ընդէն շատ յաջողու-
թեամբ կը մշակուին Ֆրանսայի մէջ: Առաջին տեղը կը
բռնէ Գերմանիան՝ 1 1/2 միլիոն հքթր. գետնի վրայ, որ
տարեկան կ'արտագրէ 150,000,000 հէքթօլիտր:

Ծաղիկներ եւ պտուղներ խնամով կը մշակուին աւելի
օտար երկիրներ քան Ֆրանսա: Պտուղի արտածութիւնը
կը հասնի 40-50 միլիոն ֆրանքի: Նշանաւոր են Նորման-
տիոյ սալմի ու ինչոք, կեղքոնական գաւառներուն՝ շաքա-
ռակն ու շիշոք: Կան նաև Կերտ, Բուշ, Կորսիկ, Կոստա-
անուշահոտ Կորսիկէ: Թէ՛ ասոնց և թէ՛ ծաղիկներու մա-
սին որոշ վիճակագրութիւն մը չկայ:

Այգեգործութիւն. — Որթալուիճը մեծապէս վնասեց
այդ իներուն, 1890 ին կը մշակուէր 1,818,000 հէքթար
գետին, անցեալին կէսը, և որ տակաւ կը յետադիմէ:
Սակայն ամերիկեան որթատունկին պատուաստումը
մասամբ կենդանացուցի:

ԺԳ. դարէն ի վեր անուանի է Պօլտըլէի գինին՝
յաչս Անգլիացոց, նաև Մէտօքինը՝ իր անուշահոտու-
թիւնով, և հարուային գաւառներու գինիները:

Եւրոպա կ'արտագրէ տարեկան 115 միլիոն հէքթօ-
լիտր գինի: Ֆրանսա՝ 31 միլիոն, Իտալիա՝ 35 միլիոն,
Սպանիա՝ 34:

1891ին Ֆրանսա ներածեց 11 միլիոն հքթր: Միկնոյն-
ժամանակ Թուրքիա, Յունաստան տուին տարեկան քա-
նի մը միլիոն քիլոկրամներով չածիշ, որմէ կը շինեն:

3 միլիոն հէքթոլիտրէն աւելի սատրին գինի: Ֆրանսա կ'արտածէ 2 միլիոնի չափ՝ յԱնգլիա, Գերմանիա, Չուիցերիա, Պելճիքա, Հոլանտա, Ռուսիա և ամենէն աւելի Ամերիկա, Եգիպտոս, Հնդկաստան և Ծայր-Արևելք: Խնձորովի (cidre) արտադրութիւնը փոփոխական է 10 էն 20 միլիոն հէքթոլիտր: 100-200 միլիոն ֆրանք արժէքով:

Ամեն կողմերէ կը փնտռուի մանաւանդ Պօրտոյի գինին:

Արտաք եւ Անասնաբուծութիւն. — Բնական և արուեստական մարգերն ու դալարիք կը գրաւեն իբր 16 միլիոն հէքթար դետին, որուն հունձքին արգիւնքը կ'արժէ մտաւորապէս 2 միլիառ ֆրանք:

Պելճիքա և Գերմանիա գրեթէ Ֆրանսայի չափ արտադայր ունին, մինչդեռ Անգլիա՝ անոր կրկինը:

Ընտանի անասուններու արժէքը կը հասնի 6 միլիառ ֆրանքի: Ուրիշքէ՝ տակաւ կը նուազին, ոչք և ելք ամենէն քիչ կը գտնուին: Չի տակաւ մեծ կարևորութիւն կը դանէ, Գերմանիայէն աւելի, Ռուսիայէն խիստ նուազ, վերջինը և Հունգարիա անուանի են Եւրոպայի մէջ իբրև ձիաբոյժ երկիր, Սպանիա ունի 1 միլիոն շէն:

Պուարներ ձիերու քառապատիկն են: Ռուսիոյ, Գերմանիա, Ֆրանսա, Միացեալ-Նահանգներ, Արժանթին, Քանադա և Ուրուկուէյ առատ եւ կ'արտադրեն, սակայն աւելի արտածող են՝ Հոլանտա, Գերմանիա, Տանըմարքա:

Գերմանիա և Անգլիա կ'արտածեն եզան պաղ միս:

Ոչխար արտադրողներ են կարգաւ Ռուսիա, Բրիտանական կղզիք, Գերմանիա, Ֆրանսա: Եւրոպայէն դուրս Միացեալ-Նահանգներ, Արժանթին, Քալի, Աւստրալիա և Ուրուկուէյ:

Համոցի կեղանիներէն 35 միլիոն ֆրանքի հաւկիթ կ'արտածէ դիւստրաբար գէպի Անգլիա:

Մեղու. — կը հաշուուի 1.650,000 փեթակ, որ կ'ար-

տադրեն 7-11 միլիոն քիլոկրամ մեղր՝ տարուան համեմատ:

Շերամի որդին հիւանդութեան (pebrine) պատճառաւ այս ճարտարագործութիւնը խիստ տկարացաւ, որով Ֆրանսա հաղիւ 7-8 միլիոն քիլոկրամ մետաքս կ'արտադրէ:

Պիլոսութիւն. — Ֆրանսայի մէջ 140,000 նաւաստի և 25,000 նաւակներ կ'դրաղին ձկնորսութեամբ: 1891 ի արտադրութիւնը արժեք 86,973,817 ֆրանք: Ծովեզերքները հաստատուած են 50,000 ի չափ աւազաններ ձկնարուծութեան համար:

Անգլիա՝ արուեստական ձկնարուծութեամբ՝ մինակ թիւնիկէն (saumon) կ'ստանայ հիմա 4,000,000 ֆրանք, իսկ Հիւս-Ամերիկա կը շահի անկէ 600,000,000 ֆրանքէն աւելի:

Անասունք. — Ֆրանսա ունի իբր 9.5 միլիոն հէքթար ծառաստաններ և անտառներ: Թուենք Եւրոպայ անտառները:

Տարածութիւնք անտառի. Արտադրութիւնք փայտի

Ռուսիա	212,000,000	հէք. 180,000,000	խոր. մէթր
Մաց-Նահանգ	200,000,000	» 90,000,000	» »
Հնդկաստան	16,774,000	»	» »
Գերմանիա	13,900,000	» 40,600,000	» »
Չուիցերիա	771,000	»	» »
Սպան-Փորթոգլ	10,560,000	» 5,600,000	» »
Աւստ-Հունգար	18,626,000	» 55,410,000	» »
Ֆրանսա	9,455,000	» 25,075,000	» »
Շուէտ-Նորվեգիա	7,760,000	» 25,200,000	» »
Իտալիա	4,654,000	» 13,440,000	» »
Անգլիա	1,130,000	» 3,920,000	» »
Յունաստան	610,000	»	» »

Անտառներու արտադրութիւնը կ'արժէ 6,800,000,000 ֆրանք:

Համաքային հարստութիւն. — Այլիւ հանդէս Ֆրանսա ունի 1. Գեղանախի 557,178 հէքթար տարածութեան մը

վրայ, որով խիստ աղքատ կը նկատուի բազմատմամբ հետևեալ ցանկին.

1890ին	Արտադր. թ. օն.	Սպառ. թ. օն.	Մչն. գ ին թ. օն.
Անդրիա	180,000,000	» 160 000 000	» 6, 71 ֆր.
Միաց.-Նանդ.	140,000,000	» 100,000,000	» 6, 86 »
Գերմանիա	85,000,000	» 40,000,000	» 5, 85 »
Ֆրանսա	24,000,000	» 33,000,000	» 12, 33 »
Պելճիքա	20,000,000	» 10,000,000	» 9, 53 »
Աւստրիա	20 000,000	» 25,000,000	» 5, 87 »

2. Տորփ (tourbe = կիզահող) որ կը ղառի և կ'այրի բոցով: Ասոր մէկ տեսակն է ճալայը (jais) որ ընդունակ է փայլունութեան որմէ կը շինուին սգաւորներու յատուկ դահարներ, նոյնպէս ճալայը (lignite) սովորաբար գորշագոյն:

Հանածոներ. — Ֆրանսա կ'արտադրէ Երկաթի հանքերէն: Անդրիա կը հանէ 14,700,000 թ. օնօ, Գերմանիա՝ 7,830,000 թ. օնօ, Սպանիա՝ 5,610,000 թ. օնօ, Պելճիքա՝ 3,171,000, Ֆրանսա՝ 2,841,751 թ. օնօ երկաթի հանածոյ:

Երկաթի հրաքար (pyrite de fer) կը հանուի ծծմբաթըթու շինելու համար: Ֆրանսա կը հանէ 203,814 թ. օնօ, 3,071,905 ֆրանք:

Կապար եւ արծաթ. — Ֆրանսայի ամենէն կարևոր մետաղաբեր հանածոն է արծաթախառն կապարը, որմէ կ'արտադրէ իրր 19,412 թ. օնօ, 4,213,981 ֆրանք արծաթը: Կապարի հանածոյին ընդհանուր արտադրութիւնը կը հասնի 1,023,000 թ. օնօ, որուն կէսէն աւելին կուտայ Սպանիա:

Պղինձ. — Ֆրանսա չունի այս հանքէն: Սպանիա կը հանէ 3,202,000 թ. օնօ, Ռուսիա՝ 108 000 թ. օնօ, Բրուսիա՝ 564,000 թ. օնօ, Չիլի՝ 144,000 թ. օնօ:

Չինի. — Ասոր ընդհանուր արտադրութիւնն էր 1889 ին 1,123,000 թ. օնօ, որմէ Գերմանիա՝ 703,000 թ. օնօ, Իտալիա՝ 87,000, Պելճիքա՝ 80,000, Սպանիա՝ 74,000, Նորվեգիա՝ 50,000, Շուէտիա՝ 36,000, Յունաստան՝ 43,000:

Հանքային եւ Ծովային աղ, կը հաշուուի Ֆրանսայի մէջ 464,205 թ. օնօ հանքային, և 20,078,650 թ. օն. ծովային աղ:

Մետաղագործական անարտադրութիւն. — Զուլ. Երկաթ և Պողպատ. — Գարբնոցային ճարտարութիւնը կէս դարէ ի վեր կարևոր կերպարանափոխութիւն կրած է, յորում Ֆրանսա ետ կը մնայ բազմատմամբ Միացեալ-Նահանգաց, Անգլիոյ և Գերմանիոյ, ըստ հետևեալ ցուցակին:

	Չոյլ թ. օնօ	Երկաթ թ. օնօ	Պողպատ թ. օնօ
Անգլիա	8,456,000	2,290,000	3,570,000
Միաց.-Նահանգ.	6,594,000	2,000,000	2,946,000
Գերմանիա	3,913,000	1,900,000	1,900,000
Ֆրանսա	1,734,000	809,000	529,000
Պելճիքա	832,000	577,000	215,000
Աւստրո-Հունգ.	779,000	473,000	289,000
Ռուսիա	482,000	323,000	225,000
Շուէտ	423,000	303,000	225,000
Գումար	23,233,000	8,675,000	9,890,000

Ճարտարութիւն պղնձի. — Այս մասին առաջին կարգին վրայ կը գտնուին Միացեալ-Նահանգները (104000 թ. օնօ), Անգլիա՝ (76,000 թ.), Սպանիա՝ (71,000 թ.) Չիլի (50,000 թ.), Ֆրանսա միայն 2,000 թ. օնօ: Պղնձի բոլոր արտադրութիւնն է 371,000 թ. օնօ:

Կապարի անարտ. — Ֆրանսա երբեքն կ'արտադրէր 10,000 թ. օնօ կապար, հիմա իջած է 6000 ի: Սպանիա՝ 235,000 թ. Միացեալ-Նահանգք՝ 164,000 թ. Գերմանիա՝ 110,000 թ. Անգլիա՝ 48 000 թ. Աւստրալիա՝ 21,000 թ. համադրումար 630,000 թ. օնօ:

Չինիի անարտ. — Ընդհանուր արտադրութիւնն է 349,000 թ. օնօ: Առաջին զինկի երկիրն է Գերմանիա՝ 136,000 թ. Պելճիքա՝ 82,500 թ. Միացեալ-Նահանգք՝ 51,000 թ. Հոլանտա՝ 29,000 թ. Անգլիա՝ 19,500 թ. Ֆրանսա՝ 18,000 թ. վեցերորդ կարգին մէջ:

Պանկագին Մետաղներ.— Այս մասին նուազ հարուստ է Եւրոպայ: Գերմանիա տարեկան կ'արտադրէ 402,000 քիլօկրամ արծաթ, Ֆրանսա՝ 80,000 քիլ. Ապանիա՝ 65,000 քիլօկրամ:

Եւրոպայի մէջ անհանդուրդ միակ երկիրն է Ռուսիա.

	Արծաթ քիլօկրամ	Ոսկի քիլօկրամ	
Միաց.-Նահանգ	1,566,000	Միաց.-Նահանգ	49,353
Մէքսիկա	1,385,000	Ռուսիա	35,000
Գերմանիա	402,000	Աւստրիա	37,000
Պոլիվիա	230,000	Չին	13,000
Ֆրանսա	80,000	Հարաւ.-Ափրիկէ	12,000
Պարսկաստան	75,000	Ֆրանսա	105
Ապանիա	65,000		

Ֆրանսա կ'արտադրէ նոյնպէս 5-6000 թ. արծաթ, 169 թ. արծաթ (antimoine) 30 թ. անիմոն, 15 թ. օնոսիմոն:

Երկաթը, Զոյլը, Պողպատը կը գործածուին մեքենաներու, գործիքներու և ամեն աեսակ զէնքերու շինութեանց, ինչպէս նաև բռնաբերի, կղզանքի, կցուածքի (մէնթէյէ) վերարուժական գործիքներու, կառքի, կշիռի, ասեղի և:

Բարիզ եղական է Ոսկերչութեան և Գոհարագործութեան մէջ: Պղզանսոն կեդրոն է ժամագործութեան:

Ճարտարութիւն Ֆրանսայի.— Մէկ միլիոն մարգրիկ կ'զրադին այս ճարտարութեամբ, որուն տարեկան արտադրութեանն է 3 միլիոն ֆրանք, որմէ իր Գրաստածութեւ կ'արտածէ 800 միլիոն:

Բարիզ.— Ասոր 2/3 մասը Ֆրանսա կ'ստանայ Միացեալ-Նահանգներէն, Հապրի ճամբով, որ Ֆրանսայի բամպակին մեծագոյն կեդրոնն է, մնացածը կ'առնէ թուրքիայէն, Եգիպտոսէն: Ալժէրի՝ Ամերիկայի պատերազմէն առաջ՝ կ'արտադրէր մինչև 900,000 քիլօկրամ

1891 ին Անգլիա ունէր բամբակի ճարտարութեան համար շփերուէր (broche)	40,512,000
Արևելեան Հնդկաստան	2,895,000
Միացեալ-Նահանգներ	14,500,000
Յամաքային Եւրոպա	24,576,000
Ֆրանսա	3,786,000

Չինացի մանարաններու և հիւսուածարաններու մէջ գործածուած:

Համայն Եւրոպա կ'սպառէ 4,060,000 հակ բամբակ, (Ֆրանսայի հակ 206 քիլօկրամ), մինչդեռ Մեծն-Բրիտանիա առանձինն կը գերազանցէ այս քանակութիւնը:

Անգլիոյ արտածած բամբակէ հիւսուածներու արժէքը 1890 ին կը հասնէր 1600 միլիոն ֆրանքի, մինչդեռ Ֆրանսայինը հազիւ 114 միլիոն ֆրանք էր:

Ֆուրց.— Շալի և դորգա գործութեան յառաջանման շնորհիւ բուրգի ճարտարութիւնը հսկայ քաղ մը սկսաւ առնել: Միջին դարուն իտալացիք յարեցան այս ճիւղին: Արևելցւոց նայելով ժ. դարուն Անգլիացիք, ամենէն վերջը Ֆրանսա: Նոյն առեւնները Մալթաք՝ Եգիպտացիներէն արտաբուելով ֆարքասոնի մէջ հիմնեցին արհեստանոցներ, Սպանիոյ Մելբու ոչխարին բուրգը սկսաւ բարուքել Ֆրանսայի տեղական բուրգը, որմէ, Ֆրանսա, 1890 ին սպառեց 222 միլիոն քիլօկրամ, իսկ Անգլիա՝ 214 միլիոն: Ֆրանսական բուրգէ հիւսուածներու արտածութիւնը շատ աւելի է ներածութեանն:

Մետաքսի ճարտարութիւն.— Ֆրանսայի գործարանները կ'սպառեն 7,000,000 քիլօյի բժոժի թել (grège), կ'արտադրէ 8-9 միլիոն քիլօ քոթ, (15 քիլօ բժոժէն կ'ելլէ 1 քիլօ մէտաքս) որ չբաւեր իր պէտքին և կ'ստիպուի ներածել իտալիայէն, Չինէն, Ճաբոնէն, Թուրքիայէն տարեկան 250 միլիոն ֆրանք բժոժ:

Մետաքսի Եւրոպական մեծագոյն հրապարակն է Աիօն: Ժէ. դարուն՝ քաղաքական խռովութեանց պատ.

ճառաւ՝ մետաքսի գործաւորներուն և ճարտարագործներուն երեք քառորդը թողուց իր մայր-երկիրը և հաստատուեցաւ յԱնգլիա, Գերմանիա, Զուիցերիա, Հոլլանտա: ԺԲ. դարուն վերականգնեցաւ Լիօն, որուն հետ նոյն ատենները, ոչ մէկ երկիր կրցաւ մրցիլ: Ունի 230,000 ձեռքով գործասեղան, 25,000 մեքենայով, արտադրութիւնը կ'արժէ 450,000,000 ֆրանք, ի միասին հաշուելով մետաքսէ դանազան հիւսուածները: Սակայն հիմայ մեծ մրցումի մէջ են Անգլիա, Ռուսիա, Գերմանիա, Աւստրիա և Միացեալ-Նահանգները, որոնց արտադրութիւնը նըշանաւոր տեղ մը կը գրաւէ այսօր:

Ֆրանսայի այժմեան արտածութիւնն է 248,000,000 ֆրանք, անցեալին կէսը, մինչ ներածութիւնը 7 միլիոնէն բարձրացած է 48 միլիոն ֆրանքի:

Ճարտարութիւն Վուշի եւ Կաննիի — Նախկին ճախրակին և ռոքին յաջորդեցին մեքենաներ, շնորհիւ ֆրանսացի փիլիպպոս Ժեռարի գիւտին, որ ի հիմանէ կերպարանափոխեց վուշի և կաննիի ճարտարութիւնը: Բայց ֆրանսացիք ի սկզբան արհամարհելով այդ գիւտը՝ օգտուեցան Աւստրիացիք, Սաքսոնք, Անգլիացիք: Հիմա ալ Գաղղիա կը յետադիմէ այս մասին:

Հիւսուածներու և թելերու ներածութեան արժէքը կը հասնի 5-600,000,000 ֆրանքի, մինչ արտածութիւն՝ 20-30 միլիոն:

Ժամնակի շինութեան մասին ֆրանսա մրցակից չունի, քաղաքներու և գիւղերու մէջ 250,000 գործաւորուհիներ կը հիւսեն ժանեակներ, որոնք նշանաւոր են իրենց նրբութեամբ և ճաշակով: Բոլորովին ասեղով բանուած ֆրանսական ժանեակի միակ կեդրոնն է Ալանսօն:

Եզրակացութիւն. — Ֆրանսայի հիւսուածային ճարտարութիւնը կայուն վիճակ մ'ունի, որով մեծ ներածութեան հակառակ արտածութիւնը կը նուազի: Ընդհակառակն Անգլիա կը գերազանցէ, որովհետև սպառումի

ընդարձակ հրապարակներ ունի Ափրիկէի, Հնդկաստանի, Ովկիանիոյ և Հարաւ. Ամերիկայի մէջ:

Քիմիական նարտարութիւնք. — Տարալուծութեան յառաջգիմութեամբ զարգացած է այս ճարտարարուեստը: Նիւթերն են. գետնածուխէ հանուած ներկագործական նիւթեր, սոճի (թթու), շճֆալթոն, սոճալ (potasse), դեղագործական արտադրութիւններ, քիմիական պարարտութիւն (engrais chimique), պոլիտեխնիկներ, սիւնիկներ, յիւլիտ (caoutchouc), բէկիւնիլ:

Բարիզն ու իր արուարձանները կը պատրաստեն ընտիր օճառ:

Ֆրանսա ունի 500 թղթի գործարան, որոնք կ'արտադրեն տարեկան 170,000 թօնօ թուղթ: Եւրոպայի մէջ մինակ Անգլիա կը գերազանցէ ֆրանսա այս մասին: Բէրլինեան քաղաքը կ'արտադրէ ընտիր Սիկարի թուղթ:

Զարդարութեան նարտարութիւն. — Ֆրանսա երբեմն անմրցելի էր պերճանքի ճարտարարուեստին մէջ: Գոհարեղէնի և ոսկերչական յօրինուածները, յախճապակին, ճենապակեայ ամանները, հայելիները, բիւրեղները և, ամեն կողմերէ կը փնտռուէին: Բայց Անգլիա, Գերմանիա, Իտալիա, Ռուսիա, Աւստրիա գերազանց ճիգերով սկսան մրցիլ, բազմապատկեցին իրենց նկարչութեան և գեղարուեստից պատմութեան ուսումնարանները, և գրեթէ բոլոր մեծ քաղաքներու մէջ հիմնեցին թանգարաններ:

Մանդակամ նարտարութիւն. — Հողմաղայներ տեղի տուին շոգեշարժ աղօրիքներուն, որոնք կը պատրաստեն ալիւրը: Ալիւրէն կը պատրաստուի բացի ծանօթ հացէն՝ Բելուայ (vermeille), սոսի, սոսի (nouille, էրիշթէ) և ուրիշ շաքարախառն շոգի, կարկանդակ և:

Եպարի գտարանք (raffinerie). — ԺԹ. դարէն իջվեր յառաջգիմեց շաքարագործութեան ճարտարութիւնը: Ֆրանսա ունի 530 գտարան և շաքարի գործարան, որ կ'արտադրեն տարեկան 800 միլիոն քիլօ շաքար:

Ըմպելիաներ. — Պօրտօ կը պատրաստէ ամեն տեսակ խմելիքներ, ցէ (anisetto), վերն-թէ, օշնդր (absinthe), կեսաուդի (kirsch), պէնտիքի (դինի մը), սքանչելի բէնի, օղի, և այլն:

Պարեզուրի արտագրութիւնն է 9 միլիոն հէքթլորոր երկրին անբաւական ըլլալով Գերմանիայէն և Պելճիքայէն կը ներածեն պակասը:

Պանիր և կարագ. — Ֆրանսա կ'արտածէ 100 միլիոն ֆրանքի պանիր և կարագ:

Զանազան շաքարեղէններու, տուրմի (chocolat), պահունի աղած զանազան մներու և բանջարեղէններու ճարտարութիւնները հետզհետէ կարևորութիւն կ'ստանան:

Զանազան ճարտարութիւնք. — Նկարէն Բոննի ծնունդ առած է Ֆրանսայի մէջ ժէ. դարէն: Կեղրոնը Բարիդ է:

Տպագրութիւնք յառաջդիմած է կրթութեան զարգացման հետ:

Փորագրութիւն, Վիսագրութիւն, Պատկերագործութիւն, պողպատի, պղնձի, զինկի, քարի, փայտի և ստուարաթղթի վրայ, իրենց աթուրը հաստատած են Բարիդ:

Փոխադրութեան միջոցներ. — Երկրի մը հարստութեան և զարգացման մեծագոյն միջոցներէն մէկն է փոխադրութեան միջոցներուն գիւրութիւնը: Ֆրանսայի ճամբաներուն երկայնութիւնն է 671,000 քիլոմէթր, ապրանքի ներքին շրջաբերութիւնը՝ 25 միլիառ քիլոմէթրական թօնօ, որուն 15 միլիառը երկաթուղիներով, 4ը՝ նաւարկութեամբ և տեղի կ'ունենան:

1833 ին սկսաւ երկաթուղիներու շինութիւնը, 1891 ին ունէր 35,000 քլմ. գիծ, 14,689 միլիոն ծախքով, իսկ 1900 ին 41,173 քլմ. երկաթուղի և 2,459 քլմ. տրամուղի:

Նաւարկելի են Սէն, Լուառ, Կարօն գետերը:

Հեռագրաթելին երկայնութիւնն է 326,264 քլմ. թելարդիւնք 44,793,860 հեռագրալուր: 9,265 նամակատուն, 2293,2 միլիոն նամակ, քարտ, լրագիր և:

Մովսլին փոխադրութիւնք. — Դիրքը թէև նպատաւոր, բայց Անգլիայէն շատ վար կը մնայ ծովային վաճառականութեան մէջ: Հետևեալ ցուցակը կը պարզէ զխաւոր ծովային պետութեանց առևտրական ոյժը 1900 ին:

Շոգենաւ թօնօ տարող.	Առգտուն. թօնօ	
Անգլիա	12,149,000	2,112,164
Միաց.-Նահանգք	1,454,966	1,295,000
Գերմանիա	2,159,919	490,114
Ֆրանսա	1,052,193	298,369
Նորվեգիա	764,683	876,129
Իտալիա	540,349	443,306
Ռուսիա	469,496	251,405

Ինչպէս կը տեսնուի այս ցանկէն, Անգլիոյ ծովային առևտրական ուժը անհամեմատ բարձր է միւսներէն, հանքածուխի, երկաթի և ուրիշ մետաղներու, բրդեղէն ու բամպակեղէն անսահման արտածութեան պատճառաւ: Եւրոպայի մէջ սպառած կամ կերպարանափոխուած նիւթերու ներածութեանց երեք քառորդը Անգլիական դրօշով կը կատարուի:

Մարսիլիա Ֆրանսայի առաջին նաւահանգիստն է Միջերկրականի եզերքը, ունի 171 հէքթր. աւազան, 8-10 մ. խոր. իր նաւային շարժումը կը հասնի 12 միլիոն թօնօյի, և փոխանակութեանց արժէքը՝ 2 միլիառ ֆրանքէն աւելի:

Պօրտօ. — Գետային և ծովային նաւահանգիստ, խոշոր նաւեր չկրնար ընդունիլ, որովհետև հազիւ 6-7 մէթր խորութիւն ունի: Նաւային շարժումն է 2,550,350 թօնօ: Գլխաւոր արտածութիւնն է գինի, օղի և հեղուկներ:

Հալը. — Մանչի վրայ Սէնի բերանը, երկրորդ նաւահանգիստ Ֆրանսայի, մեծագոյն շտեմարան բամպակի, մորթի, գաղթարեքերու, հիւսուածներու: Մեծ

վաճառականութիւն ունի Անգլիոյ, Հիւս. Եւրոպայի և Ամերիկայի հետ: Նաւային շարժումն է 6,375,576 թօնօ, 4898 ին,

Քալէ. — Համանուն նեղուցին եզերքը. նաւային շարժում՝ 866,755 թօնօ: Պարտք — 1,160,002 թօնօ:

Ռուսն. — 1,56 0700 թ. հետզհետէ կարևորութիւն կը գտնէ:

Տեօնքէրք, Նամթ, Պէյեօն կարևոր նաւահանգիստներ են:

Արտաքին վաճառականութեան կողմանէ բոլոր աշխարհի մէջ Անգլիա է առաջին պետութիւնը:

1891 ին Անգլիա ներածեց 421,000,000 անգլ. սթեռլինի վաճառք, արտածեց 316,000,000 սթեռլին:

* 1891 ին Ֆրանսայի ներածութիւնը	Ֆր. արտածութ.
Սննդական նիւթեր	1,592,812,000 » 797,486,000
Ճարտարական »	2,533 160,000 » 779 055 000
Տարազագործուած »	655,728 000 » 1,816 933,000
Չանազան »	139 659,000 » 233,642,000
Գումար	4,921,359,000 » 3,627,116,000

Ինչպէս ցածկէն կ'երևի աւելի ներածութիւն ունի Ֆրանսա և արտածութիւնը նախորդ տարիներէ նուազ:

Դրամատունք եւն. — Անգլիայէն ետք Ֆրանսա է ելժտական առաջին հրապարակը, շնորհիւ հաստատուն պանքաներու և դրամի առատութեան, Գլխաւորն է անոնցմէ Պարտք — Ֆրանսա, 1803 ին հիմնուած որ, Պանք տ' Անկլըթէրին հետ, կ'իշխէ օտար դրամագլուխներու հրապարակին, Չեղջի գործառնութիւն 12-15 միլիառ ֆրանք, որուն իբր 2/3 ը Բարիդի համար: Պատրաստ մետաղ՝ 2 միլիառ, և տոմսակներու շրջաբերութիւն 2—2, 5 միլիառ:

Կան նաև ուրիշներ. Քրեոն - Լեօն, Քոնստանտնուպոլիս - Լեօն, Լեօն Կոնստանտնուպոլիս - Լեօն:

* Մասնաւոր արժեքներուն մ'ունի 1899ի հաշուեկշիռը:

Քրեոն Գոնտէ, Սոնթէթ Եւրոպա և: Բաղմաթիւ խնայողական, և անառկները:

Դրամի միութիւնն է ֆրանք, չափք և կշիռք ըստ մէթրական դրութեան:

Ֆրանսայի արտաքին կալուածոց տարածութիւն 2, 5 միլիոն քառակուսի քմ. բն. 30 միլիոն:

Գ Լ ՈՒ Ի Բ
Ի Տ Ա Լ Ի Ա

Մ Ի Չ Ե Ր Կ Ր Ա Կ Ա Ն Ի կուրծքին կախուած սքանչելի երկիր մ'է Խաւիա: Տարած. 286,648, բն. 32,000,000, և դաղթական տուած է 2,000,000 (1, 5 ը Ամերիկա): Յամաքէն երկաթուղիով կապուած Ֆրանսայի, Աւստրո-Հունգարիոյ և Գերմանիոյ հետ: Առևտրական հզօր նաւային ընկերութիւններ կը կապեն այս թերակղզին Ամերիկայի և Եւրոպայի. — Արևելքի հետ:

Մշակութիւն. — Հողը արգասաբեր, սակայն երկրագործութիւնը նուազ խնամուած, որովհետև կալուածատէրեր իրենց հողերուն մշակութիւնը վարձակախնորու յանձնելով, իրենք կը քաշուին մեծ քաղաքներու մէջ:

Փսքը կալուածատէրներու ս'չ ապրուստը և ս'չ ալ շահը տարբերութիւն ունի հասարակ գեղացիներէ, որովհետև մեծ դրամագլուխ չունին. ահա այս է դաղթականութեան մեծ շարժումը:

Խաւիոյ գլխաւոր արտադրութիւնն է ալկոհոլ, շէն և յէթ, 23 միլիոն հէքթար տարածութեան մը վրայ: Կ'արտադրէ 50 միլիոն հէքթոյիտը ցորեն որ անբաւական է իրեն իսկ, 30 միլիոն հէքթար: Էփեպոսոսքէն, 8 միլիոն քրեյն, 6 միլիոն Չարսէ, 4, 5 միլիոն համար և ֆուրէ: Եւրոպայի մէջ ամենէն շատ բրինձ արտադրող երկիրն է Խաւիա:

Այգեգործութիւնը շատ յառաջացած է, կառավարութիւնը տարեկան 8 միլիոն ֆրանք ծախք կ'ընէ կառուելու որթալուիճի և ուրիշ հիւանդութեանց դէմ, ասոր համար 5 մասնագիտական վարժարաններ ալ հիմնած է: Այժմ մշակուած է իբր 3,560,000 հէքթար, որոնց տարեկան գինիի արտադրութիւնը կը լինի 30 - 38.000,000 հէքթօլիտր:

1884 ին Ֆրանսայի ծախսեց 90,300,000 ֆրանքի գինի, քայց այս արտածումը շատ նուազեցաւ, երբ Ֆրանսա սկսաւ 18, 75 ֆր. մաքս առնել:

Նշանաւոր են Թոսքանի կարմիր գինին, նաև Բիէմօնթէի, Վենետիկի և Սիկիլիայի գինիները:

Իտալիոյ կլիման նոյնպէս նպաստաւոր է Չիլէնէ մշակութեան, որուն յատկացուած է իբր 950,000 հէքթար գետին, սակայն տունկերուն մէկ մասնաւոր հիւանդութեանը պատճառաւ (mosca olearia) բերքերը նուազեցան և կ'արտադրեն իբր 3.000,000 հէքթար. ձէթ որուն մեծ մասը կը հայթայթեն Նաբոլի և Սիկիլիա: Ամենէն ընտիր իւրը կուտան Թոսքանա և Բիէմօնթ:

Իտալիա նշանաւոր է իր ճարտարական տունկերով: Սիկիլիա, ֆալպպրիա, Սարտենիա կը մշակեն Բալիէնէ որուն արտադրութիւնը կրնայ մրցիլ Ամերիկեանին հետ:

Հիւսիսային գաւառները կ'արտադրեն մէկ միլիոն մէթրական քէնթալ կոնէ և 200.000' Լու, որոնց քուղերու սպիտակութիւնը և նրբութիւնը ամեն կողմէ կը գնահատուի և ամբողջովին կ'արտածուին ի Ֆրանսա և Անգլիա:

Միսախոտը՝ մենաշնորհ ըլլալուն պատճառաւ, կ'արտադրէ իբր 2.000,000 քիլօկրամ, որ իբր պէտքին իսկ անբաւական է:

Թիւնիին մշակութիւնը մեծ զարգացում ունի: Իտալիա Եւրոպայի մէջ առաջինը և ամբողջ աշխարհի մէջ, Չինէն ետք, երկրորդ արտադրող մ'է մետաքսի:

Աշխարհի մէջ մետաքսի արտադրութեան տախտակ.

	միլիոն 1882-1889		միլիոն 1882-1889	
	1874	1874	1874	1874
	քիլօկ.	քիլօկ.	քիլօկ.	քիլօկ.
Իտալիա	3,167,850	2,860,000	Չին	3,420,700
Ֆրանսա	617,500	731,000	Ճարսն	1,640,000
Արևելք	648,750	940,000	Պէնկալ	245,000
				425,000

1890 ին իտալիոյ բժոժի արտադրութիւնն եղաւ 40,774,000 քիլօ, կը մշակէ նաև Բալիէնէ:

Ճարտարական տունկերու կարգէն կրնանք հաշուել Բալիէնէ (régliste) - Շումակ (sumac) կաշեգործներու և ներկարարներու հարկաւոր, անիս (anis) Ֆրանսայի և Հոլանտայի դտարաններէն փնտուած, Գալլէն (manne) գեղադործներու համար, և հոտաւէտ Բալիէնէ:

Պսոլաւու, Տաւեր և, ամառանկր.— Իտալիա կը մշակէ բարեխառն և զով կլիմայի յատուկ պտուղներ, շաքանակ, շիշու, ինչոր, Բալի, Բալի, Բալի, Բալի, Բալի, Բալի և Բալի: Սիկիլիոյ մէջ կը հասնի արժաւ: Այս պտուղներուն մեծ մասը կ'սպառեն Անգլիա և Գերմանիա, տարեկան իբր 50 միլիոն ֆր. արժէքով:

Իտալիոյ ամբողջ մակերևոյթին 12 առ 100 մասը ծածկուած է անբուսեղով, որուն տարեկան եկամուտն է 90,000,000 ֆրանք:

Անասնաբուծութիւն.— Բնական ամենէն գեղեցիկ մարգագետինները կը տարածուին Բոյի հովտին մէջ, ուր կը հասին՝ գիտականօրէն յարմարցուած ջրանցային դրութեամբ, առատ և զով ջուրեր. ունի արհեստական մարգագետիններ, գլխաւորաբար Լուզերնիէ (luzernière) որ տարեկան 5-6 անգամ կը քաղուի և կը ծառայէ դուրսներու սննդեան: Անասնաբուծութիւնը խիստ զարգացած է: Եւ և Կ-Կ, 5.000,000 ընտիր են Բիէմօնթէի և Լամպարտայի մէջ: Իսկ Հոմի գաշտին մէջ կը բուծուին կիսավայրենի Գալլէնէ: Ֆալպպրիա, Սարտենիա ունին ընտիր ձէթ, 700,000ի չափ, նշանաւոր Ժուսկալութեամբ և տոկունութեամբ: Եւ և Լու 900.000. Կ-Կ՝ 7.000,000 որ

կուտան լուսագոյն բուրգը, կը բուծուին մանաւանդ Ապրիլի և Օրկիլիոյ մէջ: Ամեն լեռնային երկիրներու պէս Իտալիա ունի առատ արծաթ՝ 2,000,000:

Իտալիոյ ծովեզերքները յոյժ ձկնոտ են: Տարեկան ձկնորսութիւնները կը հաւաքուին 150 տեսակներէ աւելի խեցեպարտներ, կալիքներ, առապ (langouste) խեցեպարտներ, 400 էն աւելի որսանաւեր կ'որսան բոսոր և սպանդ նարոյի, Օրկիլիոյ և Թուենուզի եզերքները: Չինարուծութեան զարգացման շնորհիւ Քոմաչիօ լճակը եղած է աշխարհի ամենէն ձկնոտ լիճը: Հոն երբեմն կը համբուր մինչև 20,000 ի չափ որսանաւ, 60,000 ի չափ նաւաստիներով: Չինորսութեան արդիւնքը կը գնահատուի 16 միլիոն ֆրանքի:

Երկրագործութեան տեսակէտով Իտալացի գեղջուկը ազքատ է, որովհետև հողին մէկ կարևոր մասը ճահճային ու խոպան մնացած է:

Արտաճական նարտարութիւն.— Իտալիա չունի այրելի հանք, ածուխ, որ ներկայ մեքենայի, շոգիի, կազի դարուն ու ճարտարութեան սնունդն է: Վենետիկէ, Թոսքանայէ և Քալապրիայէ կը հանէ իր 400,000 թօնօ փայտաք և ածխաք, որք հազիւ իր պէտքին 2/5 մասը կը հոգան:

Հակառակ միւս մեծաղններուն առատութեան, Իտալիա, մեծազգործական ճարտարութեան կողմանէ, նոյն իսկ Ապանիայէն յետոյ կուգայ:

Էլպա կղզին կը հայթայթէ ընտիր տեսակէն երկաթ հանածոյ, զոր արդէն կը շահագործէին նախնի Ետրուրացիք և Փիւնիկէցիք: Քալամիդայէն կ'ելնէ կալիք (ժագնիս), Սարտենիա ունի հանքեր, Այս երկու կեդրոնները հազիւ կ'արտադրեն 300,000 թօնօ հանածոյ, մինչդեռ կրնան տալ 3 միլիոն:

Օրոնզոյէն կը հանուի 100,000 թօնօ զէնի հանածոյ:

Սարտենիա (Իլիեզիա) կուտայ արծաթախառն կապար 41,000 թօնօ: Վենետիկ, Թոսքանա, Լոմպարտիա կուտան արծաթ՝ 20-30,000 թ. զոր կը բանեցնէ Անգլիական

ընկերութիւն մը: կը հանուին նաև անթիլ, մանկանդ, անթ, ծաւիլ (antimoine = բասթըք թաշը), Էտնայի և Վետուզի գաւառները ունին շառագոյն որ չեն շահագործուիր լիովին և կուտան միայն տարեկան 400,000 թօնօ՝ 30,000,000 ֆրանք արժէքով:

Թոսքանա ունի երկնքանգ արծաթ: Քարաքա այդ մարմարինը հանելէ զատ ունի նաև արհեստանոց մը, ուր մարմարագործներ քարահանքին արտադրութիւնը կը փոխակերպեն հին և նոր արձաններու, շրջանակի և զարդի վերարեբեալ առարկաներու, զոր կ'արտածեն մինչև նոր-Ուլսարհ: 20,000 ի չափ գործաւոր կ'աշխատի այս կճահանքերու մէջ, որ կ'արտադրեն 25 միլիոն ֆրանքէն աւելի արժէք մը:

Վերջին տարիներս պետութիւնը ազգուօրէն քաջալերեց մեծաղագործական ճարտարութիւնը, նոր գիտութիւն համար հիմնելով մեծ հաստատութիւններ:

Քասթէլամարի մէջ է Արմիտիլ թնդանօթի գործարանը, ճենովայի մօտ՝ Ս. Բիէն-տ'Ուրլենայի մէջ կը շինուին երկաթուղիի ամեն նիւթեր, վայրաշարժ, բայլ և նաւարաններու մէջ հետզհետէ փայտը տեղի կուտայ մետաղին, մանաւանդ վենետիկէ, Սրէձձիայի մեծ գործարաններուն մէջ:

Հիւսուսաճային նարտարութիւն.— Իտալիա դեռ ի վիճակի չէ մրցելու Գերման և Աւստրիական ճարտարութեան հետ Միլան, ճենովա, Թոսքանա, Նարոյի հազիւ 1,200,000 շամիրակ ունին բամբակ մանեղու: Բնիկ բուրգին արտադրութիւնը (10,000,000 քիլօ) անբաւական է տարաղագործական պէտքերուն: Ճենովա բուրգը կը ներածէ Ամերիկայէն և Աւստրալիայէն, ճենովա և Թուրին կը գործեն ազնիւ կաւներ: Վուչի և կանեփի հիւսուածը նուազ է:

Մետաքսեղէնի ճարտարութիւնը աւելի հին է, խիստ յաջող ժ.Գ. ժ.Գ. գարերուն: հիմա ալ ունի բազմաթիւ գործաւորներ, Հիւսիսային գաւառներուն հարս-

տութեան գլխաւոր աղբիւրը այս ճարտարութիւնն է և միանգամայն թերակզրիւն ճարտարութեան ամենակարեւորը: Սակայն իտալիա մետաքսեզէնի արտադրութեան մասին վեցերորդ կարգին վրայ է: Կը հաշուուի 2,000,000 շամիրակ, և հազիւ 1000 գործասեղան:

Հիւսուածներու շինութեան մասին Լիոնի մրցակիցն է Միլան, ճենովա և Թուրին կը գործեն գեղեցիկ Բուշէ, վենետիկի ուկեճ-մուկ (brocard) քրքեղեղները նշանաւոր են:

Ճարտարարուեստի արդիւնք. — Եւրոպայի հրապարակին վրայ, իտալիա, կարեւոր տեղ մը կը գրաւէ արուեստի, պերճանքի և աննդական ճարտարութեանց կողմանէ: Արուեստագէտներն ունին հազուագիւտ ճարպիկութիւն ձեռքի և խիստ մեծ արագութիւն՝ գործի մէջ: Վերջին տարիներս մանաւանդ յոյժ շահագրգիռ կերպարանափոխութիւն կրեց իտալական ճարտարարուեստը և կրցաւ մրցումի մանել ուրիշ նշանաւոր աղգերու հետ: Հիմնեցին բազմաթիւ (իրր 80) արուեստագիտական վարժարաններ, թանգարաններ, սրոնց կարեւորագոյնները կը գտնուին ի Նարոլի, Միլան, Թուրին, Հոմփ, Բատուա, վենետիկ, Քոմա, Քաթանա, սրք կը պատրաստեն Իեյեֆորժ, ուկեղէ, անգաղձիֆորժ, Կարել և: Նշանաւոր են վենետիկի, Ֆլորանսի ճեղքիները, վենետիկի, Ֆայենցայի, Ֆիորենցայի յաճախիները, Նարոլիի, Ճենովայի, Լիվոնոյի քահաբեղեղները և, սրոնց ապարանջանները և մանեակները կ'արտածուին մինչև Չինաստան, Ճարսն և Ամերիկա:

Սիկիլիոյ և Ճենովայի մէջ 100 է աւելի գործարաններ կը պատրաստեն Իւրնէր և Բեւոյ:

Իտալիա կ'արտածէ նաև աննդական նիւթեր ալ:

Ճենովա, Ֆլորանս, Բէճճիոյ ունին բազմաթիւ ճարտարաններ, իտալական յարբէ քրքեղեղները կեդրոնն է Թոսքանա, սրովհետև անկէ կ'ելլէ մասնաւոր յորենի մը յարգը: Այս ճարտարութիւնը՝ արտածութիւնով կ'արտադրէ տարեկան 20 միլիոն ֆրանք:

Սոնատուր և Կամբուեր. — Իտալիոյ արտաքին առու-

տուրը միջին հաշուով բարձրացած է 2,500 միլիոն ֆրանքի: Ունի 15643 քիլոմէթր երկաթուղի, որ դեռ անբաւական է իրեն: Կ. Պօլիս - Սելանիկ - Սերայ - Աւստրիական երկաթուղին վստայ իր Բրուչէրին: Երկաթուղիներ կը փոխադրեն 25 միլիոն թօնօ վաճառք և 50 միլիոն ճամբորդ:

Ներածութիւնք իջած են 1,316 միլիոնի. 80 միլիոն ֆրանք հանաճախ, 350՝ գաղթային բերքեր, արմուիք, գուար և:

Արտածութիւնք կը հասնին 1150 միլիոնի, կ'արտածէ զլխաւորաբար երկրագործութեան բերքեր, քիմի, քիմի յեթ, պոպուլ, Կեր, Միլանի կորս, պանի (200 միլիոն). նաև երկաթի հանածոյ, ծծումբ, կոճ, բոսոր, խամ Բոսոր, հոյսեր. կերպաներ և:

Իտալիոյ մեծագոյն յաճախորդն է Ֆրանսա, որ ունի 145 միլիոն արտածութիւն, 135 միլիոն ներածութիւն:

Մեծն - Բրիտանիա իտալիայէն կը գնէ 110 միլիոնի պոպուլ, քիմի, ծծումբ, հանածոյ, վաշի, կանեթի Բեւ, խամ Բոսոր, և կը ծախէ, իրր փոխանակութիւն, կորս, Բեւոյ, նա, հանաճախ և: 300 միլիոնի:

Գերմանիա կը ծախէ 120 միլիոնի, և Աւստրիա 85 միլիոնի տարազագործական արտադրութիւններ, բայց ներանոյի չափ գնում չեն ըներ:

Չուիցերիա՝ 218, Ռուսիա՝ 130, Պերճիքա՝ 75 միլիոն: Իտալիոյ առուտուրը վերջին տարիներս կրկնապատկուած է Թուրքիոյ, Եգիպտոսի և Յունաստանի հետ:

Նշանակելի կերպով բարգաւաճած է Միացեալ-Նահանգաց առուտուրը, ինչպէս և Քանատայի, Պրազիլի, և Լարլազայի հետ, ուր նաև կը հասնին ամեն ամուտ հազարաւոր գաղթականներով բեռնաւորուած:

Մովսլին առուտուր, Կարաիսկապուր. — Իտալիոյ առուտուրին մեծագոյն մասը ծովի միջոցաւ տեղի կ'ունենայ: Նոր սկսաւ Միջերկրականէն դուրս ելնել և անդրովկիանեան երկիրներու հետ յարաբերութեան մանել: Կոստավարութիւնը մեծ մրցանակ կը չնորհէ Ալբերկէի

եղերքնները և Ովկէանի վրայ եղած մեծ նաւարկու-
թեանց:

1890 ին իտալական նաւահանգիստները ելեմուտ
ըրած են 242,452 նաւեր, 44,761,177 թօնօ տարողու-
թեամբ և նոյնչափ թօնօ վաճառքով:

Ճենովա, մեծագոյն նաւահանգիստը իտալիոյ, մրցա-
կից Մարսիլիոյ, Սէն-Կոթարտի անցքին բացումէն ի վեր
կրկնապատկած էր իր առուտուրը 50 առ 100: Ներա-
ծութիւն՝ 385,284,880 ֆր. արտածութիւն՝ 68,154,170 ֆր.
(1889 ին): Ելեմուտ ըրած են 11,178 նաւ, 6,447,189 թօնօ
տարողութեամբ:

Նարոլի, 1890 ին իտալիոյ մեծագոյն և ղեկեղիկագոյն
քաղաքը, կ'արտածէ իր քարերէր գաշտին արանգրու-
թիւնները: Ելեմուտ ըրած են 5681 նաւ, 2,431,711 թօնօ
տարողութեամբ: Ներածութեան և արտածութեան ար-
ժէք 1890 ին 155,000,000 ֆրանք:

Վենետիկ. — Ագրիականի թագուհին. 1890 ին մուտք
2942 նաւ (1881 ը առագաստանաւ) 1,006,065 թօնօ տա-
րող: Ներածութիւն 12,470,556 քէնթալ, արտածութիւն՝
իրը 8 միլիոն քէնթալ:

Լիվոնոնոյ. — Մուտք 4192 նաւ 1,416,934 տակառաչափ,
ելք 4063 նաւ 1,408,125 տակառաչափ: Կ'արտածէ գինի
և պտուղներ:

Մեալնա. — Սիկիլիոյ առաջին նաւահանգիստն ու
ճարտարարուեստի քաղաքը. մուտք 4787 նաւ, 1,681,744
տակառաչափ, ելք 4773 նաւ 1,665,304 տակառաչափ:

Բալէրմօ. — 3359 նաւ 1,210,807 տակառաչափ մուտք,
և 3229 նաւ 1,187,895 տակառաչափ ելք:

Բանուկ նաւահանգիստներ են նաև Քադանա և
Պրինտիգի եւ:

Այս նաւային շարժմանց մէջ իտալիոյ գրոջին բաժինն
էր 14,000,000 թօնօ. Անգլիական գրոջով՝ 4,063,000,
Ֆրանսական՝ 265,147 թօնօ:

Սաիայն 1898 ի Ֆրանսայի և իտալիոյ միջև կնրուած

առևտրական դաշնագրին հետևանքով իտալիոյ արտա-
ծութիւնը զգալի փոփոխութիւններ կրեց, մանաւանդ
որ ճարտարարուեստն ալ հետզհետէ կը զարգանայ:

Վարկային հաստատութիւնք. — իտալիոյ ելմտական
հաւասարակշռութիւնը խանդարուեցաւ և կացութիւնը
նեղցաւ՝ զինուորական մեծածախս սպառազինութեանց
պատճառաւ, որով պարտքը հասաւ 12 միլիարի:

Ելմտական գլխ. հաստատութիւնն է Պոլսոյ Եւրոպայի
որուն աթոռն է Հռոմ, սա ունի յարակից պանքաներ
ի Թուրին, Միլան, Ճենովա, Ֆլորանս, Նաբոլի, վենետիկ
և Բալէրմօ և 64 ճիւղեր:

1869 ի օրէնքով հիմնած շրջաբերութեան պանքա-
ներ որոնց նպատակն է օգնել երկրագործութեան:
Անոնց աթոռն է ի Պոլսնիա, Հռոմ, Սիէնա և Ֆոկիա:
Դրամ, չափ և կշիռ ըստ մեթրական գրութեան:

ԳԼՈՒԽ Գ.
ԱՌՍՏՐՕ - ՀՈՒՆԳԱՐԻԱ

ԱՌՍՏՐՕ - ՀՈՒՆԳԱՐԻԱ. Էապէս ցտմաքային պետու-
թիւն մ'է Դանուբի միջին աւազանին վրայ: Իսթրիոյ և
Տալմացիայի ծովեզերքը՝ Ագրիականի վրայ՝ իրը 750
քիլոմէթր երկայն, եղած է կեդրոնը իր ծովային առու-
տուրին: Նաւարկելի է Դանուբը: Սիլանիկ-Պելլորատ եր-
կաթուղիին բացումէն ի վեր առուտուրը կրկնապատ-
կուած: Տարածութիւնն է 676,628 քառակուսի քլմ-
քնակիչ՝ 45,880,000: Սակայն հակառակ այս ամեն առա-
ւելութեանց և երկրին բնական բեղմնաւորութեան
Աւստրիա, տնտեսական տեսակէտով, Անգլիոյ, Գերմա-
նիոյ և Ֆրանսայի չափ յառաջացած չէ, որովհետև այս
պետութիւնը կազմուած է կրօնքով, լեզուով ու ազ-
գութիւնով քոլորովին տարբեր տարրերէ, որոնք շա-

ըունակ մէկ մէկի նկատմամբ վրիժառու ատելութիւն կը սնուցանեն և ընդունայն կ'ըբաղեցնեն կառավարութիւնը:

Մշակութիւնք. — Այս պետութիւնը ունի զանազան կլիմաներ. Հունգարիա՝ ամրան՝ մինչև 52° ջերմութիւն, ձմրան 27° ցրտութիւն կ'ունենայ: Կալիցիա, Բուսինիա, Տալմացիա ունին իտալիոյ կլիման, ըստ այսմ կը փոփոխին արտադրութիւններն ալ:

Բնակչաց երեք քառորդը կ'ըբաղի երկրագործութեամբ 55,000,000 հ.թ. գետնի վրայ, որուն 32 առ 100 (1/3ը ամբողջին) յատկացուած է արմտիքի, 1 առ 100՝ այգիի, 26 առ 100 արօտավայրեր, և 31 առ 100՝ անտառի:

Աւստրօ-Հունգարիա կ'արտադրէ իբր 220 միլիոն հե.թ.թ.օլիտար արմտիք, այսինքն Եւրոպայի Դ. կարգին վրայ:

Յորեն՝ կ'ելլէ Հունգարիոյ, Դաշվարի, Կալիցիոյ, Մուրաւիոյ և Պոհեմիոյ դաշտերէն, ընտիր տեսակէն, որուն մէկ մասը կ'արտածուի, ամբողջ բերքն է 45,000,000 հե.թ.թ.օլիտար:

Հանար՝ լեռնային մասերէն՝ 30,000,000 հ.թ.թ. Դուբ՝ 20,000,000, եփեղրայրէն՝ 42,000,000, վերուկ՝ ցորեն արտադրող դաշտերէն՝ 42,000,000, բրնձ՝ նոյնչափ: Գետնախիւր կը մշակուի 1,500,000 գետնի վրայ և կ'արտադրէ 125,000,000 հե.թ.թ.օլիտար:

Ճարտարական տունկերու մշակութիւնը ստոր է իտալիայէն: Հիւսիսի և Հունգարիոյ մէջ կը մշակեն ծակաքիւղ, Պոհեմիա կուտայ ընտիր գոյւնի: Համագումար բերքն է 10,000 թօնօ: Վուշի և Կանիէն արտադրութիւնը նուազած է՝ Ռուսականին մրցումով:

Միսխտաի բերքը նուազած է՝ պետութեան մենաշնորհ ըլլալուն պատճառաւ: Բոլոր արտադրութիւնն է 50,000,000 քիլօ, որուն 20 միլիոնը՝ Հունգարիայէն:

Կը քաջալերուի բրնձի մշակութիւնը, մետաքսի հա-

մար: 1890 ին Հունգարիա արտադրեց 780,000 քիլօ բժոժ, իսկ Աւստրիա՝ 780,000 քիլօ:

Այգեգործութիւնք. — Քանի մը տարիներէ ի վեր լաւ յառաջացած է այս մշակութիւնը, և կը կազմէ պետութեան երկրագործական մեծ հարստութիւններէն մին Հունգարիա, Սլաւոնիա, Իսթրիա, Տալմացիա, Պոհեմիա և Մորաւիա կուտան 10,000,000 հ.թ.թ. գինի, որուն կէսը Հունգարիայէն (400,000 հ.թ.թ. գետնէ): Սա կը պատրաստէ նաև փրփրուն գինի և շամբանիա:

Պողտու, ճառեր և անտառներ. — Պոհեմիա և Կալիցիա ունի բնորոշ, բանի, շաքարալէն: Հունգարիա մանաւանդ ուր, որմէ կը հանեն Սիգարէն և Բուշի կոչուած օղիները: Ագրիականի եղերքները կան Բուշի, Կանի, Կիւնի և Կիւրնի: Չէթի արտադրութիւնն է 15,000,000 քիլօ:

Անտառներուն տարածութեան կողմանէ Աւստրօ-Հունգարիա երրորդ է և կուգայ Ծ. - Նորվեգիէն և Ռուսիայէն յետոյ: Կը ծածկէ 19 միլիոն հ.թ.թ. գետին, որ տարեկան կուտայ 125 միլիոն ֆրանքի գումար մը, զոր կարելի է կրկնապատկել:

Պոհեմիա և Կարպաթի գաւառները ունին ամենագեղեցիկ անտառները, ուր կան 100 - 120 սաք բարձր բուն ունեցող ծառեր:

Անտառաբուծութիւնք. — Հունգարիոյ տափաստանները, Ամերիկայի բնամշակութիւնը պէս ծառաղուրկ, կը ծածկուին արօտներով, ուր կը ճարակին անթիւ հօտեր այծերու և ոչխարներու:

Պատուական ձիեր, եշ և վրէ՛ 3,500,000, եշ՝ 13,465,000 ոչխար՝ 15,000,000, եշ՝ 7,000,000, այծ՝ 1,270,000:

Աւստրալիոյ և Ամերիկայի բուրգին մրցումին հետեւանքով հոս ալ նուազած է ոչխարազդիններուն թիւը: Թրանսիլվանիա կը բուծէ առաւելագէս՝ խոզ:

Հանքային ճարտարութիւնք. — Աւստրօ-Հունգարիոյ հանքային արտադրութիւնը գերազանց է Գերմանականէն, բայց նուազ շահագործուած: Բլագինէ գուրս ամեն

մետաղ կը գտնուի: Առատ է հանածոները, բայց իր պէտքին չափ միայն կը հանէ, այսինքն 20,000,000 թօնօ: Ամենէն հարուստն է Պոհեմիա, որ կուտայ տարեկան 10,000,000 թօնօ հանքածուխ ընտիր տեսակէ, նաև հանածոներ:

Հանքածուխէն աւելի կը հանուի երկաթէ հանածոյ, զոր յոյժ առատութեամբ ունին Մորաւիա, Սլովիա, Քարինթի և Հունգարիա, իրր 2,000,000 թօնօ արտադրութեամբ, Անգլիայէն, Գերմանիայէն և Ֆրանսայէն յետոյ կուգայ:

Պլիպէրիի, Քարինթի կապարէ հանքերը Եւրոպայի ամենէն հարուստ հանքերն են: Այս հանածոյէն ունին նաև Պոհեմիա և Հունգարիա: Հունգարիայէն և Թրանսիլվանիայէն կը հանուի նաև պղինձ, կալիքիայէն՝ շիւր, Պոհեմիայէն՝ աւաթ:

Սպանիոյ Ալմատէնի հանքէն վերջ Եւրոպայի ամենէն հարուստ ապակիէ հանքն է իտրիայինը, որ կ'արտադրէ տարեկան 5000 թօնօ այդ մետաղէն: Նուազ են ապակի և աքաթի հանքերը: Սալցպուերկ և կալիքիա ունին Եւրոպայի ամենէն հարուստ աղահանքէ (sel gemme) հանքերը, որք կուտան՝ միջին հաշուով՝ 300,000 թօնօ, Ֆրանսայի եռապատիկը, այս մասին եւրոպական ո՛չ մի երկիր կընայ մրցել Աւստրիոյ հետ: Աղուծակը առատ է կարպաթի կողմերը: Կ'ըսուի թէ Թրանսիլվանիոյ և Մարմարոյի հանքերը կը պարունակեն 3,300 միլիոն թօնօ աղ, Բարաճի կողմը կայ այի լեռ մը 7 քիլօմէթր շրջապատով:

Ունի բերքօն հանքեր, բայց լաւ չեն շահագործուիր ռուսական բէգրօլին մրցման հետեանքով:

Եւրոպական ո՛չ մի պետութիւն ունի Աւստրիոյ չափ հանապէն ջրեր:

Տարագագործութեան հարտարութիւն. — Աւստրիա այս ճարտարութեան մէջ չորրորդ է: Վիէննա, Բրակա, Պրիւն, Կրաց ունին կարևոր արհեստանոցներ՝ բրձի, Բեռլին և Երկաթագործի շինութեանց, կրաց, Պրիւն, Թրիեստ

և Բօլա ունին բաղմաթիւ գործարաններ՝ նաւաշինարան: Պատուիչ կը շինէ Ջերմոցներ և Ջերմօցիւ ամաններ: Պոհեմիա առաջին կեդրոնն է, ուր հանքածուխէն կը հանեն գունաւորիչ նիւթեր:

Միջին դարէն ի վեր Պոհեմիա առաջին է ապակեգործութեան կողմանէ, մանաւանդ հանքածուխի հանումէն ի վեր կայսրութեան 180 գործարաններուն կէտը իրենն է, լեռներու մէջ հաստատուած, ամենէն գեղեցիկ, նկարէն ամաններով. ունի նաև ամենաընտիր յախճապակի գործարաններ: Նշանաւոր են նոյնպէս վիէննայի յախճապակիի գործարանները:

Բրդեղէնի ճարտարութիւնը հնուց ի վեր կարևոր տեղ մը կը գրաւէ այս երկրին մէջ: Վուշի և կանեփի ճարտարութիւնն ալ բուրդինին չափ հին է: Բայց նախանիւթը կուտայ գլխաւորաբար Ռուսիա:

Ռայխէնպէրկ նշանաւոր է կայսրութեան մէջ իր բամբակեղէնով: Բամբակի մանարանը և հիւսուածարանը ունին 2,500,000 շամիրակ և 100,000 գործատեղան:

Պետական քաշալերութեամբ զարգացած է մետաքսի ճարտարութիւնը. Թիրօլ, Տալմացիա, Իսդրիա յաջողութեամբ կը հասցնեն շերամի որդը: Վիէննա և իր շրջակաները կը գործեն ծապաւեն, սպորտ, լաւիշ:

Այս արտադրութեանց մեծ մասը կ'սպառին Արևելքի և Թուրքիոյ հրապարակներուն վրայ, արևմտեան Եւրոպայի դէմ լուրջ մրցումով, թէև ստորին՝ անգլիականէն և գերմանականէն:

Իրր 9,000,000 անհատներ կը բանին բարձր հնոցներու և արհեստներու մէջ:

Չարդանիւթեր. — Այս ճարտարութիւնն ալ մրցումի մտած է օտար երկրներու հետ: Ամեն կողմ դնահատուած է վիէննայի գոհարեղէն, ապակեղէն, յախճապակեայ, արկղեղէն առարկաներու ճաշակն ու նրբութիւնը: 1873 ին հիմնուած վիէննայի արևելեան լաւագարանը

մեծ մղում տուած է արուեստին և բոլոր աշխարհի ուշագրութիւնը գրաւած:

Չանազան անբարութիւնք. — Վիէննայի գարեջուրին արտադրութիւնն է իբր 300,000,000 կալօն. զարգացած է Բոլշակովսկի-նը՝ որ Արևելքի մէջ մեծ սպառում ունի, և կահարթութիւնը: Վիէննա պերճակահերու և կառքերու շինութեան կողմանէ Բարիզի մրցակից է:

Թրիէսթէի և Բօլայի մէջ կը շինուին նաւեր՝ ձկնորսութեան և Գանուրի համար:

Վերջապէս, Եւրոպայի մէջ, Աւստրո-Հունգարիա, տնտեսապէս ամենէն նպաստաւորեալ երկիրն է: Թէև ծովեզերքը նեղ, բայց ունի սքանչելի նաւահանգիստ մը, Թրիէսթէ, Ադրիականի վրայ, որուն եզերքի բնակները կը պատրաստեն աննման նաւաստիներ:

Պետութեան ամեն կողմերը լինեն արուեստագիտական վարժարանները:

Փոխադրութեան անբարութիւնք. — Երկաթուղիներու երկայնութիւնն է 35,736 քիլօմէթր, որուն կեդրոնն է Վիէննա, Պուտա-Բէշթի կապուած: Աւստրո-Հունգարիա, յէն կ'անցնին առարկան Ռաբալէրը, որ կը միացնեն Պալթիկը՝ Սև և Միջերկրական ծովերուն և անոնք՝ որ կ'երթան արևմտեան Եւրոպա և արևելք: Ունի 10,466 նամակատուն, 1270 միլիոն նամակ և: 7841 հեռագրատուն, 315,955 քիլօմէթր թել, 20,894,394 հեռագրալուր, 79,213 քլմ. թել հեռախօսութեան: Նաւարկելի ճամբուն երկայնութիւնն է 6500 քիլօմէթր, որուն մեծագոյն երակն է Գանուր, 200 շողեհաւով կը փոխադրէ 2,500,000 թօնօ վաճառք, այս տորմիդին կ'օժանդակեն 765 դնող:

Առուտուր. — Աւստրո-Հունգարիա իր իբր 90 միլիոն թօնօ առուտուրով Միացեալ-Թագաւորութենէն, Գերմանիայէն և Ֆրանսայէն վերջը կուգայ: Կայսրութեան արտաքին վաճառականութեան արժէքը 3 միլիառ ֆրանքէն աւելի է, որուն 1332 միլիոնը ներածութիւն, և 1782 միլիոնը՝ արտածութիւն:

Մեծագոյն յաճախորդն է Գերմանիա, 1800 միլիոն ֆրանքի առուտուրով: Աւստրիա անոր կը ծախէ արժէք, Խաչնի, Բիւնի, Վիէննական գործեր, անկէ կը գնէ, իբր փոխանակութիւն հանաքուի, հիւսուածքի, Գանա և: Սակայն հիմա Գերմանիա այս գնումներէն մաս մը կ'առնէ Ռուսիայէ և Ամերիկայէ:

Աւստրիական ապրանքներու երկրորդ հրատարակն է Իտալիա, որուն կուտայ մասնաւորաբար հանաքուի, և կ'առնէ յէթ, Բրէյ, Գրէ և, ընդամեն 200,000,000 ֆրանքի:

Արլպէրկի երկաթուղիին բացումէն ի վեր Աւստրիոյ և Զուիցերիոյ տուրեառը զարգանալու մեծ ձգտում ունի:

Ֆրանսայի կուտայ 120,000,000 լի ֆրանքէն, Վիէննական գործեր, և կը ներածէ անկէ 30,000,000 լի ապրանք:

Անգլիայէն յետոյ՝ Աւստրիա՝ գերակշիռ զիրք ունի Թուրքիոյ, Սերպիոյ առևտրական հրատարակներուն վրայ, անոնց կուտայ իր արտադրութեանց 60 առ 100ը, տուածին կէս արժէքով փոխանակութիւն ունի Ռուսիայի հետ:

Առաջին տեղը կը գրաւէ Պուրկարիոյ և Յունաստանի մէջ, ընդգէմ՝ Անգլիոյ և Ֆրանսայի Եգիպտոսի մէջ շարքորդական է:

Արևելեան վաճառատեղիներուն մէջ կը մրցի Անգլիոյ և կը գերազանցէ Ֆրանսան ու Իտալիան:

Մեծապէս աճած են իր ներածութիւնները՝ Չինու, Ճաբոնի և անգլիակոն Հնդկաստանի մէջ:

Այս մեծ բարգաւաճման հզօր ազդակն է Վիէննայի արևելեան խաչարանը, որուն մէկ ճիւղը կ'զբաղի՝ մասնաւորապէս՝ Արևելքի մէջ Եւրոպական արտածութեանց: Մասնաւոր սրահներու մէջ, միացեալ վաճառականներ և ճարտարագէտներ կը գտնեն բոլոր Արևելքի մէջ շինուած արտադրութիւնները, Կ. Պօլսէն մինչև Եօքօհամա, և այս երկիրներու մէջ ուրիշ ազդերէ ներածուած գործերու բոլոր նմոյշները՝ Իւրաքանչիւր առարկայի

քովը գրուած յայտագիր մը կը նշանակէ անոր գինը, ծախելու կերպը, շինութեան եղանակը, պատատումը և վճարումը եղանակները: Թանգարանին մօտը հաստատուած է Առևտրական գեղեկութեանց հրահանգարան մը Արևելքի համար, այս տեղեկութիւնները իրեն զրկուած են թղթակից, վաճառական, ճարտարագէտ, դրամատէր 300 անդամներէ, որ կը բնակին այն կողմերը, կամ դեռ պաններէ, հիւպատոսներէ, փոխ-հիւպատոսներէ, զորս կառավարութիւնը գրած է յիշեալ ընկերութեան արամագրութեան ներքեւ:

Վերջապէս թանգարանը ունի ամօսրեայ հանդէս մը, որ համառօտիւ կը հրատարակէ դրօշն եկած առևտրական տեղեկութիւններ: Պուտա - Բէշթի առևտրական Բանգուրը իր բոլոր ջանքերը կը կեդրոնացնէ Արևելքի գործերուն վրայ, մասնաճիւղեր հաստատած է ի Պելիրատ, Սօֆիա և Սարաճիլօ:

Գովաշին առևտուր - Նաւահանգիստը. — Պետութեան վաճառքներուն 1/5ը յամաքէն կը փոխադրուին, նաև հանգիստներու գործառնութիւնը կը հասնի 13,000,000 թօնոյի:

Թրիէսթ. — Կ'ընդունի տարեկան 15-18,000 նաւ, իբր 3,000,000 թօնօ տարողութեամբ:

Ֆիով. — Երկրորդ նաւահանգիստն է, 1,600,000 տակառաջով նաւ ելեմուտ կ'ընեն:

Բրիտանական Լօյտի օրինակին վրայ հիմնուած է Աւստրիական Լօյտը, որուն աթոռն է Թրիէսթ: Սա ունի գիծեր Թուրքիոյ, Իտալիոյ, Սլաւոնիոյ, Ֆրանսոյի և Արևելքի եզերքները և 200 նաւ Դանուբի վրայ:

Աւստրիոյ առևտրական բոլոր նաւերուն թիւն է 12,447, և տակառաջով 270,250, յորոց 233ը շոգե. նաւ:

Դրամական. — Ասորո-Հոնգարական ուղի. պանը Պետութեան հսկողութեան ներքեւ, արտօնած է մինչև 200,000,000 ֆիօրին տոմս շրջաբերութեան հանելու,

ունի բաղմաթիւ մասնաճիւղեր, որուն հնագոյնն է Բրակայինը: Վիէննա ունի Գոթթուր Գիւմբլը:

Դրամական միութիւնն է ֆիօրինը, արծաթադրամ, 2 1/2 ֆրանք արծէքով, որ բաժնուած է 60 քրօնքր:

Ընդունած է մէթրական դրութիւնը:

Գ Լ Ո Ւ Բ Գ

Պ Ա Լ Ք Ա Ն Ե Ա Ն Ք

Ա. Ռ Ո Ւ Մ Ա Ն Ի Ա

Տ Ա Ր Ա Մ Ո Ւ Թ Ի Ի Ն 131,020 քառակուսի քիլօմէթր, բնակիչ 5,406,249: Ռումանիա Եւրոպայի ամենէն բարեբեր գաւառներէն մին է: Հիւսիսէն կերկարին կարպաթները, ուրկէ կը բզիսին ջուրի բաղմաթիւ հոսանքներ: Ունի հարուստ դաշտեր, մեծ մասով գեղնորակ կաւային հողէ կազմուած, և գետին մօտ այս սև հողէն լեզու մը, որ հարաւ. Ռուսիոյ հարստութիւնը կը կազմէ: Տօպրօճայի դաշար կը յիշեցնէ վենեցիայի ցած գետինները, խիստ յարմար բրինձի մշակութեան: Դանուբով կարելի է պարտէզի մը վերածել Ռումանիոյ դաշար, ցամքեցնելով ճահիճները, և ոռոգելով խողովակներով:

Մշակութիւնն ևս աճասնաբուծութիւն. — Մշակուած է 3,200,000 հէքթար, մեծ մասը արմախի յատկացուած, գլխաւորաբար եֆիդրոյրէնէ, որ իբր աթերայ (bouillie = լափա) գեղացիներու սնունդն է, տարեկան բերքն է իբր 40,000,000 հէքթօլիտար, քրէն՝ 10,000,000 հէքթօլիտար: Առատ տարիներու արմախի արդիւնքը կը հասնի 70,000,000 հէքթօլիտարի, որ կընայ կրկնապատակուիլ կատարելագործուած արուեստով և մշակութեամբ և դառնալ սոխարը Եւրոպայի առատութեան:

կը մշակուին շուրջ և կանգնե՛ տեղական ճարտարութեան բաւարար: կանգնե՛ (քոլձա) և շխարհ (իրբ 3,000,000 քիլո):

Պատուհներէն՝ սալը՝ որմէ կը շինեն տարեկան 300,000 հէքթօր զիտար օղի, մեծ մասը արտածելի:

Այգեգործութիւնը զարգացման մէջ է, 142,000 հէքթար մակերևոյթէն կ'արտադրէր 1899ին 5,900,000 հէքթօր զիտար բնի զանազան տեսակներով, մանաւանդ ֆօսֆօրը, աղանդերէ հանուած:

Անտառներու տարածութիւնն է 1,055,033 հէքթար, որուն իրբ 600,000ը շահագործուած, և կուտայ 40,000,000 ֆրանք եկամուտ, 14,500,000 ֆրանք ծախքով:

Անտառաբուծութեան արհեստը տակաւին թերի, ընտանի անասուններ յաճախ խարով կը սնանին: Ռիսը 6,500,000 որուն հետ ելլ է, ի՛, կ'ը, սենի ընդամեն 13,000,000 անասուն:

Ռուսմանացիք միջակ երկրագործներ են:

Հանք. — Ռուսմանացիք լիովին չեն օգտուիր իրենց հանքերէն, որոնց գլխաւորն է հանքաքար, ճարտարութեան առանցքը: Քարէն կը հանուի 24,000,000 կալօն, որոնցմէ պետական մենաշնորհ է, որ կը հանէ 20-25,000 թօնօ Սլանիքի հանքերէն:

Ճարտարագրութեան. — Այս ճիւղը երկրորդական է միայն տեղացւոց մէջ սպառելի, վուշի և կանեփի հետաւաններ, կապեր (այծի մագէ), օղիի դարմաններ, հասարակ խեցեգործութիւն, յանձնարարական շինութիւն, ուղեւորական գործեր և բնակարաններ, մանաւանդ Պուրբէշի մէջ: Պրանսացի ճարտարագործք հիմնած են՝ իրենց գրամագլխով՝ շատրի գործարաններ. Գերմանք՝ բարեկարգ մեծ քաղաքաց մէջ: Շերմաբուծութիւնը ինկած՝ Արևելքի մրցումով:

Ճարտարագր. — Մեծ մղում կը տրուի ճամբաներու շինութեան: Երկաթուղիներու երկայնութիւնն է 3,280 քիլոմէթր, որով կը միանայ թուրքիոյ և Ռուսիոյ Գետալին նաւարկութեան գիծն է 849.6 քիլո. որոնք 1898ին

փոխադրեցին 432,417 ճամբորդ, 1773 թօնօ ծրար, և 32,933 թօնօ վաճառք: 1890ին նաւային գործառնութիւնն եղաւ 8,150,000 թօնօ, 31,000 տակաւաչափ նաւերով: 3266 նամակատուն, 56, 5 միլիօն նամակ, 540 հեռագրատուն, 24,389 քիլո. թիւ, 2,586,534 հեռագիր:

Առևտուր. — Արտածելի նիւթերն են. ցրէն, էֆէպոցրէն, բիւն, օղի, դուստր, մորթ, սալը, բաբօնէն, բրդէն, բորձի: Ընդհանուր առուտուրը 1899ին եղաւ 333,267,93 ֆրանք ներածութիւն, 149,119,657 ֆր. արտածութիւն, 482,387,595 ֆր. գումար: Ներածող տէրութեանց գլխաւորներն են. թուրքիա, (1898ին 747,821 ֆր. ներած. 69,586 ֆր. արտած.), մանաւանդ Աւստրիա, Անգլիա, Գերմանիա, Պելճիքա: Ռուսմանիա կը ջանայ բաւականանալ ինքնիրմով, որ օրինաւոր է: Լաւագոյն գնողներն են. Աւստրիա, Պելճիքա, Գերմանիա, Անգլիա:

Ռուսմանիոյ դրամը քիչ է, գլխաւոր գրամատունն է Պանդ և Ռուսմանի և ուրիշներ: Դրամի միութիւնն է Լէ = 1 ֆրանք:

Չափք և կշիռք ըստ մէթրական դրութեան:

Բ. Ս Ե Բ Պ Ի Ս

Սերպիոյ տարածութիւնն է 48,600 քառակուսի քիլոմէթր և 2,413,694 բնակիչ:

Բերք. — Սերպիոյ հողը Եւրոպայի ամենէն բարեբերներէն է, բայց ժողովուրդը չօգտուիր, հանգստակեաց է դեռ, հողերը կը հանգստանան 2-3 տարի, բերքերը՝ նախնական. Գլխաւոր բերքն է բրդէն՝ մանաւանդ ցրէն, Պելլրատի, Բրակույեվացի և Սեմենդրիայի մէջ, որոնք կ'արտադրեն տարեկան առ առաւելն 3,000,000 ֆրանք: Շինականը կը սնանի մանաւանդ էֆէպոցրէնով, զոր մշակած է ամեն կողմ, փոքր կտորներու վրայ: Սակաւ ինչ բարի և վարսակ:

Մշակութեան մէջ մեծ տեղ կը բռնեն հիւսուածա- նիւթերը (վուշ և կանեփ), որոնց մեծ մասը տեղին վրայ կը գործածեն կտաւի շինութեան: Ընտիր ձեռքեր կու- տայ Ալեքսինաձ, 1,000,000 քլի: Շերամի որդին հիւան- դութեան պատճառաւ բժոժք տակաւ կը նուաղի:

Ամենէն շատ մշակուած են պտղատու ծառեր, մա- նաւանդ սալբիլին, որուն արտադրութիւնն է միջին հաշ- ուով 25,000 թօնօ: Ասկէ 16,000 թօնօ կ'արտածուի դէպքի Արեւմտեան Եւրոպա և Ամերիկա, գրեթէ 8,500,000 Ֆր- արժէքով: Մաս մըն ալ օղի:

Անասնաբուծութիւն. — Արմտիքի նուազութեան հե- տեանքով լաւագոյն եկամուտներէն մին եղած է անաս- նաբուծութիւնը, թուով 6,000,000 ի ոչխար, եւ և խոշ ունի (կէսը ոչխար): Սերպ գեղացիներու հարստութիւնն է խոզը, զոր երամակներով կը սնուցանեն, մնի տեսակին և դիւրութեամբ բուծուելուն համար բնիկ տեսակները կը փնտռուին: Ասոնցմէ տարեկան կ'արտածուի 200,000 գլուխ, իրր 7,500,000 Ֆրանք արժէքով:

Այգի և անտառներ. — Սերպիա շատ յարմար է այգեգործութեան: Երկաթուղիներու հաստատուելէն ի վեր բաւական յառաջդիմած է գինիի արտածութիւնը որ կը հասնի միջին հաշուով 500,000 հէքթօլիտրի, թէև գէշ պատրաստուած, գունեղ և ալքօլաւոր: Ֆրանսացիք գնած են անոր հունձքին մէկ կարևոր մասը, ֆրանսա- կան գրութեամբ գինի պատրաստելու համար:

Անտառներու տարածութիւնն է 1,800,000 հէքթար, որմէ կ'ստանան գեղեցիկ կաշիներ, եփենագործներու խիստ հարկաւոր, հացի, փեկոնի, ընկուղէնէ և:

Հանք. — Ասոր շահագործութեան համար քանի մը բնիկ ընկերութիւններ կազմուած են, բայց դրամա- գլուխին նուազ: Անգլիացի հարուստ ընկերութիւններ կը հանեն ործախառն կապու, Պելկրատի մօտը: Կան նաև անդիլի, պղնձ հանքեր Բոյարվաձի կողմերը: Նոյնպէս հան- քառնի, որ տակաւին լաւ շահագործուած չէ:

Ճարտարութիւն. — Կը գործէ նուրբ կապերներ, բայց գոյները անճաշակ: Կոստաբորձուիւն, ակրաբորձուիւն, իեյե- ֆորձուիւն, կընդորձուիւն, իւրախորձուիւն են Սերպիոյ գլխաւոր ճարտարագործութիւնները: Ունի 30 ի չափ շո- գեշարժ աղօրիք: Մեծ ապագայ կը խոստանան խողա- բուծութիւնը, աղածոները, օճառագործութիւնը:

Ճամբաներ. — Ունի 700 քլմ. երկաթուղի: Նաւարկե- լի են Դանուբ, Սալա և Տրինա գետերը: 110 նամակա- տուն, 9,900,000 նամակ և 140 հեռագրատուն, 8120 քլմ. թել, 996,894 հեռագիր:

Առուտուր. — Կէս դարէ ի վեր այս երկրին առու- տուրը եռագատկուած է, այժմ կը հասնի իրր 100 մի- լիոն ֆրանքի, որուն 45ը ներածութիւն: Փայտեայ և երկաթեայ կարասիներ կը հայթայթէ Աստրօ-Հունգա- րիայէն: Դարձեալ Աստրիայէն, Գերմանիայէն և Պելճի- քայէն կը գնէ մեքենաներ, մետաղներ, ղէնք գործիք, 4,000,000 ֆրանքի:

Սերպիոյ հրապարակին տէրն են. Աստրիա, Գերմա- նիա, Անգլիա, ամենէն վերջը կուգայ Ֆրանսա, թէև կրնայ երկաթուղիով մեծ դիւրութեամբ ներածել իր ապրանքները:

Դրամակաւ. — Մեծ դրամագլուխ չունի Սերպիա, գլխաւոր հաստատութիւնն է Ալգ. պանսա և ուրիշ երեք պանքաներ:

Բնդունած է մեթրական գրութիւնը: Դրամի միու- թիւնն է Դեներ = 1 ֆրանք:

Պ. ՊՈՒԼԿԱՐԻԱ և ԲՈՒՄԵԼԻ

Պուլկարի և Բումելի կը գտնուին Օսմանեան կայսր- ութեան գերիշխանութեան ներքև: Պուլկարիոյ տարա- ծութիւնն է 96,660 քառակուսի քլմ. 3,310,713 բնակիչ: Բումելիի տարածութիւնն է 33,500 քառակուսի քլմ. իրր 1,000,000 բնակիչով:

Արտադրութիւն. — Դաշտերը առատօրէն կ'արտադրեն ցորեն, արտածելի. եփեղացորեն որով կը սնանին շինականները: Լեռնային մասերուն մէջ կը մշակուին հացաբլիթ, բարեւե և վարսակ:

Կարևորագոյն մշակութիւնն է վարդենին կը մշակուի թրակիոյ 123 գիւղերուն մէջ. Գրգանլըքի հովիտը կ'արտադրէ մեծ քանակութեամբ վարդի իւղ: Բուսակի արտադրութիւնն է 2,207,271 օխա վարդ, (2,825,305 քիւօ) որ կուտայ 188,135 մսխալ վարդի իւղ (մսխալը = 4, 7 կրամի):

Յետոյ կուգան ձիախորը, նաև բամբակ, խաշիաշ, շաշմայ, որոնք, (garance), անխոն:

Ունի 80,000 հէքթար այգի, Բյէվնայի, Սիսթովի, Թրնօվայի դաշտերէն կ'արտածուի բլնի և շօն:

Պաղատու ծառերն են Բլնի, Յէվնի և: Անտառները հարուստ են զանազան ծառերով, որ կը հայթայթեն աղբոր:

Ընտանի անասնոց թիւը կը հասնի 8,500,000 ի, ³/₄ը օխար:

Պուրկարիա կ'արտադրէր 1898ին 42,000 քիւօ մետաքս:

Հանքեր. — Ունի երկաթ և հանածոներ: Սօփիայէն 24 քիւօ մէթր հեռու գտնուած է խաւ մը նշանաւոր որ կը պարունակէ ընտիր տեսակէ ածուխ:

Ճարտարութիւն. — Այս ճիւղը դեռ նախնական է, կը շինուին միայն տեղական նիւթեր. կոս, հասո սոսի, և: Վարդի իւղն իսկ նախնական գործիքներով կը զտուի: Իշխանապետութեան կարևոր ճարտարութիւնն է շերտ-տաշտաշտութիւնը:

Առուտուր. — Առուտուրը բաւական զարգացած է, որ կը հասնի 180,000,000 ֆրանքի, որուն 100,000,000ը ներածութիւն:

Իշխանապետութեան արտածելի նիւթերն են. Բարե, Բուրբ, արմոխ, աղբոր, բժոժ և: Մորթի հրապարակներն են. վրացա, ֆէօթէնաիլ, Պուրկովայ և Սօփիա:

Գլխաւոր ներածութիւնը Ֆրանսոյէն կ'ընէ՝ մետաքս-սեղէնի վրայ, բրդեղէնի հրապարակին տէրն է Աւստրիա: Աւստրիացի բազմաթիւ վաճառական ուղեորներ տարին քանի մը անգամ կը շրջին Պուրկարիոյ մէջ, յաճախորդ-փնտուելու, որոյ կը շնորհեն 4-6 և 9 ամիս վճարումի պայմանաժամ: Աւստրո-Հունգար 147 վաճառականներ այս հրապարակը իրենց արտադրութեանց ապահովելու համար, Սօփիայի մէջ հիմնած են նմոյշներու մթերանոց մը, որ 1888-89ին 500,000 ֆրանքի գործ ըրած է: Աւստրիայէն յետոյ կուգան՝ Անգլիա, Թուրքիա, Ֆրանսա, Ռուսիա, Գերմանիա, Ռումանիա, Պելճիքա:

Ճամբաներ. — Ունի 1560 քիւօ մէթր երկաթուղի, 180 նամակատուն (Պուրկարիա միայն) 21,000,000 նամակ և, 179 հեռագրատուն, 10,790 քիւօ մէթր թել, 1,354,248 հեռագիր:

Սև ծովէն և Գանուբէն 1899ին մտած են 10,501 նաւ 2,539,748 տակառաչափ, (7,608ը շոգ ենաւ 2,294,043 տակառաչափ), փոխադրած են 158,711 մարդ:

Վարկային. — Առաջին հաստատութիւնն է Պուրկարիոյ Արտ. Կոմիտէն, որ ունի ճիւղեր ֆիլիպպէի, Ռուստուքի և վառնայի մէջ: Պաշտ 0 Բեման ալ ունի ճիւղ մը ֆիլիպպէի մէջ:

Գրամական միութիւնն է Լեո = 1 ֆրանք:

Պ. Պ Ա Ր Ա Տ Ա Ղ

Գարտաղի տարածութիւնն է 9,475 քառակուսի քմ. 260,600 բնակիչ: Տնտեսականօրէն մեծ կարևորութիւն չունի այս երկիրը:

Կ'արտադրէ արմոխ՝ իր բնակչաց սննդեան համար: Բոսկորիճա և Չեռնիճա ունին ընտիր խաղող, բայց գինին չպահուիր: Գեղեցիկ անտառներ կը պահեն լեռ-

ներք: Եկամուտին զլուսւոր ազրիւրն է Խնամքածուծուծը
Տարեկան 100.000 ոչխար կը մորթուի, ասոր միտը աղե-
լով կ'արտածեն Ագրիականի նաւահանգիստները: Ար-
տաքին առուտուրը կը հասնի 7,000,000 Փրանքի:
20 նամակատուն, 140.000 նամակ եւ, 20 հեռագրա-
տուն:

Ե. ՅՈՒՆԱՍՏԱՆ

Յունաստանի տարածութիւնն է իբր 65,000 քառա-
կուսի քւմ. 2,434,000 բնակիչ: Այս երկիրը թէև նեղ,
բայց կարևոր դեր ունի տնտեսութեան մէջ, կրցած է
հանել տարուէ տարի իր միջակ բարեբեր հողէն ար-
տածութիւն մը որ հեազհետէ կ'աճի:

Յոյնք նշանաւոր եղած են վաճառականութեամբ,
հին ատենէ վեր: Շնորհիւ իր ծովեզերեայ դիրքին բա-
նուկ առուտուր ունի շրջակայ երկիրներուն հետ, Թուր-
քիոյ, Ասիոյ և Եւրոպայի, ուր հիմնած է բազմաթիւ
գաղղթներ:

Արտադրութիւնք. — Երկրագործութիւնը կը յառաջ-
դիմէ: Յրանսացի գրամատէր ձեռնարկուները ցամքեցու-
ցին Քորայիս լիճը (Աթէնքի մօտ) և պատրաստեցին
25.000 հէքթար գետին՝ մշակութեան խիստ յարմար:

Միջին հաշուով 12,000,000 հ.քթլար. աւելի (ցորեն,
հաճար, բրինձ, գարի) կը բաւեն իր երկիրն: Կարևոր
տեղ կը գրաւեն բանջարեղէնի և պարտէզներու մշա-
կութիւնը:

Ճարտարական մշակութիւններէն են շաւր, կանգե,
ձիւնի, բաբախէն, և իւրիւր. Երխաւտի արգիւնքն է
1,500,000, ընտիր տերեւներով: Հարաւը կ'աճի թթեանի:

Չիթեանի արտադրութիւնն է 12,000,000 քիլո: Ունի
նաև նարնջեղէն, լիւնի, իւրիւր, նարնջի:

Երկրագործութեան առաջին հարստութիւնն է ալիւն,
105,000 հ.քթլար. 1899 ին արտադրեց 1,500,000 հէքթլար:

բնի. զնահատուած, 100,000,000 քիլո ալիւն՝ 80,000,000
Փրանք արժէքով:

Անասնաբուծութիւնը կայուն է. թեաւ իր ունի
3,500,000 ոչխար: Յունաստան ունի 3,000,000 փեթակ:

Հանք. — կը բանեցնեն կոբալտ, և Լորիոսի (Ատտիկէ)
հանքերէն ելած խարամախառն արծաթի (scoride) հան-
քերը: Յրանսացի գրամատէրեր Լըկասթերիոյ մէջ հիմ-
նած են մեծադոյն ձուլարան մը կապարի, որ կուտայ
տարեկան 115 - 120,000 թօնո:

կը հանուին նաև շաւր, Ատտիկէէն և Նեկրօփօնթէն,
վերջինէն նաև երկաթ: Նաքսոս, Պարոս և Սանթորին կու-
տան շաւր, Յոնիական կղզիք՝ Յոլոսիոս, Պարոս և Բան-
դէլիք՝ Բարբառոս: Ունի առաջին երակները ալ. բայց Յունաս-
տան աժան գնով հանքածուծ կը զնէ Անգլիայէն, Պել-
ճիքայէն և Աւստրիայէն:

Ճարտարութիւն. — Յոյնք միշտ եղած են արտագրող,
արտածող և սպառող: Պիրէոնի բաբախէնը կը մրցի անգ-
լիականին հետ և կ'արտածուի մինչև թուրքիա:

Վարիսսա քաղաքն է Բարբառոս և Բաբախէն ճարտարութեան:

Սպարգա և Աթէնք կը շինեն աժան մետաքսեղէն:
Առաջին կարգի ճարտարարուեստ քաղաքն է Պիրէոն,
որը մկրտած են Յոյնք, իրենց ժառանգական հպարտու-
թեամբ «Յունաստանի Մանչէսթըր» անուենով, ունի
8 մանարան, 4 գործարան կտաւի ներկարաններով. բազմաթիւ
գործարաններ բրդեղէնի, գործանոց մը՝ նաւաշինու-
թեան, 6 գործարան աննգական խմորներու եւ:

Շիրա ունի բամբակի մանարան մը, և գունաւոր
թաշկինակներու գործարան մը, շատ մը խաղախորդա-
րաններ, մեքենաներու շինութեան համար արհեստա-
նոցներ և գարբնոցներ:

Սնաւազրծութեան տարեկան եկամուտն է 20,000,000
Փրանք:

Զանազան կեղերներու մէջ կը սլաւորաստուին տա-
րեկան 13,000,000 լիտր հեղուկ, և 35,000,000 ալքոլ:

Արշիպեղազոսի, Թարապրուսի և Թուշուզի եղբրքները 1000 ի չափ նաւակներ կ'որսան որոնք, 3,000,000 ֆրանք արժէքով:

Ֆրանսա մեծագէտ օժանդակած է այս երկրին տընտեսական զարգացման:

Ճամբաներ. — Եղբրքները խիստ յարմար են նաւարկութեան: Յունաստան ունի 1276 նաւ, մեծ մասը առաջատար, 332,062 տակառաջափ: 1087 քլմ. երկաթուղի, 3,000 քլմ. մեծ խճուղի, 348 նամակատուն, 17,8 միլիոն նամակ եւ: 213 հեռագրատուն, 9808 քլմ. թեւ, 1,448,893 հեռագրալուր:

Առուտոք. — Ընդհանուր առուտուրին արժէքն է 230,000,000 ֆրանք:

Անգլիա ունի 69,000,000 ֆրանք առուտուր, կուտայ Յունաստանի տարազագործական արտադրութիւններ՝ 38 միլիոնի և կ'առնէ լաւ, իւր, պար: Յետոյ կուգայ Ֆրանսա, որ կուտայ տարազագործական նիւթեր 10 միլիոնի և կ'առնէ գինի, լաւ, իւր, ծխոտ, ծխոտ: 23 միլիոն:

Թուրքիա՝ կ'արտածէր ի Յունաստան (1899 ին) 15,061,863 ֆրանք և կը ներածէր անկէ 6,757,491 ֆրանքի վաճառք:

Առևտրի 22 միլիոնի փոխարէն կը գնէ 1 միլիոնի ապրանք:

Առտորիոյ առուտուրը կը հասնի 25,000,000 ֆրանքի: Գերմանիոյ » » 7,500,000 ֆրանքի:

Սմենէն բանակ նաւահանգիստներն են:

Պիթեռն. — Ուր 1889 ին գործած են 2356 նաւ 1,845,175 թօնօ տարողութեամբ:

Շիրա. — 1899 ին 121,083 տակառաջափ: 1899 ին Յունաստանի նաւահանգիստները գործած են 11,977 նաւ, 7,016,545 տակառաջափ:

1892 ին արտածեր է 48,900,000 ֆր. լաւ, 17,000,000 իւր, 4,000,000 ծխոտ, 3,500,000 գինի, 2,300,000 յեթ, 2,240,000 ի պար, 2,000,000 ֆրանքի որոնք: 1899 ին լե:

և հետևած՝ 20,827,756 ֆրանքի, որոնք՝ 35,081,749 ֆրանքի:

Դրամական. — Ելմտական զխաւոր հաստատութիւնն է Աշտ. պանդ. և ուրիշներ:

Ընդունած է մէթրական գրութիւնը: Դրամի միութիւնն է որոնք = 1 ֆրանք:

2. ԵՐԲՈՎԱԿԱՆ ԹՈՒՐԳԻՍ

Երուզական Թուրքիոյ տարածութիւնն է 270,000 քառակուսի քիլօմէթր, բնակիչ 6,500,000: Հողը խիստ բարեբեր է: Օգոստափառ վեհապետին, Աուլթան Համիտ Բ. կայսեր բարձր փափաքանաց և քաջաբերութեան շնորհիւ այս երկիրը հետզհետէ մեծ զարգացման շաւղին մէջ կը մտնէ:

Երկրագործութիւն. — Երկրին բեղմնաւորութեան շնորհիւ կ'արտածուին առատ ցորեն, եգիպտացորեն, շաքար, բրինձ, գարի և համար: Արմտեաց հունձքն է իրը 25,000,000 հէքթօրիար: Երկրին սննդեան մէջ մեծ տեղ կը բռնեն պտուղները:

Ծխախոտի արդիւնքն է տարեկան 18,000,000 քիլօ, որուն 10,000,000ը կուտայ Սելանիկի նահանգը՝ 30,000,000 ֆրանք արժէքով:

Մարիձացի հովիտը խիստ յարմար է բամբակ մշակութեան:

Սելանիկի և Էտիրնէի մէջ կը մշակուի շաքարեղև, որուն իւրը իր անուշահամութեան համար Եւրոպայի ամեն կողմերէն կը փնաւորի: Կլիման յարմար է բրինձի մշակութեան: Անդուտ մետաքսի արդիւնքը 2,000,000 ֆրանքէն աւելի է, մինակ Սելանիկ և Էտիրնէ 1899 ին տուն 210,000 քիլօ մետաքս: Յաջողած է բրինձի մշակութիւնը:

1890 ին Ֆրանսա գնեց Թուրքիայէն 41,000,000 քիլ.

չամիչ, որուն ընդհանուր արտածութեան արժէքն էր, նոյն թիւին, 33,136,762 ֆրանք:

Այգեգործութիւնը հետզհետէ կը զարգանայ, կ'արտադրէ կարմիր թանձր գինի, քաղցր, որովհետեւ խաղողը շատ հասունցած կը քաղեն: Երկրորդ կարգի գինիները, նուազ ալքոլաւոր, կ'սպառին իր երկրին մէջ: Բուսմէլիի ճերմակ գինին փրանսայի մէջ կը գործածեն օղի և վերամուծ շինելու:

Գինիի արտածութիւնն է իբր 2,000,000 հէքթօլիտր, 60,000,000 ֆրանք արժէքով: Սակայն վերջին տարիներս որթալուիճը մեծ փաստուաւ այգիներուն:

Յաջող արդիւնք կուտայ քիւնի մշակութիւնը:

Անասունք. — Եւրոպական թուրքիա կը սնուցանէ 3,000,000 շուար որոնք մեծ ծառայութիւն կը մատուցանեն երկրագործութեան՝ բեռ կրելով, հոյն հերկելով և: Թուրքիա՝ աշխարհի մէջ՝ առաջին կարգին վրայ է այժմ հոյն արտադրութիւնով, որուն սպառման գլխաւոր հրապարակն է Ամերիկա: 1887ին Ամերիկայի դրկեց 2,000,000 քիլօկրամ այծի մաղ, 5,000,000 ֆր. արժէքով:

Թէ Ասիական և թէ Եւրոպական թուրքիա կը սնուցանեն անթիւ ոչխարի հօտեր, որոնք կուտան տարեկան 25,000,000 քիլօ քաշ: Ասկէ 8,000,000 քիլօ կ'սպառէ Եւրոպ. թուրքիա, մնացածը կ'արտածուի Անգլիա, Գերմանիա, Ֆրանսա, Մարսիլիայի ճամբով:

Ճարտարարուեստ. — Ճարտարութիւնը օր քան զօր կը յառաջդիմէ: Ներքին սպառումին համար կը շինեն քրքիղէն, հրատեղէն գործուածներ (Սելանիկ և Եանեա), լարքէ եւ՝ Էտիրնէ, չիւնի, իւսքիւպ, Բրիլթինա: Անասնորդութիւն, հրատեղէն, քաղցր, ներկեր և կը շինուին ի կ. Պօլիս և Էտիրնէ: կ. Պօլիս ունի արքունի ձուլարաններ, բրդեղէնի, մսի, գարեջուրի, յախճապակիի և գործարաններ և նասարան:

Թուրքիա կը գերազանցէ մանուանդ գորգաշինութեան արհեստին մէջ, 1896-97 թրքի արտածութիւնն

եղաւ 52.366 կտոր, 132,116 քիլօ, 117,057 մէթր, 6,906,613 ֆրանք արժէքով:

Մինակ վաճառքի ձկնորսութեան արդիւնքը կը հասնի 462,000 ֆրանքի: Միջերկրականի եզերքները կ'որսան ընտիր սպորտ:

Հայրդղակցութեան անվանք. — Երկիրը լեռնային ըլլալուն մեծ ծառայութիւն կը մատուցանեն ջորին և ուղտը: Սակայն կայսերական կառավարութիւնը մեծ մղում կուտայ ճամբաներու շինութեան: 1888 էն վեր կ. Պօլիսի երկաթուղին կցուած է Սելանիկի և Աւստրօ-Հունգարական գծերուն: Եւրոպ. թուրքիա, Պուլկար-Բուսմէլի գծով միասին կը հասնի 1265 քիլօմէթրի:

Առուտուք. — Եւրոպական թուրքիոյ գիրքը յոյժ նպաստաւոր է վաճառականութեան, մանաւանդ երբ նկատի առնուի իր բացառիկ գիրքը՝ իբր Եւրոպ. վայր՝ Եւրոպա զրկուեցիք Արևելեան վաճառքներուն:

Եւրոպական թուրքիոյ վաճառականութիւնը կը հասնի 1 միլիարի: Արտածութեան 1/8ը նախնական նիւթեր և երկրագործական արտադրութիւններ են. մետաքս, բամբակ, կաշի, արմտիք, ձէթ, պտուղ, ծխախոտ, չամիչ, բուրգ, գինի, գորգ և:

Արևմտացիք կը ծախեն մետաքսէ և բուրգէ գործուածներ, մեքենայ, գործիք, դաղձային բերքեր, շաքար, ըմպելիք և:

Օսմանեան կայսրութիւնը ամեն պետութիւններէ առաջ ազատ վաճառականութեան դրութիւնը ընդունած և գործադրած է: ԺՉ. դարէն ի վեր հաստատած է իր առևտրական յարաբերութիւնը Եւրոպայի հետ, Ֆրանսական նաւեր ազատ ելլամուտ ունէին կայսրութեան բոլոր նաւահանգիստները, սակայն Ֆրանսա հիմա ուրիշ պետութեանց նաւերուն տեղի տալով նուազ կը գործէ: 100 էն աւելի ֆրանսացի առևտրական տուներուն ներկայացուցիչներէն 20ը միայն ֆրանսացի են, և միւսները, նոյն իսկ Լիոնի ներկայացուցիչները Աւստրիացի կամ Գերմանացի են:

Թուրքիոյ յաճախորդներն են. Անգլիա, որ 1899 ին
գնեց Թուրքիայէն 69,460,275 ֆրանքի ցրէն, բարէ, բաւար,
Խաղաղ բաւար և ուրիշ բարեր (253,451 անգլ. լիբրայի.) Բէճիէ
(575,041 անգլ. լիբրայ):

Թուրքիա գնեց անկէ 111,205,700 ֆրանքի Բրիտանիան,
Բարձրագոյն, պէնսիլվանիա, աճուսի ևն:

Ֆրանսայի հետ փոխանակութեանց գումարն եղաւ
1898 ին 146,000,000 ֆրանք (100,000,000 արտածութիւն
ի Ֆրանսա): Թուրքիա ծախեց Վերսալ (30,266,000 ֆր.)
կաշի և մանուշակեղէն (11 միլիոն), բիւն (9,274,000 ֆր.), Բարս
(5, 5 միլիոն ֆր.), Եւրոպայի շինարարներ, բարեր, հասկիւն, (2,157,000
ֆրանք), Բարձրագոյն կաշու, զարդեր պարուներ, արծաթէ (15,362,000
ֆրանք), Լարդէ Եւր (85,000 ֆր.), արդիւնք, սպանի, արծաթ,
կարէն, մաշ, կանէք ևն:

Իսկ Ֆրանսայէն գնեց, կաշի, (8,868,000 ֆր.) հիւսնաշ-
ներ, շաւր, բարձի, շերտի սերտ, Բրիտանիան, կահեր, Բարձրագոյն,
հարստեանք, կերպասներ ևն:

Աւստրիոյ փոխանակութեան արժէքը կը հասնի
140,000,000 ֆրանքի, մեծ մասը ներածում յԱւստրիա:
Ռուսական առուտուրը իրը 40,000,000 ֆրանք:

Պելճիքա 1898 ին գնեց և ծախեց իրը 38,000,000
ֆրանքի վաճառք:

Ռուսներն 1898 ին ներածեց ի Թուրքիա 95,262,895
ֆրանքի վաճառք (83,810,000 ֆր. արժուիք և ալիւր),
արտածեց 39,531,156 ֆրանքի վաճառք:

Իտալիոյ փոխանակութեանց արժէք իրը 70 000 000
ֆրանք (39,438,000 ֆր. արտածութիւն ի Թուրքիա):

Այսպէս ունին իրենց առուտուրը Յունաստան՝ իրը
22,000,000 ֆր. Գերմանիա, Շուէտ, Սպանիա, Դանիա,
Հոլանտա, Եգիպտոս: Վերջին տարիներս սկսաւ Թուրքիա
յարաբերութեան մտնել նաև ճարտնի հետ, ուր ներա-
ծեց 60,000 ֆրանքի ծխախոտ, և անկէ գնեց 234,406 ֆր.
զանազան նիւթեր, մանաւանդ բրինձ. այս առուտուրը
տակաւ կ'աճի:

Միջերկրական և Սև ծովերու նաւահանգիստներուն
դորձառնութիւնը կը հասնէր 1898 Մարտէն 1899 Մարտ
36,814,714 թօնօ տարողութեամբ 202,174 նաւերու ար-
դիւնք, յորմէ 44,034 շոգ ենաւ, 34,150,231 տակառաչա-
փով:

Օսմանեան	գրօշով	13,004	շոգ ենաւ	4,206,200	տկուչփ:
Անգլիական	»	9,195	»	10,369,277	»
Աւստրո-Հունգր.	»	5,401	»	6,032,504	»
Ֆրանսական	»	2,149	»	3,014,999	»
Յունական	»	7,467	»	2,922,257	»
Իտալական	»	1,717	»	1,998,376	»
Ռուսական	»	2,187	»	2,760,475	»
Եգիպտական	»	815	»	810,462	»
Պուրկարական	»	572	»	277,132	»
Գերմանական	»	510	»	671,938	»
Հոլանտական	»	265	»	281,360	» ևն:

Թուրքիոյ առևտրական և անտեսական մեծագոյն
հրապարակն է Կ. Պօլիս, որ միանգամայն եզական նա-
ւահանգիստ մ'է իր ննաչխարհիկ դիրքով:

1898 Մարտէն 1899 Մարտ Կ. Պօլսոյ հաւահանգիս-
տին մէջ ելեմուտը քաճ են 34,643 նաւ 11,538,476 թօնօ
տարողութեամբ որուն 9,794 ը շոգ ենաւ 10,884,958
տակառաչափ:

Անգլիական	գրօշով	5,567,954	տակառաչափ
Հելլենական	»	1,176,819	»
Օսմանեան	»	819,191	»
Աւստրո-Հունգր.	»	877,947	»
Ռուսական	»	864,335	»
Իտալական	»	783,674	»
Ֆրանսական	»	511,554	»
Ռուսական	»	172,998	»
Շուէտ-Նորվեգ.	»	123,158	» ևն:

Լիվրուրէն, Լոնտօնէն, Մարսիլիայէն, Թրիէստէն
եկող ամեն թղթատար նաւ կ'այցելէ Կ. Պօլսը: Բնու.

թենէն օժտուած այս մեծ հրապարակը կը պարունակէ Ոսկեղջիւրը, բնական հիանալի ջրանցքը, վոսփորի երկու եզերքները իրենց գեղեցիկ արուարձաններով, Մարմարան և Տարանէլի անցքը:

Սեւանիկ. — Եւրոպական թուրքիոյ երկրորդ մեծ նաւահանգիստը, 1899 ին ներածեց 45,300,000 ֆրանքի վաճառք, և արտածեց 21,970,000 ֆրանքի: Այս հրապարակին գլխաւոր շահագործողներն են իտալիէի որդիները:

Ուստուֆօ. — 1899 ին ելիմուտ ըրին 172 շոգենաւ 231 047 տակառաչափ. (140 նաւ 179.179 տակառաչափ, Աւստրո-Հուգար. գրօշով) և 324 եզերանաւ 37,748 տակառաչափ (159 ը Յամ. 19,903 տակառաչափ):

Քալիպու. — Արշիպեղագոսի եզերքը, 1899 ին, մուտք 287 շոգենաւ 228,732 տակառաչափ. 1904 առագաստանաւ 17,794 տակառաչափ: Եւր 287 շոգենաւ, 228,732 տակառաչափ, 1904 առագաստանաւ, 17,794 տակառաչափ, ընդամեն 4382 նաւ, 493,056 տակառաչափ:

Ներքին առևտրական մեծագոյն հրապարակներէն է Արբիանուսի, որ ունի անձեռոցի և կերպասի գործարաններ, շոգեաղօրիք 10 շոգեքարերով:

Եսանես. — Կ'արտածէ խմբուրդ, լոշուկեղէն, լիպիս, բամբակ, խոշոր, որդուկ, խոշոր, շերտի հոն, բրդէ հեռուածներ:

Գրամական. — Գրամական առաջին հաստատութիւնն է Պոստ-Օբսերու, 10,000,000 Անգլ. սթեռլին գրամագլխով, ունի իրաւունք տամեր շրջաբերութեան հանելու և ամեն գործողութիւններ ընելու: Բրէտէ յետեւ Օբսերու 20,000,000 ֆրանք գրամագլխով: Այս ընկերութեանց ակտուն է Կ. Պոլիս. հոն են նաև Բրէտէ Լիմէն մէկ գործակալութիւնը 200,000,000 ֆրանք գրամագլխով: 17 մասնաւոր մեծ սեղանաւորներու աները (Եսոյեան, Կիւլպէնկեան, Ալարեան, Չարիֆի, ևն): Նշանաւոր է ի մէջ այլոց Օբսերու Պոստ առևտրական տունը, անանուն ընկ. 10,000,000 ֆրանք գրամագլխով: Թուրքիոյ բոլոր

մեծ ու վոսքը քաղաքները օժտուած են երկաթուղիներով:

Մէթրական գրութիւնը ընդունուած է, որուն հետ միասին գեո. կը գործածուին հին գրամները, կշիռները և չափերը:

Է. Հ Ե Ր Ս Է Ք - Պ Օ Ս Ն Ա

Պալքանեան: Թերակղզիին ամենէն նկարչագեղ գաւառն է Պօսնիա, լեռնոտ, ձորերով ու անտառներով ծածկուած: Ունի 2,297,200 հ.քթր. անտառ, 1,820,000 հէքթար մշակելի հող, մեծ մասը կոյս: Վենետիկ երբեմն ասկէ կ'առնէր իր նաւաշինութեան փայտը:

Հէրոսէքի մեծ մասը կրային է, ջուրերը կը կորսուին հողին տակ, կլիման չոր, տաք:

Բերք. — Բրէն, որմարանի, ձիախոտ, եփեղացորեն: Պտուղներն են. սուր, որմէ մեծ քանակութեամբ կ'արտածեն:

Եկամուտի մեծ աղբիւր մ'է խաւսաբուսութիւնը:

Համք. — Կը բանեցնեն երկաթի, անագի և թղթի հանքերը: Հողը լաւ մշակուած:

Ճամբայ ևս առուտուր. — Ունի 500 քլմ. երկաթուղի: Առուտուրին աէրն են Հրէայք, թէև սակաւթիւ: Պօսնիոյ ջեղառէրներն ալ ժրաջան և ձեռներէց են, նշանաւոր են անոնք մանաւանդ հիւսիկէնագործութեան և ոսկերչութեան մէջ:

Գ Լ Ո Ւ Ի Ե

Ա Ս Ի Ա Կ Ա Ն Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Ա Ս Ի Ո Յ մէջ Օսմանեան կայսրութեան կալուածոց տարածութիւնը մտաւորապէս 2,000,000 քառ. քլմ. է, այսինքն Եւրոպայի 1/5 ը, բնակիչք 17,000,000 (Հիճազ և Եէմէն միասին):

վերջին քառորդ դարէն ի վեր, կայսրութեան այս մասն ալ ունեցաւ իր բաժինը տիեզերական յառաջդիմութեան բարիքներէն, երկրին ամեն կողմերը հեռագրաթելերով, հեռոգհեռէ շինուած խճուղիներով և երկաթուղիներով մէկմէկի միանալով:

Մշակութիւն. — Թուրքիոյ Ասիական բաժնին հողը բարեբեր և ամեն կլիմաներու դօտիններ պարունակելով կրնայ արտադրել ամեն տեսակ բերքեր:

Բազմաթիւ են ճարտարական տունկերը. ասոնց մէջ առաջին տեղը կը գրաւէ Ժնև, որմէ Տրապիզոնի նահանգը կ'արտադրէ 10 միլիօն քիլօ (6 ը Սամսոն-Պաֆրա), վան 780 հազար քիլօ. Մուշ, Մալաթիա, Գասապա և մօտաւորապէս 25 միլիօն քիլօ:

Բամպակ. — Բոլոր նահանգներուն մէջ և ի մասնաւոր ի կ'ածի այս տունկը մեծ քանակութեամբ Ատանա (75 հազար հակ) Եգեսիա, (100 հազար քիլօ), Խարբերդ, Խալիպ (Հալէպ) և, որոց մեծ մասը կ'արտադուրի Եւրոպա, և մնացեալը կը դ'սրժածուրի տեղւոյն մէջ:

Վուշ և Կանէ՛ մասնաւոր արտադրութիւն մ'ունին Տրապիզոնի նահանգին մէջ:

Իւլպապտուղներէն յերէն ընդհանրապէս կը մշակուր ծովեղերքները և կղզիներուն մէջ. (3,500,000 քիլօ), Այվալըգ՝ նոյնչափ, Միտիլլի որ ունի 300 ձէթհան՝ 100 ը շոգեշարժ, 100 օճառնոց, որ կը պատրաստեն 4 միլիօն քիլօ օճառ, Իզմիր, Քիլիս, Անաիսք, Սուրիական կղերքները և Արշիպեղադոսի կղզիները: Եւրօպայ՝ կ'արտադրեն Սուրիա, Սղերդ, Խարբերդ, Մուսուլ:

Արմուկք. — Ի հնուց անտի Ասիական թուրքիա նշանաւոր եղած է իբրև արտածող երկիր արմախքի Յընէ, Էսթի, Եֆէլուսցիքէն, ոսպ, սիւն, լաթիա, առատօրէն կ'արտադրեն Սըլազի, Խարբերդի, Ալաշկերաի, Մուշի, Մուսուլի, Գոնիայի, Էնկիւրիի, Տիարպէքիլի, Պրուսայի, Սուրիոյ գաշտերը, Տրապիզոն ունի մանաւանդ լաթի և Եֆէլուսցիքէն:

Խոզկաղվն (gland), Էրուր, կ'արտադրեն Տօրոսի և Անտիօրոսի լեռնագաւ առներէն, մասնաւորապէս Պիթլուէն:

Մասուսակի արմատ կուտան Տիարպէքիլի, Խարբերդի գաշտերը և ուրիշ կողմեր, Պէյրութ, Ատալիա և:

Կաղվն. — Բուն հայրենիքն է Տրապիզոնի կուսակալութիւնը և ամենէն ընտիր տեսակէն է Կիրասոնի կաղինը:

Կաղինը կ'արտածուրի Թրիէսթէ, Համպուրկ, Մարսիլիա, Ստեսա և մաս մըն ալ ներքին գաւառները:

Մատակասքար հարուստ է նաև անտառներով. Յէրու-նէֆոյր (palissandre), յահակենի, էբենու, պամպու, շերի փայտեր, սորոյ և: Թրեւին և որդիանէփոյրը կը սնուցանեն տեսակ մը որդ որ կուտայ սքանչելի մետաքս:

Մատակասքարի 1/100 րէ. մասը հաղիւ մշակուած է:

Հանքեր. — Պրանսոյի կառավարութիւնը կը շահագործէ միայն պղնձ և ոսկի հանքերը: Հարաւ-արեւմտեան եզերքը, Պավաթուպէ, կը գտնուի հանաքաքարէ աւազան մը հարուստ, անգնահատելի գանձ մը այնպիսի գաւառի մը համար որ ամուսին թմնօն կ'արժէ 75-80 ֆրանք: Առատ է երկաթը: Այս ամենը պիտի մնան հողին տակ մինչև որ շինուին ճամբաները և հազորդակցութիւնք գիրանան:

Ճարտարութիւն. — Գեռ նախնական փիճակի մէջ է ճարտարութիւնը և կ'արտադրէ միայն նիւթեր տեղական սպառումին համար: Մալիալները կը գործեն Բոպոտէ և բամբակէ գունաւոր, տոկուն հիւսուածներ՝ լամպաներ շինելու համար: կը շինեն նաև հափասար, սուրճարի կոպալ և զանազան եղէգներէ՝ քիւրի:

Թիւրքար նաւահանգիստը՝ բուստէ ժայռի անասման տարածութիւնով շրջապատուած, առատ է ամեն տեսակ ընտիր ձուկերով: Հոն կարելի է փորձել յաջողութեամբ պահածոյ և աղծ ձուկերու ճարտարութիւնը: Կան հարուստ հանրեր պղնձակի: Թիւրքարի բուստէ ժայռը առատութեամբ ունի խեցեպարտաներ (crustacé), կոկոսիկներ (mollusque) և ժոկուիներ (coquillage) սկսեալ Բրանդերէն (casque) որ կը ծառայեն խեցիներու շինութեան, մինչև Զոլոպուրի (holothurie) որ Չինացի սիրական անուշիկ է:

Սառստար. — Մատակասքար մեծ ազդեցիկ կը խոտանայ իր առեւտրական գիրքին շնորհիւ: Բազմաթիւ Պրանսական, Անգլիական, Գերմանական և Ուկրաինական տուներ հաստատուած են ծովեզերքները և կը պահեն բազմաթիւ գործակալներ՝ ներսերը:

Փոխանակութեան գլխաւոր կեդրոնն է Թամբուլ, արեւելակողմը, Թանանտրիփի մատոց ոյն նաւահանգիստը, բաւական խոր, կրնայ ընդունիլ ամենէն խոշոր նաւերը: Թամաթալի առուտուրը կը հասնի 5 միլիօն ֆրանքի 2/3ը ներածութիւն:

Տիէկո-Սուարէզ. — Աշխարհի գեղեցկագոյն նաւահանգիստներէն մին, զուգակիւ թիւ-Եանէլլոյի և Սան-Պրանչիսկոյի: Այս նաւահանգիստը ելի մուտ կ'ընեն 385 նաւ (102ը ֆրանսական): Տիէկո-Սուարէզի առուտուրը կը հասնի 4.500 000 ֆրանքի (2, 5ը արտածութիւն): Պրանսոյի բաժինն է 140 հազար ֆրանք:

Մանուսկա՝ ամենէն բանակ նաւահանգիստն է Ամերիկայի վաճառականութեան թիւրք, Մորոպուս ունին առուտուր տեղական բերքերու, հոս հաստատուած են ամերիկեան և եւրոպեան գրասենեակներ:

Մատակասքարի ընդհանուր առուտուրը կը հասնի 60 միլիօն ֆրանքի: Մեծագոյն յաճախորդներն են՝ Անգլիա, Ամերիկա, յետոյ կուգան Պրանսա և Գերմանիա:

Ներածուած և արտածուած վաճառքներու ասորքն է 8-10 առ % բացի թղթեղէնէն:

Ամերիկա կուտայ Բաբակեղնը. Անգլիա կ'աշխատի գե-
րազանցել՝ հնդիկ կրակով: Գերմանիա կուտայ Բարակեղն՝ որ
չատ կ'սպառի՝ ամեն թեանը պատճառաւ: Մաճունկա է
ասոնց մթերանոցը: Անգլիա և Գերմանիա կուտան հաշ-
նոց, դեղ, վարձ, որի բնույթ, բեղեր: Պրանսա՝ բարձրեղ:

Ամերիկացիք կը գնեն աղած և շրջառ ճարձեղան, (100
քիլոն՝ 90 - 100 ֆրանքի): Բրիտ, Իէթ, յէսիէթ (1 միլիոն ֆր-)
նեղի հաշիւ տարու է տարի կարեօրութիւն կը գտնեն:

Գրամ. — Ծովեղերքներէն և մեծ կեղբոններէն զատ՝
վաճառականութիւնը բերքերու փոխանակութեամբ
կ'ըլլայ: 5 ֆրանքնոցն է միայն շրջարեօրութեան մէջ
գտնուած գրամը:

Բ. ՌԵՒԻՆԻՕՆ ԵՒ ՅԱՐԱԿԻՅՔ

Ռէիւնիօն կղզին (2 հազար քառ. քլմ.) ունի ֆրան-
սական ծագումէ 200 հազար բնակիչ, Հնդիկ, Մալլալ, Չինացի և
միաօրի: Արեւելեան ներքի չոր և անձրևա-
յին կլիմաներով:

Բերք. — Շաքարեղէք, հաշիւ, սուրճ. Արտածելի է հա-
մեմու կը: 1777 ին սուրճի արդիւնքն էր 3,500,000 քիլո,
հիմա հազիւ 1/5 րոք կը հնձուի: կլիման յարմար է բր-
հաշիւ: Ծրեղ, եղիւրդեղեղ Բրիտ, տեղացի ոչ իսկ բաւական
չէ: Բրիտն կը գնեն Հնդկաստանէն, միս՝ Մատակասքա-
րէն: Նուազ է պարտաւ շարտարութիւնը կը կեղբոնանայ
շաքարէ և բո՛ւ շինութեան մէջ:

Ներածութիւնն է 21,262,367 ֆրանք. արտածութիւն
13,902,000 ֆրանք: Պրանսա հոն շինած է 240 քիլոմէթր
ճամբայ և 120 քիլոմէթր երկաթեայ գիծ: Ելեմուտ
կ'ընեն 400 նաւ, մեծ մասը ֆրանսական:

Յարակից կղզիներն են Հնդկաց Ովիկանի մէջ Սէն-
Մարէ, Նոն-Մէն, Նոն-Պէ, Մայօն և Գոմբէն (տարած.
2067 քառ. քլմ., բնակիչ 50 հազար): Ասոնցմէ ամենէն
յաջողն է Նոն-Պէ, ուր հաստատուած են երեք տուներ

եւրոպական, առուտուրը կը հասնի մօտաւորապէս 2
միլիոն ֆրանքի:

Այս կղզիներուն բերքերն են. շաքարեղէք, սուրճ, հաշ-
իւ և: Ընդհանուր առուտուրը կը հասնի 6 միլիոն
ֆրանքի:

Բ. ԱՆԳԼԻԱԿԱՆ ԿԱԼՈՒՄՅՔ

ՄՕՐԻՍ, ՍԵՉԷԼԵՍԿ, ՍՈՐՈՒՐՈՐԱ ՆՈՒ ԱՅԼՆ

Մօրիս. — (1914 քառ. քիլոմէթր, 365 հազար բնակիչ:
ամենէն բազմամարդը և հարուստը, գրացի Ռէիւնիօնի
և օժտուած անոր բերքերով, մինակ աւելցած է շաքար-
եղէք: Շաքարի արտադրութիւնն է 100 հազար (թօն)
Արտածելի գլխաւոր նիւթերն են. հաշիւ, հնդկանոցի-
հաշիւ Բէլ Արմաթի և պտուղ՝ սակաւ, բրիտն կուցայ
Պէնկալէն, միսը՝ Մատակասքարէն:

Գլխաւոր ճարտարութիւնն է շաքարեղէք-Բէլ-Ն, ունի
Բրաբուրնի որ կ'արտադրեն 25 հազար հէրթօլիար բո՛ւ,
երբ 5 միլիոն ֆրանք արժէքով:

Երկաթեայ երկու գիծեր և բազմաթիւ ճամբաներ
կ'ապաստեն Մօրիսը, որուն մայրաքաղաքն է Բոն-Լուէ,
յոյժ խաղաղ նաւահանգիստով: հոս կ'այցելեն տարեկան
1000 նաւ 700 հազար տակառաչափով: Երկրորդն է
Մահեպուրի:

Այս կղզին առուտուրի մեծ աղաւտութիւն կը վայելէ,
տուրեառը կը հասնի 150 միլիոն ֆրանքի:

Մօրիսի վարչութեան ներքի են Սեչէլէսէ և Սոմբել
կղզիները: Ասոնց բերքերն են. Բրիտ, սուրճ, շաքարեղէք, Բոն-
Բոն, Գոմբու: Հաշիւ-Բոն հնդկանոց և կրեյտ պտուկները գլխա-
ւոր նիւթերն են արտածութեան: Ասոնց առուտուրը կը
հասնի 20 միլիոն ֆրանքի:

Սոմբելու կը հոկէ Ասէնի ծոցին, ունի համեղ
պտուկներ և հաշիւ Բէլէր (fibre):

ԳԼՈՒԽ Բ.

ՀԱՐԱԽԱՅԻՆ ԵՒ ԱՐԵԻԵԼԵԱՆ ԱՓՐԻԿԷ

Ա. ԱՆԳՂԻԱԿԱՆ ԳԱՂՓԱՎԱՅՐՔ

ԱՓՐԻԿԷԻ այս մասին երկիրները կը կազմեն Գա-
լան Բաբի, անկի Բաբրաստան, Զուլուլան, Օբան, Թրանսվալ,
Պելեանալան, Զապեդի մէջ նոր ստացուած գաւառները,
որոց տարածութիւնն է 2 միլիօն քառ. յիւլօմէթր և
բնակիչք 3 500,000, որոց 1/8ը հազիւ սպիտակամորթ,
Ամենքը Անգլիոյ գրօշին ներքև:

Քարի կլիման չոր ու տաք է, արևելեան գառնիթա-
փերը՝ նաթալ, Զուլուլանա, Թրանսվալ՝ լու սուպուաժ-
են. կուտան Բաբան, Զապեդի, Բրան, Երան՝ որոնց հարկուոր
է տաք և խոնաւ կլիմայ: Արեմուտքը յարմար է բնա-
ստիչ:

Այս թերակղզիին օդը առողջարար, անձանօթ են
դեղին տենդն ու բօլերան: Առաջին անգամ այս գա-
ւառները հաստատուած են Հոլանտացիք, Պէր կոչուած,
որոնք առաջին անգամ մշակած են այդ խոտան վայրերը:

Երկրագործութիւն. — Հարաւ. Ափրիկէի արմախքի
բերքը անբաւական է երկրին: Պաղօթ սնները առաւելա-
պէս կը մշակեն հասարէի (sorgho) ըսուած արմախքը:
Քարի արեմուտքը կը մշակեն բնաստիչ. որ քնատուելով
որթալուիճէն՝ հիմա հազիւ կարտագրէ 260 հազար
հէքթօրիար քէն: Քարի ապագայ մեծ ճարտարարուեալը
պիտի ըլլայ չամիչի պատրաստութիւնը, որուն տեսակը
անմրցելի է:

Արևելքի տաք և խոնաւ գաւառներուն մէջ հրաշալի
կերպով կ'աճի շաբիլի: 12 հազար հէքթար գետնի
վրայէն կ'արտադրուի 190 հազար մէթր. քէնիթալ: Այս
կողմերը կը հասնի նաև Բաբան:

Անգլիացիք իրենց այս գաղթավայրերուն մէջ ներ-
մուծեցին նաև բէնէ և սիլիկոն մշակութիւնը:

Ծխախոտը ամեն կազմ կը մշակուի, նշանաւոր է Թրանս-
վալինը:

Ընտանի անասունք. — Հարաւ. Ափրիկէան երկիրնե-
րուն համար հարստութեան մեծ աղբիւր մ'է նաև
անասնարուծութիւնը: Մասնաճառանոցի համար, խոշոր
գմակներով սիլիկոնի թիւը կը հասնի 2 միլիօնի, բայց
նշանաւոր է մանաւանդ Նիթալ սիլիկոնը, որ կը հաշուուի
13-14 միլիօնի: Սակայն այս վերջին տեսակը կը նուազի:
Աստրալիոյ և Լարլադայի աւելի փայլուն և երկայնա-
մաղ բուրդին մրցակցութեան հետևանքով: Լանկէ-բէն ոչ
2,500,000, որուն մոլը (mohair-թիթիկ) կը հաւասարի
Ասիական թուրքիոյ այժի մազին՝ իր փափկութեամբ և
նրբութեամբ:

Գառաղեցերու մէջ կը բուծեն Էպէն, որ տակաւ մեծ
կարևորութիւն կը գտնէ: Ասանց թիւը կը հասնի 85 հա-
զարի Քար կ'արտածէ 130 հազար քիլօ փետուր:

Չէ՛ 350 հազար, եւ՛ 2 միլիօնի չափ կը հաշուուին:

Հանքային խարտութիւն. — Այս մասին քիչ երկիրներ
կրնան հաւատարիլ Հարաւ. Ափրիկէան երկիրներուն:

Ամենէն կարևորն է Արաբիայի հանքերը, Օրանժ գետի
գետախառնունքին և Վաալի մաս՝ կրիքուալանտի մէջ:
Արաբիայի քէնը, ինչպէս Ամերիկայի սիլիկոնը, իրեն ձգեց
անթիւ գաղթականներ այս երկիրը՝ ուր հանքերը յայտ-
նուեցան 1870ին: Ալլաբի հիւսնահարուստ այս շահա-
ցործութիւնը քիչ տարիներու մէջ մօտեցուց Բիմպրի
քաղաքը, որ երկաթուղիով միացած է Քարի: 1871-1890
հանուած աղամանդներու վաճառելի արժէքը կը հասնի
1 երկիլիօն 680 միլիօն ֆրանքի:

Քար է առաջին երկիրը աղամանդարեր, Հնդկաս-
տան այլ և սարտագրեր այսօր անոր չափ, միայն Պոր-
նէոյ և Պրադիլիա կրնան այդ կարգէն համարուիլ: Ըստ
վիճակագրութեանց տարեկան արտադրութիւնը պիտի

ըլար 10-12 քիլո, արդ 12 էն հաշուելով, կը հաստատուի որ 1729 էն վեր (բուն յայտնուելուն թուականը) մինչև 1890 այս երկիրը արտադրած է երկու թոնո (1560 օխա) աղամանդ:

Քանի մը տարիէ վեր գտնուած են բազմաթիւ ուղեքէր հանքեր թրանսվայի գտնազան կողմերը, ամենէն հարուստներն են Բրէթօրիայի և Բոչէֆօթրու մէջտեղ գտնուածները, որք ծանօթ են Քաթէ, Ուելլ-Բերբուրէ, Քոմբլէ, Քրէ-Կերբուրէ, Բուրբուրէ, Շոմբուրէ և այլն անուններով:

1871-1889 այսինքն 20 տարուան մէջ Հարաւ-Սփրի կէն հանուած ոսկին արժէքն է 79,880,725 Ֆրանք: 1890 ի առաջին ամիսներուն ծանօթ արդիւքները ցոյց կուտան թէ արտադրութիւնը կը շարունակէ հաստատապէս աճիլ: Միջին արտադրութիւնը ամսական 4 միլիօն ոսկիէն աւելի է: Այս ոսկերէր հանքերը քիչ միջոցի մէջ բազմամարդեցին ամայի երկիրներ: Քարի հանքային գաւառին մէջ Եօհաննէսպուրկ՝ երեք տարուան մէջ կրկնապատկեց իր բնակիչները:

1898 ին բոլոր սշխարհի ոսկույ արտադրութիւնը եղած է 361 342 քիլո՝ 1,445,738,405 Ֆր. արժէքով:

1899 ին այս արտադրութիւնն հասաւ 472,022 քիլոյի, 1,569,523,270 Ֆր. արժէքով:

Եւրոպա	արտադրեց	43,634	քիլո	ոսկի
Ասիա	»	26,426	»	»
Աֆրիկէ	»	113,867	»	»
Հիւսիս-Ամերիկա	»	150,281	»	»
Կեդր.	»	789	»	»
Հարաւ.	»	20,030	»	»
Ովկիանիա	»	117,491	»	»

Երկար տառնէ վեր կը հանուի պղնձ (1888 ին 29,712 թոնո) մանաւանդ Նամագայի գաւառէն: Դեռ նուազ քանակութեամբ հանուած են երկաթ, գոլտը, արծաթաքար:

Կապար: Կը գտնուի նաև հանաքաքարի իսկ Նաթալի մէջ՝ Նիուրապէն կը հանուի առատ քեթաքար:

Ճարտարութիւն. — Ամեն նոր երկրի պէս Հարաւ-Սփրիկէի ճարտարարուեստը կը կայանայ երկրին արտադրութներուն ձեւափոխութեան մէջ. հանաքարձու, կաշիքարձու — սպիտակարձու (կաշին ճերմկցնել), սպառքարձու և:

Ճամբաներ. — Հանքերու ճարտարութիւնը մղած է զիրենք շինելու ճամբաներ և երկաթուղիներ:

Երկաթուղի հեռագրի թել նամակ և

Քար	4,035	քմ.	35,030	քմ.	22 600,000
Նաթալ և Զուլուէնա	646	»	3,405	»	»
Օրանժ	821	»	5,950	»	»
Թրանսվալ	1,247	»	7,660	»	»

Քարի մուտք 6,536,475 սթէրլին, ելը 7 082,255 սթէրլին:

Երկաթուղիի կարևոր դիմն է Քարէն Քիմպրլի երկարող գիծը, որ կը հասնի Մէֆքիին: Այս գիծը և Տէլակօա ծոցին ճամբան կը փոխադրեն ներքին արտադրութիւնները գէպի ծովեզեր: Տէլակօայի ծոցը կը վերաբերի Փորթուկալի և սա միայն 60 քիլոմէթր հեռու է Բրէթօրիայէն:

Նաւային շարժում. — Մուտք 2,333 նաւ 6,710,054 տակառաչափ, ելը՝ 2,358 նաւ 6,717,300 տակառաչափ:

Նշանաւոր նաւահանգիստներն են. Քաթ, ուր կ'այցելին 1,500 նաւ, 1000 ը անգլիական. Բուրբուրէ-Կոմբլէ 900 նաւ, Բուրբուրէ-Կոմբլէ 630 նաւ:

Առուստրալ. — Հարաւ-Սփրիկէան անգլիական գաղթավայրերու վաճառականութիւնը կը հասնի 400 միլիօն ֆրանքի: Արտածելի նիւթերէն առաջինն է Բուրբուրէ, յետոյ կու գան ոսկին, պղնձը հանաքայ, Կոմբլէ-Քաթ, Կոմբլէ, Կոմբլէ և Կոմբլէ: Արտադրութիւնը կը զրկուի:

Այս առևտրական շարժման մէջ Անգլիոյ բաժինն է

330 միլիոն: Լօնտրա կ'ընդունի մեծ մասով գաղթավայրերու արտադրութիւնը:

Գերմանք, հաստատուած արեւելեան և արեւմտեան եզերքները, տարուէ տարի կ'աւելցնեն իրենց առևտրական յարաբերութիւնը Հարաւային Ափրիկէի հետ. նաև եր Համպուրկէն ուղղակի կ'երթեւեկեն այս կողմերը:

Ֆրանսա հոս կը ներածէ գինի, գինեւ, գահարեղէնէր և:

Բ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՓՐԻԿԷՒ

ԱՆԳԼ. ԳԵՐՄ. և ՓՈՐՓՈՒԿԱԼԵԱՆ ՍՏԱՅՈՒԱԿ

Անգլիա կը տիրէ գէպի Հիւսիսային - Արեւմտք՝ Վիքթորիա - Նիանդա լիճը, որ կը կոչուի միանգամայն Արեւելեան Ափրիկէի Մէլբուրնէն, և Ուկանտայի այնքան ցանկալի գաւառը՝ Վէլթ, ուր Գերմանք հիմնած էին Հոհէնձոլֆենի նաւահանգիստը և իտալիա՝ Սոմալի չոր և անբեր գաւառը:

Գերմանիա կը գրաւէ Ադատ - Ֆօնկոյի և Թանկանիքա լիճին արեւելքը, Վիքթորիա - Նիանդա լիճին հարաւակողմը: Սալային Անգլիա իրաւունք ունի Վիքթորիայէն Թանկանիքա, Գերմանական կալուածոց մէջ ճամբայ շինելու. նոյնպէս Գերմանիա ընդունած է Անգլիոյ պաշտպանութեան հաստատութիւնը՝ Չանդիպարի վրայ: Անգլիա այսպէս բռնած է իր ձեռքին մէջ Ափրիկեան բոլոր եզերքին բանալին և կը ձեռայնէ ամբողջ վաճառականութեան հակակշիռը (contrôle):

Մակերես, բնակիչ, կլիմա. — Այս մասին տանուած ծանօթութիւնները գեաւանկատար են: Չամպէզի իւրաքանչիւր քառ. քիլօմէթրի համար 1-2 բնակիչ հազուկենթագրուի: Մողամպիքի փոթթուկալեան ստացուածքն ունի գրեթէ 1,500,000 բնակիչ, իտալիայէն աւելի ընդարձակ տարածութեան մը վրայ (300 հազար քառ.

քմ.), նոյնպէս Սոմալ՝ սակաւաթիւ է: Մեծ լիճերուն բնակչութիւնը աւելի խիտ կ'երևի, Ուկանտայի ժողովուրդը կը հաշուուի 5-6 միլիոնի, Ֆրանսայի քառորդ տարածութեան վրայ:

Սպիտակամորթ դժուարաւ կրնան ապրիլ այս կողմերը, ճահճային տենդերու պատճառաւ: Պէլֆօնտ կը բազդատէ զՈւկանտա իտալիոյ ամենէն գեղեցիկ գաւառներուն, իր Պանանենիի շքեղ մշակութիւնով, Լուալայի հիանալի աւազանը արդշուեց զէվինկութիւն: Գամբոն կը նկարագրէ Հարաւ. Ափրիկէի ներքին մասերը իբրև առողջարար: Հրաշալի և անհաւատալի ճախութեամբ լի երկիր մը: Մաշնալանտը կը նկատուի Հարաւ. Ափրիկէի ապագայ շտեմարանը ցորենի:

Հարաւ. և Արեւելեան Ափրիկէի Ընկերութիւնք. — Չամպէզի մէջ՝ ի Պաշտպանական թագաւորող զանազան պետերու կողմանէ շնորհուած արածութիւնները շահագործելու համար այլ և այլ ընկերութիւններ հաստատուած են: Կալէս իշխանին (այժմ՝ Անգլիոյ գահակալ) փեսան՝ Ֆայֆի դուքսը և Սէսիլ Բոտս, արամանդի Լաբուրը, միացուցած են այս ընկերութեանց Հարաւ. Ափրիկէի Անգլ. Ընկերութիւնը, որ հիմնած է Հանտըն լեռան ստորոտը (Մաշնալանտի մէջ) Ֆօլթ-Մալդուէ. Չամպէզի ապագայ մայրաքաղաքը:

Անգլ. Արեւելեան Ափրիկէն արդիւնաւորելու համար հաստատուած է 1887 ին Ընկերութիւն մը, որուն գրամագլուխը 1890 ին եղած էր 700 միլիոն ֆրանք: Այս ընկերութիւնը ստանձնած է տալ Չանդիպարի սուլթանին տուրքը և վարչութեան ծախքը ունի իրեն սեփական դրոշ, դրոշմաթուղթ, դրամ, հիմնած է դրամատուն մը, սկսած է շինել երկաթուղի մը, Վիքթորիա լիճին եզերքի նեղ ճամբուն վրայ, նաև ճամբաներ:

Գերմանացիք ալ ունին այսպիսի ընկերութիւն մը, բայց զուրկ վարչական իրաւունքէ, միայն կրնան շահագործել երկրին հարստութիւնները:

Բերքը. — Արևադարձային ամեն երկիրներու պէս այս ալ ունի մշակութիւնն բրնձի, նաև եգիպտացորեն, ցորեն, գորան, սեփեռ, Լաբեա, փախախ և վերջապէս պտուղներ՝ անանաս, պանան, նարինջ, ևն:

Զանգիպար կղզին կը հայթայթէ մանաւանդ համեմունքեր, պղպեղ, կասեա (cannelle = դարչին), միլիանդ (muscade):

Ուկանտայի և Սոմալի մէջ կը յաջողին սորձն ու ձիւտ: Ֆանի մը գաւառներու մէջ օտարներ կը փորձեն մշակել համեմունկ, հնդկանուշ, լեյ, բինդինայի գորան ևն:

Ծովեզերքի լեբանց կողերուն վրայ կը գտնուին անգորաները, գլխաւոր ծառն է նարգիլակենի (cocotier), սա թանկագին է իր տուած պտուղով՝ որ գլխաւոր սնունդն է բնիկներուն, փայտով՝ որ կը ծառայէ շինուածոց, և մաղմղուկներով՝ որով չուան կը շինեն: Բազմաթիւ են եւթի ծառերը և յէսիէթի լեան (պատառուկ):

Հանք եւ հարստարութիւնք. — Զամպէզի հարաւակողմը, փորթուկալեան Ափրիկէի թէղէ գաւառը պիտի ըլլայ հաւանաբար Ափրիկէի հանքային ամենէն կարևոր գաւառը: Հոն գտնուած են հանքաքարի երակներ, երկաթի հանք, և ուրիշքեր: Ունի առատ է նաև Մաթապէլէներու և Պարթիսներու երկիրներուն մէջ. Ուկանտա ունի երկաթ:

Ճարտարութիւնը բոլորովին նախնական է: Միայն Զանգիպար ունի քանի մը շաքարի և հանուածի զի: Մակատոքոյի մէջ կը շինուին կորա և փախախ: Ուկանտա ունի բազմաթիւ գարբիներ և ոսկերիչներ, որ բաւականին յաջողակ են իրենց արուեստին մէջ:

Ճամբանք. — Նաւագնացութիւնը յոյժ յետամնաց է Ափրիկէի այս եզերքին վրայ, գետակները խոչընդոտներով լեցուն են, բայց պիտի գայ ժամանակ, յորում շինուելիք երկաթուղիներու և ճամբաներու շնորհիւ անոնք պիտի կրնան մեծ ծառայութիւն մատուցանել փոխադրելով ներքին բերքերը դէպի ծովեզերք: Անգլիա և Գերմանիա կ'աշխատին Արևելեան Ափրիկէն ընել

չահատանը ֆոնկոյի արտադրութեանց: «Գերման ընկերակցութիւն»ը Արևելեան Ափրիկէի ձեռնարկած է շինութիւնը ճամբուն՝ որ կը մեկնի Տար-Լա-Սէլլամէն և պիտի հասնի Նիասոս և Թանկանիքա: Անգլիացիք նոյնպէս վիքթորիայէն Թանկանիքա և վիքթորիայէն՝ ծովեզերք, Թանայի հովիտէն: Բայց վտանգ մը, որուն դէմ պիտութիւնը դեռ անկարող է, պիտի անդամալուծէ այս փոխադրութիւնը, այն է յէթէ (tsétsé) ճանճին փլատները, որ կ'ընդգիմանայ եզներու և ձիւրու գործածութեան, նոյն իսկ փիղերը դեռ երաշխաւորուած չեն այս միջատին մահացու խայթուածին դէմ: Արևելեան Ափրիկէի ընկերութեան ձեռքով սկսուած ծովեզերքէն դէպի լիճերը շինուելիք երկաթուղին պիտի լուծէ բոլոր այս գծուարութիւնները: Անգլիա շինած է 480 քիլոմէթր երկաթուղի:

Փորթուկալիք շինած են երկաթուղի մը Լորէնսո-Մարքուէզէն մինչև Թրանսվալ և կ'երկարի մինչև Բրեթորիա: Ծրագրած են շինել երկաթուղի մը Բանկուէյի ընթացքով արագ հաղորդակցութիւն հաստատել Մանիքայի, Մաչոնալանտի և Հնդկաց Ռիկէանի փորթուկալեան նաւահանգիստներուն հետ: Փորթուկալ Մոզամբիքի մէջ շինած է 325 քիլոմէթր երկաթուղի, Գերմանիա՝ 42 քիլոմէթր երկաթուղի:

Արտար. — Արևելեան Ափրիկէի վաճառականութիւնը կը հասնի 60 միլիոն ֆրանքի: Գլխաւոր արտածելի նիւթն է Էթիոպիոսի փայտ, զոր չափելով կը տանին՝ վարձուած արարներ՝ ծովեզերք, սուրկէ նաև կը գրուին: Նոյնպէս կ'արտածուին փայտի (550 հազար քիլո), եթի, էղ, մորթ, համեմունկեր, (6 միլիոն ֆր.):

Եւրոպացի վաճառականք իրր փոխարէն կուտան կորա, վառօր, սոս, ըմպելիներ և խահամաններ ևն:

Այս առումներին մեծապէս բաժինը Անգլիայ կը վերաբերի, սա կը ծախէ Մանչէսթրի կորա-եզերներ, Պրոմիսկ-հըմի հրացաններ, վառօր ևն:

1888 ին Ափրիկէէն Համպուրկ արտածուած է 2 միլիօն Ֆրանքի փշուկը, հոֆֆուանդ, և հորն: Իսկ անկէ ներածուած են՝ նոյն թիւին՝ 4,500,000 Ֆրանքի մշականեր, գործէիներ, Չարօր, օղի, հայելի, կաղի լապտեր, լուսիկ և:

Ֆրանսա այս առուտուրին մէջ երրորդական բաժին մ'ունի:

Փորթուկալ, թէպէտև Մոզամպիբի տէրը, սակայն բազդատմամբ իր գրաւած գիրքին՝ չկրնար օգտուիլ:

Բոլոր առևտրական գործառնութիւնք կը կեդրոնանան Ձանդիպարի նաւահանգիստները (203 հազար թօնօ մուաք): Այս նաւահանգիստներէն գլխաւորներն են Գիլիմոն, Մոզամպիկ, Լորէնցօ-Մարտուէլ, Սօֆալ, Մակասոսսու:

Գ Լ Ա Ի Ի Գ

Հ Ն Դ Կ Ա Ս Ս Ա Ն

Հ Ն Դ Կ Ա Ս Ս Ա Ն Ի տարածութիւնն է 3,800,000 քառ. քիլօմէթր և 295 միլիօն բնակիչ: 1761 էն սկսեալ Անգլիացիք մտան այս երկիրը և տակաւ գրաւեցին, հետզհետէ տիրեցին Պէնիակլի, Պոմպոյի և Մատրասի: Սակայն այս ամենը առանց կռիւի չեղաւ:

Կլիմա. — Հնդկաստան կը գտնուի Արևադարձային և Այրեցեալ գօտիներուն ներքև, աշխարհի ամենատաք երկիրներէն մին է, հիւսիսը բարեխառն, Բէնճապի երկիրը ձմրան կը սառի: Հարաւ-Արևմտեան մուսիմը (mousson) կը վարէ առատ անձրև՝ մանաւանդ Յուլիսին և Օգոստոսին, արևմտեան զառիթափին վրայ, Հիւսիս-Արևելեան մուսիմը՝ արևելեան զառիթափին վրայ:

Մշակութիւնք. — Հաղորդակցութեանց և կալուածական օրէնքներու նոր բարեփոխութեանց շնորհիւ տակաւ կը ծաղկի արմտիքի մշակութիւնը: Մինակ Պոմ:

պայի և Հիւսիս-Արևմտեան կողմերը կը ցանուի ցորեն, 12 միլիօն հէքթարէն աւելի տարածութեան մը վրայ, թէպէտ մէկ հէքթարէն հազիւ 8-10 հէքթօր տարադիւնք կ'առնուի, որովհետև մշակութեան եղանակը դեռ նախնական է և հնդիկ երկրագործը չգործածեր պարարտաբուտ: Սակայն այդ գործաւորը ամսական հազիւ 3-4 Ֆրանք կ'առնէ, որով հնդիկ ցորենը ահարկու մրցում կ'ընէ եւրոպական հրապարակներու վրայ՝ օտար ցորեններու դէմ: Արտածութիւնը տարուէ տարի հըսկայաքայլ երեւոյթ մը կ'առնէ. 1870 ին 3,974,218 քիլօ էր, մինչ այժմ կը հասնի 1,500 միլիօն քիլօյի:

Բրիճն կը մշակուի Տէքքանի և գետերու խոնաւ գետրաց վրայ, կ'արտածէ 1 միլիօն թօնօյէն աւելի:

Կը մշակէ նաև հասարգի, էգիպոսցորեն, բիօն (ryott) և:

Արմտիքէն վերջ ամենէն կարևորներն են սրճենի, բամբակենի և Բէյարուսի մշակութիւնները:

Բամբակենին Եր. դարէն վեր մշակուած է Հնդկաստանի մէջ, բայց զարգացաւ՝ մանաւանդ՝ Միաց. Նահանգաց բաժանման պատերազմէն և Սուէզի բացումէն վերջ, երբ նուազեցաւ փոխադրութեան ծախքը: Բամբակենին այսօր կը ծածկէ 6 միլիօն հէքթար գետին և կուտայ 6 միլիօն քէնթալ արդիւնք: Լաւագոյն տեսակը կը մշակուի Տէքքանի մէջ:

Սրճենի և սեժ զարգացում ունի հարաւային գաւառներու մէջ, լաւ տարիներու մէջ կ'արտադրէ 500 հազար քէնթալ սուրճ: Քանի մը տարիէ վեր անկարկութիւնը նուազեցաւ արմատը կրծող միջատի մը և Պրազիլիոյ մրցակցութեան հետեանքով: Սրճենին բերուած է Արարիայէն:

Թէյատուսկը ներմուծուած է Չինաստանէն: Այս տունկը կը սիրէ յաճախ ոռոգուած, ոչ խոնաւ գետինները և տաք կլիման, ինչպէս են Հիմալայայի միջին և Նիլկէրիի զառիթափերը, նաև Սէյլան և Տէքքանի մէկ մասը. ամեն տեսակէ և մեծ քանակութեամբ արտա:

Գրեթով՝ ո՛չ մէկ կողմէ մրցակցութեան երկիւղ ունի. 125 հազար հէքթար գետնէն կելնէ 60 միլիօն քիլօ թէյ. այսինքն Անգլիոյ սպառածին կէօր. Լօնտօնի հրապարակին վրայ հնգիկ թէյը լուրջ մրցման մէջ է չինականին գէմ. 1887ին Չին կը ծախէր Լօնտօնի 93 միլիօն լիրայի թէյ. 1890ին իջաւ 63 միլիօնի. Հնդկաստան 1890ին տուաւ 9 միլիօն լիրայի թէյ, իսկ Սէյլան՝ 40 միլիօնի:

Խաչխաչք, որմէ կը հանուի ամիրօնը, կը մշակուի գլխաւորաբար՝ Գանդէսի հովիտը, Բէնճապի մէջ և Ռաճբուլթանա, սակայն սերմանումը նուազած է չինականին ատրածու մէն վեր:

Պետնապխասակեմին (arachide) 1890ին տուաւ 1244627 հակ, րիչինէֆայրե (ricin) և շաշան ամեն կողմ կը մշակուի Ծառերէնէ կը յաջողի մանաւանդ Քորսմանտէլի եղերք. ներք: Միտիոյ՝ գրեթէ ժողովրդեան պէտքին չափով: Հնդէն կանէ (jute = յուտենի) հիւսուածանիւթը, որ 1854էն վեր կը գործուի Եւրոպայի մէջ, կ'արածուի մեծ քանակութեամբ. Լէռն, ներկադործական բոլոր տունկերուն պէս, կորուսած է իր նախկին գերակշիռ կարևորութիւնը, յորմէ հետէ տարրալուծութիւնը սկըսաւ հանքածուխէն հանել ներկի նիւթեր, ֆէնիլա ծառ, Ամերիկայէն բերուած, վարժուեցաւ Սէյլանի և Տէքսասի գաւառներուն, ուր բնութիւնն ալ ի բնէ շնորհած էր անկէ:

Հնդկաստան գոտարներու մասին ազքատ է, ժողովրդեան բնդակեր բարքին պատճառաւ: Ընտանի ամենէն հասարակ կենդանին է ֆէր, զոր կը գործածեն երկրագործական աշխատութեանց, փոխադրութեանց և որսի համար: Հիւսիսային գաւառները կը հայթայթեն լաւագոյն ֆէրը: Տէքսասի դաշտավայրին մէջ կան բազմաթիւ ֆէրէ հօտեր, որոնց զեղմը կը գործածեն հնգիկ տարազգործութեան մէջ, և մնացորդը, իբր 10 միլիօն քիլօ կ'արտածեն. Բէնճապի մէջ կը բուծեն այժ, որուն մտղը կը ծառայէ չինեւր ֆաշմիրի ցփսինները:

Վերջապէս՝ մշակութեան տեսակէտով, Հնդկաստան աշխարհի ամենէն հարուստ երկիրն է իր առատ ու այլազան բերքերով: Տաք կլիմա, բացառօրէն բեղմնաւոր հող մը յաճախակի անձրևներէ ոռոգուած՝ միջոցներ են որ Հնդկաստանի բոյսերուն կուտան տարապայման առատութիւն: Տակաւին շատ մասերն ալ անմշակ են. գրեթէ մշակուածին կէսը, որոնք ևս օր մը պիտի պտղաբերին՝ երբ չինուին ոռոգող ջրանցներ, ասոր համար անգլիական կառավարութիւնը ծախսած է 700 միլիօն ֆրանքէն աւելի և կ'ոռոգէ Գանդէսի շնորհիւ 4,018,800 հէքթար գետին և դեռ պիտի աւելցուի 7 միլիօն հէքթարի համար:

Հանք. — Առ այժմ հանքային հարստութիւնը միջակ արդիւնք ունի: Արածանդէ և թանկագին մետաղներու եկամուտը դեռ չափաւոր է: Կոլգոնտի ադամանդաբեր հանքերը սպառած են, իսկ Բէննահիները՝ դեռ ֆափին մրցելէ հեռու:

Արևմտեան կաթի մէջ, Նիլկէռիի մօտ, կը հանուի ֆէ:

Սէյլանի հարգարարէր ֆէրն առատ են:

Տարազգործարաններու հաստատութեան և երկաթուղիներու զետեղման շնորհիւ Լանտանի հանումը հեազհետէ կը յառաջդիմէ: Հանքածուխի զանազան աւազաններ, որոց մակերևոյթը 100 քառ. քիլօմէթրէն աւելի կը հաշուուի, (Անգլիոյ հանքերուն քառապատիկը) տարեկան կ'արտադրեն 20 միլիօն թօնօ, որուն 12 էն 13ը մինակ Պէնկալի հանքերէն:

Այց որ տէրութեան մենաշնորհն է, կը հանուի ծովեղերեայ ազահանքերէ, Բէնճապի ազաբեր հանքերէն և Ռաճբուլթանայի ազային լիճերէն, բայց տակաւին անբաւական տեղական սպառումին: Երկաթ, պէն, աղաւթ և նուազ առատ են:

Ճարտարութիւն. — Անգլիացի գրամատերեր բանւորներու աժնութեանէն քաջալերուած՝ հիմնեցին բազմա-

Թիւ գործարաններ, որք կը գործածեն այսօր (1899) 4,728,000 շամբրակ, Պոմպայ ունի 80 ձեռագործարան մանող և հիւսող: 10 տարուան մէջ բամբակի թելի և կտաւի արտածութիւնը 1 միլիօն սթեռլինէն 7 միլիօնի բարձրացաւ:

Հնդիկ կանեփը այժմ կը գործուի տեղին վրայ: Այս ճարտարութիւնը միևնոյն ժամանակ ծագկած է արմտիքի արտածութեան, անկէ կը շինեն սովորական կտաւը՝ պարկերու համար:

Մետաքսը նուազ կարեւոր է հիւսուածային ճարտարութեան մէջ: Հնդկաստան 1899 ին տուաւ 350 հազար քիլօ մետաքս: կը գործուի Պէնկալի, Բէնճապի և Պոմպայի մէջ: Հնդիկները միշտ կը պահեն ի Սրինակար՝ գերազանցութիւնը Բաշիէի շալերու շինութեան մէջ:

Ընթացիկ սպառումին սահմանուած հիւսուածային բոլոր արտադրութեանց համար Հնդկաստան՝ ամբողջ Ծայր Արևելքի մէջ՝ կ'ընէ զօրեղ մրցում մը ընդդէմ անգլիական ճարտարարութեան, որով ազատ-փոխանակողք յոյժ խախտած են իրենց համոզումէն: Հնդկաստան՝ շնորհիւ իր ձեռքին տակ գտնուած նախանիւթին և աժան բանւորներուն՝ ունի յաջողութեան ամենէն նպաստաւոր պայմանները: Արմտիքի մշակութեան արւումը արագացումը հաստատել տուած է ի Պոմպայ, մեծ շոգեշարժ ազօրիքներու, ուր կը պատրաստուի Եւրոպա զրկուելիք ցորենի ալիւրը:

Հնդկաստանի շաքարի գոտարանները կը պատրաստեն նաև 2,500,000 թօնօ շաքար:

Այս գործարաններուն մեծ մասը կը պատկանի բնիկ հնդիկներու, որոնք դրած են դրամագլուխներ և ունին միայն քանի մը անգլիացի ճարտարագէտներ կամ պաշտօնեաներ:

Արուեստի և պերճանքի նախկին ճարտարութիւնը չունի այլ ևս իր փայլը, որովհետև հնդիկները ատանց մեծ մասը աւելի աժան գիներով Եւրոպայէն կրնան

գնել: Սակայն հնդիկ արուեստագէտներ դեռ կը գերազանցեն հետևեալ արուեստներուն մէջ. հետաքրքրութեամբ աշխատուած ոսկի սպարանջաններ, Մալապարի զմրուխտներով, Սէյլանի շափիւղաներով և սուտակներով, Միշարուրի պերրօզակներով և ուրիշ թանկագին քարերով պճնուած մանեակներ, նաև հաշահարներ, հիանալի աշխատութեամբ քանդակուած արծաթէ ամաններ, բաժակներ, սրոմաններ, բաղմաշխատ փշուկներ: կը շինեն անմրցելի գերազանցութեամբ կարասիներ, լայտներ, դրուագուած դէմքեր, յասակաքարէ, մեղեհիկէ, բիւրեղացած կարծրաքարէ խոհամաններ ևս, ևս:

Ճամբաներ. — Անգլիական կառավարութիւնը հանրային շինութեանց յատկացուցած է 600 միլիօն ֆրանք 2 միլիառ ելմտացոյցի մը վրայ: Հոյակապ պողոտաներ կ'ակօսեն Հնդկաստանը ամեն կողմէ (50 հազար քիլօմէթրը) բայց երկաթուղին պիտի ըլլայ միակ միջոցը այս երկիրը հասցնելու իր զարգացման դագաթնակէտին:

Երկաթուղիներու այժմեան երկայնութիւնն է 35,340 քիլօմէթր: Նաւարկելի ջրանցներուն երկայնութիւնը 27,346 քիլօմէթր: որմէ կարեւորագոյնն է Տէլհիի ջրանցը որ կը միացնէ Եամանոն Գանգէսի: Սէյլան ունի 478 քլմ. երկաթուղի:

Հնդկաստան ունի 10,263 նամակատուն, 440 միլիօն նամակ, քարտ ևս, 1,643 հեռագրատուն, 249,161 քլմ. թել, 5,700,000 հեռագրալուր:

Սրտուտք. — Հնդկաստանի մուտքն է 2,439,500,000 ֆրանք, իսկ ելքն է 2,401,500,000 ֆրանք, մարդ գլուխ համագումար փոխանակութեան քաժին 16, 5 ֆրանք, որ քիչ է եթէ վաճառականութիւնը բաղդատուի Անգլիականին որ կուտայ 460 ֆր. մարդ գլուխ, կամ նոյն իսկ Ֆրանսականին՝ 200 ֆրանք, բայց եթէ ինկատ առնուի հնդիկ ժողովրդեան ընկերական պայմանները, սակաւագետութիւնը, պիտի ապշի մարդ անոր այս աստիճան զարգացման աէր ըլլալուն:

Հնդկաստանի մեծագոյն արտածելի նիւթերն են հիւսուսաձանիւթ, բամբակ, հնդկի կանեփ, բարբ, Ռոստոմ, Էդու, 550 միլիոն արժէքով: Յետոյ կուգան ցորենը և գարին՝ սոսկ արտածու թիւն 480 միլիոն ֆր. արժէքով: Գաղթաբերութեան վաճառումը (թէյ, սուրճ, շաքար, համեմուկ) գրեթէ միւսներուն հաւասար: Ափիւնը՝ որուն վաճառումը կառավարութիւնը իրեն վերապահած է՝ 300 միլիոն ֆրանք: Խաղահարկներ մէկ միլիոն թոնոյի չափ՝ 200-250 միլիոն ֆրանք, այս քանակութեան 1/3ը սահմանուած է Անգլիոյ և 1/4ը Ֆրանսոյի: Յոյժ զգալի է նաև բամբակէ, բրդէ, հնդկականեփէ կտաւի յաւելումը որոնք կ'արտադրեն 200 միլիոն ֆրանք:

Ներածութեան մէջ դեռ առաջին տեղը կը գրաւէ կոստ (800 միլիոն ֆր.) որուն տակաւին շատ պէտք ունի Հնդկաստան: Ներածելի նիւթերուն մէջ պէտք է գնել Ռոստոմը (մեքենայ, գործիք, երկաթուղիի նիւթեր), բնիկ, օղի, հանաձանիւթ, վերջինը 40 միլիոն ֆր. է:

Ընդհանուր վաճառականութեան մեծագոյն բաժինն է գրեթէ կէսը, Անգլիոյ: Անգլիոցիք կը գնեն յանաւանդ թէյ, բամբակ, հնդկականեփ, Խաղահարկներ և արծաթ, և կուտան գլխաւորաբար բամբակեղէն, Ռոստոմեր, գործիք է:

Հնդկաստան Մայր Արևելքի մէջ կը գտնէ հրապարակներ իր արտադրութեաց համար: Կ'արտածէ Չինաստանի համար 250 միլիոն ֆրանքի ափիւն, նոյնպէս բրնձ, թէյ, կոստ, և կը գնէ յախճապակի, անդամ Ռոստոմ: Կուտայ Աւստրալիոյ թէյ, սուրճ, բրնձ, և փոխարէն կ'առնէ դոստ, բարբ, հանաձանիւթ: Հնդիկները իրենց բրինձը կ'արտածեն նաև ի Մօրիս, Աէիւնիօն և մինչև Ամերիկա:

Ֆրանսոյի հետ ունեցած փոխանակութիւնը կը հասնի 200 միլիոն ֆրանքի: Հնդկաստան կը ծախէ անոր ցորեն, բամբակ, Էդու, Խաղահարկներ (60 միլիոն ֆր.) հնդկականեփ, անդամ Ռոստոմ է: Կը գնէ Ֆրանսոյէն հազիւ 6 միլիոն ֆր. ի խառն կամ գուտ Ռոստոմ հիւսուսաձաներ, զէնոյի նիւթեր, բարբ և բամբակե գործաւորներ, բոստոն գարբեր, բահրեղեղներ, բնիկ, օղի:

Վերջապէս Հնդկաստանի գլխաւոր առուտուրը Եւրոպայի հետ է և հրաշալի կերպով զարգացած՝ շնորհիւ Սուէզի ջրանցին: Անգլիացիք կը ջանան Հնդկաստանի համար առուտուրի ճամբայ բանալ Չինաստանի ներսերը:

Նաւահանգիստք. — Հնդկաստանի վաճառականութեան մեծագոյն մասը ծովի միջոցաւ կ'ըլլայ, հազիւ մէկ վեցերորդ մասը ցամաքէն:

Առաջին նաւահանգիստն է Պոնդիպ, որ Սուէզի բացումէն վեր մեծ կարևորութիւն ստացած է, աս է կեդրոնը Պարսից ծոցի գաւառներուն և Եւրոպայի առևտրական յարաբերութեան, մեծագոյն նաւահանգիստն է արմաւիքի արտածութեան, ինչպէս նաև բամբակի և ափիօնի: Փոխանակութեանց արժէքը 1,800 միլիոն ֆրանքէն աւելի է, բոլոր Հնդկաստանի տուրևառին գրեթէ կէսը, իսկ նաւային շարժումն է 3 միլիոն թոնո:

Կալիպիա մայրաքաղաքը կ'ընէ 1,500 միլիոնի փոխանակութիւն, նաւային շարժումն է 2,500,000 թոնո տարողութեամբ նաւերու արդիւնք: Կալիպիա է Պէնակալի հարուստ գաւառին շահաստանը գլխաւորաբար ափիօնի և լեղակի:

Մաւրաւի նաւահանգիստը արուեստական է, մուտքը դժուարին, կեդրոն է սակայն բոլոր ֆորումանէլի եղերքին առուտուրին:

Քիւրաշ, թիւթիօրէն, Չիւտոնի, երկրորդական են:

Գոնդար (Սէյլան) և Բոսնոր-որ-Կալէ՝ Հնդկաց Ովկէանը ահօսող թղթատար բոլոր նաւերու հանգիստի նաւահանգիստներ են:

Նաւահանգիստներու ընդհանուր մուտքն է 5,226 նաւ 4,100,000 թոնոյ տարողութեամբ, ելքն է 5,071 նաւ 4,100,000 թոնո տարողութեամբ, համագումար 10,297 նաւ 8,200,000 թոնո տարողութիւն, երեք քառորդը անգլիական գրոշակով:

Գլխաւորապէս — Հնդկաստան ունի ութը մեծ գրամատուներ, ընդհանրապէս Անգլիական:

Դրամ, կշխո. եւ չարի. — Անգլիական գրամները, չափերը և կշիռները կը գործածուին Հնդկականին հետ:

Մահէր (սակեդրամ) 36 ֆր. 72: Կեհեհէր կամ կրիէ քահիր իր կէսնոցը, 18 ֆ. 36, քահիր 9 ֆ. 16, բուհէ (արծաթ) 2 ֆ. 36, սա ունի իր կէսնոցը, քառորդնոցը, ութերորդնոցը:

Կշխոք. — 1 պաշար ճահաւոր = 4 սիհրս = 37, 3 քիլոկրամ:

ՖՐԱՆՍՍԱԿԱՆ ՀՆԴԿԱՍՏԱՆ

Ֆրանսա հինգ քաղաքներ ունի Հնդկաստանի մէջ. Բանդելէբէ, Քարիպու, Եսնան, Չանդելէբէր և Մահէ, բնակիչ, 287,000: Գլխաւոր քաղաքն է Բանդելէբէ՝ նաւահանգիստը խիստ դժուարամատչելի, երկաթուղի 95 քիլոմէթր:



ԳԼՈՒԻԻ Գ. Հ Ն Դ Կ Ա - Չ Ի Ն

Հնդկա-Չինի տարածութիւնն է 2,175,000 քառ. քիլոմէթր բնակիչ իրր 40 միլիոն, Հողը՝ բարեբեր, հանքերը առատ, նաւահանգիստները խոր ու խաղաղ դիրքը խիստ յարմար վաճառականութեան, բայց յառաջդիմութեանց պատմութեան մէջ երկրորդական դեր մ'ունեցած է:

Անգլիա և Ֆրանսա տէր են այս թերակղզոյն մեծագոյն մասին: Ֆրանսական կալուածք (900 հազար քառ. քլմ.) ունին իրր 24 միլիոն բնակիչ, (Քոչինչին՝ 2 միլիոն, Քամպոն՝ 1 միլիոն, Աննամ՝ (ընդ պաշտպանութեամբ) 7 միլիոն, Թոնքին՝ 14 միլիոն բնակիչ):

Անգլիական Հնդկա-Չինի տարածութիւնը հաւասար է Ֆրանսականին, բայց հազիւ 10 միլիոն բնակիչով,

(Անգլ. - Պիրմանիա՝ 4,500,000, Անկախ - Պիրմանիա՝ 4 միլիոն, Նեղուցի-Գաղոյթ՝ 600 հազար բնակիչ):

Սիամ է միակ անկախ պետութիւնը այս թերակղզւոյն և ունի 880 հազար քառ. քիլոմէթր տարածութիւն և 6 միլիոն բնակիչ:

Կլիմայ. — Հնդկա-Չին Այրեցեալ գօտւոյն ներքև գտնուելով՝ օդը վատառողջ է, մանաւանդ անձրևոտ օրերուն: Եւրոպացիք հոն կը սակաւարիւնին, կ'ուռենան վախը ժանտախտի և վատաղութեան (dysenterie): Հնդկա-Չինը միայն կրնայ ըլլալ Անգլիացոց և Ֆրանսացւոց համար առուտուրի և շահագործութեան գաղթավայր մը: Միայն Թոնքին է յարմար եւրոպական գաղթականներու, բայց գուրկ՝ ապահովութենէ:

Բերք. — Ասիոյ ամենէն բարեբեր երկիրը կը համարուի Հնդկա-Չինի ջրատական (alluviale) երկիրը: Բրնձը տարին երկու անգամ կը հնձուի: Պիրմանիա և Քոչին-Չին կ'արտադրեն ժողովրդեան պէտքէն շատ աւելի քանակութեամբ, զոր կ'արտածեն Չինաստան և Հընդկաստան: Մինակ Պիրմանիա 1889 ին արտածեր է 918,369 թոնս՝ 65,550,000 բուրի արժէքով: Թոնքինի արտագրութիւնը հասած է 30-40 միլիոն բիքիւլ (1 բիքիւլ = 60 քիլոյի) որ չբաւեր բնիկներուն սնունդին, բայց կրնայ արդիւնաւորուիլ եթէ մշակութեան եղանակը կատարելագործուի:

Թէյարոսնիչ, Բամբակ և շաքարեղէն արտածելի քանակութիւն մը կրնային աւելցնել եթէ մշակութիւնը աւելի տարածուէր: Անգլիացիք Պիրմանիոյ մէջ անկած են թէյ, բայց ստորին տեսակէն է արդիւնքը: Բամբակը գնահատուած է: Շաքարեղէն՝ Սիամի և Թոնքինի մէջ: Խաղաղիչներ, բամբակ, խաշիւ, շաքար, քիմիականներ կրնան ածիլ Աննամի մէջ: Ծեփերու կը բաւէ տեղական սպառումին: Ներկա գործական միակ տունկերն են լեռնի և քիմիան: Մալաքա կ'արտադրէ համեմունքներ, Քոչինչին՝ պղպեղ:

Հնդկա-Չինի անտառային հարստութիւնը անսահ.

ման և գրեթէ անեղծ մնացած է. կեդրոնական և հիւսիսային լեռնոտ մասերը բոլորովին ծածկուած են կոյս անտառներով, որ կը պարունակեն շինութեան փայտեր, թանկագին ծառեր՝ երեւոյթներու համար և զուեատու փայտեր: Եւրոպացիք օգտուած են լին՝ ծառէն, զոր անգլիացիք կը գործածեն նաւերու շինութեան: Սիամի և Պիրմանիոյ մէջ. պահուստ, լայնացած, լեղեղեղեղ, պարեմ, որք կը մատակարարեն ծանրագին հիւթեր, պարեմի էլ կամ սարգան անոն և:

Հնդկա-Չինու եկամուտի կարևոր աղբիւրն է դուրը Պիրմանիա ունի յետքի տեսակ մը, խիստ գնահատելի, Քամպոնիք կը հասցնեն բեռնակիր էջեր: Լաոսի մէջ ամենէն հասարակ կենդանին է գործը: Խոզ բազմաթիւ է մանաւանդ Քոչինչինի, Քամպոնի և Թոնքինի մէջ, Բնիկներուն զլիաւոր անունդն է Յուէ՝ բրինձին հետ:

Չինորսութիւնը յոյժ կարևոր է, զոր կընեն գետերու մէջ, մանաւանդ Քամպոնի լիճը, ուր հազարաւոր անհատներ կ'ըրաղին այս արհեստով:

Հնդկա-Չինու արևմտեան կողմէն կ'առնեն բնիկները անտառնի բայերը, որուն քիլօն կ'արժէ մինչև 300 Ֆր. և Չինաց սիրական կերակուրն է:

Շերամարուծութիւնը տակաւ կը ծաւայի Թոնքինի, Սիամի թագաւորութեան և Քոչինչինի մէջ, Հնդկա-Չին չունի հողային բերք մը որ շարժէ Հնդկաստանի նախանձը:

Հանք. — Հանքերու մեծ մասը գեռ հողին տակ կը հանգստանան: Հանքեր կը գտնուի ի Մալաքքա, Պիրմանիա, Աննամ և Թոնքին ու վերջնայնը միայն կը շահագործուի: Քր-Պոսյի ածխարեր հանքերը տարեկան կուտան իրր 100 հազար թօնօ, գեռ ուրիշներ ալ շատ են: Անոն ունի Պիրմանիա: Անգլիական ընկերութիւններ Մալաքքայէն կը հանին անոն: Քամպոնի մէջ գտնուած են երկաթի հարուստ հանքեր: Անգլիական գաւառ.

ներն ունին պղնձ, կապար, և շինի: Պիրմանիայէն կը հանուին Լանկաշէն քար, յասմկաքար (jade), սուտակ (rubis), շափիւղայ (saphir), տաղալոն և զմրուխտ (émeraude), այս թանկագին հանքերը զետեղուած են ի Սակոնէնկ՝ Իրաւուատտի գետին վրայ և ամբողջ հիւսիսային մասերը: Քարէլ կը հանուի 23 միլիօն քիլօ փեկուէն, Աքեապէն, Արաքանի եզերքէն և վերին-Պիրմանիայէն: Անգլիացի ճարտարագէտներ կը հաւատեն թէ Պիրմանիա՝ քարիւղի կողմանէ, տեղի հարուստ է քան կովկասիա և Միացեալ-Նահանգները միասին: Ունի հազուագիտ, բայց արծաթ՝ առատ՝ մանաւանդ Շաներու երկիրները: Պիրմանիա և Աննամ կուտան առատ ու:

Ճարտարութիւն. — Թոնքինի մէջ Ֆրանսական բազմաթիւ հաստատութիւններ կան բրինձի կեղևն ստիւլու ձեռնաշարժ աղօրիքի քարերով, շոգեշարժ՝ Քոչինչինի մէջ: Օճաի գործածութիւնը որ անձանօթ էր Թոնքինի, Ֆրանսացուց գալէն առաջ, հիմա սկսած է տարածուիլ և գործարան մըն ալ հաստատուած է հոն: Այսինքն Թոնքին մեծ շահ պիտի ձգէր Աննամի՝ հայթայթելով այդ նիւթէն Ծայր-Արևելքի, որ այժմ կ'ստանայ Եւրոպայէն և Ամերիկայէն: Աննամ կը պարունակէ ապակեգործութեան յատուկ ամեն նախանիւթեր:

Ճամբաներ. — Հնդկա-Չինու ապագան կախուած է հազարակիցութեան միջոցներու զարգացումէն: Անգլիացիք և Ֆրանսացիք կ'ուսու մնասիրեն իրենց կալուածներուն և հարաւային Չինաստանի մէջ յարաբերութեան միջոցներ հաստատել: Անգլիացիք երկարատենէ վեր կը խորհին միացնել Իրաւուատտի, Պրահմափութրա և Սալուէնի հովիտներէն՝ Հնդկա-Չինը Հնդկաստանի հետ և հասնիլ Հանքէու (Հնդկա-Չին) որ Եանկէ-Քեանկի վրայ կայսրութեան մեծագոյն հրապարակն է: Քանի մը փոքր նաւեր միայն կ'երթեկեն Իրաւուատտի վրայ կարմիր գետը խիստ յարմար է նաւարկութեան: Մէյքօնի նաւարկելի է մեծ նաւերով:

Արտաքին վաճառականութիւնն. — Հնդկա-Չինու ընդ-հանուր վաճառականութիւնը կը հասնի 800 միլիօն ֆրանքի. Հնաշուերով Սինկափուրը Գլխաւոր արտածութիւններն են. բրնձ, խիտ-խաւ, գետնապիտակէն, համեմակէր, մորթի, անզար մետաքս, դասար, մետաղներ: Ներածութիւնը իրը 350 միլիօն ֆրանքի բամբակէղէն, մետաքսէղէն, ապակի, խիտ, գինի եւ:

ԱՆԳԼ. ՊԻՐՄԱՆԻՍ.

Անգլիական Հնդկա-Չինի վաճառականութիւնը կէս միլիառէն աւելի է և աստիճանաբար կ'աւելնայ, որովհետեւ երկիրը հետզհետէ խաղաղելով գեղացիներ իրենց տեղերը կը դառնան և կ'աշխատին:

Մեծագոյն նաւահանգիստն է Ռանկու և յետոյ կուգայ Մուլմէյն, ասոնք կ'արտածեն գրեթէ ամբողջ բրինձը, փայտերը, խէժը Պիրմանիոյ և Եուննանի սահմանուած անգլիական տարազագործական և արհեստական արտադրոյթներ:

Ս Ի Ա Մ

Սիամի ամբողջ վաճառականութիւնը գրեթէ օտարներուն ձեռքն է: Պանկոտ մայրաքաղաքը և առաջին հրապարակը թագաւորութեան ունի երկու Գերմանական, մէկ Անգլիական և մէկ Զուիցերական մեծ տուներ որ կը ներածեն բամբակեղէն մեծաքանակ: Արդաշուր-Բէն (1889 ին Պանկոքէն) 13,717,680 մի.քսիկեան դահեկան, Զերաշուր-Բէն 9,559,541 դահեկան:

Սիամ ունի 211 քիլօմէթր երկաթուղի, 165 նամակատուն, 2,929 քիլօմէթր հեռագրական թել:

Լ Ա Ո Ս

Անգլիական դրամադրութիւններ այժմ մուտ կը գտնեն Լատսի մէջ, մանաւանդ Քոսիանկ-Մայ իշխանապետութեան երկիրները. որ կը կոչուին «Թի.թի գաւառ», շահագործելու երկրին բերքերը և ներմուծելու իրենց

արտադրութիւնները: Լատսի առուտուրը հիմա կը հասնի 30 միլիօն ֆրանքի և որ կրնայ գեռ զարգանալ, ըստ որում Լատսիք աւելի շատուր են քան Պիրմանները, որոց առուտուրը կը հասնի 60 միլիօնի:

Ս Ի Ն Կ Ա Փ Ո Ի Բ

1819 ին Անգլիացիք տիրեցին Սինկափուրի, որով կ'իշխեն Չինաց ծովուն: Սինկափուր կապուած է Եւրոպայի ընդծովեայ պարանով և բաղմաթիւ թղթատար նաւերով:

Առևտրական սենեկի վիճակագրութեանց համաձայն 1890 ին Սինկափուրի նաւահանգիստը մտան 10,000 նաւ, 3,300,000 տակառաչափ և նոյնքան ալ մեկնեցան: Սինկափուր, Հոնկ-Քոնկի պէս, Չինու եզերքին վրայ Մայր Արևելքի բոլոր արտադրութեանց մեծագոյն մթերանոյն է: Փոխանակութեանց արժէքը կը հասնի մէկ միլիառէն աւելի, որուն 570 միլիօնը ներածում:

ՖՐԱՆՍՍԿԱՆ ՀՆԴԿԱՍ. - ՉԻՆ

Ֆրանսայի առուտուրը յոյժ յետադիմած է Քոչինչի-նի մէջ: Ֆրանսոս Սայկոնի կուտայ 9 միլիօն ֆրանքի վաճառք և կ'առնէ 3-4 միլիօնի չափ, մինչդեռ Քոչինչին Չինու հետ 60 միլիօն, և Սինկափուրի հետ 30 միլիօն ֆրանքի առուտուր կ'ընէ: Չինական տուներէն վերջ կուգան Անգլիական և Գերմանական տուները, որոնց առուտուրը Ֆրանսականէն շատ վեր է: Եւրոպայի և Մայր Արևելքի անհրաժեշտ և մեծաքանակ փոխանակութեան նիւթ եղող բամբակեղէնը կուգայ մեծ մասամբ Անգլիայէն, որ ընդարձակ մթերանոյներ հաստատած է Սինկափուրի և Հոնկ-Քոնկի մէջ:

Քամպոնի առուտուրին մեծագոյն մասը Չինաց ձեռ.

քըն է, որ կը ծախեն ֆամպոնցիներուն սփին, ուրիշ, բրնձ, և կը գնեն բամբակ, մարտի, ձիախոր: Երեք Ֆրանսական և մէկ Գերմանական տուներ հաստատուած են հոս: Փամպոնի առուտուրը կը հասնի 120 միլիօն ֆրանքի:

Թոնքիւնի Ֆրանսական առուտուրն ալ զգալապէս կը յետադիմէ, 1886ին 60 միլիօն, մինչ 1889ին 34.650,000 ֆր. եղաւ: Չինացիք, Անգլիացիք, և Գերմանք գրեթէ իրենց մէջ կեդրոնացուցած են բոլոր գործերը:

Ֆրանսական Հնդկա-Չինու 200 միլիօնի առուտուրին 1/10ը հազիւ Ֆրանսայի ձեռքը մնացած է, որուն զլիւսուոր պատճառներէն մին է փոխադրութեանց գիներու սղութիւնը, Մէսսիօրի-Մարիթիմ որ Ֆրանսան Հնդկա-Չինին կապելու պաշտօնն ունի, հակառակ օտար նաւերու ածան վարձքին, բարձր գին մը կը պահանջէ փոխադրութեանց համար:

Նաւահանգիստք Ֆրանս. Հնդկա-Չինի. — Սոյն կրնայ ընդունիլ ամենամեծ նաւեր, Մէյքոնիկի ստորին աւազանին երկրագործական բոլոր բերքերուն շտեմարանն է: Տարեկան հոն ելլաւ կ'ընեն աւելի քան 6,200 նաւեր 1,630,000 տակառաչափ (1889 ին): Նաւարկութեանց մեծագոյն բաժինը անգլիական գրօշին ներքև կը գտնուի: Թորան կոչուած է ըլլալ Աննամի մեծագոյն նաւահանգիստը, ուր կ'այցելեն նաև ճարոնցի և չինացի «ճունկանները (jongue = նաւ) 5,108 հատ (1899 ին):

Թոնքիւնի կարեօրագոյն նաւահանգիստը և բուժ գետի նաւարկութեան կեդրոնն է Հոնգ: Նոյնպէս Թոնքիւնի ծոցին ամենէն ապահով նաւահանգիստն է Հոնգոնգ:

Դրամական. — Ծայր. Արևելքի մէջ Ֆրանսայի ելմտական զլիւսուոր հաստատութիւնն է «Հնդկա-Չինի պանքան» որ իրաւունք ունի Ֆրանսայի պաշտպանութեան ներքև գտնուած երկիրներու մէջ շրջաբերութեան տոմսեր հանելու: Սա ունի մասնաճիւղեր ի Հայֆօնկ և Նու մէա:

Ֆրանս. ֆոչինչինի նաւահանգիստները այցելող նա.

երու մուտքն է 1070 նաւ 673,500 տակառաչափ, ելքն է 890 նաւ 665,860 տակառաչափ:

Միամի մուտքն է 3,050,000 թիբալ (1 թ.ք. = 3, 2 ֆրանք), ելք 30,250,000 թիբալ:

ԳԼՈՒԻ Ե

ՉԻՆԱՍՏԱՆ

ՄԱԿԵՐԵԻՈՅԹ. ԲՆԱԿԻՉ. — Չինաստանի տարածութիւնն է 12 միլիօն քառ. քիլօմէթր, Եւրոպայէն մեծ և Ռուսիայէն վերջ ամենէն լայնածաւալ պետութիւնը: Իրաց առնելով Մանչուրիան, Մանկուրիան, Երկու Չիան-Շաները, ֆուքուսուրը, Թիպէզը, բուն Չինաստանի մէջ կը կարծուի 360 միլիօն բնակիչ, որ առաւելապէս խռնուած է Հոանկ-Հոյի և Եանկ-Յէ-Ֆեանկի հովիտներուն մէջ, որոց իւրաքանչիւր քառակուսի քիլօմէթրը կը սնուցանեն շատ տեղեր 400 բնակիչ: Չինու համագումար բնակչութիւնը 450 միլիօնէ աւելի կը հաշուուի 19 մեծ նահանգներու բաժնուած: Կրօնքն է Պուտտայականութիւն և Թաոյականութիւն, կան նաև 20 միլիօն մահմէտական և 1,200,000 քրիստոնէայ:

Չինական քաղաքակրթութիւնը. — Չինաստան, Եգիպտոսի տիաղստով «քաղաքակրթութեամբ ազգերու նախահայր» է. թուղթը, տպագրութիւնը, կողմնացոյցը, թընդանօթի վառօդը, որ Եւրոպացւոց համար արդի ժամանակներուն գիւտեր են, խոր դարերէ վեր ծանօթ էին Չինաց: Բայց չինական քաղաքակրթութիւնը 3-400 տարիներէ վեր կայուն մնացած է և այսօր Եւրոպայէն փոխ կ'առնէ ճարտարարուեստի և գիտութեան վերաբերեալ հազարաւոր դիւտեր:

Կեդրոնական Ասիոյ հսկայ լեռնախորտերով և անապատներով պաշտպանուած Չինաստան անմատչելի մնացած էր Եւրոպացոց: Արեւմուտցոց համար Մարքո-Յուլյի ճամբորդութիւններն եղած են ճշմարիտ յայտնութիւններ, յորմէ հետէ սկսան Արեւմուտքի յարաբերութիւնները աւելի սերտ ըլլալ Արեւելքի հետ: Իսկ ծովային գիւտեր աւելի ապահովցուցին ու ամրապնդեցին այս յարաբերութիւն: «Օտար բարբաբոսներ»ու ազդեցութիւնը օրէ օր աւելի մեծցաւ, հակառակ Բէքինի կառավարութեան ընդդիմութեան: Քայց չինացիք միշտ կատկածու են հանդէպ օտարականաց, և կը դաւանին անապաշտ հաւատարմութեամբ «ինչ որ հին, աւանդական և ազգային է»: Ահա այս պաշտաման շնորհիւ է որ մեկուսացած կրցեր է ապրիլ մարդերու այս հարուստ հանքը:

Կլիմա. — Չինաստան կը գտնուի հիւսիսային բարեխառն գօտիին ներքե մինչև յեղեղեանի արևադարձը տարածուած: Մանչուրիոյ կողմերը՝ ամառը տաք ու կարճ, ձմեռը՝ ցուրտ ու երկայն: Բէքին ձմրան կը սառի, արեւմտեան կողմը Թիպէդի բարձր լեռնազաշտը աշխարհի ամենէն ցուրտ երկիրն է: Մանչուրիոյ անապատը ամրան տաք և ձմրան ցուրտ է: Այսպէս Չինաստան կը պարունակէ ամեն կլիմաներ:

Հողը եւ մշակութեան գօտին. — Չինու առաջին ճարտարութիւնը երկրագործութիւնն է: Իր հողը, արեւելեան գաւառներու մէջ, հրաշալի բեղմնաւորութեամբ, արուեստագետի խնամքով մշակուած, կը բաւէ աշխարհի որ և է մէկ մասէն աւելի խիտ այսպիսի բաղմամարդութեան մը սննդեան: Կայսրութեան երկրագործական սահմանը գերազանցապէս «Գեղին երկիրն» է, գրեթէ Թրանսականին հինգ անգամին չափ, որուն հետ միայն կրնայ բաղդատուել Ռուսիոյ կեդրոնական և հարաւային «Սև երկիր»ը: Հոանկ-Հօ (Գեղին գետ) և Եանկ-Յէ-Փեանկ (Կապոյտ գետ) գետերն են որ կը

հոսին հողային գոյացութեանց ամենամեծ զանգուածէն: Դաշտերը մշակուած են պարտէզներու պէս:

Գլխաւոր արտադրութիւնք. — Ամենէն աւելի մշակուած արմուխն է քրնչը, Չինաց սնունդին հիմք: Լուսագոյն բրինձը ցանուած է շրատական հողերու վրայ, ծովեզերեայ վայրեր, լեռնագոգերու և հովիտներու մէջ: Կայ «Լեռնային բրինձ»ը չոր և բարձր գետիններու վրայ մշակուած: Տարեկան արգիւնքը 500 միլիօն հէք. թօլտարէն աւելի կը լինի:

Հօանկ-Հօյի հովիտը գլխաւորաբար կը մշակուի կրնի, հասարակ և եւրոպական արմուխ, ցրեն, եփեղացրեն, բարե, շարակ: Չինացիք ամեն կողմ կը մշակեն սոյ, սիսե, Լաբէ, ձնեփէ, քեղմանի՞որ և:

Արմուխէն վերջ ամենակարեւոր մշակութիւններն են. Բէ, շարեղէ, Բէնի, Խաշու, Յեանո, Բամբակ:

Անասնաբուծութիւն, ձկնաբուծութիւն և շերամաբուծութիւն. — Չինաստան չունի ճոխ արօտավայր, դուրաբուծութիւնը անկարեւոր է, սրովհետև չինացիք շատ քիչ միս կուտեն և իրենց մշակութեանց համար շատ պէտք չունին ընտանի անասուններու: Բահայ կ'աշխատին տնկել թէյ, շաքարեղէն, բրինձ և ծխախոտ: Եզը, գոմէշը, ձին յոյժ սակաւաթիւ են: Բազմաթիւ են Խոզեր և շները: Չինացիք կը բուծեն առաւելապէս թռչնեղէն: Մանչուները կը հասցնեն փոքր ընտիր ձէր: Եւձ-Յի (yack), ռիսը, շաշ կը հայտնային ընտիր բուրգ:

Մեծ կարեւորութիւն կը տրուի Գլխաւոր-Յեան. դուրերէ վեր գետերը, գետակները, լիճերը ամեն տեսակ և ամեն խոշորութեամբ անթիւժուկերով լեցուն են:

Սակայն Չինաստան միշտ բարձրագոյն գիրքը կը գրուէ շերամաբուծութեան մէջ: Ասիկա իրաւամբ չինական ազգային ճարտարութիւնն է որուն համար չունին մրցակից: Եւրոպա անկէ փոխ կ'առնէ իր դրութիւնը, իրենները բարւոքելու սերմը, անով կ'ըրացին հազարաւոր չինացի գեղուկներ:

Հետևեալ տախտակը ցոյց կուտայ երկրագնաի մե-
տաքսաւէտ երկիրներու բաղդատական հաշիւը 1899 ին.

Արևմտեան Եւրոպա	1895	1899 ին
Ֆրանսա	780,000 ղէլօ	560,000 ղէլ.
Իտալիա	3,132,000 »	3,363,000 »
Սպանիա	100,000 »	78,000 »
Գումար	4,012,000 »	4,001,000 »

Արևելքը և կեզր. Ասիա		
Անատոլու (Պրուսա)	300,000 ղէլ.	486,000 ղէլ.
Սուրբիա	375,000 »	456,000 »
Սեւանիկ եւ Էպիրնէ	155,000 »	210,000 »
Պալքն. եւ Պուլկարբի	36,000 »	42,000 »
Յունաստան	42,000 »	34,000 »
Կովկասիա	185,000 »	310,000 »
Պարսկ. եւ Թուրքստ.	30,000 »	246,000 »
Գումար	1,423,000	1,784,000 »

Երայրագոյն Արևելք		
Չին. արած. Շանհայէ.	4,246,000 ղէլ.	5,455,000 ղէլ.
» » Բանթօնէ	1,550,000 »	2,230,000 »
Ճարոն » Եօքօհամայէ	3,410,000 »	3,542,000 »
Հնդկս. » Կալկաթայէ	340,000 »	350,000 »
	9,546,000 ղէլ.	11,597,000 »

Ընդհանուր գումար	14,681,000 ղէլ.	17,382,000 »
------------------	-----------------	--------------

Ինչպէս կը տեսնենք Չինաստան մեծաքօի արտա-
դրութեան կողմանէ առաջին կարգին վրայ է իր իբր
5 1/2 միլիօն քիլօ արտադրութեամբ, այսինքն աշխարհի
մեծաքօի բերքին 1/3ը:

Հանքեր. — Շատ հին դարերէ վեր կը շահագործուին
Չինաստանի հարաւորեալ հանքերը, որ ըստ բրոֆէսօր
Ռիչթօֆէնի, կը տարածուի իբր 1 միլիօն քառ. քլմ.
տարածութեան մը ներքև: Բաննցուած մասը միայն
կ'արտադրէ (Ֆորմիլայի և Հանքէուի մէջ) 3 միլիօն
թօնօ. բայց ամենէն հարուստները կը գտնուին Ի Շան -

Սի, Սեչուէն, Եուենան, Բէյլիլի և Շանդունկ: Չինաստան
ունենալով ընտիր տեսակէ և մեծ առատութեամբ
ածուխ, ճարտարական և առևտրական մեծ ապագայ մը
կրնայ ապահոված ըլլալ:

Երկաթ կը գտնուի Ի Շան - Սի, Շանդունկ, Եուենան
որ այնքան հարուստ է հանքածուխով: Կապար և պղնձ կը
հանուի Շանդունկի և Շանսիի մէջ և մանաւանդ Եուեն-
ան որ կ'արտադրէ երկաթ, պղնձ, կապար և անաբ: Ուրի կը
հանուի Եուենանէ, Սեչուիենէ և Գուանկ - Սիէ. արծաթ կը
հանուի Շանդունկէ և տարեկան կուտայ 20 միլիօն ֆր.:

Չինաստան հարուստ է յափճողակի հողով. լաւագոյն
տօթիւք կը հանուի Բօեանկ լիճի մօտէն և Գեանկ - Սիէն:

Սակայն Չինաստանի մէջ կը պակսին գրամագլուխ,
արուեստագիտական ծանօթութիւններ, և փոխադրու-
թեան միջոցներ: Այնպէս կը կարծուի թէ եթէ ճարտա-
րական այս էական երեք միջոցները հայթայթուին Չի-
նաստանի պիտի կրնայ իր 3 - 4 միլիօն թօնօ հանքածու-
խը քսանապատկել:

Ճարտարութիւն. — Աշխատութեան բաժանումը դեռ
անծանօթ է չինական ճարտարութեան. իւրաքանչիւր
արտադրութիւն միայն մէկ բանւորի գործ է, յաճախ
արուեստագէտէ մը կրկնուած: Չեարուեստի գինը
մարդ վըւել օրական կէս կամ մէկ ֆրանք է: Երկնային
կայսրութեան բանւորները իրենց երկրին մէջ կը չինեն
գլխաւորաբար սպառած անգուտ շաքարը, ճենապակին,
խոհամանները, մոմը, թուղթը, գօհարները, հագուստ-
ները և կարասիները:

Չինու առաջին ճարտարարուեստն է Բարուիւքը կար.
ժագործ (dévidage) կամ ճախարակագործ (moulinage)
արհեստանոցներ շատ տեղեր հաստատուած են: Չինա-
ցիք բայի խառն մեծաքօէ բանուածներէ կը չինեն
սիրուն պատասաններ աժան, բամբակը կը մանեն և կը
գործեն հասարակ կտաւ՝ ժողովրդեան համար: Այս
մեծաքօէ և բամբակէ զանազան գործուածները ներ-

կուսած են այլ և այլ գոյներով: Չինացիք ներկայորժամեան ճարտարութիւնը իր կատարելութեան հասուցած են:

Չինացի գործարարները կը բանին գլխաւորաբար պղինձ և անագապղինձ, որով կը շինեն մանաւանդ խոհամաններ. Չինու անագապղինձները և դրոստիւնը պէտքէ անանքը մեծ համբաւ ունին Եւրոպայի մէջ:

Չինաստան քանի մը ճարտարարուեստով կը գերազանցէ զԵւրոպա: Բէքինի գործարանէն և Քէնկ-Թէ-Շէնի կայսերական տարազագործարանէն կ'ելլեն ամենէն նուրբ և գնահատուած ճենապակիները: Չինացիք կը շինեն Բաղն ամեն տեսակէ, նոյնպէս անաշնակարգ են իրենց յարդէ փայտերով, լայնալէ աստիւններով և շինական ձեւով:

Կարեօրագոյն ճարտարութիւններէն է Բէյն պատրաստութիւնը, նշանաւոր հին դարերէ վեր: Նաև իր պէտքէն աւելի շատ, զոր կ'արտածէ Արեւելքի զանազան հրապարակները: Անյիշատակ ժամանակներէ վեր կը շինէ բրինձէն օդի խմորեղէններն ու ճգանաշէնքը երկրորդական են:

Չինացիք նշանաւոր են Խորշէնաստիւններու (cloisonné) և սեղանաբոյնութեան մէջ, այնքան նուրբ ու փափուկ: Կը Խորշէնութեան ճարպիկութեամբ երենուսը և կարծր փայտեր, գեղագունելով փայտին մութ գոյնը՝ փղորակէ կամ սատափէ դրուագներով: Կը շինեն պերճակներ, պահեօր (արկղ) սեղան, ճահճակալ փորուած ու դրուագուած, որով կը շփոթեցնեն Եւրոպացի ամենէն ճարպիկ գործարարներն ալ: Իրենց անբաղդատելի վրձինին տակ ճենապակին կ'երևի ամենէն աւելի պէտպիսուած նկարներով:

Ճարտարներ. — Չինաստան չունի կանոնաւոր ճամբաներ, հին խճուղիներն ալ աւրուած: Կայսրութեան ներքին մասերուն մէջ փոխադրութիւնք աւելի գետերու միջոցաւ տեղի կ'ունենան: Առևտրական ամենամեծ նաւեր կրնան Եանկ-Յէ-Քեանկի բերնէն մինչև 4-500 քիլոմէթր ներս նաւարկել: Այս գետին եզերքները խոչնուած են միջին կայսրութեան ամենէն բաղձամաղդ:

քաղաքները՝ Չինկ-Քեանկ, Նանքին, Վուհու, Նկան-Քինկ, Հանքէու և:

Հօանկ-Հօնուալ յարմարութիւն ունի նաւարկութեան, նաւարկելի «կայսերական ջրանցք»ը ամենէն ծանօթ որ կ'երթայ Հանկ-Չէուէն Թիէնձին, 2 հազար քիլոմէթր երկայնութիւն ունի: Մինչև հիմա Եւրոպացիներու ձեռքով շինուած երկաթուղիները կը հաշուուին 4032 քիլոմէթր: Բարեբաղդաբար Չինաստան ունի ընդարձակ ծովեղէրք մը — 5 հազար քիլոմէթր — որուն շնորհիւ կրնայ հայթայթել իր ամենէն խիտ երկիրներուն նախը:

Առուտար. — Չինաստան Արեւմտայի պետութեանց հետ ծովի միջոցաւ կ'ընէ լաւուտարը, մինակ իրեն սահմանակից Թաիլանտանի հետ կ'ընէ ցամաքէն՝ կարաւանով, և Ռուսիոյ հետ՝ նոյնպէս կարաւանով և մասամբ նոր շինուած Մանչուրական երկաթուղով: Յամաքային առուտարը հազիւ 100 միլիօն ֆրանքի կը հասնի: Պրիմանիոյ աէր՝ Անգլիացիք, և Թոնքինի աէր՝ Պրանսացիք կը հետապնդին ցամաքի ճամբով հազորդակցելու իրենց այդ երկիրներէն Հարաւ: Չինաստանի մանաւանդ Եուննանի հարուստ գաւառին հետ:

Փորթուկալցիք Ֆ.Չ. դարէն վեր հաստատուելով Մաքաօ կղզին, Չինու հետ առուտար ընող Եւրոպացի միակ արտօնուած ժողովուրդն եղան: Քանի՞թօն էր այն ատեն միակ բաց քաղաքը առուտարի: Անգլիացիք 1842 ին Նանքինի գաշնագրով ստացան հինգ նաւահանգիստներ նաւերու ազատ ելլամալի համար բաց: 1860 ին Անգլիացիք և Պրանսացիք գրաւեցին Բէքինը և կնքեցին նպաստաւոր դաշնագրութիւններ: 1898 ին օտար վաճառականութեան համար բացուած նաւահանգիստներուն թիւը բարձրացաւ 29 ի:

Չինու առուտարը 1899 ին:

Ներածութիւն 264,748,456 թաէլ, արտածութիւն 195,784,832 թաէլ, գումար 460,533,288 թաէլ:

	Ներած. թ.	Արտած. թ.	Գումար թ'
Անգլիա	40,161,115	13,962,547	54,123,662
Հոնկ-Քոնկ (Անգլ.)	118,096,208	71,845,558	189,941,766
Հնդկաստան »	31,911,214	1,731,498	33,642,712
Մեկլիբ. և Նեղոսց (Անգլ.)	3,646,195	2,231,792	5,877,987
Աւստրլ. և Նոր-Չէլանտ »	272,553	670,078	942,631
Հարաւ - Ափրիկէ		236,613	236,613
Անգլ. Ամերիկա	1,208,865	259,519	1,468,384
Միաց. - Նահանգ.	22,288,745	21,685,715	43,974,460
Փիլիպեանք	21,641	61,629	83,270
Եւրոպա (բացի Ռուսէն)	10,172,398	36,763,506	46,935,904
Ռուսիա (Օտեոայէն)	3,233,239	5,343,480	8,576,716
» և Սիպերիա		9,987,706	9,987,706
» Մանչուրիոյ	289,165	3,225,806	3,514,971
Ճարոն	35,896,745	17,251,144	53,147,889
Մաքաո	3,408,516	5,824,487	9,233,003
Հնդկա - Չին	1,611,140	945,544	2,556,684
Սիամ	67,347	903,531	970,878
Ճապոն և Սումատրա	629,129	355,310	984,439
Ա. թուրքիա, Պրսիան.	841,850	2,496,982	3,338,832
Եգիպտոս և Ալճէր			
Քորէա	807,446	729,418	1,536,864
Նաւային շարժումը տակաւ կ'աճի, 1899 ին	52,720		
շոգ ենաւ 37,794,000 տակառաչափ և 12,698 առադաս.			
տանաւ 1,473,000 տակառաչափ, համագումար	65,418		
նաւ 39,268,000 տակառաչափ ելեմուտ ըրին.			
Անգլիական դրոշ	25,350	շոգ ենաւ	23,338,200 տակառաչ.
Չինական »	31,009	խառն նաւ	9,349,200 »
Ճարոնական »	3,712	» »	2,839,700 »
Գերմանական »	2,978	շոգ ենաւ	1,854,200 »
Շ. Նորվէկ »	482	»	439,700 »
Ռուսական »	484	»	361,500 »
Փորթկալեան. »	661	»	45,500 »
Ճրանսական »	822	»	613,100 » եւ:

Ամենէն կարեւոր նաւահանգիստներն են.

Շանկ - Հայ. — Ընդ հանուր առուտուրը կը հասնի 990 միլիոն ֆրանքի, կ'արտածէ գլխաւորաբար Բրաուն և Բէյ, կը ներածէ Մանչէսթըրի և Պոմպոյի հանած. Անգլ. և Գերմ. Բրդէ հիւսուածներ, Ամերիկեան և Ռուսական բարեւոյն. Իբր 6 միլիոն թօնօ աւարտող թեամբ նաւ ելեմուտ կ'ընեն:

Քանթոնը ընդ հանուր առուտուրը կը հասնի 300 միլիոն ֆրանքի, հօս ելեմուտ կ'ընեն 2,825,000 տակառաչափ նաւեր:

Հանքեաւ, Չինական երրորդ նաւահանգիստը, ընդ հանուր առուտուր 227 միլիոն ֆր. նաւային շարժում 1,227,300 տակառաչափ:

Մաո, Պո-Չէ, Թեյնէն, Չոնկ-Քիւն, Մո-Չէ, Չի-Քեանկ և ուրիշ խիստ բանուկ նաւահանգիստներ տակառաչան կան:

Հոնկ-Քոնկ կ'զգրիւն մէջ Անգլիացիք նաւահանգիստ ըրած են վէրքեւ, շահմարան Եւրոպայի և Ասիոյ վաճառքներուն. Հոս գլխաւոր փոխանակելի նիւթերն են. ափիոն, շաքար, դուր, ճենապակի, բամբակ, մետաք. սեղէններ, թէյ, բամբակեղէն, սանդալի փայտ եւ: Նաւահանգիստը խոր և ընդարձակ. Մուտ և ել կ'ընեն 55 հազարէն աւելի նաւ 12,710,000 թօնօ տարողութեամբ, կէսէն աւելի անգլիական դրոշով, յետոյ կուգան Գերմանական, Ֆրանսական և Յանիմարքայի նաւերը: Առուտուր 500 միլիոն ֆրանք:

Չինաստան ներածուած վաճառքներն են ակնոյն (180 միլիոնի) Բրդեղէն և Բամբակեղէն (300 միլիոն ֆր.), զետեւ և Բրաուններ, ածուխ, անդառ Բրաուն և Բրաունեղէն (280 միլիոնի), Բէյ, փէւթ, շաքար եւ:

Թէյի արտածութիւնը կը նուազի հետզհետէ, 1888 ին կը հասնէր 1,751,587 բիքիւլի (1 բ.ք. = 60, 5 քիլօ), 218,950,000 ֆր. արժէքով, մինչ 1886 ին էր 3,500,000 բիքիւլ:

Մետաքսի արտածութիւնը կը յառաջգրիմէ, 1889 ին արտածեց 65,617 բի.բիւլ անգուտ ճերմակ մետաքս և 17,827 բի.բիւլ կոշտ մետաքս:

Անգուտ բաւթակի արտածութիւնը մինչ 1887 ին էր 678 հազար թաէլի (1 թ.—5, 65 Ֆր.) 1889 ին հասաւ 36 միլիօն ֆրանքի:

Ուղտի և ոչխարի բուրդ 1889 ին գրեթէ եռապատ կուեցան, (102 հազար բի.բիւլ):

Ինչպէս տեսանք նախընթաց առևտրական տախտակէն այս փոխանակութեանց մեծագոյն բաժինը Անգլիոյ կը վերաբերի: Կալկաթա իւրաքանչիւր տարի կը գրկէ Շանկ-Հայի և Հոնկ-Քոնկի 200 միլիօն ֆրանքի ափիօն, Պոմպայ և Մանչէսթըր կը գրկեն 100 միլիօնէն աւելի մանած, Լօնտօնի և Լիվրփուլի շոգ ենաւերը հօն կը առնին ըրգեղէն, երկաթեղէն և ուրիշ նիւթեր 500 միլիօնի արժէքով:

Անգլիայէն յետոյ կուգան Ճարսնցիք (53 միլիօն թաէլի) Հիւս Ամերիկացիք (45,500,000 թաէլի), Գերմանք, Ֆրանսացիք եւ:

1898 ին Ռուսք վարձեցին 99 տարուան պայմանաժամով (?) Բաբ-Աբ-Բաբ, նշանաւոր զինուորական նաւահանդիստը և հետզհետէ տեղաւորուեցան Մանչուրիոյ մէջ. Անգլիացիք՝ Ուեյ-Հայ-Ուեյ նաւահանդիստը, Գերմանացիք Դալի-Բաբ և ասոնց յարակից դաւառներու մէջ կարեւոր մենաշնորհներ ձեռք ձգեցին: Մաքս 5% արժէքով:

Եզրակացութիւն. — Վերջապէս Չինաստան երկրագնախա վրայ լգտնուած մարդկային ամենամեծ կոյտը ունեցող պետութիւն մ'է անհուն հարստութեանց տէր: Ծայրագոյն-Արևելքի այս Սեմականները բարձր աստիճանի հանճար ունին առատուրի և գործի, որով կ'ընեն ահարկու մրցում մը Ասիոյ նաւահանդիստները հաստատուած օտար աւերու հանդէպ: Դրամագլուխ և ճարտարական միջոցներ կը պակսին միայն իրեն տալու գերակշիռ դերը մը:

Դրամ, կշիռ, եւ չափ. — Չինաստանի մէջ ամեն ինչ կը գնուի կամ կը ծախուի կշիռով, որուն գլխաւոր միութիւնն է Բէ-Է-Է 100 լիար կամ Բա-Է 60, 5 քիլօկրամ: Կերպաններ չափելու համար կը գործածեն անգլիական եւրոսն: Թաւել գրամ մը չէ, այլ կշիռ մը որ կը բաժնուի 10 մա, 100 Բա-Է-Է կամ 1000 Բա-Է-Է և կը փոխուի տեղին համեմատ: Ընդհանրապէս բնգունուած կշիռն է 37 կր. 79 ը: Քա-Է-Է կամ Է-Է 16 թաէլ = 604 կր. 78. Բէ-Է-Է կամ Բա-Է-Է = 100 քաթթի:

Վճարումները կ'ըլլան արծաթ կամ ոսկի ձոյլ կտորով (lingots): Այս լէնկօները կը ձուլուին դրամատուներու միջոցաւ ձուլիչին պատասխանատուութեան ներքեւ, որուն անունը և ծանրութեան մարքան կը կրեն: Այս պատճառաւ դրամատուները Ծայր-Արևելքի մէջ մեծ կարևորութիւն ունին, որովհետեւ բացի առևտրական թղթերու գեղչէն և տոմսակներու շրջաբերութենէն, անոնք կը գործադրեն դրամներու փոխանակութիւնը և կը կոխեն լէնկօներ, որ փոխանակութեան մէջ միակ դրամն են:

Անգլիական կարևոր տուներ առևտրական մեծագոյն հրապարակներուն վրայ հիմնած են դրամատուներ, որոնք կը կեդրոնացնեն գրեթէ բոլոր փոխանակութիւնը Եւրոպայի, Հնդկաստանի և Ծայր-Արևելքի մէջտեղ: Ասոնց մրցակիցներ են Շանկ-Հայի գերմանական դրամատունը և անոր մասնաճիւղերը:

Չինաստանի մէջ իրր գործի լեզու կը գործածուի կէս-անգլիերէն կորճալեզու մը, բիւթօն (pidgeon), խիստ տարածուած առևտրական հրապարակներու վրայ:



Գ Լ ՈՒ Ի Ի Զ

Ճ Ա Բ Ո Ն

Ճ Ա Բ Ո Ն Ի Կ Գ Զ Ի Ն Ե Բ Ը. — Ճարոնի պետութիւնը 3,500 է աւելի կղզիներէ կը բաղկանայ, որոցմէ կարևորագոյններն են, Եջ, գրեթէ քառակուսի ձևով, կլիման՝ ցուրտ, Նէֆօ՝ կղզեխումբին կեդրոնը, Սէտօֆ, Քիւս-Սիւս-Քուրեկան և Լիւս-Քիւս կղզեխումբերն և յարակիցները:

Այս կղզիները միասին կը ձևացնեն աղեղ մը, խոր չերով ու նաւահանգիստներով եղերուած: Երկիրը՝ լեռնոտ հրաբխային, կլիմաները՝ այլազան, Լեռները՝ դէպի ծով խոնարհած՝ նկարչազեղ տեսարաններ կ'ընծայեն, լայնարաց հովիտներ, ենթակայ Ովկէանի խոնաւ հովին, ծածկուած են մշակութեամբ և անտառներով:

Տարածութիւնն է 417 հազար քառ. քիլոմէթր, իսկ բնակչաց թիւն է 44,900,000, իւրաքանչիւր քառակուսի քիլոմէթրի վրայ 117 հոգի կրօնն է Պուտոայականութիւն, կան նաև 90 հազար քրիստոնեայ (բողոքական ու կաթոլիկ), 25 հազար յունադաւան:

Մինչև 1868 ին Ճարոն գրեթէ փակ էր Եւրոպական ազդեցութենէն, նոյն թիւին «Թայքուն» դուրս կ'ելլէ իր խորհրդաւոր վեհաժողովներէն, բայց իրրև աւանդապահ սլաշտօնական իշխանութեան՝ կ'աներևութանայ, և վեհապետական իշխանութիւնը կ'անցնի «Միքատոյին» որ իրեն մայրաքաղաք կ'ընտրէ Ետտօ, փոխանակ Քիոթոյի:

Կլիմա եւ քերք. — Մեղկ կլիմային և ամառնային անձրևներուն շնորհիւ Ճարոն տարապայման բուսաբերութեամբ օժտուած է:

Արմտեաց մէջ առաջինն է քեֆօնը, որ ժողովրդեան սնունդին անհրաժեշտ տարրը կը կազմէ: Աւելի մշակուած է «ճահճային բրինձ»ի տեսակը: Ասոր բերքը կը

լինի 55 միլիօն հէքթօրիտր, ընդհանուր արմտիքին $\frac{5}{8}$ մասը: Յուրէ՛ 6,500,000 հէքթլտր. քուրէ՛ 19,000,000 հէքթլտր.: Կը մշակեն նաև ճաբոնցիք եւ բոսպական բանջարեղէններու գրեթէ ամեն տեսակները. նաև փափուկ և Էնհօ (ignames):

Սակայն Ճարոնի երկրագործական արտադրութեանց գլխաւորներն են թրքիւն, Բեյը, Բամբակ, շաբոնեղէֆ: 1888 ին Ճարոն արտածեց 146 միլիօն ֆրանքի մետաքս, 32 միլիօնի թէյ: Այս երկու նիւթերը Ճարոնի արտածութեանց 58 առ. % մասը կը կազմեն: 1884 ին արտադրեց 2,298,000 քիլօ բժոժի մետաքս, 1890 ին՝ 3,500,000 քիլօ, 1899 ին՝ 3,542,000 քիլօ, որուն $\frac{2}{3}$ ը արտածեց գլխաւորաբար Ամերիկա և Յըանսա:

Թէյի մշակութիւնը զգալարար կը զարգանայ, որովհետև աշխարհի ամեն կողմեր այս բնագլխին գործածութիւնը ընդհանրանալով՝ եկամուտի մեծ ապագայ կը խոստանայ: Այժմ կ'արտադրէ 25 միլիօն քիլօ թէյ:

Բամբակի մշակութիւնը աւելի երկրորդական է, կ'աճի մասաւանդ Նիֆօնի մէջ, բերքը 135 միլիօն լիտրի կը հասնի, այսինքն տեղական սպառումին $\frac{1}{3}$ ը:

Շաքարի արտադրութիւնն է 50 միլիօն քիլօ:

Ծխախոտ՝ 40 միլիօն քիլօ, տեղական պէտքէն շատ աւելի:

Ճարտարական մշակութեանց մէջ պէտք է դնել Էդուլե, սուկիմար (arbre à vernis), սուկիմար (cire végétale), Կամփր (camphre):

Անտառներու տարածութիւնն է 7 միլիօն հէքթար, որուն 6,500,000 ը պամպու:

Անտանարածութեան մեծ խնամք չտարուիր, թէև ունի լաւ արօտավայրեր, մանաւանդ Եդօ կղզին մէջ: Սակայն կառավարութիւնը կը ջանայ ներմուծել իր երկիրին մէջ արեւմուտցւոյ նոր գիտական գրութիւնները: Հաստատուած է բաղմամբիւ «տիպար-ագարակներ», երկրագործական վարժարաններ և ուսումնարաններ, որոնց ուսուցիչները և գործավարները դրսերէն բերել

տրուած է, բազմապատկած է մրցումներն ու ցուցադրութիւնները:

Հաւնք. — Թէև Մարքո-Բուլօ շատ հարուստ կը նկարագրէ այս երկիրը, բայց առայժմ 1 միլիօն ֆրանքի սկիւն և 500 հազար ֆրանքի սրձախ հազիւ կ'արտադրէ: Սակայն երկրին ամեն կողմերը կան հեղուկահեղձ հարուստ հանքեր, մանաւանդ ի ֆիու-Սիու, որ «ճարտնական Բենսիլվանիա» անունով կը կրէ, ունի ամենէն հարուստ ածխահանքերը: Ճարտնի հանած 870 հազար թօնոյին 807 հազարը մինակ ֆիու-Սիուէն կ'ելլէ, որուն մեծ մասը կ'արտածուի Չինաստան, Սիպերիա և մինչև Հնդկաստան:

Պոլինէի արգիւնքն եղաւ 1898 ին 25,175 թօնօ երկաթ: մագնիտական հրաքարի փիճակին մէջ, որմէ կը շինեն թուրի խարտոցներ, որ արդարև անուանի է: Նիկիաթայի մօտէն կ'լլէ բարեւոյն, ունի նաև սնուցիչ, մակաւնէր, և ոչ-մետաղական նիւթերուն մէջտեղ ծծումբ, բազիլ որուն արգիւնքը կը հասնի 24 հազար թօնոյի:

Ճարտարութիւն. — Իջարագոյն — Արևելքի ամենէն ճարտարարուեստ երկիրն է Ճարտն, ուր գործաւորը՝ ճարպիկութեան կողմանէ՝ երբէք տեղի չտար շինականին և աւելի բարձր է արուեստագիտական ճաշակով: Ճեւապակէ, լայտի և սնուցիչ ճարտարութեան մէջ ճարտնցիք տէր են Եւրոպացւոց:

1598 ին ճարտնցի ազնուականներ ֆորեայէն արուեստագէտներ տանելով իրենց երկիրը Ինքեթորձուան մեծ գործարաններ հաստատեցին: Քիթոյ կեդրոնն է խեցամաններու և ճենապակիի, որուն ճարտարութիւնը այժմ յոյժ ծաղկած է: Արտածութիւնը որ 1885 ին հազիւ 5 միլիօն ֆրանքի էր, 1889 ի առաջին եռամսէին եղաւ 2,500,000 ֆրանք: Ճարտնցիք այս արհեստով կրնան ամբողջ աշխարհի հայթայթիչն ըլլալ, որովհետև ունին մեծ առատութեամբ ընտիր, մաքուր և ամեն տեսակէ կաւեր:

Ժէ. դարուն վերջը, Թայքունի իշխանութեան օրով,

լայքայի ճարտարարուեստը իր բարձրագոյն կատարելագործութեան հասաւ: Թոքիոյ և Եսքոհամա եղան այդ ճարտարութեան կեդրոնը:

Քիթոյի սնուցիչ առարկաները և Խորչիւն-Բուլէր աշխարհի ամեն կողմերէ կը փնտռուին:

Ճարտնի մէջ կը պատրաստուի ամեն տեսակ Սաւիե (բրինձի հոյզով խմորուած ըմպելիք): 1885 ին կը հաշուէր 18,153 թարատուն սօքէի, որ կ'արտադրէին 5,618,750 հէքթոլիտր, առանց հաշուելու 1,066,000 հէքթոլիտր շինուածը որ ընտանիքի գործածութեան համար միայն յատկացուած էր և վաճառու մը արգիլուած:

Ճարտնցիք Բիւնէ, և ուրիշ և շքեղ առարկաներու շինութեան մէջ առաջին են: Եւրոպայէն փոխ առած են, ծամագործութեան, սպիտակագործութեան և փայտի լայնեղանակ արհեստները: Ունին բազմապիւղեղ և սուրի գործարաններ: Երկար առնէ վեր հիմնած են կարևոր նաւարաններ առևտրական և պատերազմական նաւերու շինութեանց համար: ունին արհեստանոցներ՝ երկաթուղիի նիւթեր պատրաստելու:

1898 ին արտադրեց Բաշիւնի 3,555,000 իէնի, Լայն 6,273,000 իէն, Զոյիւնի 3,933,000 իէն, Բեյնի 20,105,000 իէն, խեցեղէն 1,989,000 ի. հովանոց 687,000 իէնի:

Վերջապէս ճարտն որ մինչև հիմա զարգացած է առանց արտաքին աղբեցութեան և ճանչցուած է իր բնական ճարտարարուեստ երկիր, կոչուած է ըլլալ մեծագոյն ճարտարարուեստ աղբերէն մին, որուն գիրքը, կլիման, հողը և ընդերկրեայ հարստութիւնը լիովին կրնան բաւել իր այդ զարգացումին:

Ճամբաներ. — Ճարտն չնորհիւ իր ծովային գիրքին մեծ դիւրութիւններ ունի հազարակիցութեան: Ներքին ճամբաներու երկայնութիւնն է 60 հազար քիլոմէթր, որով մայրաքաղաքը դիւրութեամբ կը հազարակիցի երկրին ամեն մասերուն հետ: Երկաթուղիներու երկայն.

նութիւնն է 4,747 քիլոմէթր, 4,080 նամակատուն, 1,259 հեռագրատուն, 75,233 քիլոմէթր թել:

Նաւահանգիստ. — Երկրին մեծ մասը այսօր բաց է արտաքին վաճառականութեան: Ամենէն բանուկ նաւահանգիստներն են Նակապէ, Երուհամ, Օստա, Հեիւ - ֆուլ, Հասար, Նէկաւա եւ:

Նաւային շարժումն է մուտք 3,374 նաւ 3,381,563 տակառաչափ, ելքն է 3 535 նաւ 3,533,460 տակառաչափ: Ունի առևտրական 970 շոգ ենու 273,185 տակառաչափ և 714 առագաստանաւ՝ 45,299 տակառաչափ:

Առևտուր. — Ճարձն միշտ պէտք ունի օտար երկիրներու օգնութեան, որովհետև անբաւական են իր սպառումին իր արտադրած բամբակը, քարիզը, շաքարը, ոչխարները, մետաղները, զորս կը գնէ օտարներէ սուղ գնով: Մինչ 1868 ին արտաքին վաճառականութիւնը կը հասնէր գրեթէ 2 միլիօն ֆրանքի, 1899 ին հասաւ 345,626,742 իէնի (1 իէն = 2, 30 ֆրանքի) որուն կէսը՝ արտածութիւն:

Այս առուտուրին մեծ բաժինն է Անգլիոյ, յետոյ Միացեալ - Նահանգաց, Հոնկ - Գոնկի, Չինու, Ֆրանսոյի, Հնդկաստանի, Գերմանիոյ, Քորէայի, Աստրալիոյ եւ Կեդր. Ամերիկայի շրանքին բացումը մեծ զարկ պիտի տայ ճարձնի արտաքին առուտուրին, որովհետև Եւրոպայի հետ հաղորդակցութեան ճամբան աւելի կարճ և հեշտին պիտի ըլլայ: Երբհամայնէն ճամբորդներ և ապրանքներ առ առաւելն պիտի հասնին Հավր 30-35 օրէն, փոխանակ Սուէզի 45 օրուան ճամբու տևողութեան:

Ճարձնի լուսագոյն յաճախորդներն են Հիւս. Ամերիկացիք: Կը գնեն գլխաւորաբար թէյ և անզուտ մետաքս (150 միլիօն ֆրանքի): Անգլիա կը ծախէ մանաւանդ բրդեղէն և բամբակեղէն (125 միլիօն ֆր.): Չին կը գնէ բրինձ, առագձ, մետաղներ (110 միլիօն ֆր.) և իբր փոխանակութիւն կուտայ շաքար, ֆրանսա՝ 70 միլիօն, Գերմանիա՝ 60 միլիօն:

Այս փոխադրութեանց ճիշտ կէսը անգլիական դրօշով կը կատարուի, յետոյ կուգան ճարձնական, Գերմանական, Ամերիկեան, Ֆրանսական դրօշները մնացած կէսին համար:

Դրամ, կշիռ, եւ չափ. — Ճարձնի մուտքն է 239,019,893 իէն, իսկ ելքն է 234,506,984 իէն: Առևտրական և ճարտարական զարգացման հետեանքով դրամատուները և ուրիշ վարկային հաստատութիւնները անհամեմատ կերպով բարգաւաճած են: Ճարձնի մէջ կը հաշուուի 142 պանքա հասարակաց կամ շրջաբերութեան, 127 մասն. ճիւղերով, 260 միլիօն ֆր. դրամագլխով, կան 200 մասն. նաւոր պանքաներ, 741 վարկային ընկերութիւններ՝ ճարձն ունի նաև ապահովագրական և խնայողական սնտուկներ:

Շրջաբերութեան մէջ գտնուած դրամը էն կըսուի, որ կ'արժէ 5, 30 ֆր. և 4 նոյ ու 2 նոյ սակեգրամներ եւդոն (1 իչպ. = 1, 75 ֆր.):

Ծանրութեան միութիւնն է 5.000 3 կրամ, ֆւււ = 3, 75 քիլոյի: Մակերևոյթի միութիւնն է 2.00 = 99 ար. Տարողութեան չափն է ֆոււ = 180 լիտր:

Առուտուրի մէջ կը գործածուին նաև անգլիական և մէթրական չափերն ու կշիռները:

Ք Ո Ր Է Ա

Քորէա, « ճգնաւոր ազգ » ինչպէս կոչած է անգլիացի հեղինակ մը, մինչև վերջին տարիներս բոլորովին կզգիացած ապրած է, 1895 ին Չին - ճարձնական պատերազմին հետեանքով Չինէն զատուելով՝ մասամբ սկսաւ օտարներու հետ հաղորդակցութեան մտնել, մասնաւորաբար ճարձնի, Չինու, Ռուսիոյ և Անգլիոյ հետ: Չեսլ ու դիրքով մեծ նմանութիւն ունի Իտալիոյ: Տարածութիւնն է 218,650 քառ. քլմ. և բնակիչ 8 միլիօն:

Բերքեր. — Ֆորէա կ'արտադրէ Ժինսան (ginseng) կոչուած բժշկական տունկը, որուն արմատն է կազդուրիչ և ջերմահալած (fébrifuge). նաև Բանջարեղեններ, որնորի (ցորեն, եգիպտացորեն, կորեկ), Բրինձ, զոր կ'ուռոգեն ջրանցներով, նաև հիստամոնոպոնիկներ, բամբակ, հնդկական նեփ (jute), վուշ: Շերամարուծութեան համար Բրինձ, նոյնպէս ծխախոտ, որնապատանկ եւ: Ֆորէա խիստ հարուստ է անասուններով:

Քնտանի անասունները խիստ քիչ են. կը բուծեն, յի եղ ոչխար, խոզ և այլ: Ծովազներքէն կ'որսան ճարգարասէր խեցիներ:

Հանքային թագաւորութեան մէջ կը բանեցնեն ոսկեքեր աւաղներ որմէ՝ լուալով՝ կը հանեն ոսկեփոշի, արծաթի հանքեր, նաև կապարի, պղնձի, հանաձուխի հանքեր և այլ:

Ճարտարութիւն. — Ֆորէացիք խիստ զարգացած են ճարտարարուեստի մէջ, ինչպէս տեսանք, անոնք եղած են՝ այդ արուեստին մէջ՝ ճարտնցուոյ վարպետը:

Շինուած գլխաւոր նիւթերն են. խեցեղեն, ճենապակի, դէնտ, Բամբակեղեն, Բուրդ, վերանձ, դանազան տունկերէ հանուած իւր. Բուրդ, Բամբակ, Բերքերթի մէջ կը շինեն պամպուի թելերէ խորհներ:

Առուտուր. — Առևտրական շարժումը կը հասնի 70 միլիոն ֆրանքի, որուն կարևոր բաժինը ճարտնին է: կարևոր նաւահանգիստներն են. Շենտ, Մեու, Շեֆուօ, Պեղան: Ասոնք երբևէ միայն ճարտնի համար բաց էին, բայց հետզհետէ բացուեցան Անգլիոյ, Միացեալ-Նահանգաց, Ռուսիոյ, Պրանսայի և Գերմանիոյ առջև դանազան թուականներով ստորագրուած դաշնագրութեանց շնորհիւ:



ՉՈՐՈՐՈՐՈՐ ՄԱՍ

Կեդր. և Արեւմտեան Եւրոպա, Արեւմտ. Ափրիկէ և Նոր-Աշխարհ

ԳԼՈՒԻ Ա.

ՄԵԾՆ ԲՐԻՏԱՆԻԱ

ԲՐԲ. — Բրիտանական կղզիները կը գտնուին Հիւսիսային լայնութեան 49° և 60° ի մէջ, կը պարունակեն Մեծն-Բրիտանիա (Եւրոպայի մեծագոյն կղզին) Իռլանդ և բազմաթիւ փոքր կղզիներ. Ուայն, Էնկլեի, Սէն, Հեյուս. Եան և:

Տարածութիւնն է 314,628 քառ. փղովթի, բնակիչք 40 միլիոն: Շրջագառուած Հիւսիսային, Մանչի, Իրլանտայի ծովերէն և Ատլանտեան Ովկէանէն կլիման՝ բարեխառն և անձրեային: Անգլիա իր դիրքին կը պարտի իր ծովային զօրութեան և առևտրական գերակշռութեան մեծութիւնը: Երկիրը կը բաժնուի 119 կոմսութեանց (42՝ Անգլիա, 12՝ Ուէլս, 32՝ Իրլանտա և 33՝ Սկոտիա):

Երկրագործութիւն. — Անգլիոյ մշակուած հողին զբեթէ աճողը տարածութիւնը 200 հազար կալուածատէրերու ձեռքն է: Եւրոպայի մէջ Անգլիա է այն երկիրը, ուր երկրագործութիւնը իր բարձրագոյն զարգացման հասած է, գիտական ամեն կատարելութեամբ օժտուած:

Մննդական տուններ. — Յորենի արտադրութիւնն է տարեկան 35 միլիօն հէքթօլիտր, որ անբաւական է իր պէտքին և նոյն քանակութեամբ ալ կը գնէ Միաց.-Նա-հանդներէն, Քանատայէն, Հնդկաստանէն և Ռուսիայէն: Սակայն բաղդատմամբ Գաղղիոյ մշակած հողին տարածութեան, իր հողին արդիւնքը անոր կրկինն է:

Վարսակը կարևոր տեղ կը բռնէ Անգլիոյ մշակութեան մէջ և կուտայ 60 միլիօն հէքթօլիտր: Գործ.՝ 30-40 միլիօն հէքթօլիտր: Գերմանիոյ՝ 80 միլիօն հէքթօլիտր կը մշակուի առաւելագէս իրլանտայի մէջ, Մեծ յառաջդիմութեան մէջ է Բուլղարիոյն մշակութիւնը:

Ճարտարական մշակութիւնք. — Մեծն-Բրիտանիա կը մշակէ գոյւնի, լոշ, կանեփ, ճակնդեղ և ձիախոտ: Այն երկիրները որոնց կլիման անյարմար է որթատունկի մշակութեան, շատ շագլի կը լինի գայլուկին պէտքը, որմէ Անգլիա կ'արտադրէ իբր 25 հազար թօնօ, այսինքն Ֆրանսայի հնգապատիկը: Այս կլիմային շատ կը յարմարի վուշի և կանեփի մշակութիւնը: Ինչպէս եւրոպական ամեն երկիրներու, նոյնպէս Անգլիոյ մէջ արագ զարգացում ստացած է ճակնդեղի մշակութիւնը, որուն շնորհիւ շաքարն այլ ևս կորուսած է «գալթաբերք» երուցանկէն իր անունը: Եթախոտը չափաւոր արտադրութիւն ունի:

Արուեստական մշակութիւնք. — Գերմանիոյն. — Անգլիոյ կլիման Ֆրանսականէն աւելի խոնաւ ու ցուրտ լինելուն պատճառները ո՛չ ժամանակին կրնան հասուննալ և ո՛չ ալ կրնան համեղ ըլլալ: Անգլիացիք առաջին անգամ փորձած են ջերմանոցներու մէջ հասցնել խոշոր սէն, վարունգ, հազուագիւտ ծաղիկներ և, որոց յաջող անուսին չնպաստեր իրենց կլիման:

Էտիմպուրիի մէջ հաստատուած գերմանիացիներ (Պ. Թոմս. սընի ձեռքով) իրաւամբ ստացած են «աշխարհի առաջին այգեգործութեան հնարողի» տիտղոսը: Մասնաւոր խընամքներու շնորհիւ հոն կ'ընտան է մէկ քիլօկրամ ծան-

րութեամբ խաղողի սղիւյլ: Ուրիշ պարտիպան մը, Պ. Լէյտս, ունի երեք ջերմանոց, մասնաւորապէս մին ծաղիկներու յատկացուած, երկրորդը՝ որթատունկի և սոմաթէսի, և երրորդը ծաղիկներու և պտուղներու միանց ամայն: Այս հաստատութիւններէն ամենէն նշանաւորն են Լօնտօնի մօտ, Ռոշքօր եղբայր հիմնած կարգ մը ջերմանոցներ: 20 հէքթար տարածութեան մը վրայ:

Մարգագետինք. — Անտան-Բուլղարիոյ մշակած հողին 1/3ը, իսկ իրլանտայի 1/2ը յատկացուած է մարգագետնի: Իրլանտա իր զեղատեսիլ մարգագետիններուն կը պարտի «Չմրուխտի երկիր» վաղաբշական տիտղոսը: Սկոտիոյ մէջ, անասնարու ծութեան յատկացուած երկրին գրեթէ կէսը կը ծածկեն ընտանային արօտավայրերը:

Միացեալ-Թագաւորութիւնն է գերազանցապէս անասնարու ծութեան գասական երկիրը: Եւրոպայի մէջ ոչ մի երկիր՝ Անգլիոյ չափ՝ աշխատած է խոտոր խառնակութեամբ (par des croisement) բարւոքել ընտանի անասուններու զանազան տեսակները: Կղզիներուն նախկին եզր եզր է մարմնեղ Տիւրհամը, (Durham) նորֆօլքը, Սիւֆօլքը, Էյրի կովերը գնահատուած են իրենց կաթով: Բրիտանական կղզիներուն մէջ կը հաշուուի 6,500,000 եւ, նոյնչափ՝ 4,500,000 եւ:

Սպանիոյ մերինոսին ներմուծումը թիւ գարուն վերջերը ազնուացուցած է բնիկ տեսակին բրդին յատկութիւնը: Գնահատուած են մանաւանդ Շփօղի, Սոթհ-Տաունսի և Կոթսփլաի բրդերը: Անգլիոյ մէջ ոչխարներու թիւը նուազած է օտար բրդերու մրցակցութեանց հետեանքով: Հիմա ունի 33 500,000 ոչխոր:

Չիարուծութիւնն ալ նոյն աստիճանով զարգացած է, երբքի գաւառին մէջ կը բուծուին լաւագոյն յէրը կառքի իրլանտայի մէջ՝ որի յէր (Hunter): Բնիկ և արաբ ձիերու միաւորութեանէն ծնած է յէրըստի յէն: Ունի 2 միլիօնէն աւելի ձի:

Հանքային նարտարութիւն. — Եւրոպայի մէջ հանքային հարստութեան կողմանէ առաջին երկիրն է Անգլիա: 1898 ին հանեց 220 միլիոն թօնօ հանքաքար, ամբողջ աշխարհի հանքածուխի արտադրութեան մէկ երրորդը: Միացեալ - Նահանգները նոյն թիւին հանեցին 221 միլիոն թօնօ, Գերմանիա՝ 130 միլիոն թօնօ, Ֆրանսա՝ 34 միլիոն թօնօ, Պելճիքա՝ 22 միլիոն թօնօ, համագումար 659,190,000 թօնօ հանքածուխ: Անգլիոյ այս հանքերը կը գտնուին գլխաւորաբար Տիւրհամի կոմսութեան մէջ, Եորքշայրէն, Լանքշայրէն, Սթաֆօրշայրէն, Կլասկոյէն: Այս հրաշալի հարստութիւնը կ'ապահովէ Միացեալ - Թագաւորութեան առևտրական և ճարտարական գերակշռութիւնը: Այս հանքային վառելանիւթը, Անգլիոյ մէջ ունենալով իբրև միջին զին՝ 6, 7 ֆրանք, կը ներկայէ 1,300 միլիոն ֆրանքէն աւելի արժէք մը: Նախնական ժայռերէ ձևացած ամեն բարձրութեանց ներքև բաժնուած է հանքածուխը այսպէս են Կրամբեան լեռները, Բէնենեան շղթան և ուրիշ տեղեր: Մէկ մասը կ'արտածուի Նիւքասթի, Սքնարըլէնտի, Հըլլի և Լիվըփուլի նաւահանգիստներէն, Պրըմինկհըմ, Բարաիֆ, օժտուած են այս հարստութիւնով: Իրլանտա միայն ունի կէղահող (tourbe):

Երկաթի հանքն ալ շատ առատ է, կը գտնուի հանքածուխի վայրերուն մօտ, կը հանուի 15 միլիոն թօնօ, Ֆրանսականին հնգապատիկը, սակայն այս չափն ալ չբաւերով իր սպառումին Եւրոպայէն տարեկան կը ներածէ 3-4 միլիոն թօնօ:

Անգլիա հարուստ է նաև ուրիշ հանքերով. Գորնուայլներէն կը հանէ 9-10 հազար տոննայի հանքաքար, որ դարձեալ իրեն անբաւական ըլլալով կը գնէ Սպանիայէն, Չիլիէն և Թուրքիայէն: Կոպրը կ'ելլէ Եորքի դքսութենէն, (Նորթ հըմպըրլէնտ և Բէմպըրլէնտ) տարեկան 40-50 հազար թօնօ, ասով հանդերձ Անգլիա կրկին կը գնէ Սպանիայէն 70-80 հազար թօնօ կապար:

Տրվոնի և Գորնուայլի հանքէ արտադրութիւնն է 14 հազար թօնօ, 12 անգամ աւելի քան Սաքսոնիա և Պոհեմիա, անագ հայթայթող Եւրոպայի միակ երկիրները:

Կալէսի երկրէն և Գորնուայլէն կը հանէ 23 հազար թօնօ զինքէ հանածոյ, սրուն քառապատիկէն աւելի գըրսէն կը ներածէ:

Հեռաքրքրական է գիտնալ երկրագնախ հանքային արտադրութեանց մասին կարևոր գիտելիքներ:

Հանքային հարստութիւններ շահագործելու համար կը դործածուին 4,400,000 հանքագործ (Անգլիա՝ 875 հազար, Հնդկաստան՝ 700 հազար, Գերմանիա՝ 500 հազար, Ֆրանսա՝ 293 հազար, Միացեալ - Նահանգներ՝ 450 հազար բանուոր, Ռուսիա՝ 239 հազար, Աւստրո - Հունգարիա՝ 220 հազար, Հունգարիա՝ 220 հազար, Պելճիքա՝ 160 հազար, Ճարմոն՝ 120 հազար):

Անգլիա կը հանէ տարեկան 77,400,000 սթեռլինի հանք (64,120,000 սթեռլին հանքածուխ, 3,500,000 ի երկաթի հանածոյ եւ):

Միացեալ - Նահանգներ 144 միլիոն սթեռլինի, (41 միլիոն սթեռլին ածուխ, 24 միլիոն սթեռլին երկաթի հանածոյ, 900 հազար սթեռլին քարիւղ, 27 միլիոն սթեռլին և արծաթ) կամ որ նոյնն է:

Միացեալ - Նահանգներ	3,600,000,000	Ֆրանքի	հանք
Անգլիա	1,935,000,000	»	»
Գերմանիա	1,200,000,000	»	»
Ռուսիա	740,000,000	»	»
Ֆրանսա	640,000,000	»	»
Պելճիքա	300,000,000	»	»
Աւստրո - Հունգարիա	299,000,000	»	»
Թրանսիլալ	420,000,000	»	»
Աւստրալիա	450,000,000	»	»
Քանադա	250,000,000	»	»

Երկրագնաի բոլոր նահանգներու բաղդատական ցանկ.		
Պրնյ	441,869 թ.	1898 ին պննի արտագրու թիւնն
Ուի	419 »	Եղաւ 424,126 թ օնօ. (Միաց - Նա.
Կապու	789,983 »	հանգներ տուին 234,271 թ. Սպա.
Արձաթ	5,695 »	նիա՝ 53,325 թ. Ղարսն՝ 25,175 թ.
Աուգ	77,523 »	Զիլի՝ 24,850 թ. Գերմանիա՝ 20,085
Զինի	470,944 »	թ. Աւստրալիա՝ 18,000 թ. Մեքսի.
Քարե-շ	15,771,631 »	կա՝ 10,435 թ. Քանադա՝ 8,030 թ.
Աշ	11,353,173 »	Քափ՝ 7,060 թ օնօ
Երևաթ	35,000,000 »	Երևաթ՝ Միացեալը՝ 12 միլիօն թ.
Հանձի.	659,190,000 »	Անգլիա՝ 5 միլիօն, Սպանիա՝ 4 մի.
		լիօն, Գերմանիա՝ 3,500,000, Ֆրան.
		սա՝ 1,500,000 թ օնօ.

Մետաղագործական նարտարութիւն. — Չոլլի, երկաթի և պողպատի արտագրութեան համար Պըրմիսկհըմ, Շէֆֆիլտ, Մըթըր - Թիափիլ և Կլասիօ ունին մետաղագործական այնպիսի հաստատութիւններ որ գործունէութեամբ կը գերազանցեն ցամաքին ամենէն ընդարձակ գործանոցները, Էսսէնը և Քրէօզէնը:

Միացեալ - Թագաւորութիւնը, 1889 ին, կ'արտադրէր 8,456,000 թ օնօ ձոյլ, 2,290,000 թ օնօ երկաթ, 3,570,000 թ օնօ պողպատ:

Կը կրկնավաճառէ 40 առ 0%, այսինքն երկրագնաի պողպատին և երկաթին արտագրութեանց գրեթէ կէսը մինչ Գերմանիա հաղիւ կուտայ $\frac{13}{100}$, Ֆրանսա՝ $\frac{10}{100}$, Աւստրիա՝ $\frac{3}{100}$, նոյնչափ ալ Պելճիքա: Միայն Միացեալ - Նահանգները (տես իր կարգին) կը կազմեն ջախջախիչ մրցակցութիւն մը առ այս: Պղնձագործութեան համար աշխարհի ամենէն ընդարձակ գործարանները կը գրանուին Սուանսայի մէջ, ուրկէ կ'ելլէ տարեկան 59 հազար թ օնօ մետաղ, համապուճար 76 հազար թ օնօ արգիւն. քէն:

Նիուքասլ կ'արտադրէ իր շրջականերէն հանուած կապարի հանածոյէն 36 հազար թ օնօ մետաղ: Անգլիա գեռ կ'արտադրէ 19,500 թ օնօ զինկ:

Մետաղագործութեան մէջ Պըրմիսկհըմ չունի աշխարհի մէջ ոչ մէկ մրցակից, հօն կը շինեն ամեն տեսակ առարկաներ՝ ասեղ, թնդանօթ, թանկագին պղնձեղէններ, բևեռ, մետաղեայ գրիչ, շոգեմեքենաներ և: Շէֆֆիլտ կը շինէ մեքենաներ և գործիքներ, մանաւանդ ծանօթ է բոլոր աշխարհի իր դանակագործութիւնով: Պըրմիսկհըմ, Նիուքասլ, Մանչէսթըր, Կլասիօ կը շինեն երկաթուղիի նիւթեր, Ուոլփիլ և Նիուքասլ, ուր կը գտնուի Էլսուիքի ձուլարանը (Արմսթրօնի տան ստացուած և Քրուփի տան մրցակից) կը շինեն թնդանօթներ և գէնքեր, թէև նուազ արժէքաւոր քան Գերմանականն ու Ֆրանսականը:

Հանքածուխի հանուածը և կաւի առատութիւնը կեդրոնական կոմսութեանց մէջ, նպաստած են Խեյքսթըր - Զուէլան, յաիճապակի և Կոֆնարի ճարտարութեան: Անգլիա կ'արտադրէ 3,084,833 թ օնօ դժուարահալ կաւ, 20,886,548 ֆը. արժէքով:

Յախճապակիի առաջին գործարանը հաստատեց հոչակաւոր Wedgwood (վէճվուտ) Սթաֆորտշայրի մէջ, ԺԼ. դարուն վերջերը: Այժմ կը գնահատուին Սթօքի Լիտսի, և մանաւանդ Ուորքէսթըրի յախճապակիները:

Ալպին և Բե-բեռլ ամենէն կարևոր գործարանները կը գտնուին Նիուքասլի, Պըրմիսկհըմի, Սընտրէնտի և Լոնտոնի մէջ, թէև ասոնց հայելիները ստորին են Պոհեմիոյ, Վենետիկի և Ֆրանսայի արտադրածներէն:

Նաւային գործարանները կը հայթայթեն աշխարհի մեծ մասին նաւերը կլասիօվ, Նիուքասլ, Լոնտոն, Լիփփուլ, Հըլլ և ունին աշխարհի առաջին նաւարանները: Ասոնք կը շինեն տարեկան 7-800 նաւ 1 միլիօն թ օնօյէն աւելի տարողութեամբ:

Հիւսուսաճային նարտարութիւն. — Անգլիոյ մէջ անսահման կերպով զարգացած է Բաթթլիքի ճարտարութիւնը, որու մասին, այս երկիրը, անվիճելի գերակշռութիւն ունի:

1898 - 99 ին Անգլիա կը գործածէր 530 հազար գործաւոր, ունէր 600 հազարէն աւելի գործասեղան և 45,400,000 շամբրակ, որք կ'արտադրէին 2 երկիւիօն 500 միլիօն գերձան կամ հիւսուած, արտածութիւնը 40 տարի առաջ ունեցածին կրկինը, 2 երկիւիօն, և ասոր հակառակ գինը ուրիշ տեղերէ շատ աւելի աժան: Քալիֆոռնի (կառւ մը) ետրտան որ նախորդ գարուն սկիզբը կ'արժէր 4 ֆր. հիմա հազիւ կ'արժէ 25 սանթիմ:

1899 ին մինչ Անգլիա ունէր 45 միլիօն 400 հազար շամբրակ, իրրև ասոր հակալչիւ ամբողջ ցամաքային եւրոպա ունէր 32 միլիօն 500 հազար, Միացեալ - Նա. հանգներ՝ 18 միլիօն 100 հազար, Հնդկաստան՝ 4 միլիօն 728 հազար, Ճարոն՝ 1 միլիօն 358 հազար և Չին՝ 570 հազար շամբրակ:

Բամբակի քաղաքներու «թագուհին» է Մանչեսթըր, յետոյ կուզան, Կլասիօ՝ Սկովտիոյ մէջ, Պէլզոուօ՝ Իրլանտա. յի մէջ, և Նոթինգէմ:

Անգլիացի տարազագործք կ'սպառեն 721,538 թօնօ անզուտ բամբակ և կ'արտադրեն գնուած կտաւին կէսը, կը գործեն աւելի հասարակ տեսակներէն, զոր կ'արտածեն ամբողջ աշխարհի մէջ՝ և ջնջին գնով կտաւ՝ Ափրիկէի խափչիկներուն:

Բրդեղէնի կողմանէ ալ Անգլիա առաջնակարգ է: Նախանիւթը կ'ստանայ Աւստրալիայէն, Քալիֆէն, Բլագա. յէն, թէև աւելի ոչխար կը բուծէ քան եւրոպայի ո՛ր և է երկիր: Գործուած բրդեղէնի արժէքը կը հասնի 1 երկիւիօն 200 միլիօն ֆրանքի, որուն գրեթէ կէսը կ'արտածուի: Լիտտի, Պրատֆորգի, Լոնտոնի, Հալիֆաքսի և և այլոյ մէջ կը հաշուուի 1-800 գործարան ասուի և 7 միլիօն շամբրակ:

Ուէսթ - Բիտինկ գաւառը, Լիվերքուլի մօտաւորութեան շնորհիւ ունի բրդի մանարաններ, և կը գործածէ Անգլիոյ բրդի շամբրակներուն գրեթէ կէսը: Աշխարհի մէջ ասուեգործութեան առաջին կեդրոնն է Լիտտ,

Պրատֆորտ կը գործէ կէս-բուրգ կերպասներ. Հալիֆաքսի մասնագիտութիւնն է Դամասկեան կերպասներու և ասուեակներու շինութիւնը: Սկովտիոյ մէջ կլասիօ և Բէյոյէ կը շինեն մանաւանդ ցփոխներ:

Անգլիա ըստ համար ունի 1,330,000 շամբրակ և 108 հազար գործաւոր: Ասոր նախանիւթին $\frac{3}{4}$ ը Ռուսիա կը հայթայթէ: Պէլզոուս կը շինէ ամենէն աւելի վուչէ կտաւ և անոր մրցակիցներն են Մանչէսթըր և Լիտա:

Հնդկականէլի ճարտարութիւնը մեծ կարեւորութիւն ստացած է Անգլիոյ մէջ, անոր նախանիւթին աժնութեան պատճառով: Հնդկական այս թելին սպառումը կը հասնի 2 միլիօն քէնթալի (1 քէնթալ = 100 քիլոյի): Այս ճարտարութեան գլխաւոր կեդրոններն են Տընտի, Կլասիօ և Մանչէսթըր:

Լոնտոն, Մանչէսթըր, Նորուիչ կը գործեն աժանագին մետաքսեղէն: Անգլիա ասոր նախանիւթը կ'ստանայ մանաւանդ Չինաստանէ և Ճարոնէ:

Չամուսան անրուարութիւնք. — Երբեմն Անգլիա իր թղթին մեծ մասը Ֆրանսայէն կը գնէր, հիմա ունի 1000 գործարան թղթի (Ֆրանսայի կրկինը) որ կ'արտադրեն 200 հազար թօնօյէն աւելի թուղթ: Այս ճարտարութեան կեդրոնն է Պրիսթըր: Բացի յարգէ, ճերմակ փայտէ, կեղևներէ և գածէ, որ կը գործածուին թուղթի և հասարակ ստուարաթուղթի շինութեան մէջ, Անգլիացիք աւելի կը գնահատեն «այֆաճ», զոր կը հանեն Ալճերիէն և Թունուզէն:

Չուարամներու գլխաւոր կեդրոններն են Նաւահանգիտաները, սակայն Անգլիա շատ քիչ քան մէջ չորրորդէ, նախ կուզայ այս մասին Գերմանիա, յետոյ Աւստրիա, Ֆրանսա և ապա Անգլիա:

Գարնչուրի պատրաստութեան կողմանէ Անգլիա է աէրը Ֆրանսայի: Լոնտոն, Պրիսթըն, Տըպլին կը շինեն տարեկան միլիօնաւոր հէքթօլիտր և Բօւլըր: Անգլիոյ արտադրութիւնը կը համարուի 50 միլիօն հէքթօլիտր,

որ պետութեան կուտայ 220 միլիօնի եկամուտ մը, առանց հաշուելու քաղաքաբաժը (octroi) = բուխտաթիյէ) և մաքուր Ալքօլի, ուխքի, ճէնթորատուները հաստատուած են գլխաւորաբար մեծ քաղաքաց մէջ:

Չկնդրութեանը կուտայ Անգլիոյ տարեկան 200 միլիօն ֆր. շահ մը (Ֆրանսա 80-100): 27,151 նաւակներ 125 հազար նաւաստիներով կ'երթան բեռնական ծովերը՝ Կարիբիան, Եսպերի նաւահանգիստը՝ Մօրթ, Հիւսիսային ծովուն մէջ՝ Կարիբի, Բենիլ, Վահանայի և որսալու:

Պերնանդի ճարտարութիւն. — Արուեստագիտութեան վերածնունդն ալ մեծ գեր կը խաղայ Անգլիոյ մէջ, ուր հետզհետէ կ'աւելնան թիւը վարժարաններու, թանգարաններու, որպէս զի զարգացնեն ուսումը նկարչութեան և ճաշակի: Անգլիա հիւստիսի իր 4 հազար նախնական վարժարան նկարչութեան, խարիսխ ճարտարարուեստի կրթութեան, ուր կ'ուսանին իր 900 հազար ուսանողներ: Հաստատած է գործաւոր կամ աշակերտ երիտասարդներու համար 585 ճարտարարուեստի վարժարան, ուր կը յաճախեն 34 հազար ուսանող, նոյնքան ալ արուեստագիտական գոյէժներ: Այս վերջիններէն ամենէն աւելի ծանօթներն են Լօնտոնի Բազմարուեստեան վարժարանը, Պրէտֆօրտի Արուեստագիտական Գոյէժը և Պրըմինկհըմի վարժարանները, վերջինն ունի 3,527 ուսանող, և 58 ուսուցչապետ: Խորհրդարանը, իւրաքանչիւր տարի, այս վարժարաններուն կուտայ 4 միլիօն ֆրանք թոշակ:

Այս վարժարաններու լրացուցիչներն են թանգարանները: Անգլիոյ առաջին թանգարանն է « South - Kensington » ըր մասնաճիւղը, « Bettnal - Green » որ աշխարհի ամենէն հարուստ և ամենէն ընդարձակ թանգարանն է: Սա ունի երկրին արուեստագիտական բոլոր ճարտարութեանց ամենէն հիանալի օրինակները (modele), իր հաւաքածոներուն մէկ մասը շարունակ շրջաբերութեան մէջ են: Արուեստի և ճարտարութեան թանգարաններ հիմնուած են նաև ի Պրըմինկհըմ, Տըրպի, Շէֆֆիլտ,

Պրէտֆօրտ, Եօթինկըմ, Մանչէսթըր, Հալիֆաքս, և ուրիշ տեղեր, որք կը ծառայեն ճարտարարուեստի զարգացման:

Փոխադրութեան ճարտարութիւն. — 1826 էն վեր Անգլիա մեծ գործունէութիւն ցոյց տուաւ երկաթուղիներու շինութեան, այժմ ունի 40,750 քիլօմէթր երկաթուղի, չկայ հոն գիւղաքաղաք մը իսկ որ երկաթուղիով կցուած չըլլայ: Այս երկաթուղիները կը փոխադրեն 900 միլիօն ճամբարդ, 300 միլիօն թօնօ ապրանք, Ֆրանսայի քառապատիկը: Ֆրանսայի երկաթուղիներուն կեդրոնն է Փարիզ, ուսկէ կը մեկնին ամեն ուղղութեամբ գծեր, իսկ Բրիտանական կղզիներուն մէջ՝ Լօնտոն, Եւրոպայի վաճառականութեան առաջին հրապարակը, իրեն կը քաչէ երկաթապատ ճամբաներու ամենամեծ մասը, բայց Պրըմինկհըմ, Լիվրփուլ, Մանչէսթըր, Նիուքասլ և են մեկնակէտը մեծաթիւ երկաթուղիներու գծերուն:

Թայմը, Սէվէրն, Մըրսի, Բլայտ գետերն ալ մեծ ծառայութիւն կը մատուցանեն ներքին փոխադրութեանց. երկրին բնական յարմարութեամբ բացուած ջրանցները ունին 5,200 քիլմ: Սակայն Բրիտանական առուտուրին դերազանց միջոցն է ծովը, որ է միանգամայն սնոր մեծութեան գլխաւոր պատճառը: Ունի 20,750 նամակատուն և 3 երկիրիօն 261 միլիօն նամակ, քարտ, և 10,183 հեռագրատուն (1896) 448,573 քլմ. թեղ, 83,029,999 հեռագրալուր:

Անգլիոյ և ուրիշ մեծ ծովային պետութեանց առևտրական նաւերու բաղդատական ցանկը հետևեալն է.

	1898 ին	Մեծ - Շոգ ենաւ	Փոքր - նաւեր
Բրիտ. կայսրութիւն	12,149,000	տկուչի.	2,112,164 տկուչի.
Միաց. - Նահանգներ	1,454,966	»	1,295,305 »
Գերմանիա	2,159,919	»	490,114 »
Գաղղիա	1,052,193	»	298,369 »
Նորվեկիա	764,683	»	876,129 »
Իտալիա	540,349	»	443,306 »
Ռուսիա	469,496	»	251,405 »

Անգլիոյ այս հսկայ նաւատորմին կը ծառայեն 200 հազարէ աւելի նաւագնէր (35,735 նաւերու մէջ, գաղթավայրերու նաւերով միասին): Այս նաւերը կ'ընեն ամենէն աժան փոխադրութիւնները: Կան 47 կանոնաւոր շոգենաւային գծեր. 5՝ Հնդկաստանի և Սրեւելեան Ափիոյ յատկացուած, 1՝ Եգիպտոսի, 3՝ Արևմտեան Ափրիկէի, 2՝ Հարաւ. Ափրիկէի, 2՝ Արևելեան Ափրիկէի, 7՝ Հիւս. Ափրիկէի, 7՝ Կեդր. Ամերիկայի, և Արևմտեան Հնդկաստանի, 8՝ Հարաւ. Ամերիկայի, 11՝ Աւստրալիոյ և Բոյինն. դիոյ համար. Առևտրական ամենէն գեղեցիկ տորմիզները կը վերաբերին 50 մեծ ընկերութեանց:

Նաւային շարժումը կը հասնի 55,422,000 տակառաւ չափ մուտք, 54,462,000 տակառաւ չափ ելք՝ վաճառքի:

Արտաքին վաճառակաւորութիւն. — Անգլիոյ ընդհանուր վաճառակաւորութիւնը գրեթէ 20 երկիլիօն Փրանքի: Անգլիա վաճառքներու և նախանիթերու ձեւին տակ կ'ընդունի նշանաւոր գումարներու շահեր, որ կը գնահատուին 40 միլիարդ:

Ներածութիւն և արտածութիւն. — Մեծն-Բրիտանիա կը գնէ դրոշն սպառելի նիւթեր, գաղթային ուտելիքներ, և ճարտարարուեստի անհրաժեշտ նախանիթեր: Թէև հողը խիստ լաւ մշակուած, բայց վերջապէս չկրնար սնուցանել մէն մի քառ. քիլօմէթրի վրայ 120 հոգի պարունակող երկիր մը:

1899ին Անգլիոյ առուտուրը իր գաղթավայրերուն հետ:

	Ներածութիւն	Արտածութիւն
Հնդկաստան	38,807,000 սթեռլին	35,426,000 սթեռլին
Աւստրալիա	33,360,000 »	22,496,000 »
Քանաա	20,217,000 »	6,966,000 »
Հարաւ-Ափրիկէ	5,774,000 »	14,396,000 »
Անթիլեանք	1,491,000 »	1,920,000 »
Հոնկ-Քոնկ	884,000 »	2,690,000 »
Արևմտ. Ափրիկէ	2,430,000 »	2,297,000 »
Արևելեան »	510,000 »	801,000 »
Ուրիշ գաղթավայրք	3,197,000 »	3,731,000 »
Գումար ներած.	106,670,000 »	Արած. 87,723,000 »

1899ին Անգլիոյ առուտուրը օտար երկիրներու հետ:

	Ներածութիւն	Արտածութիւն
Ռուսիա	18,197,000 սթեռլին	11,755,000 սթեռլին
Շուէտ	10,061,000 »	4,715,000 »
Նորվեգիա	5,308,000 »	3,202,000 »
Տանըմարքա	12,438,000 »	3,964,000 »
Գերմանիա	30,041,000 »	25,838,000 »
Հոլանտա	30,477,000 »	9,531,000 »
Պելճերա	22,809,000 »	9,887,000 »
Յրանա	53,281,000 »	15,117,000 »
Փորթուգալ	3,177,000 »	3,107,000 »
Սպանիա	14,579,000 »	4,622,000 »
Իտալիա	3,628,000 »	6,974,000 »
Աւստրիա	1,317,000 »	2,046,000 »
Յունաստան	1,449,000 »	1,153,000 »
Թուրքիա	5,025,000 »	5,312,000 »
Եգիպտոս	10,917,000 »	5,068,000 »
Հնդկաստան	1,537,000 »	2,935,000 »
Չինաստան	3,079,000 »	7,035,000 »
Միաց. - Նահանգք	120,005,000 »	18,104,000 »
Չիլի	4,181,000 »	2,216,000 »
Պրագիլիա	3,956,000 »	5,424,000 »
Ուրուկուէյ	257,000 »	1,321,000 »
Արժանիթին	10,941,000 »	6,207,000 »
Մեքսիկա	521,000 »	1,968,000 »
Կեդր. Ամերիկա	580,000 »	616,000 »
Չանադանք	9,973,000 »	19,451,000 »
	378,229,000 »	176,937,000 »

Պուսիա, Հնդկաստան, Միացեալ - Նահանգներ և Թուրքիա կը լրացնեն Անգլիոյ արտադրութեան պակասորդը: Շուէտ և Սպանիա կուտան մասամբ երկաթի հանածո, Չիլի և Միացեալ - Նահանգներ՝ պղինձ: Սուետայի կղզիներ՝ անագ, Միացեալ - Նահանգներ, Հնդկաստան, Եգիպտոս՝ անագ-քար, Ռուսիա՝ լուսնի և կոնկ. Աւստրալիա, Քար և Լա-Բլադա՝ քար, Չին և Ճարոն՝ խաւի մարմար: Պրագիլիա,

Անթիլեանք, Մեքսիկա կը հայթայթեն գաղթային բերքեր, սուրճ, հնդկանուշ, յփսիեթ, լեղակ, հաթեմակ, շաքարեղեգ, իսկ Հնդկաստան և Չին կուտան՝ Բէջը. Միացեալ - Նահանգներ՝ դուստր, աղած փո, բուրդ ևն:

Անգլիա կ'արտածէ Մանչէսթըրէն՝ բամբակեղէն, լիտսիէ և Պրատֆօրտէն, Բրիտոնի, Շեֆֆիլտէն՝ կորոցեղէն, Պրոմինկհըմէն՝ զէմաներ, և բորձեղէն, Պրիսթըլէն՝ Բուրդ, Լոնտոնի, Քլայտի, կլասիօի նաւարաններէն՝ նուէր: Նոյնպէս շիւս, պղպաս, մանաթե դերձան, բուրդ, զուշ ևն:

Անգլիոյ գաղթային տարածութիւնը եւ անոնց հետ ունեցած առուստուրջ. — Մէկ խօսքով Անգլիացին ամեն տեղ է և ամեն տեղ գրեթէ առաջին գծին վրայ, որովհետեւ գիտեն ճիշտ զանազան երկիրներու տուրեւանի պայմաններուն, որովհետեւ յաճախ ուղղակի իրենք կը գործեն, առանց կարգ մը միջնորդներու օգնութեան, որովհետեւ կը յարմարին իրենց յաճախորդներուն սովորութեանց և ճաշակին և ըստ այնմ կը պատրաստեն արտածութեան սահմանուած ապրանքները:

Բրիտանական ճարտարարուեստին հրաշալի գործունէութեան արդիւնքն է այս անասման վաճառականութիւնը: Անգլիա համազումով կամ տեղ տեղ գինու գորութեամբ երկիրներ կցելով՝ հիմնած է ամենէն ընդարձակ գաղթային կայսրութիւնը: Իր ճարտարութեան համար մահու և կենաց խնդիր մ'է այս, որուն պէտք կ'ըզայ ապահովել շահավաճառ հրապարակներ, Հաշուուած է որ 3-400 միլիօն գնող պէտք է սպառելու համար միայն իր 5 երկիրիօն եարտա բամբակէ հիւսուածները: Հաղարաւոր գործաւորներ անօթութենէ պիտի կորսուէին, եթէ Անգլիա, չձայնէր գոնէ 4 միլիառի հիւսուածային և մետաղազործական արտադրութիւններ:

Մեծն - Բրիտանիա աշխարհի ամեն մասերուն մէջ ունի կարեւոր ստացուածներ և մանաւանդ ծովային ճամբորդութիւնը ապահովող կէտեր: Ամերիկայի ճամ-

բուն վրայ ունի Պերուականները՝ Անթիլեան կղզիները և Քանադա երթալու համար: Հնդկաստանի հին ճամբուն վրայ՝ Գափ, Ս. Հեղինէ, Ասանսիօն, Բօր-Լուի (Մօրիսի մէջ) և նոր ճամբուն վրայ՝ ձիպրալթար, Մալթա, Ատէն: Իտալիոյ ոյն - Արիելի ճամբան՝ Սէյլան, Սինկապուր, Չինու ծովին մէջ՝ Հոնկ-Քոնկ, որ ձիպրալթարի և Մալթայի պէս, հզօր ամբութիւն մը և առեւտրական մեծագոյն մթերանոց մ'է միանց ամայն:

Անգլիոյ միւս կալուածներն են Ասիոյ մէջ — Հնդկաստան, Հնդկա - Չինի մէկ մասը, որոց տարածութիւնն է 5,253,300 քառ. բիլլօմէթր, 296,854,000 բնակիչներով:

Ովկիանիոյ մէջ — Նոր Զելանդա, Նոր-կուէնլանդ մէկ մասը, Պորնէյ, Ֆիճի կղզիներ և մանաւանդ Աստրալիա, (1901 ին իր գերիշխանութեան ներքեւ ինքնօրէն հանրապետութիւն մ'եղաւ) անոնց տարածութիւնն է 10 միլիօն քառ. բիլլօմէթր և 6 միլիօն բնակիչ:

Ալիքիկէի մէջ — Նիկէրի, կուէնիայի, Հարաւային գաղութներու և արեւելեան եղբայրներու մէջ ընդարձակ աշխարհներ տարածութիւնն է 4 միլիօն քառ. բիլլօմէթր, բնակիչ 15 միլիօն:

Ամերիկայի մէջ — Քանադա, Նոր-Երկիր, Ճամայիքա, Անթիլեանց մէկ մասը, Անդլ. Հոնտուրասը և կույանա, տարածութիւն 9,500,000 քառ. բիլլօմէթր, բնակիչ 7 միլիօն:

Այսպէս Մայր-Երկրին և գաղթավայրերուն համագումար տարածութիւնն է 27,296,000 քառ. բիլլօմէթր, իսկ բազմամարդութիւնը՝ 364,250,000:

1899 ին Անգլիոյ և այս գաղթավայրերուն փոխանակութեան արժէքն եղաւ 194,330,000 սթերլին, այսինքն ընդհանուր տուրիստին 32% ը:

Առեւտրական հրապարակներ եւ նաւահանգիստք. — Անգլիոյ միջազգային առուստուրին ամենամեծ բաժինը նաւահանգիստներուն կը վերաբերի:

Լօսանոն. — (բն. 5 միլիօն) ունի 71 բիլլօմէթր ծովե-

զերք, վիթխարի կեդրոնն է Բրիտանական տուրևառին, իբր օգաձիգ ջրհան մի անասման կարողութեան, իրեն կը քաշէ համայն աշխարհի ամեն փոխանակելի արտադրութիւնները. կը մթերէ, թայմիչի երկայնութեամբը շինուած, իր նաւերէ սեցած աւազաններուն մէջ (docks), Արևելքի և Արևմուտքի բերքերը: Իրաւամբ ըսուած է թէ Լոնտոնն է երկրագնդին այն կէտը, ուսկից աւելի դիւրութեամբ մարդ կրնայ իր ազդեցութիւնը տարածել ամբողջ աշխարհի վրայ, իր հետագրածութեանով, և ընդ-ծովեայ պարաններով՝ իրը շնչերակ աշխարհի ամեն կողմեր ուղղած՝ եղած է սիրտը քաղաքակրթուած աշխարհին: Առաջին կարգին վրայ Լոնտոնի մրցակիցն է Նոր-Եսրք, յետոյ Լիվրպուլ և Համբուրկ:

1899 ին Լոնտոնի նաւահանգիստը ելեմուտ ըրին 46,099 նաւ 23,277,174 թօնօ տարողութեամբ, իրը 260 միլիօն սթեռլինի փոխանակութիւնով:

Լիվրպուլ — Անգլիոյ և աշխարհի երկրորդ նաւահանգիստը, աթոռ ծովային ամենակարող ընկերութեանց: Նաւային շարժումն է 12 միլիօն թօնօ. ներածութիւն 98 միլիօն սթեռլին, արտածութիւն բնիկ արտադրութեանց 97,500,000 և արտածութիւն օտար և գաղթային արտադրութեանց 15 միլիօն սթեռլինի: Բամբակի առուտուրին ամենակարեօր կեդրոնն է Լիվրպուլ:

Նիուքաս, Նաւային շարժում 5,481,458 թօնօ, կարտածէ գլխաւորաբար հանքածուխ և տարազազ սրժական նիւթեր:

Կլասկոյ. — Նաւային շարժում իրը 4 միլիօն թօնօ, հաշակաւոր է նաւարանը:

Հըքս. — Նաւային շարժում 2,530,435 թօնօ և Սքոթլենդի հիւսիսային ծովուն ամենէն կարեօր նաւահանգիստներն են հանքածուխի արտածութեան կողմանէ:

Պրիսթլիք սր թիւ գարուն Ամերիկայի յարաբերութեան կեդրոնն էր: Քոթլէք՝ յոյժ ծանօթ իր հանքածուխով, (1890 ին արտադրեց 8,815,210 թօնօ):

Սուիթհամթըքն որ միութեան կէտն է Ամերիկայի արևելեան եզերքը մեկնող թղթատար նաւերու:

Էտլիմպուրկ որ առուտուր կ'ընէ գլխաւորաբար Ռուսիոյ, Ամերիկայի, Հնդկաստանի և անգլիական ծովեզերեայ քաղաքներու հետ: Նաւային շարժումն է 10 հազար նաւ, 2,750,000 թօնօ տարողութեամբ, որմէ 8,714 նաւ 2,357,569 թօնօ անգլիական դրօշով:

Այս փոխանակութիւնները զի բութեամբ բեռնատրելու կամ պարպելու համար անգլիացիք ծախսած են հսկայ գումարներ՝ շինելով անասման աւազաններ, ծածկուած հրապարակներ, ջրաշարժ, շոգեշարժ շարժական կամ անշարժ մեքենական բեռնարարձեր (grue):

Վարկային հաստատութիւնք. — Աշխարհի ամենէն հարուստ երկիրն է Անգլիա, և Լոնտոնն՝ ելմտական առաջին հրապարակը, հոն կը միջնորդուին փոխառութեանց մեծ մասը և հոն կը հիմնուին ծովային, ճարտարական և առևտրական ամենամեծ ձեռնարկութիւնները:

1694 ին հիմնուած է «Անգլիական պանքան» որ առաջին անգամ՝ Եւրոպայի մէջ չէր թղթեր չըջարեութեան հանած է:

1695 ին «Սկոթլանդ պանքան», 1738 ին՝ «Իրլանտայի պանքան», 1810 ին «Սկոթլանդ առևտրական պանքան». վաճառականութիւնն ու ճարտարութիւնը իրենց զարգացման մեծ մասը այս հաստատութեանց կը պարտին: Սկոթլանդ մէջ կան 3 հազարէ աւելի «մտնաւոր պանքան»ներ միմեանց համերաշխ, սասնք են միացեալ դրամադուլներու պանքաները: Այլ մէկ երկրի մէջ այնքան զարգացած են պանքանները՝ որքան Անգլիոյ մէջ: Clearing-houseը Լոնտոնի՝ աշխարհի վարկային հաստատութեանց մէջ մէկ հատիկ է, որուն տարեկան հաշիւներու գործառնութեանց կոյտը կը հաշուուին 140 միլիառ վարկային հաստատութեանց թիւը հազարներով է Անգլիոյ մէջ:

Պրակք, կշիռք եւ չափք Անգլիոյ

Ոսկի	}	Սթեռլին սակի կամ կինէ	Փր. 25, 30
		1/2 » » սու վրոէն	12, 56
Արծաթ	}	Քրաուն (couronne)	Փր. 6, 32
		1/2 » »	2, 80
		Չլլորին	2, 25
		Շիլլին (shilling)	1, 25
		1/2 շիլլին	0, 56
		4 բէնս (pence)	0, 38
		3 »	0, 28
Մսկերէւոյթի	}	1 րէննի (penny)	0, 10
		1 րէննի (penny)	0, 10
Չափեր	}	Ֆառակա սի կանգն. (yard carré) մ.	0, 8361
		էքքր (acre)	Տէքթր. 0. 4017
Երկայնութեան	}	Ինչ (inch, բթամաս' (pouce)	ս. 2, 54
		Ֆուտ (foot = սա.բ)	սս. 3, 0479
		Եարտա (yard)	մ. 0, 9144
		Ֆառմ (fathom = 2 yards)	մ. 1, 1288
		Բըպ կամ բըրչ (pob ou perch)	մ. 5, 0291
		Միլոն (mille)	մ. 1609, 3149
Տարողութեան	}	Պըշըլ (bushel)	Լ. 36, 34
		Բինդ (pint)	Լ. 0, 5679
		Քուարդ (quart)	Լ. 1, 1359
		Կալոն (gallon)	Լ. 4, 5435
		Քիք (pech = 2 կալոնի)	Լ. 9, 0869
		Քուարթըր (quarter)	ՏԼ. 2, 9078
Կշիւք	}	Բաունա (լիտր)	ՔԼ. 0, 453
		Օունս (ounce = once)	կր. 28, 338
		Քուարթըր	ՔԼ. 12, 695
		Թոն (ton)	ՔԼ. 1015, 649

ԳԼՈՒԻ Բ

ՊԵԼՃԻՔԱ

ՊԵԼՃԻՔԱՅԻ տարածութիւնն է 29,457 քառ. քիլոմէթր բնակիչ 6,586 600, այսինք 1 քառ. քիլոմէթր առ 224 հոգի:

Մշակութիւնը — Պելճիքայի ամեն կողմերը հաւասարապէս բեղմնաւոր չեն, հիւսիսը կը ծածկեն տափաստաններ, անտառներ և ճահիճներ: Քոնտրոլը տխուր ու ցուրտ է, Արտէն՝ ծայրատուած անտառներէ և ճահիճներէ, աւելի անտառաբուծութեան յարմար է: Ծովեզերքը խիստ յարմար է մշակութեան: Ֆլանտրիա և Հեսպէ ամենէն հարուստ և մշակուած երկրագործական գաւառներն են:

Պելճիքայի 2,945,715 հէքթար մակերեսովէն մշակուած է 67, 34 առ 100, անտառներէ ծածկուած է 16, 61 առ 100, իսկ անմշակ կամ գետերէ ու ճահիճներէ ծածկուած են 7, 88 մասերը:

Մշակուած գետնին քառորդը յատկացուած է ցորենի մշակութեան 275 հազար հէքթար, այս գետինը կ'արտադրէ 6-7 միլիոն հէքթոլիտր շաճար (277,640 հէքթար) կը յաջողի Ֆլանտրիոյ աւազուտ հողին մէջ, Վարսի (249,486 հէքթար) կը մշակուի աւելի Արտէնի մէջ: Գարնի դաշտավայրերու մէջ:

Գետնախնձորը (199,357 հէքթար) մշակութեան մէջ մեծ տեղ կը բռնէ իր 22 միլիոն հէքթոլիտր բերքով, որ շատ մեծ թիւ մ'է այս երկրին համար՝ 17 անգամ փոքր Ֆրանսայէն:

Եւրոպայի մէջ ոչ մէկ երկիր տուած է այնքան ընդարձակ միջոց՝ մեծ քաղաքներու մօտ՝ բանջարեղէններու, ծաղիկներու և հազուագիւտ տուեցիներու մշակութեան՝ որքան Պելճիքա: Կանտի, Պրուսէլի, Անվերսի

մտերը հիմնու ամ են ծաղկամշակ ընկերակցութիւններ, որոնք ջերմանոյններով հիանալիօրէն մշակած են ձմեռ. նային պարտէզներ եւ:

Ճարտարական տուններ ևւ. արուեստական մշակութիւնք. — Շաքարի շահագործ (32,627 հեքթար) աւելի մշակուած է բարերեր հողերու մէջ, Հայնօ, Պրապան և Լիէժ: Կը մշակուի նաև հայտէ: Առուտուրի մէջ յոյժ գնահատուած են շաքար և կակոն, որք կ'արտադրեն 15-20 հազար քուղ (filasse) Պելճ երկրագործք ծաղկեցուցած են մանուանգ գործնական և արուեստագիտական մշակութիւնք՝ Անգլիոյ հաւասար: Առևտրական արագութեան տեսակէտով ալ Պելճիքա կը հաւասարի Անգլիոյ: Արուեստական մշակութեանց մէջ, ուր ապակին ու ածուխը արևուն տեղը կը բռնեն, կը քաղուին մեծ քանակութեամբ խաղող, դեղձ, աօմաթէս, ելակ, սեխ, վարունգ, անանիս, պանան և հազուագիւտ տունկեր:

Արտադարութիւն. — Ասոր համար ալ Պելճիքա յարմար երկիր մ'է. Ֆլանարիա, Հայնօ, Պրապան ունին բնական և արուեստական հիանալի մարգագետիններ: Կը սնուցանեն 1,382,815 եւ և կոշ, 646,375 խոշ, 565,400 ոչխոր, 272,000 ձէ, որոնք բազդատմամբ երկրին ստուար թիւ մը կը կազմեն: Մէկ խօսքով, Պելճիքացիք, հակառակ իրենց աննպատակ հողին ու կլիմային, ճարտար և աշխոյժ մշակներ են:

Համապայլուն ճարտարութիւն. — Պելճիքա կը հանէ իր հանքերէն 20 266,000 թօնօ հանածո-ի, որուն 15 միլիօնը իր մէջ կ'սպառէ, իսկ մնացածը կ'արտածէ գլխաւորաբար Ֆրանսա, ուր հանքածուխը 1/3 աւելի սուղ է:

Պելճիքա կը ներածէ տարեկան մինչև 1,800,000 թօնօ երկաթի հանածոյ, գլխաւորապէս Լուքսեմբուրգի գ.քու. թեանէն:

Ի Մօրէսնէթ, Հին-Լեոներուն մէջ, կը հանուի Եւրոպայի ամենէն հարուստ մէկ հանքէն ղնիկ, տարեկան 80 հազար թօնօ ղնիկ հանածոյ: Վերվիէի և Լիէժի

մտէն՝ պէշէ հանածոյ (1,500 թ.) և կապար (8 հազար թ.): Պելճիքա ունի հէլիոս (քարետախտակի համար) և ճարտարին:

Մետաղագործական ճարտարութիւն. — Երկաթի և ձոյլի արտադրութեան կողմանէ Պելճիքա, Եւրոպայի մէջ, Անգլիայէ, Գերմանիայէ և Ֆրանսայէ վերջը կուգայ, իսկ իր մակերևոյթին նկատմամբ՝ առաջինն է: Կրնայ իր հանքածուխին շնորհիւ, Անգլիոյ գնով ծախել երկաթ և ձոյլ: Պելճիական պողպատը կը ծախուի շատ ածան: 1890 ին արտադրեց 787,000 թօնօ ձոյլ, 514,000 թօնօ երկաթ և 201,000 թօնօ պողպատ որ գնահատուած է:

Մեքենական ճարտարարուեստն ալ խիստ ծաղկած է Պելճիքայի մէջ: Լիէժ մեծ համարու ունի ղնածործութեան մէջ. Շարլրուա, Մօնս և Լիէժ կը շինեն Ռեքոն-հորձիւններ, մետաղներու աշխատութեան համար, կանա՝ Ռեքոններ՝ մանարանի և հիւսուածարանի: Տիւսան՝ կախայնօթներ, Լիէժ, Նամիւր և Շարլրուա՝ մանր երկաթեղէններ, Պրիւսէլի, Լիէժի, Սըրէնկի, Վերվիէի գործանոյնները կը շինեն երկաթուղիի շէշեր: Պելճիքա մեծ քանակութեամբ ձողեր, վահաններ, վայրաշարժեր կ'արտածէ Եւրոպայի և Ամերիկայի մէջ: Նամիւր, Մօնս, կանա մեծ կարևորութիւն ունին քիմիական արտադրութեանց և հանքածուխէն հանուած ներկերու ճարտարարուեստով: Պելճիքա ունի գործարաններ պպիկէ, հայելի, յախճապիկէ եւ:

Հլխաւորապէս ևւ. այլ ճարտարութիւնք. — Հիւսուածային ճարտարութիւնը յառաջացած է մանուանգ արևմտեան նահանգներուն մէջ: Բամբակէ կտաւի և մանածի համար կը գործածեն 750 հազար շամբրակ: Բաժնիկ ճարտարութեան առաջին կեդրոնն է կանա, յետոյ կուգան Սէն-Նիքօլա, Գուրթրէյ և Թուրինէյ: Պելճ գործարանատեարք կը գործեն՝ Անգլիոյ և Գերմանիոյ օրինակին հետեւելով՝ ածան կտաւ, բայց տեսքով՝ գեղեցիկ: Ամերիկէի խափշիկներուն համար:

Պեւճիքա, բազդատմամբ իր բազմամարդութեան, Ֆրանսայի կրկինէն աւելի բարձր կը գործէ: Միջին դարէն վեր յոյժ ծաղկած ճարտարութիւն մ'էր այս, այն ատեն ներ Անգլիա Ֆլամաններէն կը հայթայթէր իր բուրդը, զոր այսօր կ'առնէ Ամերիկայէն, Քարէն և Աւստրալիայէն: Անվերս ունի ստալէ գործարաններ, Լիէժ բուրդի հասարակ հիւսուածներ կը շինէ. Թուրնէյ պահած է Եւրոպայի ամենէն հին բարձր գործարանները: Պեւճիքայի ընդհանուր բրդեղէնի արտադրութեանց արժէքը կը հասնի 130 միլիօն ֆրանքի:

Վուշի ճարտարարութեամբ մին Ֆլանտրիոյ ամենէն հիններէն, կը գործածէ 320 հազար շամբրակ և 5 հազար գործասեղան: Պեւճիքայի արտադրութեան կերպը կը գերազանցեն մանաւանդ նորր կտաւներու շինութեան մէջ: Գարձեալ կանտ է վուշի ճարտարութեան կեդրոնը: Քուրթէյ, Պրիւժ, Պրիւսէլ կը շինեն հասարակ և բարակ կտաւներ (batiste): Ասեղնագործութեամբ կը պարագլին իր 150 հազար գործաւորութիւններ:

Գարնջրատուները անթիւ են երկրի մէջ մէջ՝ ուր ազգային ըմպելիին է բարձրը: Պեւճիքա այս ըմպելիին կ'արտադրէ 7 միլիօն հէքթոյիտար, գրեթէ Ֆրանսայի չափ նշանաւոր է Լուվէնի գարնջուրը:

Անվերս ունի թորատուներ ստալէ, գետնախնձորէ, ճակնդեղէ և ուրիշ հատապտուղներէ հանուած: կը զտէ նաև շաքարեղէն, Հայնօ և Պրապան ունին շաքարի գործարաններ և զտարաններ: Շաքարի արտադրութիւնն է իր 40 միլիօն թօնօ:

Հանքերու, մետաղներու և կտաւեղէններու համար կ'աշխատին 900 հազար գործաւոր:

Ճարտարապետութեանց գիտութեան համար ոչ մի երկիր, նոյն իսկ Անգլիա չէ կազմակերպուած այնքան սրբան Պեւճիքա: Երկրամեջիներու երկայնութիւնն է 5,777 քիլօմէթր, բազդատմամբ ուրիշ երկիրներու՝ եռապատիկ երկայն, որոնք իրենց աման գնով

կը փոխադրեն շրջակայ սահմանակից երկիրներու ապրանքները: կը փոխադրեն 64 միլիօն ճամբորդ և 37 միլիօն թօնօ ապրանք: Այս մասին Պեւճիքա, Եւրոպայի մէջ, Անգլիոյ հետ առաջին կարգին վրայ կը գտնուի:

Նաւարկելի է Էսքօ գետը, նոյնպէս՝ Մէօզ: 860 քիլօմէթր ջրանցք կը միացնէ գետերը, որոնք կը կազմեն 2 հազար քիլօմէթր նաւարկելի գիծ և որով Պեւճիքա այս մասին ալ կրնայ առաջնակարգ համարուիլ: Անվերս է կէտը՝ ուր կը յանգին ջրանցներն ու երկաթուղիները:

Արտաքին տուրևատ. — 1890/ին Պեւճիքայի ներածութիւնն էր 1,835,351,000 ֆր. իսկ արտածութիւնը՝ 1,289,312,000 ֆր. համագումար 3,124,668,000 ֆրանք: Պեւճիքա ևս Անգլիոյ պէս, իր առևտրական յաջողութիւնը և առաջնութիւնը կը պարտի օտար ազգերու հետ ունեցած ազատ վաճառականութեան: Մաքսային որէնքները խիստ չափաւոր են: Ներածելի նիւթերն են սրճիկ, դաւա, պարսիկ, բարձր, բնի և օղէ իր 500 միլիօն ֆրանքի:

Պեւճիքա իր ճարտարարութեան համար կ'առնէ դրսէն նախանիւթեր. բամբակ, բարձր, լուշ, կանեփ, անգլիական, փայտ, կաշի, հանածոյ և:

կ'արտածէ մասնաւորապէս երկաթեղէններ, սղոցուած և տաշուած բարձր, հայելի սպիտակէն, զինի, հանածոյի, բամբակէ, բրդէ, վուշէ և կանեփէ կտաւ և:

Պեւճիքայի առաջին յաճախորդն է Ֆրանսա, իր ըրած 800 միլիօն ֆրանքի առուտութեամբ: Յետոյ կու գան Հոլանտացիք՝ 600 միլիօն ֆր. Անգլիա՝ 500 միլիօն, Գերմանիա՝ 370 միլիօն ֆր. Թուրքիա՝ 70 միլիօն ֆր. Միացեալ Նահանգներ՝ 200 միլիօն ֆր. Հարաւային Ամերիկայի Հանրապետութիւններն ալ ունին կարևոր բաժին մը այս փոխանակութեանց մէջ: Պեւճիքայի և Քոնկոյի տուրևատը մեծ կարևորութիւն կ'ստանայ տարուէ տարի: 1896 ի փոխանակութիւնն եղաւ 28 միլիօն ֆրանք:

Պելճիքայի թրուշէն վաճառականութիւնը կը հասնի 1,500 միլիօն ֆրանքի:

Պելճիքա, մէկ խօսքով, իբր ճարտարարուեստ և առևտրական երկիր, Եւրպայի մէջ, առաջին տեղը կը գրաւէ, շնորհիւ Պրուսիոյ առևտրական թանգարանին հանձարեղ կազմակերպութեան:

Նառանգախառք. — Պելճիքայի ծովային վաճառականութիւնը գրաւած են Անգլիացիք և Հոլանտացիք, որովհետև այդ մասին շատ տեղաւոր են Պելճիք, հազիւ ունին 62 նաւ 88 հաշար թօնօ տարողութեամբ:

Անվերսի միջոցաւ կը կատարուի Պելճիքայի արտաքին վաճառականութեան 7/8 մասը: 1890 ին այս նաւահանգիստը ելնմուտըրին 9072 նաւ և մաս մըն ալ առագաստանաւ 9,038,286 տակառաչափ: Անգլ. գրօշով՝ 2,592,874 թ. Գերմ.՝ 765,711 թ. Պելճիական՝ 488,644 թ. Ֆրանսական 143,854 թօնօ: Անվերսի նաւահանգիստին ընդհանուր նաւային շարժումն է 14,608,767 թօնօ:

Օսթլենտ՝ երկրորդական և փոքր նաւահանգիստ մ'է:

Դրամական, կշիտ և հալի. — Եւրոպայի ամենէն հարուստ երկիրներէն մէկն է Պելճիքա, գրամագլուխները՝ առատ և արծաթը՝ աժան: Բայց դրամատէրերը տեղի տուած են օտար ծովային, արուեստական և առևտրական ձեռնարկութեանց:

Ելնմական գլխաւոր հաստատութիւններն են «Ազգ. Պանքա»ն և «Անվերսի Պանքա»ն, որոնք գաւառներու մէջ հաստատած են բազմաթիւ մասնաճիւղեր: Կան նաև ժողովրդական և երկրաց որժական պանքաներ:

Պելճիքա ընդունած է Ֆրանսայի մէթրական և դրամական միութիւնները:

Ունի 893 նամակատուն, 454 միլիօն նամակ և՛. 35,399 քիլոմէթր թեղ հեռագրական. և 33,440 քլմ. թեղ հեռախօսութեան:

Գ Լ ՈՒ Ի Գ

Σ Ν Ι Λ Ο Ξ Σ Ο

Σ Ν Ι Λ Ο Ξ Σ Ο ունի 33 հազար քառ. քիլոմէթր տարածութիւն և 5 միլիօն բնակիչ: Մշակելի գետնին տարածութիւնն է 859 հազար հէքթար, որուն 176 հաշարը Հոլանտացիք ստացեր են յաճառ աշխատութեամբ ցամքեցնելով ճահիճներ, լիճեր և յուսթի դաշտերու վերածելով դանսնր:

Արմտիք և Բարտարական տունկեր. — Հարաւային բարեբեր գաւառներու մէջ կը մշակուի ցորեն որ կուտայ իբր 2 միլիօն հէքթարի տար: Հաճար, Վարսի, սև ցորեն (sarrazin) ընդամեն 13 միլիօն հէքթար արմտիք, որ անբաւական է երկրին: Յորենին պակասը կը լրացնէ ֆեռտիլիզատը, որ կը մշակուի աւազուտ գաւառներու մէջ և կ'արտադրէ 15-18 միլիօն հէքթարի տար:

Ճարտարական մշակութեանց մէջ կարևոր են Յիստիսը և Կանճրալը (colza). Երախտոտի ամենէն գեղեցիկ տեղաբնութիւնը կը տարածուի Ութթէթի և Կէլտրի գաւառներուն մէջ: Իւզային աուսկեր և մանսանդ կանճրակը արտածելի են: Պարտիզոպանութիւնը և ծաղկամշակութիւնը կատարելութեան բարձրագոյն աստիճանին հասուցած են:

Անասնաբուճութիւն. — Մթնալորային և հողին խոնավութիւնը կը նպաստեն մարգագետիններու ընդարձակումին, որ կը հաշուուի 1,300,000 հէքթար: այս մարգերը գրեթէ բնական են: Ֆրիզ և Կրօնենի գաւառները ունին լաւագոյն արօտները: Նշանաւոր են Հոլանտայի Կոլերը և Ելէրը (1,500,000): Հոլանտայի կովերը՝ իբրև կաթնոտ՝ յոյժ գնահատուած են Եւրոպայի մէջ: Չէ՛ 2,736,000, ոչխար՝ 7,780,000, Իսկ 9,342,000 կը հաշուուին:

Մշակութեան զարգացում. — Մշակական շահագործու.

թեան տեսակէտով՝ Եւրոպայի մէջ՝ քիչ երկիրներ կրնան բաղդատու թեան դրուել նէէրլանտի հետ, ուր՝ երկրագործները՝ իրենց ագարակներուն մէջ կը դործածեն գիւղատնտեսական բոլոր կատարելագործուած գործիքները, գերազանց ճարտարութեամբ խոնար գետիններու տակէն խողովակներ գնելով կը ցամքեցնեն (drainer), անրնակելի ճահիճները կ'օրգասաւորեն, որոցմէ կը քաղեն՝ իբր պարարտարուտ՝ ջրային աունկեր, որք ուրիշ տեղեր անկարելի կը նկատուին, կը ժողվեն ջուրին տիգմերը և դայն փոխադրելով ճահիճներու մէջ՝ արուեստական մարգագետիններ կը պատրաստեն: Այս քրտնաջան և արդիւնաւէտ աշխատութեան հետ չեն թերանար յառաջգիմելու նաև քաղաքական կեանքին մէջ:

Ճարտարարուեստ. — Հոլանտա հանքածուխէ և ուրիշ հանքային հարուստ թեանէ զուրկ ըլլալով մեծ ճարտարարուեստ երկիր մը չէ: Սակայն ունի սառնիչ գործարաններ ի թիւղուրի, Լէյտ, և Բաթալի ճանարաններ ի թուանդ, սառաստիկուսի և պարաններ, գործարաններ, Պրտպանի և Հոլանտի մէջ:

Ամսթերտամ և Լահէ ունին գործանոցներ՝ երկաթուղւոյ նիւթերու շինութեան համար, ճանարաններ՝ նաև եր շինելու, ուր կը բանին Շուէտի և Գերմանիոյ առաջններով: Ամսթերտամ ունի 250 գործանոց՝ ագամանդ, յղկելու համար:

Հոլանտա նշանաւոր է երկրագործական բերքերը փոխակերպելու ճարտարութեամբ, ինչպէս են հեղաներու գործարանները (curacao = նարնջօղի) և գտարանները՝ Շէյտէմի և Ռոթթերտամի մէջ, ուր կը պատրաստեն ընտիր գէօղէ (genievre): Ռոթթերտամի և Ամսթերտամի գործարանները՝ ձիախոտի և սիկաբէ, նաև պաններ՝ որուն արտածութիւնը կը հասնի 30 միլիօն ֆրանքի կարգը. խոտիորդարանները խողովակի և կղմուրէ գործարանները, Բլադգործարանները՝ Մայսթրիսթի, Ամսթերտամի և Արելտօրնի, վերջապէս Կասեի, անյրուի, Բեանի պատրաստութիւնը մետաղեայ

տուփերու մէջ խիտ նշանաւոր են: 4,300 էն աւելի նաւակներ դրաղած են տառելի ձկնորսութեան, իսկ իռլանտայի եզերքները՝ Մօրիսի և ձողածուկի (cabillaud):

Ճամբաներ. — Հոլանտայի նաւարկելի գետերն են 1609 քիլմ. և ջրանցները՝ 3,218 քիլոմէթր: Երկաթուղիներու երկայնութիւնն է 2,955 քմ. որուն շինութեան որքան գծուարին ըլլալը յայտնի կ'ըլլայ, երբ նկատի առնուի երկիրը՝ այնքան գետերով, ջրանցներով ու ճահիճներով ծածկուած: Փոխադրութիւնք աւելի նաւարկութեամբ տեղի կ'ունենան քան երկաթուղիներով: Նաև երբ կը փոխադրեն 7 միլիօն թօնօ վաճառք և 17 միլիօն ճամբորդ:

Հոլանտա ունի 1,292 նամակատուն, 283 միլիօն նամակ եւ, 20,511 քմ. հեռագրութել:

Արտաքին առևտուր և գաղթախոյրք. — Հոլանտայի արտաքին առևտուրը գերազանց է Պելճիքայինէն. կը հաշուուի 5 երկիրիօն ֆրանք: Հոլանտա է բնական հրապարակը կեդրոնական և Արեւմտեան Գերմանիոյ արտադրութեանց, Հիւսիսի վաճառքները Հոլանտայի ճամբով կ'երթան հարաւային Եւրոպա:

Հոլանտա Մալեզիոյ և Ամերիկայի մէջ հիմնած է գաղթային կայսրութիւն մը՝ բաղմամարդութեամբ հաւասար ֆրանսականին: Սուրտայի Արշիպիղագոսին ստացուածները՝ ճալա, Մատիւրա, Սուամթրա, Պանքա, Պելլիթօն, Պորնէյ (մէկ մասը) նոր-Կուէնիոյ մէկ մասը, Չէլէպեանք և այլն ունին 1,915,416 քառ. քմ. տարածութիւն և 34,079,000 բնակիչ: Ունի նաև քանի մը կղզիներ ֆոքր Անթիլեանց մէջ: Քիւրասաօ, Պօնէր, Արիւպա, մէկ մասը Սէն-Մարթէնի, Ս. Էւսթակէի, Սապայի և Կույանայի, 130,230 քառ. քիլոմէթր տարածութեամբ և 126,500 բնակիչով:

Ներածում և արտածում. — Հոլանտայի ներածութիւնը 300 միլիօնէ աւելի է արտածութեան: Այս բաղմամարդ երկիրը կը գնէ օտարներէն սրճիկ, գինի, օղի,

պրոսպեկտ . . . 700 միլիօն ֆր. արժէքով: Հանաճախ, Վերադ-
նէր, արալ, հաղնաբեր, որոյ խիստ կարօտ է, կը ներկայեն
500 միլիօնի արժէք մը, եւ:

Արտածութիւններն են՝ անդրական նիւթեր, դասար, կարճ
պաներ, զոր կը գնեն Անգլիայի, Գերմանիայի և Պելժ. ք.
հեղուկներ, բնօղի, ծխախոտ, կրակ՝ գաղթականներու համար եւ:

Գերմանիոյ հետ ունեցած փոխանակութիւնը կը
հասնի 2,300,000.000 ֆ:

Անգլիոյ կը ծախէ 600 միլիօնի, կը գնէ 625 միլիօնի:

Պելժիքայի հետ կը փոխանակէ 665 միլիօն ֆրանքի
վաճառք:

Ռուսիա կը ծախէ մանաւանդ արմախիք, ատաղձ և
նախանիւթեր՝ 236.670,000 ֆրանքի, կը գնէ 10 միլիօնի:

Ֆրանսոյի փոխանակութիւնը կը հասնի 60 միլիօն
ֆրանքի:

Եւրոպայէն դուրս Հոլանտայի լաւագոյն յաճախորդ-
ներն են Մալեզացիք, որք Մայր-Երկրէն կը գնեն 300
միլիօն ֆր. արժէքով տարազազ սրճական արտադրու-
թիւններ և կը ծախեն իրր փոխանակութիւն բրնձ, համ-
ժուկներ, սուրճ, շաւոր, անտի, ներքի փայտէր եւ 115 միլիօն ֆր. ի:

Ամերիկայի փոխանակութիւնը կը հասնի 150 միլիօն
ֆրանքի:

Թրանսկազ առուտորը կը հասնի 2,500.000 թօնոյի,
Եւրոպայի ամենէն չափաւոր մաքսային օրէնքներով,
Զուիցերիոյ, Անգլիոյ և Պելժիքայի հետ: Ներածուած
տարազազ սրճական արտադրութեանց համար 5 առ 100
իսկ նախնական նիւթերը աւանց մաքսի կը ներմուծուին:

Ծովային առուտուր և նաւահանգիստք. — Հոլանտա
ժէ. դարուն՝ իր նաւերու շատութեամբ՝ առաջինն էր
ծովային վաճառականութեան մէջ, հիմա ալ վեցերորդ
կարգին վրայ է. Անգլիոյ, Շ. - Նորվեգիի, Գերմանիոյ,
Ֆրանսոյի, Իտալիոյ անմիջապէս վերջն եկած կարգին
վրայ Ռուսի 612 նաւ, (որուն 172ը շոգենաւ) 680 հազար
թօնօ տարողութեամբ:

Նաւահանգիստներուն մէջ նաւային շարժումը չոր-
րորդ կարգին վրայ է: Մուտքն է 11,053 նաւ (9597 շոգե-
նաւ), ելքն է 10.676 նաւ (9,271 շոգենաւ) ընդամեն
15.256.000 թօնօ տարողութեամբ որուն 5 միլիօնը Հո-
լանտական գրօշով:

Ամսթերաւմ նաւահանգիստը որ ուղղակի Հիւսիս-
ային ծովուն հետ կը հաղորդակցի այսօր ջրանցներու
չնորհիւ, ունի միայն 6 մէթր խորութիւն, որով չկրնար
մեծ նաւեր ընդունիլ: Այս նաւահանգիստը յարաբե-
րութեան մէջ է մանաւանդ Սուետի Արշիպելագոսին և
Քրիտանական կղզիներուն, Գերմանիոյ և արիշներու
հետ: Մեծ շտեմարան մ'է գաղթային սուրճին, 1893 ին
եղևմուտը բաժն է 3.415 նաւեր 8.060.000 թօնօ տարողու-
թեամբ, (692 նաւ Անգլիոյ գրօշով 1.768.200 տակառա-
չափ, գրեթէ նոյնչափ Հոլանտական, մնացեալք՝ Գերմա-
նական, Նորվեգեան, Շուեդալան, Սպանիական, Դանիա-
կան և Ռուսական գրօշներով):

Ռօթթերաւմ երկրորդ նաւահանգիստ Հոլանտայի,
բայց հետզհետէ կարևորութիւնը կ'աւելնայ: Այս է
աթոռը նաւարկութեան ամենակարող ընկերութեանց,
կեդրոնը՝ գաղթային վաճառականութեան, առաջին չու-
կան՝ Հոլանտայի հացահատիկներուն: Նաւային շարժու-
մին է 4,540 նաւ իրր 3 միլիօն տակառաչափ:

Ֆլէսիսկ. — իրր մրցակից Ամսթերի, առուտուր կ'ընէ
Անգլիոյ և Հիւսիսային երկիրներուն հետ: 1890 ին եղև-
մուտը ին 775 նաւ, 1,823.000 թօնօ տարողութեամբ:

Այսպէս Հոլանտա և Պելժիքա թէպէտ փոքր երկիր-
ներ, բայց անտեսական պետակէտով կարևոր տեղ կը
բռնեն, և մշակութեան կողմանէ Եւրոպայի ամենէն զար-
գացած երկիրներու կարգէն են:

Գրամակաւ. — Ստորին-Նաւահանգիները պանքաներու
սկզբնական երկիրներն են, աշխարհի ամենէն հիները:

«Նէէրլանտեան պանքան», «Նէէրլանտեան առև-
տրական պանքան», «Ռօթթերաւմի պանքան» կը կազ-

մեն վարկային դիսաւոր հաստատութիւնները: 1890 ին կային նաև 15 մասնաւոր պանքաներ:

Դրամական միութիւնն է արծաթ ֆլորէն = 2, 11 ֆր.:

Չափերն ու կշիռները ըստ մեթրական դրութեան:

Գ Լ ՈՒ Խ Գ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ կայսրութիւնը կը պարունակէ չորս թագաւորութիւն (Բրուսիա, Պաւերիա, Սաքսոնիա և Վիրթեմպերկ) 6 մեծ - դ.քսութիւն, 5 փոքր - դ.քսութիւն, 7 իշխանութիւն, 3 ազատ - քաղաքներ (Համպուրկ, Պրեմա, Լիւպէք) և 1 կայսերական գաւառ (Սլւզաս - Լորեն): Ընդամեն 26 դաշնակից երկիրներ: Տարածութիւն 540.667 քառ. քիլոմէթր, բնակիչ 52,280.000:

Այս երկիրներէն մեծագոյնը՝ Բրուսիա՝ ունի 348.607 քառ. քիլոմէթր տարածութիւն և 31,855.123 բնակիչ: Բրուսիայ թագաւորը կը կրէ «կայսր Գերմանիոյ» տիտղոսը:

1870 էն վեր Գերմանիա առաջնակարգ դիրք մը սկսաւ գրաւել քաղաքական և անտեսական առաջնորդին վրայ:

Հողին բնական յարմարութիւնը. — Գերմանիոյ առաջին ճարտարարուեստն է երկրագործութիւնը, 20 միլիոն անհատներ կ'ապրին հողային արդիւնքով: Հողը միջակ բարեբեր, հիւսիսային և արևելեան դաշտագետիւնները աւազուտ՝ բայց կ'արդիւնաւորին գիտութեան ու ժող: Հարաւային Գերմանիա, Սլւպեաններէ չլիթայուած, քիչ յարմար է մշակութեան, կլիման՝ դաժան, գետնին բարձրութեան պատճառաւ: Արևմտեան - Հարաւի գաւառները, Սլւզաս - Լորեն, Պատենի մեծ - դ.քսութիւնը, Վիր-

թեմպերկ, ամենէն աւելի մշակուած և կայսրութեան ամենէն արդատաւէտ երկիրներն են:

Արևմտք. — Արմաթիքի մշակութեան յատկացուած է 14 միլիոն հէքթար (26 առ. 100): Ամենէն շատ մշակուած է հաճարը, որ կուտայ 94 միլիոն հէքթար, որովհետև Գերմանիոյ ցուրտ և աւազուտ երկիրը աւելի այս մշակութեան կը յարմարի: Յարէ՛ 34 միլիոն հէքթար կը պահուի արտածութեան համար, իսկ ժողովուրդը իր սնունդին կը գործածէ հաճարը: Շատ մը գատուներու մէջ գեղացիներու միակ սնունդն է գետնիկը: որմէ Գերմանիա կ'ստանայ 300 միլիոն հէքթար, վարէ՛ 70-90 միլիոն հէքթար: Գարէ՛ 20-25 միլիոն հէքթար: զոր կը գործածեն գարեջուրի պատրաստութեան համար:

Ճարտարա՛յան մշակութիւնը. — Այս մասին Գերմանիա Եւրոպայի մէջ առաջնակարգ է:

Գայլակ՝ կը մշակուի մանտանդ կայսրութեան հարաւային մասերուն մէջ, Պաւերիա, Վիրթեմպերկ, Սլւզաս - Լորեն, Պատեն և: արտադրութիւնն է 25-28 հազար թօնո, Անգլիայինէն քիչ աւելի:

Ճակնդեղ կը մշակուի 500 հազար հէքթար տարածութեան մը վրայ, Եւրոպայի մէջ, ամենէն առաջ Գերմանիա զիտցած են ստանալ շաքարով յոյժ առատ տեսակները: Շարարի արտադրութիւնն է 1,175.000 հէքթար:

Ծխախոտի մշակութիւնը թէև ազատ, սակայն տակաւ կը նուազի և Գերմանիա արտադրածէն աւելի կ'ըսպառէ (39.000) թօնո:

Կաշիք (colza). Ֆեխի, Խաշիք և այլ խղային տունկեր կը նուազին: Քիմիայի յառաջդիմութիւնը գեռ շատ հողեր կորսնցնել պիտի տայ ներհարձական դաշնակերան:

Վաշի ու կաշիք մշակուած արևելեան Բրուսիայ, Բոմբերանիոյ, Հանսդրի և Վեսթֆալի խոնաւ գաւառներուն մէջ, կը գրաւեն իբր 150 հազար հէքթար գետին, որուն արդիւնքը չբաւարարէ իսկ ազգային ճարտարարուեստին:

Քան չարեղէններու մշակութիւնը մեծ զարգացում ունի մասնաւորապէս Պերլինի, Բոյատմի, Պամպերկի, Համպուրկի, Նիւրէնպերկի, Սթրալպուրկի բոլոր-տիքը:

Ընտանի սնատունք. — Գերմանիոյ տարածութեան 11 առ 100 մասը կը գրաւեն բնական մարգագետինները, աւելի Հիւսիսային և Պայթիկ ծովերուն կողմերը: Օտար տեսակներու ներմուծմամբ աղնուտցած են տեղական կենդանիները: Ձէ. եւ. Էրէ 3,818,000, եւ ու կը 16,500,000, ուխտ և այժ 16,853,000, իսկ 9 միլիոն:

Այգեգործութիւն. — Ասոր մշակութեան գլխաւոր կեդ-րոններն են Ալլաու-Լորեն գաւառները, Գերմանիա ունի 120 հազար այգի, որուն 33 հազար հէքթարը Ալլաու-Լորենի մէջ: Մօզելի և Ռէնի հովիտները կուտան լաւագոյն բերքերը, որուն մեծ մասը կը գնէ Պելճիքա:

Գերմանիոյ շէնէին տարեկան արտադրութիւնն է իբր 3 միլիոն հէքթօլիտ, որ չբաւեր տեղական պէտքին իսկ, կը ներածէ կէս միլիոն հէքթօլիտար գինի, մինչդեռ արտածութիւնը հազիւ կը հասնի 100 հազարի: Կը պատ-րաստեն նաև շահմանի:

Մսուերու մշակութիւն. — Գերմանական անասնաբու-տարածութիւնն է 13,900,000 հէքթար (երկրին քա-ւարդ մասը): Ամենէն գեղեցիկ և հարուստ ծառերն ու-նին Թիւրինի լեռներուն և Պաւերիոյ անտառները: Գեր-մանիա տարեկան ասնցմէ կ'առնէ 100 միլիոն ֆրանք եկամտաւ: Գերմանիոյ կլիման յարմար է մշակութեան ցորա երկիրներու յատուկ պտղաբու ծառերու, խնձորի, սալորի, տանձի եւ: Ալլաու և Պատեն կ'արտադրեն մեծ քանակ կէս, որմէ շինուած «կէսսօշէ»ն (քիւրշ) խիտ գնահատուած է:

1887 էն վեր անկուած խնձորիներու բերքը կը բաւէ այլ և սիճարեղէն (cidre) շինութեան:

Վերջապէս Գերմանիոյ ժողովուրդը իբր յամու, տոկոսն աշխատութեամբ և անտեսագլխութեամբ գի-

տէ օգտուիլ՝ հակառակ իր նուազ բարեբեր հողին և աննպաստ կլիմային:

Հանքային ճարտարութիւն. — Այս հարստութեան մէջ առաջին տեղը կը բռնեն հանքաքար և երկաթ: Ասոնց շնոր-հիւ 1810 ին Էստէնի մօտ իբր փոքր գործարար քայտաձ Քրուբի գործանոցը այսօր եղած է բոլոր աշխարհի հըս-կայ մէկ գործարանը որ ունի 1553 հնոց, 1662 մեքենա-կան գործիքներ, 82 մեքենա-սանդիտան (marteau-pilon): Կուբի հանքը կարտադրէ տարեկան 33 միլիոն թօնօ ածուխ, իբր 200 միլիոն ֆր. արժէքով, և կը բանեցուի 1740 էն վեր: Ասոր յարակիցներէն կը հանուի 7 միլիոն թօնօ, որ կը հողայ Ալլաու-Լորենի գործարաններուն պէտքը: Վերին-Սիլեզիա կուտայ 30 միլիոն թօնօ:

Անգլիայէն ետք Գերմանիա է ամենէն հարուստը՝ այրելի հանքերու կողմանէ: 1861 ին կ'արտադրէր 18 մի-լիոն թօնօ, մինչ 1898 ին 133 միլիոն թօնօ:

Երկաթի ճանաճոցն ալ առատ, կը հասնի 11,500,000 թօնօյի, կը գտնուի ընդ հանրապէս հանքածուխի հան-քերուն մօտերը:

Ասոնցմէ վերջ Գերմանիա հարուստ է զինքէ հանքով, որ կուտայ տարեկան իբր 700 հազար թօնօ, 2/6րդ վերին-Սիլեզիայէն: Կարէ-ը 7 միլիոն քիւրշ:

Կապարի հանածոյ՝ 160 հազար թօնօ, զինքէ՝ 600 հա-զար թօնօ: Նուազ են անգի, շիտէ և մանանդէ հանքերը: Կը 6,593,000 թօնօ:

Թանկագին մետաղներուն մէջ արծաթը կուտայ տարե-կան 30-35 միլիոն մարք: Վերջապէս Գերմանի կայսրու-թեան հանքային արտադրութիւնը մինչ 1864 ին 175 մի-լիոն մարքի կը հասնէր, այսօր կ'արտադրէ 1 երկիլիոն 200 միլիոն ֆրանք:

Մետաղագործական ճարտարութիւն. — Գործիքներ և մեքենաներ շինող գործարաններն ու ձուլարանները ա-ռաջին կարգին վրայ են իրենց բանեցուցած գործարա-ններու թիւով և արտադրութեան արժէքով: Գարբնոց-

ները և բարձր հնոցները գլխաւորաբար հաստատուած են ամխաճանքերու մօտերը: Ամենէն մեծ մետաղագործարանը հիմնուած են վեոթփալի, Սաքսոնիոյ և վերին - Սիլեզիոյ մէջ:

Գերմանիա յոյժ կողմանէ Անգլիայէն յետոյ կուգայ, կուտայ 3,250,000 թօնօ, որուն մեծ մասը վեոթփալի հնոցներէն, երկւէ՛ 4,953 թօնօ, դէլ՛ 150 հազար, աւֆ՛ 200 հազար, ունէ՛ 100 հազար:

Էստէնի գործարաններուն մէջ 12 հազար գործաւորներ կը շինեն մեքենաներ՝ ծովային ճարտարարուեստին համար, երկաթուղիի ձողեր, վայրաշարժ և մանուանդ թնդանօթ, Kemscheid և Solingen անուանի են իրենց ճերմակ դէնքերով. Iserloher ծանօթ է իր ասեղի գործարաններով:

Իրր 40 տարի առաջ Գերմանիա Պելճիքայէն, Անգլիայէն և Ամերիկայէն կը գնէին վայրաշարժ և երկաթուղիի նախնական նիւթեր, մինչ այժմ՝ ատանց արտածութիւնը շատ աւելի է ներածութենէն: Քարլսրուխ, Միւնխի, Աւկապուրի, Պրէմա, Տիւսէլտօրֆի, Տիւսպուրի, և մանաւանդ Պերլին, Եէմնիճ և Մալհուզ առաջին են այս ճարտարութեան մէջ. Համպուրի, Պրէմա, Քիէլ կը շինեն երկւէն ռաւեր, Պերլին և Պրունսփիք ունին կարեւոր գործարաններ՝ շինելու կաշի փէնտեր. Սաքսոնիա կը շինէ մանուարաբար երկրֆորձուած փէնտեր:

Գերմանիա հիմա ունի 1,200 էն աւելի գործարաններ յիմնադրիէ, ճնարդիէ, Կոյնէ առարկաներու շինութեան. Սաքսոնիոյ Մայսը Եւրոպայի ամենէն հին գործարանն է: Միւս կարեւոր գործարանները կը գտնուին Պերլին, վալտէնպուրի (Սիլեզիա), Նայֆէնպուրի (Պաւերիա), Աուլիէ գործարաններ կան Նիւրէնպերի, Մանհայմ, Միւնխի և:

Հանքածուխէն հանուած գոռուորէնիքներ, նաև փփուած ճարտարարուեստը բարձր շարգացման մէջ են: Առաջին անգամ Գերմանի քիմիագէտներ սկսան հանել հանքածուխէն գունաւոր նիւթեր, որ երբեմն կ'օտայուէր

բոյսերէն: Լայրյիկ, Տրեգտա, Պրեուա, Միլհուզ և կը պատրաստեն քիմիական նիւթեր: Գունաւոր նիւթերու արտադրութեան մասին աշխարհի ամենէն մեծ գործարանը կը գտնուի Պաւերիոյ մէջ, ի Լուտվիլշաֆէն Badische Anilin et Sodo Fabrik: Այս գործարանը ճշմարիտ փոքր քաղաք մ'է, որուն ամեն կողմերը 45 երկաթապատ ճամբաներով կ'երթեկեն:

Հիւսուածային ճարտարութիւն. — Մանարանները և հիւսուածարանները ունին 140 հազար բանուոր և 6 միլիօն շամբրակ: Ալգասի կցուածն ի վեր Գերմանիա՝ Անգլիայէն վերջը՝ կուգայ բամբակի աշխատութեան մէջ: Բուրի ամխաճանքերու մօտաւորութեամբ Էլպերֆէլտի, Գոլմիոյ, Տիւսէլտօրֆի բամբակեղէնները կրնան մրցիլ՝ աժնութեամբ, Մանչէսթըրի և Պելճիքայի հետ: Անոնք Ռէնի ճամբով կը հանեն Անվերս, ուսկից կ'արտածուին աշխարհի այլ և այլ կողմեր:

Ալուալէնի և քրիստիանի շինութեան կ'աշխատին իրր 180 հազար բանուոր: Այս ճարտարութեան կեդրոններն են Սաքսոնիա, Բրուսիա, Սիլեզիա, Սաքսոնիա ունի նուրբ բուրդ և առատ այրելի հանածոյ, որով կը գտնուի առաջին գծին վրայ. Եէմնիճ կը շինէ ամեն տեսակէ ասուի, ցիօի, խառն հիւսուածներ: Բրդեղէնի արտածութեան արժէքը կը հասնի 200 միլիօն մարքի:

Վուշի ճարտարարուեստն ունի 300 հազար շամբրակ, բայց աս կը յետադիմէ բամբակի և բրդի յառաջնադասութեան պատճառով, թէև գարձեալ կը գերազանցէ Ծրանօսն և նոյն իսկ Աստրիան:

Մետաքսի ճարտարարուեստին կեդրոնն Ռէնական Բրուսիան, Էլպերգէլտ և Պերմէն մետաքսի մոյրաքաղաքներ են: Այս մասին Գերմանիա չկրնար մրցիլ Լիանի հետ, բայց Քրիֆէլտի գործարանները՝ աժանագին խառն հիւսուածներուն համար՝ կը գրաւեն առաջին կարգը: Մետաքսեղէնի արտածութիւնը կը հասնի 160 միլիօն ֆրանքի:

Պերճանքի ճարտարութիւն եւ զանազանք. — 1870 էն վեր կառավարութիւնը, բազաքները և մասնաւոր ընկերակցութիւններ հիմնեցին՝ ճարտարարուեստ կեդրոններու մէջ՝ նկարչութեան և արուեստագիտութեան վարժարաններ. և աշխատեցան Պերլինն ընել նուրբ ճաշակի, նորաձևութեան և պերճանքի մայրաքաղաքը Պերլինի մէջ հիմնուած է «Ջարդարութեան թանգարան»ը, որու հաւաքածոյները արամադրելի են գաւառական վարժարաններուն և թանգարաններուն:

Շաքարի գործարաններ հիմնուած են ի Սիլեզիա, Սաքսոնիա, Պրուսիոյ և Ռէնի գաւառները, կ'արտադրեն 12 երկիրիօն քիլօ, որուն կէսէն աւելին կ'արտածուի:

Երկրագործական շարանները բազմապատկուած են: Գետնախնձորի գտուածն է 2 միլիօն հարտը. հատիկներունը՝ 1 միլիօն: Համապարկ կը շինէ հեղուկներ Ափրիկէի սեւամորթներուն համար:

Գարեջուրի կողմանէ Անգլիոյ մրցակիցն է Գերմանիա, որ կ'արտադրէ 53 միլիօն հէքթօլիտը: Ամենէն աւելի քանահատուած են Սթրազպուրկի, Միւնիխի, Նիւրէնպէրկի եւ գարեջուրերը:

Գերմանիա ամեն երկիրներէ աւելի աժան կը շինէ Բուրշը, որուն համար կը գործածուի քուրջ՝ փայտէ և յարգէ խմորով, 90 հազար գործաւոր կ'աշխատին ասոր: Գլխաւոր կեդրոններն են. Էս-Լա-Շարէլ և Լէյնիճ: Թղթին արտածութիւնը կը հասնի 45 միլիօն մարքի:

Հազարաւոր գործաւորներ կ'աշխատին փայտային շինութեանց. Նիւրէնպէրկի կը շինէ փայտով խաւիչներ, զոր կ'արտածէ աշխարհի ամեն կողմեր:

Սև - Անտառ, Թիւրինկ և Սաքսոնիա կը գործածեն հազարաւոր վարպետներ ժամգործութեան համար:

Գերմանիա ջախջախիչ մրցում մը կ'ընէ նոյն իսկ Անգլիոյ և Միաց. - Նահանգաց ճարտարարուեստին դէմ և կը ձգտի ըլլալ աշխարհի առաջին ճարտարարուեստ

երկիրը: Պիդմարք, այս մասին, իր երկրին գերակշռութիւնը ապահովելու համար բան մը զանց ըրած չէ: Ամեն մարդ գիտէ թէ բամբակի ճարտարութիւնը այսօր կարևոր բաժին մ'ունի Գերմանիոյ մէջ քան ուրիշ ո՛րևէ երկիր:

Ճամբաներ. — Գերմանիոյ երկաթուղիներու երկայնութիւնն է 53 534 քիլօմէթր, համեմատաբար նուազ Անգլիայէն և Պելճիքայէն: Ամենէն կարևոր գիծերը անսք են որ Հիւսիսային և Պարթիկ ծովերը կը միացնեն Միջերկրականին, Չուրիցերի և Աստրիոյ ճամբաներով: Այս երկաթուղիները կը մեկնին Համպուրկէն և Պրուսիայէն, Էլզպայի և Ռէնի հովիտներով կ'անցնին Պրէնքերի և Սէն - Կոթարտի զլուխները: Այս երկու գիծերն են Գերման - Իտալական թրանզիթի միջոցները, որոնք մասամբ կորսնցուցին իրենց ազդեցութիւնը երբ թուրքիոյ երկաթուղին միացաւ Աստրախանին: Այս վերջին գիծով Արևելքի սահմանուած ապրանքները ուղղակի կուգան Համպուրկէն Սելանիկ կամ Կ. Պօլիս, Մակեդոնուրկ - Բրակա - վիէննա - Պուտա - Բէշթ - Պելկրատէն անցնելով, Բարտէսին վրայ ակնարկ մը նետելով պիտի բացաարուի Համպուրկի առևտրական մեծ կարեւորութիւնը: Արևելքէն Արևմուտք երկարող գիծերը բազմաթիւ են. Բարիզէն Պերլինի և Սէն - Բեթերօպուրկի միջազգային ամենամեծ գիծը կ'անցնի Էրս-Լա-Շարէլէն, Քուլմիա - յէն և Հաննովրէն: Գանուրի հովիտն ալ հնուց ի վեր մեծ կարևորութիւն ունի առևտուրի:

Գերմանական երկաթուղիները կը փոխադրեն իրը 250 միլիօն թոնօ ապրանք և 400 միլիօն ճամբորդ:

Ներքին նաւարկութեանց մէջ գետերը մեծ դեր կը կատարեն:

Կայսրութեան ջրանցներու երկայնութիւնն է 2,336 քլմ. նաւարկելի ճամբաները՝ 13,924 քլմ. ծովեզերքը՝ 2,945 քիլօմէթր, գետերու և ջրանցներու նաւային շարժումն է 20 միլիօն թոնօ, որուն 87 առ 100ը Էլզպայի և

Ռենի բաժինն է: 1899 ին Քիլի ջրանցքի նաւային շար-
ժու մն եղաւ 26,224 նաւ 3,451,273 տակառաշափ,
1,787,399 մարք վճարու մով:

Վաճառարանութիւն. — 1870 էն վեր Գերմանիոյ վա-
ճառականութիւնը անսահման զարգացում մ'ունեցած
է: Նոյն թուականի առատութիւնը կը հասնէր 4 երկիրի
500 միլիոն ֆրանքի, մինչ այսօր (1900 ին) 13 երկիրի
500 միլիոնի, ճիշտ եռապատիկը:

Գերմանիոյ ներածութիւնը 1900 ին եղաւ 302,100,000
սթեռլինի, իսկ արտածութիւնը՝ 237,650,000 սթեռլինի:
Բաղդատամար 1894 ի, ներածումն աւելցած է 41 առ %,
իսկ արտածութիւնը՝ 56 առ %:

Այս զարգացման պատճառ կրնայ համարուիլ ստու-
ար գաղթականութիւնը: Միայն Նահանգաց մէջ քա-
ղաքացի եղած 7 միլիոն գերմաններէն զատ, 2 միլիոնէն
աւելի ցրտած են երկրագնդին ամեն կողմերը իբրև
յանձնակառար, առևտրական գործակալ, անբարձրագին
(մթերանոցի մէջ մնացած ապրանք գնող) կամ քա-
ղաքական պաշտօնեայ: Գերմանք հիմնած են կարևոր
տուներ ի Բուպա, Ֆիլիպին, Հայիթի, Հարուային
Ամերիկայի այն երկիրները՝ ուր սպիտակամորթ կրնան
տակալ կլիմային՝ կը ծաւալին ճեռանները:

Առևտրական զարգացման երկրորդ պատճառ մ'են
արտածութեան գործակալներու և արտածելի նմոյշնե-
րու համար մթերանոցներու հաստատութիւնը (Export -
Musterlager): Այս գործակալութեանց առաջինը հիմնուե-
ցաւ ի Շվեյտսիայ, 1882 ին: Գործակալութիւնը շահա-
գրգիւններուն կը հայթայթէ զնոզներ ու ծախողներ և
ամեն տեղի կ'ութիւններ: Բոլոր մեծ կեդրոններն ունին
այսպիսի գործակալութիւններ:

Ներածութեան գլխաւոր նիւթերն են. անբարձր բեր-
քեր և ճարտարութեան անհրաժեշտ նախնական նիւթեր:

Գերմանիա Ռուսիայէն և Միացեալ Նահանգներէն
կը գնէ 340 միլիոն ֆր. արծաթ, 150 միլիոնի արծաթ, իտա.

լիայէն և Սպանիայէն՝ իւր, գինի և պարանոցներ, Սքանդինա-
ւիայէն՝ հիւսիսային փայտերն: Միայն Նահանգներէն և
Եգիպտոսէն՝ հիւսիսային նիւթեր, բամբակ, Ռուսիայէն՝ իւր և
կանաչ, Իտալիայէն, Ֆրանսիայէն, Արևելքէն՝ արծաթ, որք կը
ձեայնեն 850 միլիոնի գումար մը:

Գերմանիա կ'արտածէ մանաւանդ բամբակէ, բրդէ,
վուչէ, մետաքսէ հիւսիսային, մետաղագործական գործե-
նէր, աղայոց եւրոպէներ, շաւր, հանածոք: Ռենի գինի, շաւր-
նիւթի գինիներ, բարեջուր, քանի մը հարիւրեակ միլիոններով:

Գերմանիոյ փոխանակութիւնը:

Աւտարիոյ	հետ 1,800,000,000 ֆրանքի
Ռուսիոյ	» 900,000,000 » (550 Եւրոպայի Գերմանիոյ)
Գաղղիոյ	» 700,000,000 »
Իտալիոյ	» 250,000,000 »
Հոլանտայի	» 700,000,000 »
Սպանիոյ	» 70,000,000 »
Անգլ. Հնդկաստ.	» 160,000,000 Մրքի. (հարկ 35 ֆլ. Եւր. Ե Գերմ.)
Ասիոյ միւս մաս.	» 160,000,000 » (Թուրքի. Չին. Ճապոն Լն.)
Թուրքիոյ	» 100,000,000 » և արևմտ. կողմի
Չինի	» 100,000,000 ֆրանքի
Արժանութիւնի	» 200,000,000 »

Գերմանիա ամենէն գործոն փոխանակութիւնները
կ'ընէ Հիւս. Ամերիկայի և մանաւանդ Միաց. Նահանգաց
հետ, մտաւորապէս 1 երկիրի ֆրանքի:

Երեւակնակալութիւններ ունի իր Հարաւ - Արևելքան
Ամերիկէի գաղթականութեան:

Գերման արտածողներու սկզբունքն է գոհացնել
իրենց յաճախորդները, անոնց ճաշակին համապատաս-
խան և աժան գնով ապրանք հայթայթելով, երկար
պայմանաժամեր չնորհելով:

Գաղթակալք. — Գերմանական Ամերիկէի կալուածող
տարածութիւնն է 2 365,000 քառ. փիտակէթ և 9 միլիոն
բնակիչ:

Ովկիանիոյ կալուածող տարածութիւն 256 հազար

քառ. քիլոմէթր և 60 հազար բնակիչ: Սակայն տարուէ տարի կ'ընդարձակէ իր սահմանները. որովհետև պէտք ունի իր անբաւ արտադրութեանց սպասու մին յարմար հրապարակ:

Գերմանիա գաղթային պետութիւն մ'ըլլալով, պարտաւորեցաւ անենալ նաև ծովային զին սրական զօրութիւն:

Շուկային վաճառակաւութիւն, նախահանգիտք. — 1870 էն առաջ այս կայսրութիւնը ծովային առուտորին մէջ ամենէն յետինն էր, մինչդեռ հիմա կը գտնուի երբորդ կարգին վրայ: Ունի 3.713 նաւ. 1,639,552 տակառաչափ:

Նաւային շարժումն է մուտք 77,117 նաւ, 16,489,900 տակառաչափ. ելք, 77,734 նաւ 16,626,628 տակառաչափ. ընդամեն 154,851 նաւ 33,116,528 տակառաչափ. կառավարութիւնը կը նպաստէ նաւային ընկերութեանց:

Համկուրդի. — Էլպայի բերանը, նշանաւոր նաւահանգիստ, մրցակից կիւրիսի, մուտք 16,351 նաւ 10,416,950 տակառաչափ (1897 ին). Աշխարհի ամեն կողմերուն հետ յարաբերութեան մէջ, նաև միութեան կեդրոն եղերաւ. նաև երաւ բոլոր մեծ գիծերուն:

Պրեմիա՝ կայսրութեան երկրորդ նաւահանգիստը, ամուռ Հիւսիսային Գերմանիոյ Լոյսին Առևտրական շարժման արդիւնք 1 երկիլիօն 450 միլիօն մարք:

Շիթիլի՝ Պերլինի մօտադոյն նաւահանգիստը, Պալթիկի եզերքը. ելմուտ նաւերու 2,617,000 թօնօ:

Տասճիկ, Քիլ, Լիւպէք. գիծնիկապէրկ նաւահանգիստներ են որ կը մթերուին օտար վաճառքներ և օտար երկիրներ զրկուելու սահմանուած գերմանական ապրանքներ:


Պրամական. — Նշանաւոր են «Կայսերական պանքաճն», «Փողփրգական պանքաճներ», նաև զանազան դաւառներ. բոլ մէջ 300 ի չափ մասնաւորաց պանքաներ:

Առևտրական մեծադոյն սակարանը կը գտնուի ի Ֆրանքֆորթ:

Պրեմիեր (ոսկի) = 21, 25 ֆրանք, Բուր (արծաթ գրամ) = 3, 75 ֆրանք, Ժար = 1, 25 ֆրանք, 1 մարքը կը բաժնուի 100 ֆելդիլի: Ոսկի 5-10 և 20 մարքնոց: Արծաթ 1/5, 1/2, 1 3/10 և 5 մարքնոց:

Կշիռներ և չափեր՝ մէթրական դրութեան համաձայն:

Նամակատուն՝ 35,452, նամակ և 4 երկիլիօն 604 միլիօն, նոյնպէս 636,696 քիլոմէթր հեռագրական թել. 39,760,092 հեռագրալուր (1898):



Գ Լ Ո Ւ Ի Ի Զ Ո Ւ Ի Յ Ե Ր Ի Ա

Զ Ո Ւ Ի Յ Ե Ր Ի Ա. Ալպեանց կաճղին մէջ տարածուած հանրապետական երկիր մ'է, Տարածութիւն 41,346 քառ. քրմ. և բնակիչ 3,039,835: Մշակելի հողը կը հաշուուի 600 հազար հէքթար, այսինքն երկրին գրեթէ 1/7ը՝ իր ցուրտ կլիմային պատճառաւ սակաւաթիւ տունկեր միայն կ'արտադրէ:

Արմախի բերքը՝ 6 միլիօն հէքթար, որ անբաւալ կան է սնուցանելու հոծ բողմամարդութիւնը: Մնդեան կարևոր մասը կը կազմէ գետնախոտը՝ 10 միլիօն հէքթար: Ծիւսիտը կը բաւէ տեղական պէտքին: Օռնիտը (absinthe) կը մշակուի թիրազ գաւառին մէջ. Բրեյնի՝ թեւեւի հօվիտները:

Շինականներուն գլխաւոր եկամուտի աղբիւրն է «յէն» իբր 40 հազար հէքթար, գլխաւորաբար ձենովայի և ֆօնսիմանցայի գաւառներուն և թիրբայի ցառիթափներուն վրայ, լրացոյն բերքը կուտան Թէօֆէնի և Յիւրիի այգիները: Տարեկան արդիւնքը կը հասնի 1 միլիօն հէքթարի, որուն մէկ մասով կը շինեն Շոնթիլի:

գինը, որ կ'արտադուրի Ամերիկա: Քանթոններէն շատին մէջ ինչ-որոն է սուրբական լինակին, որուն համար արն-կուած խնձորենին աւելի շատ է քան Նորմանտիոյ Պրը-թանիի ծառերը:

Մարգագետինները՝ 636 հազար հէքթար և սրբապա-բերը 800 հէքթար, կը գտնուին լեռնային մասերուն մէջ և լաւ ոռոգուած: Այս պատճառաւ անանխաճու-նի-նը եղած է երկրին գլխաւոր ճարտարարուեստը: Եղն-պէս կը հաշուուին 1,211,000, որուն 663,102 կ'ընդ կը հայթայթ-վեն 15,251,346 հէքթարի տարածութիւն, 183,016,152 ֆրանք արժէքով: Եղնագոյն կը վերաբերին արեւմտքի մէջ Պէրնի և Ֆրիպուրիի խայտարղէտ տեսակին: Զուիցերիոյ պան-թոն-նէր-ն (chalet) մէջ կ'աթէն կը շինեն հան-րածանօթ գրա-լէրան (gruyere) = հելուեական պանիր): Օպէրլանտի և Ժիւրայի մէջ ալ « maderaner և emmentha-ler » պանիրները: Զուիցերիա այս պանիրէն կ'արտադրէ 40 միլիօն քիլօ, որուն կէսէն աւելին կ'արտադէ (1886ին արտադեց 27,431,900 քիլօ) 7 միլիօն ֆրանք արժէքով: Զիւ-ր-ն-ի-ն կը գտնուին (ընդամեն 1,100,000, միայն ոչ չը՝ 415 հազար):

Զուիցերիա պանրագործական արհեստին համար տեսական և գործնական 4 վարժարան ունի:

Անտառները կը ծածկեն 700 հէքթար գետին: որունք թանկագին են, որովհետեւ կ'երաշխաւորեն վտանգը ձեան հիւսերու և վաւեր մնալու: Սակայն Զուիցերա-կան ճարտարարուեստին բաւօղ փայտ չեն արտադրեր:

Համքր. — Զուիցերիոյ հանքային հարստութիւնը միջակ կարեւորութիւն ունի: Ալմ-կալէն և Յիւլէն կը հանեն 20 հազար թօնօ հանքաքար, վալէնի մէջէն՝ ած-խաքար (anthracite), կրիզոնի և Ժիւրայի մէջէն երկաթ-և-կաքար: Նէօշտիսի գաւառէն՝ կաքար: Ալզահանքերէն 40 հազար թօնօ ունի:

Ճարտարարուեստ. — Տարագործական ճարտարու-թիւնը սակայն շատ զարգացած է, որովհետեւ սառած է

հան ջուրը և ածան՝ ձեռարուեստը, սուրբը՝ քիւ, հա-զորդակցութեան ճամբաները՝ շատ: Լիթթայի քաղաք-ները, և Շաֆհուզի քաղաքները անուանի են: Զուրի-տի և վենթերթիւրի գործանոցները կը շինեն մեքենա-ները և գործիքները: Ասոր կը շինէ թնդանօթները և դա-նակ: Զուիցերիոյ ժամադրութիւնը դեռ առաջինն է աշ-խարհի մէջ, կ'արտադրեն 1,500,000 ժամացոյց ճենովա, Լօրը, Ծօ-աը-Յօն եւ, կ'արտադուրին գլխաւորաբար Միացեալ-Նահանգաց մէջ: Ժամացոյցի արտադուրիւնն է 23 միլիօն: Ճենովա կը շինէ բնագիտական թանգարա-նի կազմածները: Ֆլարիս՝ երաժշտական գործիքներ:

Բամբակի ճարտարարուեստին համար կը բանեցնէ 2,500,000 շամբակ և 15 հազար գործանեղան, մանեղով և գործելով 30 միլիօն քիլօ խառն բամբակ՝ Պէրնի, Զուրիտի, Սէն-կալի և Գլարիսի մէջ: Զուիցերիա բամ-բակեղէնի ածնութեամբ կը մրցի Անգլիոյ և Գերմանիոյ հետ: Պէրն կը գործէ կո- և դամակեան ճերմակէն, Գլարիս՝ Բրդէղէն և Ֆէ: Պալ կը գործէ տարեկան 30 միլիօն ֆր-անքառն ժամադր-ն, Զուրիտ՝ Դոքտորան կերպար: կարեւոր ար-տադրութիւն ունի սեղադրութիւնը:

Սակայն Զուիցերիոյ կարեւորագոյն ճարտարարուեստն է շահագործութիւնը իր լիճերուն, ջրվեժներուն, սառ-նարաններուն և լեռներուն, որոնց հրապոյրը կը քաշէ անթիւ այցելուներ:

Զուիցերացիք կը շանան՝ փոխանակ ածան ապրանք շինելու՝ զորդացնել պերճանքի ճարտարարուեստը: ասոր համար նշանաւոր են Զուրիտի « Բալմարու ետեան վարժարան »ը, Երկսեռ, Պալի « Նորաձեւութեան և Նկարչութեան վարժարան »ը, և « Ալբ-ե-ո-ն » ճարտարու-թեան վարժարան »ը: Զուրիտ ունի նաև « Ոստայնանկու-կութեան վարժարան » մը: Պիենի և Ճենովայի « Ժամա-գործութեան վարժարան »ը և ուրիշներ բարձր զար-գացման մէջ են:

Ճամբաներ. — Երկաթուղիներու երկայնութիւնն է

3,766 րիլոմէթր որ կ'երկարին շրջակայ ամեն երկիրներ: Նաւարկելի են նաև լիճերը: Ֆրանսա ուղղակի կը հաղորդակցի Աւսարխոյ՝ Արլպէրկի երկաթուղիով:

Ունի 3,411 նամակատուն, և 333,600,000 նամակ և 32,171 քլմ. հեռագրական թել, 3,947,904 հեռագրալուր (98 ին), 46,257 քլմ. հեռախօսական թել, 14 միլիօն խօսակցութիւն:

Չուիցերիա ընդունած է աղատ - փոխանակութեան օրէնքը, որ իր ասուրեալին անհրաժեշտ է:

Վաճառականութիւն. — Չուիցերիոյ ներածութեան արժէքն է 1,114,442,000 ֆր. արտածութիւն 647,436,000 ֆրանք:

կը ներածէ բամբակ, խաւն մորտա, հանաքուտի, հանաքուտի, բարբոս արմիտ, բէնէ, ռիէ, պորթուզիէ, գաղթաբերեբէ և: կ'արտածէ գլխաւ որարար ժամացոյց (98,743,194 ֆր.) ժողովուրդէն, մորտուզէն (214,743,252), բամբակեղէն (155,463,568) պանիր, կարագ և: Ֆրանսայի հետ կը փոխանակէ 360,000,000 ֆր. ի ապր. Գերմանիոյ » » » 500,000,000 » » իտալիոյ » » » 190,000,000 » » Անգլիոյ » » » 170,000,000 » » Ռուսիոյ » » » 50,000,000 » » Աւստր. - Հունգ. » » » 150,000,000 » » Միաց. - Նահնգ. » » » 120,000,000 » » և:

Հելվետական փիճակագրութիւնը ցոյց չտար մասնաւորաբար Սէն - Կլոթարտի և Արլպէրկի ճամբաներով անցած թրանզիթ առուտուրը, որ կարևոր շահ մը կը ձգէ երկրին:

Պրամ, չափ և, կշիռ. — Այս փոքրիկ երկրին մէջ կը հաշուուին բազմաթիւ պանքաներ, խնայողական օրնտուկներ. 18 շրջաբերութեան պանքա, որոցմէ կարևորներն են Պալի, Պէրնի, Արկովի, Կրիգոնի, Ճենովայի, Յրիպուրկի պանքաները:

Դրամները Ֆրանսականին նման են: 1 ֆր. = 100 րարեն: Չափերն ու կշիռներն են. լիտր (500 կր.), ոտ + 0, 30 մ. րարենը = 15 լիտր, փ (pot) = 1, 5 լիտր:

Գ Լ Ո Ւ Ի Ի Զ

Ս Ք Ա Ն Տ Ի Ն Ա Վ Ի Ա

Ս Ք Ա Ն Տ Ի Ն Ա Վ Ի Ա կը պարունակէ Շուէտ, Նորվեկիա, և Տանըմարքա: Տարածութիւն 800 հազար քառ. րիլոմէթր, (750 հազար Շ. - Նորվեկիա) բնակիչ՝ 9 միլիօն (2,250,000՝ Տանըմարքա): Կլիման՝ խիտա ցուրտ: Շուէտի կէօը, Նորվեկիոյ ²/₃ մասը անմշակելի են: Հարաւային եզերքները աւելի բաղմամարդ և մշակուած: Տանըմարքայի մէկ քառօրդը անբեր:

Բերք. — Երկրագործութիւնը խիտա ծաղկած է այս երեք երկիրներուն մէջ, տարուէ տարի լիճերն ու ճախճախու աները ցամքեցնելով՝ կաւելցնեն մշակելի հողը: Շուէտացիք 20 տարուան մէջ աւելցուցած են 1 միլիօն հէքթար մշակելի գետին, իսկ Տանըմարքայիք՝ 500 հազար հէքթար:

Կը մշակեն գլխաւորաբար արմիտ, համար, շարսիկ և գորշ, նեղ սահմանի մը մէջ՝ շոբէն: Տանըմարքայի հացահատիկի բերքն է 30 միլիօն հէքթարի տար. Շուէտինը՝ 40 միլիօն, որմէ կրնայ արտածել, իսկ Նորվեկիա հազիւ կը բաւականացնէ իր պէտքը: Երեք երկիրներուն մէջ ալ բնական ձեւերէ մշակութիւնը շատ առաջացած է:

Ճարտարական մշակութեանց մէջ տուած նակարդ են բայլուին ու ճակնդեղը. երկրորդական են՝ վաշտ, կանեփ և ծխախոտը:

Սքանախնափիոյ հասոյթի կարևոր ազդիւրն է անանս. բոճոճիւնը, որովհետև ընդարձակ արօտավայրերով ծածկուած է երկիրը: Մեծ խնամք կը տանին աղնուացնելու ընտանի անասնոց տեսակները. հաստատած են սուսաբաններ և վարդեր: Նշանաւոր է Ֆրէտլիխսպրիկի (Տանըմարքա) արքայական սուզաստանը. Անուանի են

Եութ լանտի ձեռք, խիստ յարմար հեծնելու, ժուժկալ և հուժկու: Տանըմարքայի դասերն (1,500,000) նշանաւոր են: Անժեւնի ցեղը՝ կաթնեղ, Եութ լանտինը՝ մսացուի յարմար: Եւ-Նորվեկիա ունի 3,200,000 դաս (2, 3ը Եուէտին): Ուրբերն ալ բազմաթիւ են Նորվեկիոյ և Եութ լանտի մէջ: Բէն (այժեամբ, 200 հազար) Լարոնցիներուն համար թանկագին անասուն մ'է: Եւ-Նորվեկիոյ հիւսիսակողմը լեցուն են մաշկաւոր կենդանիներ, կզաքիս, ալուէս, ջրազուէս և: Եուէտ-Նորվեկիոյ 1/3 մասը ծածկուած է անտառներով, (իբր 25 միլիոն հէքթար) որ կը հայթայթեն 30 միլիոն խորանարդ մէթր փայտ ամեն տեսակէ, շճի (pin), եղէն, (sapin), գէն (hêtre), կառէ և: Ատաղճի արտածութիւնը կը հասնի 200 միլիոն ֆրանքի: Երկրին ներքը, ջրերու եզերքները, կ'ապրեցնէ 5 հազար սղոցարան, կը հայթայթէ գարբնոցներու վառելիքը, լիառատ աղիւր են դիւլ (potasse), ձեւ (poix = ցիֆթ) բևեկնոյ խէժ և պատրաստելու համար, վերջապէս կարևոր նիւթ արտածութեան: Սքանախնալցւոց առաջին ճարտարութիւնն է երկրագործութիւնը:

Հանք. — Եուէտ-Նորվեկիոյ հանքային հարստութիւնն է երկաթ: կարելի է տարեկան հանել 1 միլիոն թօնոյէն աւելի, զուտ (extract): Այս հանածոյին մեծ մասը, որ մանկանեղ ալ կը պարունակէ, այդ պատճառաւ կ'արտածուի Անգլիա, Կոթենպուրկէն, Սթոքհոլմէն և ժէֆլէն: Տանըմարայի մագնիտական երկաթը անուանի է պողպատի շինութեան համար: Եուէտական Լարոնիոյ լեռները ունին հարուստ մագնիսական երկաթի հանքեր, որ կը պարունակեն 80 առ 100 մաքուր մետաղ այնքան առատ որ կրնայ հոգալ ամբողջ աշխարհի պէտքը, դրժբաղդարար շահագործութիւնը դժուար է առ ի չգոյէ վառելիքի և կանոնաւոր ճամբաներու: Եւ-Նորվեկիոյ հանքերն ալ անուանի են: Սալայէն և Քէօնիկապէրկէն կը հանուի արծաթ՝ հարուստ հանքերէ, Սթրոկոթիէն՝ զինկ՝ 45 հազար թօնո: Այրէն հանածոյ՝ 200 հազար թօնո:

Տանըմարքա միայն հանածոն ունի Պորնհոլմ կղզին մէջ:

Ճարտարութիւն. — Հակառակ խոտամբեր ձմրան և կանոնաւոր ճամբաներու չգոյութեան, Եւ-Նորվեկիա 1860 էն վեր մեծ յառաջգիմութիւն ըրած է ճարտարարուեստի մէջ, օգտուելով ջուրերու հոսանքներէ: Ամենէն գործօն ճարտարութիւնները կը վերաբերին դարբնոցներուն և բարձր հնոցներուն, մանաւանդ Տալէքարլէի մէջ, ի Տանըմարա, Մօթալա և, որ կը բանին գլխաւորաբար փայտի ածուխով, հարուստ հանածոները՝ երկաթ (303 հազար թօնօ), յուլ (422 հազար թօնօ), դոլա (660 հազար թօնօ) շինելու համար: Մօթալա մանաւորապէս կը շինէ Բէնիսներ, Նիքօրէնկ և Մօթալա՝ մանր երկաթէն և բէնիսներ, Կոթէնպուրկ, Սթոքհոլմ և ժէֆլ կը շինեն նաւեր:

Բացի 4-5 հազար ջրաշարժ սղոցարաններէ, որ կոճղեր դարբնութիւն կը վերածուին, կը շինեն նաև շաքարէն արտադրութեան օգտուած տախտակներէ ձևացած, դարբնութիւն (parquet), անարուեստ կարտէներ, որ աժանագին կը ծախուին ի Կոթենպուրկ, Նորթօրէնկ, ձկնորսութեան նաւեր, լոցաններ ի Սթոքհոլմ, Մալմօ, Կոթէնպուրկ, Բոյպի հայ՝ թշխմանութեան համար, որ կ'արտածուի ի Ֆրանսա, Անգլիա և Գերմանիա: Նորվեկի մէջ հաստատուած են գործանոցներ դարձնող յուլի պատրաստութեան համար, Գլխաւորներն են ի Սթալանկէր, Մանտալ, Մօն և Պերկէն: Տարեկան կ'արտածեն 100-115 հազար քիլօ տուփով լոտի յուլ (saumon):

Ունին Խաղաղութեան և յանոցի գործանոցներ: Տանըմարքի մէջ յառաջացած է կարգի պատրաստութիւնը: 1870 ին Տանըմարքա արտածեց յԱնգլիա 19 միլիոն ֆրանքի կարագ, 1888 ին՝ 84 միլիոն ֆրանքի բարձրացաւ: Տանըմարք կ'արտածէ նաև սրիշ երկիրներ, մանաւանդ Սպանիոյ երկրամիջոցային վայրերը, Մեքսիկոյի ծովեզերքները, տալիերու մէջ պահուած ընտիր

կարագ, որ կատարելապէս անվնաս կը պահուի այն տօթակէզ կլիմաներուն տակ:

Գետնախնձորէ և ուրիշ հատապտուղներէ հանուած օգիւի շուրջանները կ'արտադրեն 500 հազար հէքթօլիտը, երկրին մէջ սպառելի: Սթօքհօլմ և Կօթենպուրկ ունին շաքարի դտարաններ: Հիւսուածային ճարտարարուեստը նաեւ կարեւորութիւն ունի:

Տանըմարքայի ճարտարարուեստներն են ծովայն և երկրագործական: Քորէնհակ և Օտենսէ ունին շուրջաններ, և երկրագործական մեքենաներու շինութեան համար ալ արհեստանոցներ: Ճակնդեղէ հանուած շուրջ արտադրութիւնը 1890 ին եղաւ 22,282,000 քիլօ:

Տանըմարքա ունի նաև յախճապակի և ուրիշ գործարաններ:

Չկոնորաթիւն. — Սքանախնամից ոչ համար ձկնորսութիւնը եկամտաւոր աղբիւր մը և նաւարկութեան արհեստին վարժարանն է միանդամայն: Չուկը առատ է մանաւանդ Նորվեկեան ափունքները, նաև Տանըմարքայի Տարեկան 40 հազար ձկնորս կուգան Լօֆֆոսէնի կղզիները: Բազմ փորձելու, կարեւորագոյնն է Մօրէի որսորդութիւնը, որ 1890 ին զբաղեցուց 89,283 հոգի, և Բէնկայն: Փոր 30 հազար հոգի Սյո երկու ձկնորսութեանց միացեալ արժէքն է 20 միլիօն քուրոն (28 միլիօն ֆր.), որուն 14 միլիօն քուրոնը Մօրիւին արդիւնք:

1890 ին Լօսդիլին արտադրութիւնն եղաւ 758,700 քիլօ (11 քիլօյին գինը 1, 45 ֆր.): Լօսդիլն առատ է լիճերուն մէջ:

Անխնայ որսորդութեան պատճառաւ, բևեռական ջրերուն մէջ տակաւ կ'սպառուի կեռ ձուկը:

1890 ին Նորվեկիոյ ձկնորսութեան արդիւնքի վաճառականութիւնը (թարմ և աղած մօրիւ, բինկա, մօրիւ լեարդին խղը, լոողի եւ) հասաւ 48,490,000 քուրոնի:

Ճակնամիւր. — Սքանախնամիոյ հաղորդակցութեան գլխաւոր միջոցն է ծովը: Պոթնեան ծոցը միայն Յունիսին

նաւարկելի, միւս ամիսները՝ սառած: Նաւարկութիւնը կը դադրի Սառուցեալ Ովկիանոսին մէջ՝ Հսկեամբերէն Մայիս, Ատլանտեանի մէջ՝ Գեկտեմբերէն Ապրիլ: Գետակները ժայռուտ և ջրվէժոտ՝ նաւարկելի չեն: Բանուկ նաւարկութիւն ունին սակայն Մելար, Վեներ, Վեթեր լիճերը և ծովային ջրանցքը որ կը միայնէ Մօթալայի ճամբով՝ արեւելեան Պալմիկը Քալթթեկաթի (300 քիլօ մէթր):

Շուէտ շինած է 10,226 քիլօմէթր երկաթուղի, Նորվեկիա՝ 1951 քլմ: Տանըմարքա՝ 2450 քիլօմէթր: Շուէտ-Նորվեկիոյ երկաթուղիները կը փոխադրեն 5 միլիօն թօնօ վաճառք և 8,500,000 ճամբորդ միջին հաշուով:

Շուէտին սուսուտը և նաւանագիտութիւնը — Եւրոպայի մէջ, Սնդիայէն ետք, Շուէտ-Նորվեկիա է առաջինը նաւերու թիւով և տարողութեամբ: Շուէտ ունի 2763 նաւ 483,003 տակառաչափով (733ը շողենաւ 181,276 տակառաչափ): Իսկ Նորվեկիա ունի 7270 նաւ 1,684,965 տակառաչափով (915ը շողենաւ 321,052 տակառաչափ): Համադրումը 10,033 նաւ 2,167,968 տակառաչափով:

Շուէտի նաւային շարժումն եղած է 1900 ին և Լը 29,835 նաւ 4,691,000 թօնօ տարողութեամբ: մուտք՝ 29,561 նաւ 2,623,000 թօնօ տարողութեամբ:

Նորվեկիոյ շարժումը 11,836 նաւ՝ 177,129 թօնօ վաճառքով, մուտք և 17,930 նաւ 2,149,360 թօնօ բեռով և Լը, Համագումար 11 միլիօն թօնօյէն աւելի:

Տանըմարքա ունի 3,590 նաւ 330 հազար թօնօ տարողութեամբ: Շարժումն է մուտք՝ 59,178 նաւ՝ 2,831,000 թօնօ բեռով: Ելք՝ 60,104 նաւ 1,100,176 թօնօ բեռով:

Կօթենպուրկ է առաջին նաւահանգիստը Շուէտի և մեծագոյն հրապարակը ներածութեան: Յետոյ կուգան Սեւեռլ, Քրիսթիանիա, Պերէն, Նորեայորկ, Տրոնհայմ, Ֆրեդերիկսթատ:

Տանըմարքայի մեծագոյն նաւահանգիստը և մայրաքաղաքն է Քրիսթիանիա:

Շուէտ - նորվեկիոյ առուտուրը կը հասնի 1 երկիրիօն 300 միլիօն ֆրանքի, որուն 3/5ը արտածութիւնն է կ'արտածէ սպառչ, հանածոյ, մարմէ, յոսէ, սառեալ կը ներածէ գաղթաբեր-
տեր, գինի, արմաթ, կոստ, աղ, ծխախոտ եւ:

Շուէտ Ազգիոյ հետ կը փոխակէ 225,000,000 քրօնի (130ը կ'ըրածէ):

» Գերմանիոյ » »	121,000,000 »	(21ը »)
» Տանըմբրքի » »	78,000,000 »	(35ը »)
» Նորվեկի » »	42,000,000 »	(14ը »)
» Ֆրանսայի » »	21,000,000 »	(14ը »)
» Ռուսիոյ » »	25,000,000 »	(3ը »)
Նրվկ Անգլիոյ » »	104,000,000 »	(44ը »)
» Գերմանիոյ » »	66,000,000 »	(17ը »)
» Ռուսիոյ » »	24,000,000 »	(4ը »)
» Շուէտի » »	42,000,000 »	(21ը »)
» Ֆրանսայի » »	13,000,000 »	(8ը »)
» Տանըմբրքի » »	14,000,000 »	(5ը »)

Տանըմարքայի առուտուրը կը հասնի 650 միլիօն ֆրանքի, ոչուն 381,500,000ը ներածութիւնն է:

Կ'արտածէ աղած յոսէ, բոստ (30 միլիօն քուրօն) յիւն-
իւղ, արմաթ, մարմէ, կարագ, հասկիլ (4,600,000 քուրօնի):

Կը ներածէ հանածոն (18,500,000 քուրօնի), մարմէ, սպառչ, օղի, հիւսուած:

Անգլիոյ հետ փոխանակութիւն արժէքն է 190,000,000 քուրօն

Գերմանիոյ » »	»	190,000,000 »
Շուէտ-նորվեկի » »	»	100,000,000 »
Ռուսիոյ » »	»	30,000,000 »
Հոլանտայի » »	»	8,000,000 »
Պելճիքայի » »	»	10,000,000 »
Ֆրանսայի » »	»	10,000,000 »

Տանըմարքա Եւրոպայի մէջ ունի իւրաքանչիւր կզգին, որուն եզերքներն ու գետակները առատ ձուկ կը պարունակեն, Հիւսիս Ամերիկայի մէջ՝ կրօնընդհանուր ստանա-
լին և անբեր երկիրը և Ս. Խաչ, Ս. Թոմաս և Ս. Յովնան կզգին երբ Անթիլեանց մէջ, Կալուածոց տարածութիւնն է 194,528 քառ. քիլոմէթր և բնակիչ 127,184:

Գրամ, կշիռ և չափ. — Շուէտի դրամական միւթիւնն է բէտար = 1, 39 ֆր. որ բաժնուած է 100 էօրէի (ore): Երկայնութեան միւթիւնն է սոթ (fot) = 0, 29 մ.: Ծանրութեան միւթիւնը՝ սոթուր (լիտր) = 453 կրամի: Մեթրական դրութիւնը ընդունած է:

Նորվեկիոյ դրամականը Շուէտի նման, միւսները՝ ըստ Տանըմարքայի:

Տանըմարքա — սոկի Ֆրեդերիկ = 20, 55 ֆր. արծաթի համար կրկին բէտար = 5, 55 ֆր. միւսները Շուէտի նման:

Շուէտ — նամակատուն 2,722, նամակ եւ, 172 միլիօն հեռագրատուն՝ 1418, հեռագրաթել 4260 քիլոմէթր, 2,177,477 հեռագրալուր (1897ին):

Նորվեկիա — 2,111 նամակատուն, 90 միլիօն նամակ եւ, 483 հեռագրատուն, 27,644 քլմ. հեռագրաթել, 2,034,614 հեռագրալուր:

Տանըմարքա — 1018 նամակատուն, 146,200,000 նամակ եւ, 426 հեռագրատուն, 20,503 քլմ. թել, 1,880,738 հեռագրալուր:

Գ Լ Ո Ւ Ի Ի

Ի Բ Ե Ր Ե Ա Ն Թ Ե Ր Ա Կ Ղ Զ Ի

Ա. Ս Պ Ա Ն Ի Ա

Ա Պ Ա Ն Ի Ա Յ Ի Բ և փորթուկալիք առաջին անգամ բաղըն ունեցան գտնելու աշխարհի նոր ճամբաները և հաստատուելու ԺՉ. դարուն, Ասիոյ և Ամերիկայի ընդարձակ երկիրներուն մէջ: Նոյն դարուն Եւրոպայի առեւտրական մայրաքաղաքներն էին Քատիքս և Լիզպոն. նա Սակայն ԺԹ. դարուն հետզհետէ կորսնցունելով այս

գաղթավայրերը, անդարմանելի կորուստ ունեցան նաև վաճառականութեան մէջ:

Թերակղզիին տարածութիւնն է 600 հազար քառ. քիլոմէթր, որուն 500 հազարը Սպանիոյ վերջնայոյ բնակիչն է 18,226,000, իսկ փորթուկալիսն՝ 5,050,000: Կլիման չոր ու տաք, լեռնադաշտերը՝ ցուրտ, ըստ առածին 3 ամիս ձմեռ, 9 ամիս դժոխք: Սպանտի եղերքները մեղմ ու խոնաւ:

Բերք. — Սպանիոյ մակերևոյթին 1/5ը անմշակ մնացած է: Միջերկրականի բոլոր եղերքները, Մաւրիտանացւոց առեկէն ի վեր պարտէզի մը պէս մշակուած ու բարեբեր: Երկրին 1/3ը մշակուած, մնացածը ծածկուած է արօտավայրերով, անտառներով և այգիներով:

Արևելքի բաժինն է 11 միլիօն հէքթար, որ կ'արտադրէ 100 միլիօն հէքթօլիտր, երկրին պէտքէն աւելի: Կեդրոններն են Քասթիլիա, Անտալուսիա, Լաթրամա. տիւրա: Բերքին կէսէն աւելին ցորեն: Հոճար՝ 11 միլիօն հէքթօլիտր, Աստուրեանց, Կալիցիոյ, Արալոնի աղքատ ժողովրդոց ապրուստը: Եգիպոսցորեն՝ 12 միլիօն հէքթար: Միջերկրականի ափունքը: Գալի՝ 25 միլիօն հէքթօլիտր, Վալադիա՝ անկարևոր, Բրէն՝ 1 500,000 հէքթօլիտր յաջողած, ի Քասթիլիոյ, Անտալուսիոյ Գեոնիսիոյ՝ 20 միլիօն հէքթօլիտր որ՝ բանջարեղէններու հետ՝ Սպանիոյ մշակութեան մեծագոյն բաժինը կը կազմէ:

Այգի և պարտէզք. — Սպանիոյ երկրագործութեան առաջին հարստութիւնն է այգին, որ կը գրաւէ 2 միլիօն հէքթար: Անուանի են Մալակայի, Քասթիլի, Ալիքանթի կարմիր ու ճերմակ զինիները: Ստորին զինիները զօրայնելու համար Սպանիացիք գրսէն կը գնեն 850 հազար հէքթլ. ալքօլ, մանաւանդ Գերմանիայէն: Սպանիա 1890 ին հազիւ 5 միլիօն, մինչ 1899 ին 13 միլիօն հէքթլ. զինի կ'արտադրէ: Կը ծախէ Ամերիկայի:

Վալենսի մէջ Կարթագեն կը ծածկէ 25 հազար հէքթար գետին, նոյնպէս Քարթալենդա, Վիլլարէս, Պիւրիանա,

Ալտրա, իրենց յաջողութիւնը կը պարտին նարնջենիին: Վալենս և իր շրջակայքը, Քայէարեան կղզիները կ'արտածեն տարեկան յԱնգլիա, Ֆրանսա, Գերմանիա և մինչև Բմբրիկա 80 հազար թօնօ նարինջ, 10 հազար Ֆրանքէն աւելի արժէքով: Սպանիա կ'արտածէ նաև Բիգարա (bigarade, նարինջին մէկ տեսակը) ի Հոլանտա, ուր անոր կեղևը կը գործածեն նարնջօղիի (curacao) շինութեան: Անուանի է Բուրշ, Կուրշ, Լիմոն, Բոնիւր (poncire) = մեծ ու անուշահոտ լիմոն), արմա, Կալի:

Կ'արտադրէ նաև Վուշ, Կանթ, Ճիսիո, Գալիսի, կը մշակէ Կրոն, Կորոն, Բիլի, Կարտուս, Կալիսի, Կիլիսի, նոյնպէս արևադարձային առեկէն: Բաթի, Կալիսի, Գեոնիսիո, Կիլի, շաքարեղէն, Կիլի՝ Հարաւ - Արևմտ. տ. քի տաք կողմերը:

1886 ին նարինջ, կիտրոն և անոնց զանազան տեսակներէն արտադրեց 44 միլիօն քիլօ:

Անասունք. — Նշանաւոր են Անտալուսիոյ յէրը, արար տեսակէն: Չիւս առուտուրի համար Եւրոպայի մէջ նշանաւոր է Սէվիլի տօնավաճառը: Սպանիացիք իբրև գրատտ կը գործածեն, բեռ կրելու համար, էշ և Զրէ: Ունարդիներու ամենէն հարուստ երկիրն է, Եւրոպայի մէջ, Սպանիա, 100 մարդու համար 131 ոչխար, մինչ Անգլիա ունի 100 մարդու համար 105, Նորվեգիա՝ 100 ին 92, Տանըմարքա՝ 100 ին 78, Ռուսիա, փորթուկալ, Հունգարի 100 ին 62, Ֆրանսա՝ 51, Իտալիա, Շուէտ՝ 30, Հոլանտա՝ 21, Աւստրիա՝ 17, Չեխիերիա՝ 16, Պելճիքա՝ 6: Քասթիլիոյ բուրդը ամենէն ազնիւն է: Ամեն լեռնադաւառներու պէս, Սպանիա կը սնուցանէ այժ 4,500,000 Սպանիա ունի 2,500,000 որսորդ, նոյնչափ էշ ու Զրէ, 800 հազար ձի, 23 միլիօն ուղի: Այս բնական հարստութիւնով մէկտեղ, Եւրոպայի յետագոյն երկիրն է Սպանիա:

Հանք. — փունիկեցւոց, կարթագլինեցւոց և Հոնովմայեցւոց օրերէն վեր սկսած են շահագործուիլ Սպանիայի:

նիոյ հարուստ հանքերը: Սակայն Սպանիացիք՝ ճամբարներու և դրամագլխի նուազութեան պատճառաւ՝ այդ հանքերուն մեծ մասը չեն բանեցնել: Անգլիացի, Զրանսացի, Պելճիքացի, Գերմանացի դրամատերերն են որ մեծ ոյժ կուտան մետաղներու հանումին: Առատ է հանքահանքը: 1,060,000 թօնօ կը հանուի տարեկան Անտալուսիայէն, Քասթիլիայէն և Աստուրեաններէն: Երկաթի հանքայ տարեկան 6 միլիօն թօնօ, որուն 4ը կ'արտածէի Գերմանիա, Պելճիքա, Անգլիա և Զրանսա: Կապար, յաճախ արծաթախառն, խիստ առատ հանածոյ մ'է, արտադրութիւնը 300 հազար թօնօյէն աւելի: Պղնձ հանքերը Ռիօժենթայի և Ալմերիայի կը վերաբերին անգլիական ընկերութեանց, որոնք 1888 ին հանեցին 3,202,000 թօնօ: Ալմատէն ունի Եւրոպայի ամենէն հարուստ անդալթի հանքը, 2 միլիօն քիլօ: Զէնձ՝ 100 հազար թօնօ, մանկաշէշ և արծաթախառն հանածոներ՝ կարծազինէի մօտերը: Հանքային արտադրութիւնը կը գնահատուի 200 միլիօն բեղեթա (բեգ = 1 Փր.):

Ճարտարագործութիւնը. — Այս հանածոներու մեծագոյն մասը կ'արտածուի, և կը գործուի օտար երկիրներու մէջ: Սպանիա խիստ քիչ դարբնոյններ ունի յՕվիէտօ, Պիլպատ: Զոյն արտադրութիւնն է 150 հազար թօնօ, երկաթի՝ 60 հազար թօնօ: Անտալուսիա, Պարչելոնա, Սեվիլ ունին գործանոյններ զբարձրագոյն և գործիչներ շինութեան: Պարչելոնա կը շինէ նաև երկաթագործիչներ, բամբակոյնի երկրորդագոյն գործիչներ, թուղտոյ և կիթիցքիա՝ դեմքեր և կորցնելը: Պարչելոնա, Մատրիտ, Սեվիլ յանձնակցի կեդրոններ են: Գնահատելի են Պարչելոնայի ապակեգործութիւնը և կրանճայի Բիւրեղագործութիւնը:

Երկու միլիօնէ աւելի շամբրակ և բազմութիւ ճեռական և մեքենական գործասեղաններ կը մանեն ու կը գործեն Բարձր՝ Քասթալոնիայի և Անտալուսիայի մէջ: Պարչելոնա առաջին կեդրոնն է Բարձրագործիչներ: Բարձր ճարտարարուեստը կ'սկսի ժե. դարէն, երբ կը շինէր ընտիր աստի:

Պարչելոնա և իր արուարձանները կը գործեն ասուրի Բալենցիա ունի բուրգի կարևոր գործարաններ:

Գործարանները կը շինեն ապակեգործութիւն, ստիպան գեղանի սպանիակները իրենց քօղերը (mantille) կը գնեն Ղիսնի գործարաններու գործուածներէն, զոր գիտեն կրել հիանալի վայելչութեամբ:

Երկրորդական են Խաղաղագործութիւնը, ալիւմինիումիւնը, կեմիքստիւնը (sparterie) և ուրիշ արհեստները:

Ճամբարներ. — Սպանիա իր անմատչելի լեռներուն պատճառաւ չունի պէտք եղածին չափ կանոնաւոր ճամբաներ: 30 հազար քիլօմէթր ճամբուն մէկ կարևոր մասը դեռ հասարակ ուղի է: Այնքան ընդարձակ երկրի մը մէջ հազիւ 13 հազար քիլօմէթրի չափ երկաթուղի ունի: Մատրիտ երկաթուղիով կապուած է բոլոր կարևոր նաւահանգիստներուն, վալենսի, Պարչելոնայի, Ալիքանթի, կարթագինէի, Մալակայի, Քատիքսի, Օվիէտայի, Պիլպատի, Սանթանաէրի և Սէն-Սեպուսթիէնի: Սպանիա Զրանսայի հետ կը հաղորդակցի Մատրիտէն ի Պէյնօ, և և Պարչելոնայէն ի Բէլքիսեան: Մատրիտ և Լիզպոն միացած են երկու երկաթապատ գիծերով: կը փոխադրեն 18 միլիօն ճամբորդ, 10 միլիօն թօնօ վաճառք:

Նաւարկելի ջրանցներն են 1,500 քիլօմէթր փոխադրութեանց մասին Սպանիա շատ յետագէմ է:

Ունի 2856 նամակատուն, 174 միլիօն նամակ եւ, 95,450 քիլօմէթր հեռագրաթել, 5,181,714 հեռագրալուր, 37,607 քիլօմէթր հեռախօսական թել, 1,374,851 խօսակցութիւն:

Արտաքին առուստար. — Սպանիոյ արտաքին աւարկաւոր կը հասնի 2 երկիլիօն ֆրանքի:

Կ'արտածէ գինի (310 միլիօնի) սրճիչ, բորբ (18 միլիօն), պրոպան (80 միլիօն), կաշի, յէլ (13 միլիօն), սուրճ (20 միլիօն), պղնձ, կապար և երկաթի հանածոյ, անդալթ, կորա, Բրէ և զբարձր կերպաներ, մանր երկաթեղեն, խալալի եւ:

կը ներածէ բաղնայն բերեբ (60 միլիօն), բաժնէ կոստ (13 միլիօն), բրդեղէն (25 միլիօն), զարմաւոր (14 միլիօն), զարմ (35 միլիօն), նորայնաբէտան նիւթեր, համաժամար (45 միլիօն), բաժնէ (70 միլիօն), սորաշ (45 միլիօն), զեղեղ (42 միլիօն), օղի (26 միլիօն) եւ ներածութիւնը 100 միլիօն ֆրանք աւելի կը լինի:

Սպանիոյ և Ֆրանսայի փոխանակութեան արժէքը կը հասնի 705 միլիօն ֆրանքի: Անգլիոյ՝ 400,500,000 ձիւրալթարի ճամբով: Գերմանիոյ հետ՝ 60 միլիօն ֆրանքի, Թուրքիոյ՝ 6,600,000 ֆրանքի, Միաց-Նահանգաց՝ 100 միլիօն ֆրանքի, Պրագիլի և Արժանթինի՝ 300 միլիօն ֆրանքի: Կորսնցուց Քուպան որուն հետ կը փոխանակէր 210 միլիօն ֆրանքի:

Մաքսերը շատ բարձր են Սպանիոյ մէջ, արմատիքի և ալիւրի համար 30 աւ 100, ջորի գլուխ 80 ֆր. ձի գլուխ 180:

Մոլդային առուտուր. — Մոլդային առուտուրը ցամաքայինէն աւելի է: 1468 առևտրական նաւ 485,910 տակառաչափով, (427ը շոգենաւ 313,186 տակառաչափով):

Նաւային շարժումն է մուտք՝ 17,355 նաւ, 13,278,151 թօնօ տարողութեամբ. ելք՝ 16,957 նաւ, 13,995,920 թօնօ տարողութեամբ. ընդամենն 34,312 նաւ 27,274,071 թօնօ, որուն 15 միլիօնը օտար գրոշներով, գլխաւորաբար Անգլիոյ:

Պարչէկոնա մեծագոյն նաւահանգիստն է, որուն միջոցաւ տեղի կ'ունենայ ամբողջ փոխանակութեանց գրեթէ 1/3ը: Հոս ելեմուտ կ'ընեն 8 հազար նաւ 5 միլիօն թօնօյէն աւելի տարողութեամբ և իրը 500 միլիօն բեղութեամբ արժէքով (2/3ը ներածութիւն):

Մալակա, երկրորդ նաւահանգիստը, 1 միլիօն թօնօ տարողութեամբ:

Քատիքա, Ովկէանի վրայ Սպանիոյ գլխաւոր նաւահանգիստը, տուրեառը Մալակայի չափ: Այս վերջին երկուքին շատ կը վնասէ ձիւրալթար:

Կարթագինէ, ելեմուտ 3 հազար նաւ, առուտուր 50 միլիօն ֆրանք:

Պիլչպաօ. — Ատլանտի վրայ, 9 հազար նաւ, 5 միլիօն թօնօ տարողութեամբ և Սանթաբեր կ'ընեն մեծ առուտուր Անգլիոյ, Ֆրանսայի, Գերմանիոյ և Ամերիկայի հետ: Բաւական կարևոր նաւահանգիստներն են Ալեքսանդր և Վալենցիա:

Սպանիոյ Ափրիկեան կալուածոց տարածութիւն 709,450 քառ. քլմ. բնակիչ 35 միլիօն:

Դրամական, չափ եւ կշիռ. — Բաղմաթիւ վարկային ընկերութիւններ և ուրիշներ կազմուած են բաժնետիրութեամբ: Ելմուտն աւելցուած հաստատութիւնն է Օզդ. պանքան, որ է միակ իրաւունք ունեցողը շրջաբերութեան տոմսեր հանելու:

Մասնաւոր պանքաներ հաստատուած են ի Պարչէլոնա, Մալակա, Վալենցիա եւ:

Չափերն ու կշիռները ըստ մէթրական գրութեան:

Բ. Փ Ո Ր Թ Ո Ւ Կ Ա Ա

Բերք. — Մակերեւոյթին քառորդ մասը միայն մշակուած է: Արհեռէ մշակութեան նուիրուած է 1,500,000 հէքթար, որուն արտադրութիւնն է 12 միլիօն հէքթօլիտր (7՝ եգիպտացորեն, 3՝ ցորեն, 2՝ հաճար) անբաւական իր պէտքին, զոր կը լրացնէ Ամերիկայի միջոցով: Բազմաբեղէն մշակութիւնը յոյժ առաջացած է ամենէն աւելի մշակուած է Գեոնիոնը: Ճարտարական մշակութեանց առաջինն է Բրէնն. Մետաքսին տարեկան բերքն է 50 հազար քիլօ. Չիլէնն ընտիր ձէթ կուտայ (250 հազար հէքթօլիտր):

Փորթուկալի երկրագործական գլխաւոր հարստութիւնն է այգին: Նշանաւոր են Տուրոյի գինիները՝ Լիզպո-

նի և Սէթիւպալի շուրջը: Ֆրանսացւոց աւելի ծանօթ է Բորթոյի գինին: Ֆրանսա փորթուկալէն կը գնէ 800 հազար հէքթլ. գինի, Անգլիացիք ա՛լ աւելի: Փորթուկալ տարեկան կ'արտադրէ 4 միլիօն հէքթլ. գինի:

Անուանի են Մատերայի և Ասորեանց գինիները, զոր մեծ մասով կը գնէ Անգլիա: Թէյոօրանի մշակութեան փորձը սկսած է յաջողիլ:

Պտուղներ կ'արտածէ Անգլիա և մինչև Ամերիկա: Տաք երկրի պտուղներ, նոյն իսկ Անթիլեանց մանգէնի (manguier) լաւ արդիւնք կուտան փորթուկալի հողին մէջ: Արկարփի ունի որսուելի: Բայց ամենէն համեղ պտուղն է շաքինջը, որ մինչև և իսկ առած է երկրին անունը « փորթուկալ »: սակայն վերջին տարիներս ցորտին պատճառաւ ծառերը մնասուեցան. մինչ 1872 ին տուաւ 324 միլիօն նարինջ, 1887 ին իջաւ 51 ի: Ասորեանք ալ ունին ընտիր նարինջ: Անուանի են կէրօնը, Բոօզը, Նոօզը, Նոօրը ևն:

Անասնաբուծութիւնը առաջացած չէ. դուրսը՝ 600 հազար, յի՛ 200 հազար՝ անուանի իրենց տօկունութեամբ ոչոք՝ 3 միլիօն, այժ՝ 1 միլիօն երկու հարիւր հազար:

Փորթուկալ չունի Սպանիոյ պէս անասնաբուծ, անխոհեմ փայտահարներու պատճառաւ: Անտառներու տարածութիւնը կը հասնի 500 հազար հէքթարի, որ կուտան անկաշի և շո՛: Գինիէն վերջ գլխաւոր արտածելի նիւթն է սունկը (մանթար):

Հողը՝ խիստ բարեբեր, կլիման՝ նպաստաւոր, սակայն փորթուկալ չկրնար օգտուիլ ըստ արժանւոյն:

Հաքն եւ ճարտարարուեստ — փորթուկալ հարուստ չէ հանքի կողմանէ, բայց աճուի հանքերը կրնան տեղական սպառումէն աւելի արտադրել, մինչ հազիւ կը հանէ 20 հազար թօնօ, և կ'ստիպուի դրօշն գնել 400 հազար թօնօ: Պղինձ՝ 80 հազար թօնօ. ամեն դաւառ ունի երկաթ: կը հանուի Ալէյրոյէն՝ կոպր և քանի մը խաւերէ անագ, մանկանիւղ և շաքրոտար (antimoine): Արե՛ արտադրու-

թիւնն է 28 հազար թօնօ որով կարեւոր առուտուր ունի Անգլիոյ հետ:

Անգլիացիք՝ իրենց դրամագլխով ու ճարտիկութեամբ բաւականին զարգացուցած են փորթուկալի ճարտարարուեստը:

Բորթօ և Լիզպոն ճարտարարուեստի կեդրոններն են. ունին մետաղներու յուլարաններ, մեքենաներու և գործիքներու գործանոցներ. բուրգի, բամբակի, մետաքսի մանաւանդ և հեռուաշարաններ: Փորթուկալ ունի նաև Բոօրօնիօնի օղիի և շաքրանի շաքարի (բորթօ), Խաղախորդարան՝ ի Լիզպոն, Բիլաօրօնի (բորթօ): Ծաղկած է անկերպարարի Պրակա:

Քոյիմպրա ունի յուլարան և անգլիացիներու պատրաստութեան գործարաններ: Այս վերջին ճարտարութեան արտածութիւնը կուտայ 7 միլիօն ֆրանք, որուն 5 միլիօնը արտէն:

Սակայն աւելի շահագործողը Անգլիա է:

Ճարտարներ. — փորթուկալի գիրքը յարմար է վաճառականութեան, նախ Լիզպոն, յետոյ Բորթօ են Ամերիկա և Ափրիկէ մեկնող նաւերուն կեդրոն: Շինած 10 հազար քլմ. կանոնաւոր խճուղի, 2360 քիլօմէթր երկաթուղի, բայց դեռ կանոնաւոր չեն Սպանիոյ հետ հաղորդակցող ճամբաները: Նաւարկելի են Տուերոյ (142 քլմ.) Թալոյ (190 քլմ.) Գոնտէկոյ և կուտախանա գետերը:

Արտաքին եւ ծովային առուտուր. — փորթուկալի արտաքին առուտուրը կը հասնի 500 միլիօն ֆրանքի, որուն մեծագոյն մասը ներածութիւն: կ'արտածէ գինի, աճուի, պորտը և վաղահաս պորտը, յուլ, անասնոց: կը ներածէ արօրի, դուրս, գաղթայնի բերքեր, անասնաբուծ և պորտաբերքանոց նիւթեր:

Փորթուկալի առաջին յաճախորդն է Անգլիա, իր 110 միլիօնի առուտուրով, յետոյ կուգան Ֆրանսա՝ 55 միլիօն, Պրագիլ՝ 40 միլիօն, այս վերջինը տարուէ տարի կ'աւելնայ փորթուկէզ գաղթականներու շնորհիւ, որովհետև տարին 10 - 15 հազար գաղթական կ'երթան ի Պրա.

զիլիա: Գերմանիոյ փոխանակութեան արժէքը կը հասնի 30 միլիօնի (4ը ներածում), Միացեալ-Նահանգացի 30 միլիօն, (4ը ներածում), Սպանիոյ՝ հազիւ 22 միլիօն, Պելճիքայի՝ 28 միլիօն (4ը դնում):

Փորթուկալ ունի 47 շոգենաւ 35,393 թօնօ տարողութեամբ և 239 առագաստանաւ՝ 42,452 թօնօ տարողութեամբ: Փոխադրութեանց մեծագոյն մասը անգլիական գրօշով տեղի կ'ունենայ:


Նաւային շարժումն է 5,115 առագաստանաւ և 5,679 շոգենաւ՝ 10,286 թօնօ տարողութեամբ մուտք, և 5,036 առագաստանաւ, 5,682 շոգենաւ 10,280 թօնօ տարողութեամբ ելք:

Գլխաւոր նաւահանգիստներն են Լիւպօն և Բօրնօ:

Գաղթաւյալք. — Երբեմն փորթուկալ առաջնակարգ գաղթային պետութիւն մ'էր մինչև Մայր Արևելք, Ափրիկէի և Ամերիկայի եզերքները տարածուած: Այժմ ունի միայն Դալմէի գետի կողմէն Սեպիլի և Կոնստանտինուպոլիս, Պեկին, Մոնթեպէլի (մաս մը): Հնդկաստանի մէջ կ'աւ և Տէ-է քաղաքները. խաղաղականի մէջ Մատո և Թէ-Տօր կողմները. տարածութիւն 2,146,600 քառ. քիւմ. և 15 միլիօն բնակիչ: Այս գաղթաւյալներուն առուտուրը կը հասնի 100 միլիօն ֆրանքի, որուն 1/3ը Անգլիոյ հետ և 1/5ը Մայր-Երկրին բաժինն է:

Դրամական, չափ և կշիռ. — Ելմտական գլխաւոր հաստատութիւնն է «Ազգ. պանքա»ն: Դրամք. — բէւլ = 0,0055 ֆրանք, 200 բէյ = 1, 10 ֆրանք. ֆոնթօ = 1 միլիօն բէյսի = 5, 5 ֆրանք, ֆոնթօ (սոկի) = 10,000 բէյսի, ֆոնթօ (արծաթ) = 1000 բէյս կամ 5, 5 ֆրանք:

Չափերն ու կշիռները մէթրական դրութեան համաձայն:



Գ Լ ՈՒ Ի Բ

Մ Ա Ր Ո Ք

ՄԱՐՈՔԻ տարածութիւնն է 440,000 քառ. քիւմէթր, բնակիչ 8 միլիօն: Ափրիկէի հիւսիս-արևմտեան անկիւնը, սքանչելի գիւրքով, Լեռնաղաշտերը մերկ, Ծովեզերքը կը մշակեն արմտիք, որ կը բաւէ տեղական սպառումին. բոլորէ, ցորեն և մասնաւորաբար կորձը ցորեն, էֆեդրացորեն, կորէն կը հնձուին առատութեամբ:

Լաւ մշակուած են բանջարեղէնները, մանուանդ ուլասիսներու մէջ: Մարոք մեծ յաջողութեամբ կ'արտածէ նախընծայ պտուղներ և բանջարեղէններ. Նշանաւոր են համեզ պտուղներու, Բուրձի, Զուրի, Զուրի, Կէրուէ մրգասահմանները: Ամենէն կարեւորներն են յէրէն և արմուկներ: Բայց ծառերը լաւ չեն խնամուիր, ձէթն ալ գէշ կը պատրաստուի: Անապատի անբաւարար ծառն է արմաւենին, մանուանդ Տրապիսիք: Արևմուտքէ մինակ պտուղին համար կը մշակուի:

Մարոքի կլիման յարմար է բամբակէ մշակութեան, զոր տեղական սպառումին չափով միայն կը մշակեն, առատ է գետնաղէնները. Նուազ կ'արտագրեն ռիզին, շաքար, կոնյակ, Լեւուր, Կորուր և ձիաբուր: Կ'աճի նաև Բէյրուտի:

Ազգային լեռնաղաշտերը կը սնուցանեն 40 միլիօն ռիբ, 12 միլիօն ռիբ, և ընտիր տեսակէ արար յէր:

Արևմտեան ծովափունքը կը սնուցանէ 6 միլիօն Կորուր, բազմաթիւն է և ջրէ Անապատի եզակի կենդանին է Կորուր՝ 1 միլիօն: Բազմաթիւն են Բուրձիները:

Մէկ խօսքով Մարոք սքանչելի երկիր մ'է երկրագործութեան և անասնաբուծութեան, բայց տակաւին միջնադարեան եղանակներով կը կատարուին մշակութիւնք:

Համք և Գարսարութիւն. — Մարոք ունի արծաթէ կարծաթէ և Գարսարութիւն. — Մարոք ունի արծաթէ կարծաթէ և Գարսարութիւն. — Մարոք ունի արծաթէ կարծաթէ և Գարսարութիւն.

դարի, երկաթի, շարքառի և մանուանդ պղնձի հարուստ հանքեր, բայց ճամբաներու չգոյալ թեան պատճառաւ երեսի վրայ թողուած են: Զուրկ է այրելի հանքերէ:

Եւրոպական մրցման հետեան քով ճարտարարուեստը յետագէմ է, թէև Մարոքի գործաւորք ճարպիկ և ուշիմ են: Կը շինեն ճաշակաւոր դէմքեր, վէռնիճուած յաճապակի, կաշի, գորգ, գահաբեղններ: Ճարտարութեան գլխաւոր կեդրոններն են. Ֆէս, հիւսուածներու շինութեան կոյմանէ և Մոկատար՝ կաշիի մասին:

Ճամբաներ. — Մարոք թէև Եւրոպայի գրացի, Սպանիայէն 40 քիլոմէթր միայն հեռու, դեռ չունի երկաթուղի, հեռագիր և ոչ իսկ կանոնաւոր ճամբայ: Դրացի Օրանի (Ալճէր) երկաթուղին մինչև իր սահմանադրուելը կը հասնի փոխադրութիւնները ուղտով, ձիով և էջով ու ջորիով կը կատարեն և այսպէս վաճառքները կը հասնին Եւրոպական առուտուրին բացուած նաւահանգիստները՝ Թանճէր, Մոկատար, Սաֆֆի, Սալէ - Ռապատ, Գազապլանքա, Մաղական և Լարայ:

Ափրիկէի ներքին գաւառներու առուտուրը տեղի կ'ունենայ կարաւաններով, որք երկու ճամբով կերթան. Ֆէսէն Թոմպուքթու՝ Թաֆիլէթի ուղտիսով, Թուաթ և Էն - Սալահ. երկրորդ Մարոքէն ի Ղատամէս և Գահիրէ՝ Թունուզի և Ալճէրի սահարայով:

Սոււտուր. — Մարոքի արտաքին առուտուրը կը հասնի 80 միլիօն ֆրանքի, 38 միլիօնը արտածութիւն:

Կ'արտածէ բանջարեղէն, սրճիկ, յէմպոպոն, դոնաթ, խոճ բոբր, կաշի, մորթ, հասկիկ ևն:

Կը ներածէ բամբակեղէն, մետաղեղէն, բրդեղէն, շատր, գաւառային սպիտակեղէն, մանր երկաթեղէն ևն. գլխաւորաբար Անգլիա. յէն և Ֆրանսայէն:

Ճիպրայթարի շնորհիւ Անգլիա մեծ շահ ունի Մարոքէն, առուտուրին մեծ մասը իւրացուցած է, կուտայ 16 միլիօնի բամբակեղէն և 9 միլիօնի զանազան նիւթեր

և կը գնէ 20 միլիօնի նախանիւթեր, որով փոխանակուած էանց արժէքը կ'ըլլայ 45 միլիօն ֆրանք:

Ֆրանսայի փոխանակութեան արժէքն է 19 միլիօն ֆրանք: Եղերանաւեր կոնսոնաւոր երթևեկութիւն կ'ընեն Մարսիլայէն Մարոք: Սպանիոյ առուտուրը 7 միլիօնի կը հասնի. Գերմանացիք սկսան առևտրական նոր տուներ հաստատել, առայժմ առուտուրն է 2 միլիօն. Պելճիքա և Իտալիա ևս ունին իրենց բաժինը:

Նաւայիճ չարժոււմ, դրամ, չափ եւ կշիռ. — Մարոքի նաւային չարժոււմը կը հասնի 2 միլիօն թօնոյի:


Անգլիական դրօշով ելիմուտ կ'ընեն իբր 1500 նաւ, 420 հազար թօնօ տարողութեամբ, նոյն չափով նաև Ֆրանսական և Սպանիական:

Արևմտեան եղերքին վրայ ֆաշապլանքա ելիմուտ կ'ընեն 640 նաւ, Մաֆֆէ՝ 350 նաւ, Մաղան 635 նաւ: Ասոնք կ'արտածեն արմտիք և կ'ընդունին շաքար, թէյ, անգլիական բրդեղէն ևն Մաղաթը կ'արտածէ այժի մորթ, պտուղներ, ջնարակի խէժ (gomme de sandaraque), մեղրամոմ, ձէթ և կը ներածէ շաքար, երկաթ, պիսքիւի, թէյ (250 նաւ, 206 հազար թօնօ տարողութեամբ):

Թամաներ. — 2,325 նաւ 683 405 թօնօ տարողութեամբ, ամենէն բանուկ նաւահանգիստն է. կ'արտածէ եղ, մորթ, պտուղ, բուրդ ևն:

Դրամ. — Ոսկի՝ պոպոն = 10 ֆր. պոպոն = 80 ֆր. արծաթ՝ պոպոն = 0, 26 ֆր. կը բանին նաև Անգլիական և Ֆրանսական դրամները:

Խանութ. = 54 քիլօ, լիտր՝ 500 կրամ, կանգոն = 0, 57 մէթր, ֆանէկ՝ = 56 39 Լ:



Գ Լ ՈՒ Ի Բ

Ս Ա Ն Ա Ր Ա

Ս Ա Ն Ա Ր Ա Յ Ի տարածութիւնը 6 միլիօն քառ. քիլօմէթր և բնակիչը կարծեօք 5 միլիօն իր հաշուով պէրպէքր ցեղէ, մեծ մասով վրանաբնակ Տեսարանը տխուր միօրինակ ու ամայի. ուլասիտները մօտաւորապէս 200 հազար քառ. քիլօմէթր, ամբողջ տարածութեան 1/30ը, ջուրէ գուրկ, կլիման՝ հեղձուցիչ: Կարելի է 1,200,000 հէրթար մշակել Արթէզեան ջրհորներու գրութեամբ:

Բերք. — Սահարայի գլխաւոր եկամուտի աղբիւրն է բրնձը: Արմաւենեաց հովանիներուն ներքեւ բնիկները կը մշակեն մասնաւոր քանակութեամբ բրնձ, գորի և բոլորէրէրէր:

Ուլասիտներու մեծ մասին մէջ մշակուած է բամբակէն, որ բնիկներուն կը հայթայթէ կտաւի շինութեան նախանիւթը:

Ճուֆի մէջ առատ է «լի», Ատրարի մէջ՝ ինժին, որուն բերքը յայժ քնտիր է: Տեղացիք իրենց համար կը մշակեն ծխախոտ և խաշուշ:

Արուսէրը չափաւոր, բայց յարմար ոչխարաբուծութեան: Ուղար «անապատի նաւը» շատ լաւ կը գոհանայ այս նիհար արօտով: Արեմուտքի կողմը բազմաթիւ է շայէօքը, զոր կարելի է ընտելացնել:

Արուստ եւ, առուստդ. — Սահարայի հանքային հարստութիւնն է «լի», որ կը կազմուի գոլորշիացումով Պիլմայի, Թիչիթի, Ատրարի անսահման աղահանքերուն մէջ, անսպառելի ընդունարաններ որ կը սնուցանեն ամբողջ Սուտանը:

Արուստ կամ արհեստ զուրկ են կարևորութենէ: Սահարա ունի բանուկ առուտուր Սուտանի, Մարս.

քի և Թարապլուսի հետ, անապատի ճամբով, կարաւաններով, որ կը մեկնին դէպի Հիւսիս՝ Ռաթէն, Ղատաճէն, Էն-Սալահէն՝ Թանասֆ, առուտուրի և տօնավաճառի կեդրոններ և դէպի Հարաւ՝ Ալաաէսէն Ալուան և Պիլմա: Առաջինք դէպի Մարսր և Թարապլուս, երկրորդները՝ Սուտան:

Գլխաւորովսխաներ. — Թուսէ, որ պէրպէրներու լեզուով կը նշանակէ «աղնուադոյն ուլասիտներ» կ'ընծայեն թեթեւ խորութեամբ ջրի ցանցեր, զոր Պէրպէրք գիտցած են շահագործել՝ պարտէզներն ու արմաւենիները սեռելու համար: Այս գետը ձեւացած է երկու ջրաշատ գետակներէ՝ Ուէտ-Կիր՝ որ կ'իջնէ Մարսրի լեռներէն, և Ուէտ-Չուսֆանա՝ որ կը բղխի Այն-Մէֆրայէն, ասոնք կը կազմեն Ուէտ-Մէսաուտ գետը: Զուսֆանա և Մէսաուտ ամենէն բնական ճամբաներն են, անտեսադիտական տեսակէտով, կեդրոնական Սահարա երթալու:

1. Կուրարա. — Այս ուլասիտին գլխաւոր կեդրանն է Թիֆանա և ամբողջ Թուսթի առևտրական ամենէն կարևոր հրապարակը: Թիֆանան (9 հազար բնակիչ) ունի կարևոր առուտուր ամեն շարթու: Զուրը առատ, մշակութիւնք զարգացած: Հոս կը հաշուուին 700 հազար արմաւենի:

Կուրարայի ամբողջ բնակչութիւնը կը հաշուուի 85 հազարի, որուն 35 հազարը Պէրպէր, քնացածները Աբաբ և Խափչիկի Ամեն տարի այս վրանաբնակները մեծ կաշաւաններով՝ Ֆրանսայի արբիկեան վրանաբնակներէն կը տանին ի կուրարա բարդ, ոչխար, կարագ՝ լսողի արկի մէջ պահուած, չոր միս, պանիր, կտաւ, մանր-երկաթեղէնք եւ, և կը բերեն անկէ արմաւ, հաշէ (բրդէ հագուստ) եւ: Կուրարայիք, Մարսրի ճամբով, Անգլիա, Ղէն և Գերմանիայէն կ'ընդունին մանր-երկաթեղէնք, մոմ, շաքար, սուրճ եւ:

Ուլասիտին գլխաւոր մշակութիւնն է բալժ-արմաւենի

(palmier - dattier) որուն ծառերու թիւը կը հասնի 2,500,000: Կուրարայի կլիման յարմար է բամբակի մշակութեան:

2. Թուաթի. — Ուէտ - Մէսուաթի բարձրաւանդակներուն վրայ կը տարածուին այս ուլասիաները, լայնք՝ 60 քիլոմէթր, մեծագոյն երկայնութիւնը՝ Հարաւէն Հիւսիս, իրը 200 քիլոմէթր, բնակիչ 100 հազար, արմաւենի՝ 3 միլիօն, որ կուտայ բնիկներուն էական սնունդը: Կը մշակեն նաև Եւրոպայի արմատիքները, պտուղները, նաև բամբակենի:

Թուաթի ամենէն կարևոր երկու գաւառակներն են Թուաթի և Թիսի, այս վերջինը այնքան կարևոր է Թուաթի, որքան Թիսի մունը՝ կուրարային: Ամենէն հարուստ և մազմամարդ ուլասիան է Թիսի, որ մեծ առուտուր ունի Սուտանի հետ:

Թամանթիթ ճարտարարուեստի կեդրոն է՝ իր բազմաթիւ գործանոցներով: Կարաւանները հոս կը բերեն թէյ և Մանչէսթըրի բամբակեղէն:


3. Թիսիքէլթի. — Թուաթի երեք գաւառներէն ամենէն փոքրն է Թիսիքէլթի (25 հազար բնակիչ) որ ունի 230 հազար բնակիչ: Արօտներուն մէջ կը ճարակին բազմաթիւ եղբ և ուղտեր:

Վեց ուլասիաներէն ամենէն ծանօթն է Էն - Սուա, որ կարաւաններ կը բերեն եւրոպական ապրանքներ, մանրերկաթեղէնք, կտաւ, մամ, օճառ, թուղթ և, և կը փոխանակեն կեդրոնական Ափրիկէի բերքերով: Էն - Սուա հիւսուածարանները կը գործեն բրդէ հագուստներ, որ առուտուրի բաւական կարևոր ճիւղ մ'է:

4. Աննէթի եւ Ատրարի ուլասիաներ. — Թուաթի հարաւն է Աննէթի երկիրը (6-8 հազար վրանաբնակ): Աննէթէն 200 քիլոմէթր հեռու է Ատրար լեռնային երկիրը, ուսկից կը հասին գետակներ գէպի ճուֆ և Նիկէր: Կանոնաւոր անձրևներու շնորհիւ այս հովիտները

կը պարարեն ընդարձակ արօտայվայրեր, խոր անտառներ, շիկերէներէ բնակուած:

Ատրարի կեդրոնը՝ Աննէթի կը բնակին գրացի դանազան ջեղեր՝ Իսլամներ, Թուրքերէներ և Աննէթիներ (40-50 հազար): Այս ժողովրդոց ընդհանուր գումարը կը հասնի 1 միլիօնի: Կը բուծեն ընտիր ուղտ, ուղտ, զէբու, ուղտ, ուղտ: Այս գաւառը մեծ կարևորութիւն ունի առևտրական և անտեսագիտական տեսակէտով:



ԳԼՈՒԽ Ժ

ՍԵՆԵԿԱԼ ԵՒ ՅԱՐԱԿԻՑՔ

Ա. ՍԵՆԵԿԱԼ

Ֆրանսուսի հին կալուածներէն է Սենեկալ: Կը տիրեն անոնք վերին - Նիկերէն մինչև Թամպուբիու: Տարածութիւն 250 հազար քառ. քիլոմէթր (մինակ ֆրանսական մասը) և 1,100,000 բնակիչ հպատակ, 2 միլիօն ալ ընդ պաշտպանութեամբ:

Կլիման վատաւողջ, խոնաւ, գեղին և ճահճային տենդերը կը պարտաւորեն զեւրոպացիս հիմ չրոնել: 300 ի չափ պաշտօնեաներ և առևտրական ներկայացուցիչներ միայն կան:

Բերք. — Ֆրանսայի շնորհիւ մշակութիւնք ծաղկած են: Գետնապտուղներ, արմաւենի, եխմէնի: Կնճիլ, բամբակ, լեշու, նաև բրնձ, եգիպտացորեն, պանան, Էնտ կը մշակուին յաջողութեամբ:

Առուտուր. — Սենեկալի առուտուրը կը հասնի 50 միլիօն ֆրանքի (1869 ին 20 միլիօն էր): Այս գումար կընայ բարձրանալ 100 միլիօնի երբ շինուին ճամբաներ

և վերին - Սենեկալի ու Նիկերի բերքերը դիւրութեամբ փոխադրուին:

Սենեկալ Ֆրանսայի հետ կը փոխանակէ 30 միլիօն ֆր. կը ծախէ գետնապիտակենի (60-70 միլիօն քիլօ), հնդկանուշի և այլոց խղ, կնճիթ (1,300,000 քիլ.) խէժ, (2,500,000 քիլ.), ձգախէժ, խամ կաշի, ջայլեամի փետուր, փղոսկր, բամբակ, լեղակ եւ: 20 միլիօնի փոխանակութիւն կ'ընէ Անգլիոյ, Գերմանիոյ և Պելճիքայի հետ:

Սենեկալի նաւահանգիստներն են. Սէն - Լուի, Ռիֆիւք, Տաքար - կօրէ, այս վերջինն է ամենէն կարևորը: Այս եզերքը կ'այցեղեն մասնաւորաբար Ֆրանսական նաւեր:

Մաքուր՝ Ֆրանսական արտադրութեանց համար 5%, իսկ օտարներուն՝ 12%: Երեսնամբ և զենքեր բացառաբար կը վճարեն 10%:

Ֆրանսական դրամն է միայն օրինաւոր կը գործածեն նաև ընչափոխութեան համար (troc) կնէ ըսուած պատառի կտորը՝ 15 մէթրնոց:

Երկաթուղիներու երկայնութիւնն է 250 քիլօմէթր, Սէն - Լուիէն Տաքար և Սուտանի հետ: Երազրուած են նաև նոր գիծերու շինութիւն:

Բ. ՀԱՐԱՄԱՅԻՆ ԳԵՏԵՐ

Սալուժ գետակէն սկսեալ մինչև Սիերա - Լէօնի եզերքին վրայ կարգաւ կը շարունակեն «Անգլիական կառնաձիւրք» Սէն - Մարիէ և Պալմերսթի հետ. Ֆրանսայի հովիտը՝ Բաղաման փոքրութեամբ կալուածները՝ Բիօ - Բաշէօ, Բիօ - Ժեպա, Բիօ - Կրանո, Պեսսակոնի կղզիները եւ: Եւ վերջապէս Հարաւային գետերը. Բիօ - Նիւնէլ, Բիօ - Բանիօ, Բիօ - Տէպիլ, Բիօ - Մէլլուօրէ, որ Սենեկալի մէկ մասը կազմեն: Ամենէն հարուստ և բարեբեր գաւառներն են ասոնք,

ծովեզերքին վրայ. կարապրեն Խալապուսէլէ, (գետնապիտակենի, արմախ նուշ) եւ: Ներքին մասերուն մէջ՝ Կնճիթ, յգախէժ, խէժ, բամբակ, հոճ եւ:

Հարաւային Գետերու ամենէն թանկագին բերքն է Բօլաօ ընկալը, (noix de kolos): Այս բերքերը կը բերուին ծովեզերքէն վաճառատանց մէջ, ուսկից կը փոխանակուին Եւրոպեան ապրանքներու և բնիկ աւելիքներու:

Առուստրալ - Հարաւային Գետերու տարեաւոր կը հասնի 12 միլիօն ֆրանքի, գլխաւորաբար Ֆրանսացոց և Անգլիացոց վաճառատուներու ձեռքով, մաս մըն ալ Գերմանացոց:

Կը ներածեն բամբակէ և բրդէ Կոնակէ, Կնէ, զէնէ, Կէ. Էն Էնէլէ, Կոնոէ եւ, Անգլիայէ, Գերմանիայէ և Պելճիքայէ, որք կը շինեն աման կտաւ «good for negers» ինչպէս կ'ըսեն Լիվրիուլի մէջ: Համարիկի 1 1/2 ֆրանքնոց և 4 1/2 լիարնոց բովը կը ծախեն 5 ֆրանքի:

Եւրոպական ապրանքներ ազատ մուտք ունին:

Գ. ԿԱՌԻՆԻՈՅ ՄՈՂԵՁԵՐՔ

Եւրոպական կալուածք - Անգլիացիք զբաւած են Ռիօն, Զալէրէ, ուր ունին Ա.բոսիմ, Տի.բոսով, Էլմինա և Բօսիմ - Բասիմ: Լաիօ՝ որ ամենէն բանուկն է ունի 105 հազար քառ. քիլօմէթր տարածութիւն և 1,600,000 բնակիչ:

Գաղղիացիք ունին փոքրիկ երեքին վրայ Տապա, Գիլէոն, Էլէրէն վրայ Բորթօ - Նովոյի թագաւորութեան նաւահանգիստը՝ Բօթուսու. Տաշոմէի թագաւորութեան նաւահանգիստը՝ Ռիտահ, Անգլիացիք գաղղիացիներէն աւելին Ստորին Նիկիերի երկիրը և Պէնուէ, Չատ լիճը գնացող ամենէն ապահով ճամբան, ուր կը գտնուին Սուտանի ամենէն բազմամարդ և հարուստ պետութիւնները՝ Պալմերսթի, Պարնո, Արամանո, Հասանո, Սոտիլէ. այս ամենը կը

ընդհանուր արտադրութիւնն եղաւ 44,009,191 քիլօ, որուն գրեթէ կէսը առաւ Սուտան: Բայց Սուտանցիք կը պահպանեն այս բերրին արժէքը, շատ մը անմաքուր խառնուրդներ ընելով:

Վերին - Սենեկալի և Նիկերի ամբողջ դաւաններուն մէջ կ'աճի բնականաբար. դեռ վայրենի վիճակի մէջ էրիգանի (ricin = հէր էպէն տուող): Կ'աճի բուրգ (pourghère) որ կուտայ դեղին հատիկ մը, ու սկից իւզ կը հանեն: Քարիթէ (karité) կարագ էն կրնայ շինուիլ օճառ և մոմ. քարիթէն կը բուսնի անտառներու մէջ: Հարաւակողմերը կը մշակուի շաքար: Կը հանեն նաև իւզ՝ Հնդկընկոյզէն: Վերին - Նիկերի մէջ ուտեստի գլխաւոր նիւթ մ'է բուրգ էպէն:

Հաստաայի և Պէնուայի հովիտները կը մշակուի բամբակէն, որուն թելով բնիկները կը գործեն «Տանբէ» դիմացիուն և փափուկ պատտառը և որ կը փնտառի նոյն իսկ Սէն - Լուիի մէջ: Լեղակէն կը մշակուի ընդարձակ տարածութեան մը վրայ, որուն արտադրութիւնով կը ներկեն կառններս ֆուլ, որուն ընկոյզը, ոսկիի կշիռով ծախուած, կը հանդարտէ անօթութիւնն ու ծարաւը, կը վանէ տենդը և կուտայ մանաւանդ Վերին - Նիկերի ամբողջ աւազանէն:

Սուտանի գերազանց երկիր մ'է անասնաբուծութեան փոխադրութեանց համար, փոխանակ ուղտին՝ կը գործածեն չի և եշ: Բազմաթիւ են եղջերու, մանաւանդ անոր սապատաւ որ տեսակը որ դէբու կըսուի: Նուազ են սիւրբնէն ու այծերը: Այս վերջինները բարդ ալ չունին, այլ փափուկ մաղ մը:

Սուտանի հարստութեան մէկ աղբիւրն է որսորդութիւնը. Վայլաֆէր, փլաբան, վիթի (gazelle) և ռէկէէն արջ հայթայթելու համար:

Հանք. — Արևմտեան Աֆրիկէի ամբողջ դաւաններուն մէջ, որ կը տարածուին Սենեկալի, Ֆալէմէի, Պաֆինի և Նիկերի վերին աւազաններուն մէջ, կը գտ-

նուին սպիտակ և ուրիշ հանքային հարուստ խաւեր, դեռ անձանօթ: Մանաւանդ Ֆալէմէի աւազանը, Պանպուքի, Տիէպէտուիուի, Քուքաուիուի, Սանկարանի և աւելի հեռուն՝ Պուրէի և Ուասուլուի երկիրները կը պարունակեն աշխարհի ամենէն հարուստ նկատուած սպիտակ սիւրբ:

Պողբիմէն կը հանեն արծաթ, և աւելի շատ՝ երկաթ:

Ճարտարութիւն. — Չուտ տեղական նկարագիր մ'ունի ճարտարութիւնը, որ են կրաստրոնիւն և ռիստրոնիւն:

Հաստա, Պորնու Քոնկոյի երկիրը կը գործեն հասարակ կտաւ, ընդհանրապէս կապոյտ գոյնով ներկուած: Ներկարանները բազմաթիւ են: Պէնըր նաւապետը կը հաստատէ թէ Քոնկոյի մէջ կայ 150 հազար հարկ հարկ կամ փոսեր լեզակի ներկի: Ըստ Պէնըրի վկայութեան, արևմտեան Սուտանի մէջ կան խիստ բարեկարգ հնոցներ՝ մետաղական աշխատութեան:

Սուտանի սեամորթները՝ որ ճարպիկ գարրիներ են, կը շինեն ամեն տեսակ գործիքներ երկաթեայ, թէ կոյն, քրէլ և: Կը շինեն ոսկիէ ճարտիչներ, սպարանջան՝ նրբին գրուակներով, բայց չեն գիտեր դայն պղնձի խառնել: Կը քանդակեն՝ եղջիւրի և փղոսկրի մէջ, բնականաբար՝ մազի համար, սապրէր, ճարտիչ և սպարանջան: Կը գերազանցեն նաև կողմաբոնիւն և սակաւաշինութեան մէջ: Կը շինեն պարսկալու ճարտիչ, պարսկալու ճարտիչ, պարսկալու ճարտիչ, ճարտիչ, ճարտիչ, ճարտիչ, ճարտիչ և ճարտիչ սքանչելի ճարտարութեամբ:

Ճարտարներ. — Այս մասին շատ արագ է Սուտան, որով չեն շահագործուիր իր հանքերը: Ֆրանսական Սենեկալի առևտրական յարաբերութեան ճամբան Պամաքոյէն Պատիւմպէ կը հասնի (500 քիլմ): Երկաթուղի երկայնութիւնն է 850 քիլոմէթր: Ճամբայ մը կ'երկարի մինչև Չուտ լիճը:

Աղանախ եղբեր Պէնուա և Նիկեր, ուր կ'երթան

Անգլ. շոգեհաներ, ամենէն գիւրին և ուղիւ ճամբայ մը կը բանան կեդրոնական Սուտանի բերքերուն:

Խարթում, Նեղոսի վրայ, Եգիպտոսի թևարկութեան ներքև, բնական շտեմարան մ'է արևելեան Սուտանի բերքերուն: Խարթում է վերջին կայարանը կարուան. ներս որ կուգան Չատի դաւառէն, Շարի օժանդակ գետով և Պահր-էլ-Արաբով: Հիմա, Սահարայի ովա. սիաներուն մէջտեղէն, կարաւանները կ'երթան Մարոք, Թարապուս, և կը տանին մեծագոյն մասը Սուտանի վաճառքներուն:

Առաւուր. — Սուտանի արտածութիւններն են. բերք. տարեկան իրր 80 հազար մարդ, ուկեֆոյն, փղաբան, խեժ, ջուլեմի փեղաբ, մարմ, բեռնապիտակներ, բաւի իւղ. շաւի, տալե ընկալ կա: կարուաններու միջոցաւ Սուտանցիք կը ներս. ծեն կոտ, թեյ, ուղ վաւոր, հրացան, բարձ, «հայիք» կոչուած բրդէ վերաբեռներ, պակեղեն, մանր-երկաթեղեն կա:

Այս առուտուրը, որուն արժէքին համար վիճակագրութիւնները կը լռեն, մեծ մասով Անգլիացոց ձեռքն է:

Սենեկալ և Սուտան ունին 5,830 քիլոմէթր հեռագրական թել. փոստիկի ափունք՝ 600 քիլոմէթր և Ոսկւոյ ափունք՝ 140 քիլոմէթր:

ԳԼՈՒԽ ԺԲ

ՔՈՆԿՈՅԻ ԵՐԿԻՐԸ

ՔՈՆԿՈՅԻ ԵՐԿԻՐ ԸՍԵՐՈՎ կը հասկնանք կողմէ և Բնկոյն Ֆրանսական հաստատութիւնները, Անլու՝ փորթուկալի կալուածը, և Բնկոյն պեղաթեղենը:

Ֆրանսականին տարածութիւնն է 660 հազար քառ. քիլոմէթր և 5-7 միլիօն բնակիչ՝ ըստ վակաների Պէհմի և Պրաձձայի:

Փորթուկալի անուանական կալուածոց տարածութիւնն է 1 315,000 քառ. քիլոմէթր, բնակիչ 12,500,000:

Քոնկոյի պետութիւնը, որ կը գտնուի Պերճիքայի թագաւորին անուանական իշխանութեան ներքև, ունի 2,250,000 քառ. քիլոմէթր տարածութիւն և 14 միլիօն բնակիչ:

Ըստ Պ. Սթենլիի, Ափրիկէի այս մասը կը պարունակէ 40 միլիօն բնակիչ: Կլիման՝ անձրեային, եւրոպացիք չեն կրնար ապրիլ հօտ երկար տանն:

Բերք եւ համր. — Քոնկոյիք կը մշակեն բրնձ, կփոքր. ջրէն, հաւամբէ, իկոմ, փախի, բարո, մանր, պանն կա: Երուզ. զերեայ և լեռնային գօտիները կը հայթայթեն բեռնապիտակներ, յփեթէ լեան, բալմի նուշ և իւղ, առաւել խեժ: Լիպըր. վիլի մէջ կը մշակեն բարայն յփեթէ, սուրճ, թեյ, շաւրեղեք, հնդկաւոր, մեծ յաջողութեամբ, զորս կ'արտածեն Եւրոպա: Մանուանդ Քոնկոյի գաւառը, Լէոփոլտովիլ — Պրաձ. ձալիկէն մինչև Սթենլի — Ֆալս, հասարակածային Ափրիկէի ամենէն հարուստ և մեծագին մասն է, ըստ Սթենլիի: Այս գաւառին մէջ կան անտեսապէս այնքան թանկագին, բոլորովին իւրայն բաւեռներով ծածկուած անտառներ: Հաշուուած է որ իւղարալմենի մը կուտայ 6, 23 քիլոկրամ իւղ և 5, 78 քիլոկրամ նուշ, արդ 6-8 հէքթար տարածութիւն մը ծածկող 100 հազար բալմենիներ պիտի տան 675 հազար ֆրանքի եկամուտ մը, արժեցնելով մէկ թօնօ իւղը 425 ֆրանք, և մէկ թօնօ նուշը՝ 250 ֆրանք:

Բալմենիէն յետոյ անտառային ամենէն հասարակ բերքն է յփեթէ շաւր: Կան ընդարձակ տարածութիւններ կողմէ խեթէ (gommæ copal): Քարաքոսին մէկ տեսակը՝ օրէնջ անուն, որ կուտայ կապոյտ գոյն մը, քողի մը պէս կը ծածկէ մեծածաւալ անտառներ: Այս անտառները կը պարունակեն անհաչիւ թանկագին փայտէր՝ երենագործութեան, շինութեանց և ներկի յատուկ, մաշկապիտակ թուղթի, չուանի, կողովի, կաւալի, հասարակ կամ նուրբ

փոխաթի շինութեան համար Գերազանց արդիւնք կրնան տալ ձիւտոր, շատրեղէք, Էլուի, Բրինձ եւ:

Ամեն կողմ և մանաւանդ ի վիճի՝ կը հնձուի Կապի:

Վերին - Գոնկոյի կէս մասին վրայ կ'ընծեն զէքու և սիւր: Որսորդութեամբ կը բռնեն գոզէ, ձէն (gazelle = թռչուն) Կապի (antilope), ձիւտոր՝ որոնց մորթը արժէքաւոր է, արեազարձային Բաւաւանէր՝ իրենց ազնիւ փետուրին համար: Բայց ամենէն շահաւորն է գիղի և Կապի (Hippopotame) որսորդութիւնը: 1879-1884 թ. այսինքն 5 տարուան մէջ արտածուած է 421 հազար քիլո փղոսկր՝ Գոնկոյէն, 15 միլիօն ֆրանք արժէքով:

Արևելեան և Արևմտեան Աֆրիկեան եզերքներու փղոսկրի արտածութիւնն է 848 հազար քիլո: Ըստ Սթենլիի տակաւին 200 հազար փիղ կը գտնուի:

Գոնկո ունի առատ հանածոյ երկաթէ և շէն, զոր կը գործեն բնիկները: Անկողայէն կը հանուի քիչ մը սիւ:

Ճարտարութիւն. — Մինակ բնիկներուն համար կը պատրաստուին գործիքներ, Խահաւանէր, Գիւտի, Բրինձ (piroque = ծառի մէջ փորուած նաւակ վայրենիներուն): Անկողայի մէջ կան Բաւաւանէր՝ օղիի և գործարաններ՝ սիկարի: Մասաաիմէս ունի մանրան ջը և գործանոց ջը հիւսուածեղէնի: զոր հիմնած է Ալգասցի մը:

Ճամբաներ. — Գոնկոյի աւազանը կը ձևայնէ նաւարկութեան սքանչելի ցանց մը: Առ այժմ ունի 350 քիլոմէթր երկաթուղի, որ եթէ դէպի ներսերը երկարի, Գոնկո պիտի կրնայ տարեկան 1,200 միլիօնէն աւելի արժէքով արտածութեան նիւթ հայթայթել: Ամենէն օւղիղ ճամբան է այն՝ որ կը մեկնի Լօանկոյէն, կ'ելլէ Նիարի-Գիյեու, և անկէ կը մանէ ճուէի հովիտը:

Փորթուկալցիք որ դարերէ վեր տէր են Անկողայի միայն շինած են երկաթուղիի զիծ մը՝ Լօանոայէն Ամպաբա (241 քմ.)՝ զոր վերջին տարիներս երկարեցին ռեպի Գոնկոյի կեզրոնը՝ աւելցնելով նոյն զծին վրայ

157 քիլոմէթր: Այս զիծը ապագային պիտի ըլլայ Ատլանտը Հնդկաց Ուիլհէանին միացնող ճամբան: Անգլիացիք և Գերմանք կ'աշխատին Գոնկոյի առուտուրը դարձնել դէպի Նեղոս և Հարաւ-Արևելեան եզերքը, որուն տէրը իրենք են: Այն ատեն Զանգիպար և Խարթում պիտի ըլլան Գոնկոյի ապրանքներուն շտեմարանը: Բայց Պելճիքացիք լրջօրէն կը ջանան այս հարուստ գաւառին շահը օտարներու ձեռք չձգել:

Առուտուր. — Գոնկոյի երեք պետութեանց առուտուրը կը հաշուուի 115 միլիօն ֆրանքի: Գլխաւոր գործողներն են Լիվրփուլ և Համպուրկ: Ֆրանսա հաղիւ 2 միլիօնի առուտուր ունի Անգլիա կուտայ աժան բաժնէն, Գերմանիա՝ արջ և սասրին տեսակէ գիղի, իսկ Պելճիքա՝ բաժնէն, Վաւոր, շէն:

Անկողայի առուտուրն է 25 միլիօն, որուն 13ը ներածում: Առուտուրին 5/6ը Անգլիացուց, որ կուտան Կոստա: Փորթուկալցիք աննշան բաժին մ'ունին իրենց այս ստացուածներուն առուտուրէն, պարզապէս պահնորդներ են օտար նաւերու առուտուրին:

Պելճիքացիք վեց ընկերութիւններ հաստատած են Գոնկոյի մէջ՝ երկիրը շահագործելու համար, 35 միլիօն դրամագլխով, հիմնած են 25 առևարական հաստատութիւններ, ունին 11 շոգ ենաւ և կը փոխանակեն 25 միլիօն ֆրանքի վաճառք:

Անգլիոյ և Պելճիքայի բաժնէն և Գերմանիոյ օգն կը կազմեն երեք քառորդը Գոնկոյի ներածութեան:

Նաւային շարժումն է 718 նաւ 395,311 թօնօ տարութեամբ:

Լիպրզվիլ կապոնի եղերքը՝ Գաղղիոյ լաւագոյն նաւահանգիստն է:

Պամանա՝ նաւային շարժումն է մուտք 139 նաւ, 165,075 տակառաչափ, կ'ընդունի մեծ նաւեր և Պելճիական Գոնկոյի բոլոր փոխանակութեանց կեզրունն է:

Պամա. — Երկրորդ կարգի նաւահանգիստ է:

Անկողայի ամենէն բանու կներն են. Սէն - Բօլ Լօանտա-
յի, և Մասսեթի:

Քոնկոյի պետութեան հիմնարկու թենէն վեր, արտա-
ծութեան մաքսի իրաւունքն է 100 քիլոյի վրայ հաստա-
տուած. դետնապիտտակենի՝ 1, 5 ֆր. փղոսկր՝ 50 ֆր.
ձգախէժ՝ 20 ֆր. կոպալ՝ 2, 5 ֆր. շուշմայ՝ 1, 7 ֆր. բալ-
մի ընկոյզ՝ 1-2 ֆր. սուրճ՝ 1 ֆրանք:

Ներածուած ապրանքներու համար 6 առ 0%, ըստ
արժէքի, բացի դէնքէ, վառօդէ, աղէ՝ որ կուտան
10 առ 0%: Նաեւ, շոգեմեքենաներ, մեքենական կազ-
մածներ (երկրագործական կամ արուեստական), գոր-
ծիքներ՝ 3 առ 0%:

Վերջապէս Անկախ պետութիւնը քանի մը տարուան
մէջ մտաւ զարգացման շաւղին մէջ մեծ յաջողութիւնով:

**Բ. ՀԱՐԱՌ - ԱՐԵՒՄՏԵԱՆ
ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԱԼՈՒՄՏՔ**

Բեռլինը — 1884 ին Գերմանական դրօշը կանգնեցաւ
Անկրա - Բէքուենա, հակառակ Անգլիոյ բողքներուն:
Այս երկրին տարածութիւնն է 831 հազար քառ. քիլո-
մէթր, բնակիչ 250 հազար: Այս ընդարձակ գաւառը կը
պատկանի Հարաւ - Արեւմտեան Աֆրիկէի «Գերմանական
գաղթային ընկերութեան»: Ոսկիի և արծաթի հարուստ
հանքերը, որոց վրայ Գերմանք մեծ յոյսեր կը տածէին,
բաւորովին երեւակայական եղանկան կան արդէ հանքեր: Բայց
չահագործութեան ծախքը եկամուտէն աւելի է: Տա-
մարալանտ ունի ընդարձակ արօտատեղիներ: Երկրա-
գործական բերքեր և անասնաբուծութիւն միջակ ար-
գիւնք կուտան: Գլխաւոր կեդրոններն են՝ Ուէնդէ, Սա-
քսոն, Օրէնդէ, Անկրա - Բէքուենա, Վէլտըն-Ֆէլդ, Թոնոյ:

**ԳԼՈՒԻ ԺԳ՝
ՔԱՆԱՏԱ
(ԱՄԵՐԻԿԱ)**

Ա. ԲԱՆԱՏԱԿԱՆ ԳԱՇՆԱԿՅՈՒԹԻՒՆ

ՏԻՍԻՍՍԵՒՆ Ամերիկայի Անգլիական ստացուա-
ծոց տարածութիւնն է 8,767,700 քառ. քիլոմէթր. բնա-
կիչ 5,295,470:

Կլիման՝ ցուրտ, բայց առողջ, լճափունքը՝ բարեխառն:
1763 ին Անգլիա գրաւեց այս երկիրը Ֆրանսայէն:
1800 ին ուներ 240 հազար բնակիչ, 1871 ին՝ 3,816,000,
1881 ին՝ 4,325,000, իսկ 1900 ին 5 միլիօնէն աւելի: Մա-
սամբ Գաղթականութեան շնորհիւ (տարեկան 100
հազար հոգի) կ'աճի այս թաղմամբ ու թիւնը, թէև
բաղդատմամբ Մեծ - Հանրապետութեան պանդուխտ
ներուն շատ քիչ է: 20 տարուան մէջ կը կրկնապատկուի
բնակիչը Անկլօ - Սաքսոնի ցեղին միջոցաւ: Անգլիոյ հպա-
տակ Ֆրանսացուց թիւը 2 միլիօն է, Քէպէքի և Ստորին-
Քանատայի մէջ: Աժան են և յաճախ ձրի Քանատայի
հիւսիսային մասերուն և Նոր - Սկոտիոյ հողերը:

Բեռք — 1881 ին մշակուած էր 85,358,141 է.քր, կամ
18,351,914 հէ.քթար, 1890 ին աւելցաւ 500 հազար
հէ.քթար:

Գլխաւոր բերքն է ցորեն՝ 20 միլիօն հէ.քթլ. մեծ մա-
սամբ Օնթարիոյ գաւառէն, և կը յաջողի մանաւանդ
արևմտեան Սե հողերուն մէջ, ի Մանիթոպա և շրջակայ
գաւառները: Գլխաւոր պատճառաւ աւելի կը
մշակուի Չարսի 30 միլիօն հէ.քթլ. Օնթարիա ունի
գրեթէ եփեպոսոսրէն մենաշնորհը՝ 5 միլիօն արտադրու-
թիւնով: Գարեջուրի համար կը մշակուի ցորեն որ կուտայ
8 միլիօն հէ.քթլ. հաճախ՝ 1 միլիօն, գետնախնձոր՝ 20 միլիօն

հէքթօլիտր: վաշտ, կանեխ, թխտիտր, գայլակ, նուազ քանակութեամբ:

Անասնաբուծութիւնը կ'առաջանայ՝ բարձր աստիճանով՝ Սէն-Լօրանի հովիտը, արեմտեան գաւառները և անդլիական ֆլորմպիոյ մէջ, Չէ՛ 1 միլիօն, դուրս 4 միլիօն, ուր 3 միլիօն: Միաց. - Նահանգաց մրցումը թոյլ չտար ֆանատայի օգտուելու իր անասնաբուծութենէն:

Քանատացուց եկամուտի կարևոր աղբիւր մ'են անասնաբուծութեան հիւսիսային կողմերը, իրը 200 միլիօն հէքթօլ տարածութեամբ, որ կը հայթայթէ կապիտալ, տակաւի, նաւու և կայմի, տարեկան 100 միլիօն ֆր. արժէքով: Ստորին-Քանատայի, Նոր-Պրուենսիլիքի, Նոր-Սկոտլանդի և մանաւանդ ֆլորմպիոյ լեռները ծածկուած են անտառներով:

Հանք և նարտարարուեստ — ֆանատական Դաշնակցութիւնը հարուստ է հանքերով: Նոր-Պրուենսիլիք և Նոր-Սկոտլանդ կը շահագործեն իրենց հանքաքարի խաւերը, ունին նաև ածխի աւազաններ՝ հիւսիս-արեմտեան կողմը: Ընդհանուր արտադրութիւնը կը հասնի 2,800 000 թօնոյի: Յոյժ առատ է երկաթը, ընտիր տեսակէ, 300 հազար թօնօ Նոր-Սկոտլանդի, ֆէպէրի և Օնթարիոյ մէջ: Մեծ-Լիճերու գաւառէն կը հանուի պղինձ՝ 10 հազար թօնօ, ֆարիպուէն կը հանեն սպիտակ, որ ֆարիֆօրնիոյ ոսկերքեր հանքերու մէջ խաւն է: Վերին-Քանատայի մէջ առատ են արծաթը, որ կուտան 800 հազար հէքթօլիտր հանքային իւղ: Օնթարիոյ մէջ կան Կիւնի անսպառ խաւեր: 1890 ին արտածուած հանածոյին արժէքն եղաւ 1 միլիօն տոլար:

Մետաղագործական ճարտարութիւնը բարձր զարգացման մէջ է: Օնթարիո ունի ամենէն բանուկ գործանոցներն ու բարձր հնարները, ուր կը շինուին մեքենաներ, գործիքներ (գլխաւորաբար երկրագործական) և երկաթուղիի նիւթեր: Ունի նաև քարիւղի դարաններ:

Դաշնակցութեան այլերի մթերանոցն է Օնթարիո:

Ֆէպէր և Նոր-Սկոտլանդ ունին զարաններ, գարեջրատան, կը պատրաստեն պահածոյ սիւ, կարտ, պանի:

Ունին նաւարաններ, սոցորաններ՝ ջրաշարժ:

Կը պատրաստեն խէժ, սեպի և խոշոր:

Որսորդութիւնն ու ձկնորսութիւնը կարևոր ճարտարութիւններ են. առաջինը՝ 5, երկրորդը 80 միլիօն ֆրանք կ'արտադրեն: Նոր-Երկրի ջուրերուն մէջ կ'որսացուի մեծաքանակ ճարձ, բիւկ և սարակ (homard):

1898 ին ֆանատայի հանքային արտադրութեանց արժէքն եղաւ 250 միլիօն ֆրանք:

Ճամբաներ — ֆանատական Դաշնակցութիւնը մեծ ջանքեր կ'ընէ ճամբաներ շինելու: Ամենէն գեղեցիկ նաւարկելի ճամբան կը մեկնի Սէն-Լօրանէն, կ'անցնի ֆէպէր, Մանրէալ, ուր կը հասնին մեծագոյն նաւեր, անկէ կ'երթայ մեծ լիճերը՝ շինուած ջրանցներու միջոցաւ: Զրանցներու, գետերու, լիճերու նաւարկելի գիծերուն ամբողջ երկայնութիւնն է 4,344 քիլոմէթր: 1889 ին 23,935 նաւեր նաւարկած են ֆանատական ջրանցներուն վրայ, փոխադրած են 81,362 անցորդ և 3,166,338 թօնօ ապրանք, գլխաւորաբար արմտիք, փայտ և հանքածուխ: Դժբաղդաբար տարւոյն մէկ մասին մէջ կը սառի Սէն-Լօրանի նաւահանգիստը:

Երկաթուղիներու երկայնութիւնն է 26,905 քլմ. որուն ամենէն կարևոր գիծն է խաղաղական-Ստլանտ. եանը, որ կը կցէ երկու Ովկէանները 1,722 քլմ. դժով և որ սակայն աւելի կարճ է քան Նոր-Եսրքէն Սան-Յրան. չէսքօ ձգուած գիծը:

1890 ին ֆանատական երկաթուղիները փոխադրած են 12 821,262 ճամբորդ և 20 787,469 թօնօ ապրանք:

Հեռագրական թեւերու երկայնութիւնն է 111,274 քիլոմէթր, որոնք 1896 ին փոխանակած են 5,200,000 հեռագրալուր:

Առուտուր — ֆանատայի առուտուրը շատ բանուկ

է, տարեկան 1 երկրիօն 200 միլիօն ֆր. կէսէն աւելին արտածութիւն.

Կ'արտածէ արծաթ (40 միլիօն ֆր.), քսուսք, կարագ, պանիր, կոշիկ ևն (140 միլիօն). անասնաբուծութիւն (140 միլիօն), յոնի, հանածոյ, բուրդ, հանածոնք ևն. ընդամենն 135 միլիօն տօլար:

Կը ներածէ բրդէ, բամբակէ, մետաքոնէ հիւսուածքներ (160 միլիօն ֆր.) փետուր և բոբիլներ (100 միլիօն), գաղթական Բերբեր, թէյ, սուրճ, համեմներ, զինի և ոգելիցներ ևն (80 միլիօն ֆրանք):

Անդրիա և Միացեալ - Նահանգները զրեթէ հաւա. սարութեամբ կը բաժնեն մէջերնին այս առուտուրը: Անդրիոյ բաժինն է իբր 440 միլիօն աւելի ներածում, Միացեալը ունին 370 միլիօն, աւելի ներածում ի ֆանատաւ երկու դրացի երկիրներուն մէջ փոխանակութիւնք տակաւ կը զարգանան՝ մօտաւորութեան պատճառաւ, մանաւանդ Նոր-Եորքէն՝ որ երկաթուղիի ցանցերով և ջրանցներով միացած է:

Դաշնակցութիւնը կը դնէ Անթիլեաններէն (36 միլի. օնի) և Հարաւ-Ամերիկայէն սուրճ, շաքար, բով. ջի. նաստանէն և ճարսնէն թէյ, ֆրանսայի փոխանակութեան արժէքը 14 միլիօն է, որուն 1/4ը ներածում ի ֆանատա: Սպանիա և Փորթուկալ կը ծախեն զինի, օղի ևն:

Թուլային առուտուր. — ֆանատա ունի 7262 նաւ 919,162 թօնօ տարողութեամբ, որուն 1718ը շոգենաւ. 247,078 թօնօ տարողութեամբ. սակայն արտածութեան մեծ մասը կը փոխադրուի Բրիտանական նաւերով, այսինքն համագումար 10,318,285 թօնօյին 4 միլիօնը Անդրիականին կը վերարբերի, մինչ ֆանատական դրօշով՝ 2 միլիօն և մնացեալը Նորվեգիոյ, Գերմանիոյ, իտալիոյ, Պելճիոյ և այլ նաւերով կը տարուի:

Առևտրական գլխաւոր հրապարակներն են.

Մոնթէալ, շնորհիւ իր դիրքին ֆանատայի առուտու.

րին մայրաքաղաքն է. սակայն իր նաւահանգիստը Բէ. պէքէն և Հայիֆաքսէն յետոյ կուգայ:

Վիքթորիա՝ վանքուղբ կղզիին մէջ. լաւագոյն նաւահանգիստն է Խաղաղականի:

Թորոնթօ՝ Օնթարիոյ լիճին եղերքը, կը կեդրոնացնէ դաւառին ամբողջ առուտուրը:

Պրամ, կշիռ, եւ, չափ. — Ընթացիկ են անդրիական դրամները, Շրջարեւութեան մէջ են նաև տօլարը=5, 37 ֆրանք, ամասուսան-լաւ=4 տօլար:

Չափերն ու կշիռներն ալ անդրիական են. անգլ. փոք բաժնուած 12 օնէ = 45, 34 կր. անգլ. ֆունտ 1609, 4 մէթր. եւրոպ.՝ 0, 91 մէթր, մակերեսութի համար 4+ = 40, 47, ար. հեղուկներու համար 4+ = 4, 54 լիտր, չոր նիւթերու համար ֆունտ 36, 34 լիտր:

Ք. ՆՈՐ-ԵՐԿՐԿԻՐ
(ՆՈՒ ՅՍՈՒՆՏԼԷՆՏ)

Արտադրութիւն. — Նոր-երկիրը՝ ֆանատայի մէկ մասը, անջատ գաղթականութիւն մ'է. տարածութիւն 110,700 քառ. քիլօմէթր, բնակիչ 250 հազար:

Բնակչաց գլխաւոր դրացու մն է մուշակաւոր կեն. դանեաց սրսորդութիւն և ձկնորսութիւն. 2 հազարէ աւելի Անդրիական, Ամերիկեան և ֆրանսական նաւակներ հոն կ'որսան Մօրէ-, Թէւէլ, Բէնի, Փոկ, Խեցեթի, որոց արժէքը կը հասնի 50 միլիօն ֆրանքի:

Կղզիին հիւսիսը ծածկուած է շոճիի գեղեցիկ անտառներով, որ սխաժ է շահագործուիլ, և որուն համար հաւատատու են բաղմամբիւ արջաբաններ. Միջին մասն ունի հանածոնք, երկաթ և պղինձ, որոնք պիտի բանեցուին երբ շինուի Սէն-Ճօնէն մինչև արևմտեան եղերքն երկարելիք երկաթուղին:

Նոր-Երկրի առուտուրն է 83 միլիոն, կէսը՝ արաւ. ծովիւն, որ կը պարունակէ ձկնորսութեան ար. դիւնք եւ:

Կը ներածէ արմատիք և ալիւր, գաղթային բերքեր, հիւսուածք եւ:

Անգլիա, Արևմտեան - Հնդկաստան, Քանաա և Ամերիկեան Միութիւնը կը բաժնեն այս առուտուրը մէջերնին:

Ս Ե Ն - Բ Ի Է Ռ Ե Ն Մ Ի Բ Ը Լ Օ Ն

Առուտուր. — Այս երկու կողեակները (260 քառ. քիլոմէթր տարածութիւն և 6 հազար բնակիչ) Ֆրանսայի Հիւսիս-Ամերիկեան գաղթային կայսրութեան բե. կողմերն են: Գլխաւոր արտադրութիւնն է ձուկը: Արտաքին առուտուրը իրր 50 միլիոն:

Գ Լ Ո Ւ Ի Ի Ժ Գ

Մ Ի Ա Ց Ե Ա Լ - Ն Ա Ղ Ա Ն Գ Ն Ե Ր

Ն Ա Խ Ա Գ Ի Տ Ե Լ Ի Ք. — Հիւսիսային Ամերիկայի Միացեալ-Նահանգները իրր մէկ գարէ վեր անօրինակ դարգացում մ'ունեցան:

1800 ին բնակչաց թիւն էր 5,306,000, 1880 ին՝ 50,156,000, 1890 ին 62,622,000, իսկ 1900 ին 76,225,000: Տարածութիւնն է 9,373,000 քառ. քիլոմէթր, (Եւրոպայէն քիչ պակաս) որով դար մը վերջ երբ ներկայ աճումին հաշուով 500 միլիոն բնակիչ ունենայ, իւրաքանչիւր քառ. քիլոմէթրի վրայ պիտի գտնուի 54 բնակիչ,

Անգլիոյ, Պելճիքայի, Գերմանիոյ, Ֆրանսայի խտու թեանց միջինը:

Հանրապետութեան ոյժը կը կազմէ գաղթականութիւնը, բաղմամարդութիւնը կը կրկնապատկուի իւրաքանչիւր 20 տարիի մէջ, շնորհիւ Եւրոպայի ամեն կողմերէն եկած 6-700 հազար գաղթականներու ամբողին: Անգլիացիք (իրր 200 հազար) կ'գրադին մանաւանդ ճարտարարուեստով ու վաճառականութեամբ, Գերմանք՝ (250 հազար) առուտուրի և մշակութեան, Սքանտինավեանք՝ (80 հազար) անտառներու շահագործութեամբ: Հոյանտացիք, Պելճք, Գանիացիք, Ռուսք, Ֆրանսացիք եւ զանազան գործերով: Կառավարութիւնը մեծ դիւրութիւններ և հողեր կուտայ ասոնց շահագործելու, վեց անդամներէ բաղկացեալ յանձնաժողով մը ստանձնած է պանդուխտներուն ընդունելու թիւնը և պաշտպանութիւնը: Հիւանդները և անպաշտպանները «Ուորտս Ալլընտ» ի մէջ կը գտնեն հիւանդանոց մը կամ ապաստանարան մը: Կառավարութիւնը կ'արդիլէ մուտքը խենթերու, ապուշներու, սճրագործներու: Քասթըլ-Կարտընի մէջ հաստատուած գործակալութիւն մը գործ կը հայթայթէ նորեկներու: Բաղմամարդուած են նախ Աւլանտեանի եզերքները, սակայն շահելու դիտումով, գաղթականք, հետզհետէ տարածուած ու շէնցուցած են արեմուտքի կողմերը, որ գաղթական մը կրնայ կառավարութենէն գնել անմշակ հողեր, էրրը՝ 1-2 տօլարի:

Կլիմա, մշակութեան ջրճամակ. — Այս քան ընդարձակ երկիր մը բնականաբար ամեն տեսակ կլիմաներ կուենայ: հարաւը՝ տաք, արեւագարձային բերքերու մշակութեան յատուկ Միջին մասը՝ 30°-38°, բամբակի, բրինձի, եգիպտացորենի, ծխախոտի մշակութեան համար, ձիւնը՝ ցուրտ, մինչև իսկ Միսիսիբին սառեցնելու աստիճան. 38° էն վեր, հիւսիսը, ունի հարաւային և կեղբոնական Եւրոպայի կլիման, որով դե.

րազանցապէս կը յարմարի արմախքի մշակութեան և անասնաբուծութեան և՛, Արևմուտքը, Խաղաղականի եզերք, մեղմ, յարմար է այգիի, ձիթենիի և ուրիշ մշակութեանց:

Արևուիք. — Երկրագնախա վրայ, արմախքի մշակութեան կողմանէ, Միացեալ - Նահանգներ առաջին տեղը կը գրաւեն: Տարեկան կը հնձեն 1 երկիւլիօն 200 միլիօն հէքթօլիտար, ներկայով Ռուսիայէն շատ վեր, և տակաւին զարգանալու տրամադիր:

Եգիպտացորենի մշակութիւնը յոյժ առաջացած է Այժմեան 30 միլիօն հէքթարէն կ'առանան 6-700 միլիօն հէքթօլիտար, որուն մէկ մասը կ'արտածուի Եւրոպա՝ զտուելու, մնացածն ալ կը գործածուի անդեան՝ դուաւրաբուծութեան, հաւեղէններու պարարտացումին, կամ ճարտարաբուետի:

Յորեն կը ցանուի վերին-Միսիսիսի հովիտը, 15 միլիօն հէքթար գետնի վրայ, արդիւնք՝ 160 միլիօն հէքթօլիտար, որմէ 60 միլիօնը կ'արտածուի Եւրոպա:

Վարսակ՝ որուն կը յարմարին ամեն հող ու կլիմա, արտադրութիւնը կը զնահատուի 200 միլիօն հէքթօլայսինքն ամբողջ աշխարհի այս հունձքին քառորդը:

Բրի՛ճ՝ հարաւային նահանգներու մէջ՝ 20 միլիօն հէքթօլիտար:

Փարսի՝ 25 միլիօն հէքթօլիտար, հաճաք՝ 10, և և - ցորեն մշակութեան մէջ երկրորդ են:

Ճարտարական մշակութիւնք. — Ալլեկանի լեռանց երկու զառիթափերուն վրայ՝ ուր հողը լաւ սոսորած և կլիման տաք է, կը մշակուի Բաբակէնի, նոյնպէս՝ մասամբ Մեքսիկայի ծոցեղերքը և Թէքսասի լեռնադաշտը: Այս մշակութիւնը դարէ մը ի վեր անհունապէս ծաղկած է, ընդմիջուած միայն 1862-67: Միջին հաշուով կ'արտադրէ 1 միլիօն 250 հազար թօնօ, որուն մեծագոյն մասը կ'ապառէ Եւրոպա: Արտադրութեան գլխաւոր կեդրոններն են. Երկու Քորօլինք, Ճօրճիա, Ալապամա:

Միսիսիսի, Լուիզիանա, Թէքսաս, Արքանսաս: 1890 ի բերքն էր 8,655,518 հակ, այսինքն 1,960,475,000 քիլօ և նոյն քանակ ֆր. արժէքով:

Միսսիսսու. — կը մշակուի վերձինիա, Միրիլանտ, դէպի արևմուտք Օհիոյի երկայնքը, Քէնթըքի և ուրիշ կողմեր, իբր 270 միլիօն քիլօ, կէսէն աւելի արտածելի:

Շաքարեղէն. — Հարաւային սահմանները: Լուիզիա. նա առանձինն կ'արտադրէ ⁹/₁₀ մասը, զնահատուած 150 միլիօն քիլօ:

Իրրև շաքարատունի կը մշակուին նաև հասարէի (sor. gho), պէճը (érable) և ծակաբու Հակառակ ստոր, Միացեալք իրենց սպառած շաքարին մէկ տասնորդը հազիւ կ'արտադրեն և ի հաշւ այս բերքին կը մնան հարկատու Անթիլեանց, Հարաւ. Ամերիկայի և Ռուսիոյ:

Գալլուկ կը մշակուի 50 հազար էքր գետնի վրայ, կ'արտադրէ 180 հազար քիլօ, 4,068,000 տօլար արժէքով, կը գտնուի արևելքը, մանաւանդ Նոր-Եսրքի մէջ: Գալլուկի ընդհանուր բերքն է 15 հազար թօնօ:

Վուշ. կանեփ եւ հնդկականի նեղ սահմանի մը մէջ կը մշակուին և տեղի տուած են բամբակի մշակութեան:

Միացեալ - Նահանգաց չորս մշակութիւնք, արժէք, Բաբակ, Գեորգիայ և Էլիսաբէթ կ'արժեն 12 միլիառէն աւելի:

Այգի. պտղատու ծառեր. — Որթատունի հայրենիքն է արևմուտքը, Քալիֆօրնիա, «Ամերիկայի Իտալիան» որուն վրայ մեծ յոյս ունին Ամերիկացիք, թէև մշակութիւնը և գինիի պարարտութեան եղանակը ըստ արժանւոյն կատարելագործուած չէ: Այդինքն տարածութիւնն է 180 հազար հէքթար, 1899 ին արտադրեց 1,500 000 հէքթօլիտար գինի (Քալիֆօրնիա՝ 1 միլիօն):

Ամերիկեան Միութիւնը կուտայ տաք և բարեխառն երկիրներու պտուղներ: Հարաւային մասին մէջ կը մշակուին անանաս, սորաթուղ (banane), նարնջ, կիտրոն և՛, Ֆլորիտա կուտայ լաւագոյն նարինջը: Ատլանտեանի նահանգաց և Միսիսիսի հովտին մէջ տնկուած են Եւրոպեան

պողատու ծառեր, խնայելի, Կեղևի, Կանչեի, ձերանի (վերջինը թուրքիայէն տարուած) եւ բայց դարձեալ ասոնց մշակութեան յարմարագոյն վայրն է Քալիֆորնիա: Մրգատաններու բերքին արժէքը կը գնահատուի 1 երկիրիօն ֆրանք, որմէ 60 միլիօնի պտուղ և բամբակ կ'արտածուի խաղաղականի ճամբով:

Անտառներ. — կը ծածկեն 200 միլիօն հէքթար գետին: Ամենէն հսկայ ծառերը կը գտնուին ի Քալիֆորնիա, այս գաւառին հրաշալիքներէն մին է «sequoias» (կանաբեր ծառ) հազարաւոր տարիներու հնութեամբ բեռ նստորած, և որոց մէկ քանիներուն բարձրութիւնը կը գերազանցէ Եւրոպայի Մայր-Եկեղեցիներուն զանգակատուները:

Դրամատէրերու ընկերութիւն մը ստացած է Ֆլորիտայի մէջ 400 հէքթար գետին, շաքարեղէգ, ձխախոտ և պողատու ծառեր տնկելու: Միացեալին՝ և թերևս բոլոր աշխարհի, ամենամեծ կալուածը կը գտնուի Լուիզիանայի մէջ, 640 հազար հէքթար: կը վերարբերի Նոր-Եսրքցի սեղանաւորներու սէնտիքայի մը որ միացուցած է կարևոր դրամագլուխներ, շահագործելու այս անսահման կալուածը: Ասոր զանազան աշխատութեանց համար, հերկել, ցանել, կամենել, ո՛չ եղ, ո՛չ ձի կը գործածեն, այլ՝ շոգի: Ընկերութիւնը հաստատած է ընդհանուր մթերանոց մը, ջաղացք մը, սառնարան մը, թղթատարի և հեռագրական գրասենեակ մը իր հազարաւոր բանտրներուն համար, հոն հաստատած է նաև դրամատուն մը, ատաղձագործարան մը, երկու կայարան՝ Սոթթերն-Բասիֆիք-Բէյլլօտ գծին վրայ որ կ'անցնի կալուածին մէջէն 57 քիլոմէթր երկայնութեան մը վրայ, և նաւարկելի գետերուն վրայ ծառայող նաւեր:

Միացեալ-Նահանգաց երկրագործական արգեանց համագումար արժէքն է 55 միլիառ:

Անտառաբուծութիւն. — Միսիսիպիի Միջին հովիտը կը

բուծուին Կոնարէր (եղ ու կով), արևմտեան լեռնադաշտերը՝ Կոնար: Ատլանտի եզերքները կը մնուցանեն ընտիր կաթնաու կովեր, և կը շինեն կարագ ու պանիր: Լեռնադաշտերու ոչխարները կուտան նուրբ բուրդ: Միացեալ-Նահանգաց մէջ կը հաշուուի ընդամեն 53 միլիօն դուար, 2,500,000 ջորի, 14,300,000 ձի, 45 միլիօն ոչխար, 51 միլիօն խոզ: Տուփերու մէջ պահուած թարմ միս կ'արտածեն յԱնգլիա, ալած խոզի միս նոյնպէս կը զրկեն Եւրոպա:

Չկնարուծութիւնը մեծ յաջողութեան մէջ է. Ռմերիկացիք այս հարստութիւնը իրենց ջուրերուն մէջ աւելցնելու նպատակով հսկայ միջոցներ ձեռք առած են: Աշխարհի ամենէն հարուստներն են Չէզարեքի նաւահանգիստին օտորէներու ժայռերը, 80 հազար հէքթար մակերեսով, որ միւս բոլոր գաւառներուն արդիւնքին հաւասար կ'արտադրեն: Մինչ 1880ին 215 միլիօն ֆրանք էր, այժմ կը հասնի (1899) 650 միլիօն ֆրանքի:

Հանքային ճարտութիւն. — Այս մասին ալ աշխարհի ամենէն նպաստաւորեալ երկիրն է Միացեալ Հանրապետութիւնը: Հանքային կը գտնուի գրեթէ ամեն կողմ, իբր 50 միլիօն հէքթար տարածութեամբ (Ֆրանսայի մակերեսովին չափ գրեթէ): Բիթսպուրկի (Բենսիլվանիա) և շրջականերուն ածխաբեր երկիրը ամենէն նշանաւորն է ոչ միայն Միացեալին, այլ և համայն աշխարհի տարածութիւնն է 15,540,000 հէքթր. և կ'երկարի, առանց ընդմիջուելու, 1,400 քիլոմէթր երկայնութեան մը վրայ, մինչև Ալապամայի սիրտը: կը պարունակէ քէմպրէնտի (Մէրիլենտ) նշանաւոր հանքերը, որ կը հայթայթեն շոգեհաւարկութեան համար, նիւքասթինին չափ գնահատուած հանքածուխ, զոր կը զրկեն Ատլանտեանի բոլոր նաւահանգիստներուն:

ՕՏիոյի հանքերը պաշար կուտան Գիլիլէնտի, մրցակից Բիթսպուրկի, Իլլինոյայի, Ինտիանայի Իւլայի, Չիքակոյի՝ որ մեծ հրապարակ մ'է խոզի և արմօիքի: Սէն-Լուի եր

հանքածուխը կ'ստանայ: Իլլինուայէն կամ Միսուրիէն: Քուրբատայի, Նէվատայի, Օրեկոնի և Քալիֆորնիոյ մէջ կայ փայտատար, կոչուած այրելի նիւթը. երկրաբանական ամենահին ժամանակներէ մնացած:

Միացեալք 1865 ին կ'արտադրէին 18 միլիօն թօնօ հանքածուխ, այդ թիւը բարձրացաւ 1898 ին 221 միլիօն թօնօի, իւրաքանչիւր թօնօյի միջին գին հաշուելով 6, 86 ֆրանք, կունենայ արժէք մը 1 երկիլիօն 516 միլիօն ֆրանքի:

Քարիւղք փայլուն ապագայ մը ունի այն երկրին մէջ, Միսուրի, Իլլինուա, վիրճինիա, Օհիօյ, Քէնթըքի կը պարունակեն հարուստ խաւեր, բայց գլխաւոր հանքը կը գտնուի ի Բենսիլվանիա, ծանօթ «բէթքօլ» ախղօսով: Հաւաքուած քաղիւղը կը փոխադրուի երեք մեծ կեդրոններու զտարանները. Քլիվլէնտ, Բիթսպուրկ և Նոր-Եորք: 50 միլիօն հէքթօլիտար քաղիւղին մերձաւոր արժէքը, 380 միլիօն ֆրանքէն աւելի է: Քարիւղին կէտը կ'արտածուի:

Երկաթաքեր աւազաններուն ամենէն հարուստները կը գտնուին Սիւբերիէօր (վերին) լիճին եզերքը, Մարքէթ, Քէյմօրլին լիճին արևմտեան եզերքը և Միսուրիի մէջ, Սէն-Լուիէն դէպի արևմուտք 75 փարսախ հեռու: Բենսիլվանիա կը պարունակէ Մաքնէրէնի հարուստ հանածոյ: Հանածոյին արտադրութիւնը (1899 ին) 12 միլիօն թօնօ:

Պղնձի հանածոյի տարեկան արտադրութիւնն էր 1898 ին 234,271 թօնօ, ամբողջ երկրագնտի արտադրութեան կէսէն աւելի, կը հանուի վերին լիճի, Մոնթանայի, Արիզոնայի հանքերէն, որոնք զուտ են, առանց խառնուրդի: կը գնահատուի Պիու-Հըլլի պղինձը:

Կապար՝ 190 հազար թօնօ տարեկան, երկրագնտի ամբողջ արտադրութեան (789,983 թօնօ) քառորդը: Լիտուիլի (Քուրբատօ) արծաթախառն կապարի հանքերը Միացեալին ամենէն հարուստներն են:

Սնդիկ՝ միջին հաշուով տարեկան 2000 թօնօ, Նոր-Ալմատէնի (Քալիֆորնիա) հանքերէն:

Ոսկեքեր հողերը Քալիֆորնիոյ մէջ են և կը տարածուին 800 քիլոմէթր երկայնութեան մը վրայ: Շահագործուած բոլոր հանքերը կը գտնուին Սիերա-Նէվատայի արևմտեան զառիթափին վրայ, խաղաղականի եզերքը: Այս աւազանը կ'երկարի (թէ և նուազ հարուստ) Օրեկոնէ մինչև Անգլիական Քանատա. այսպէս ալ Նէվատայի, Ուաշինկիթընի, Արիզոնայի, Նոր-Մեքսիկայի, Իտատայի, Մոնթանայի և Իւթահի գաւառներուն մէջ: Միացեալ-Նահանգաց ոսկիի հանքերը կ'արտադրեն իբր 50 հազար քիլօ, տալով 160 միլիօն ֆրանքի արժէք մը, այսինքն ամբողջ աշխարհի տուածին 1/3ը (1889 ին աշխարհի ոսկեայ արտադրութիւնն եղաւ 590 միլիօն ֆրանքի):

1898 ի ոսկեայ արտադրութիւնը, համայն աշխարհի, եղաւ 361,342 քիլօ, 1,445,738,405 ֆր. արժէքով, իսկ 1899 ին 472,022 քիլօ՝ 1,569,523,270 ֆրանքի, այս վերջին տարիներու հաշուով Միացեալք կուտան 1/4ը միայն:

Արծաթաքեր անսահման հանքերը կը գտնուին Իւթահի և Քուրբատայի մէջ. Քուրբատօ իր նշանաւոր արծաթաքեր հանքերով, օր մը Միացեալ-Նահանգաց արծաթին մէջ առաջին դերը խաղալու կոչուած է: Արքանսասի մէջ (արծաթ գաշտ) կը հանուի արծաթ: Միացեալ-Նահանգներու ոսկեայ և արծաթի արտադրութեան արժէքը կը հասնի 27 միլիօն անգլ. լիւրայի:

(Ամբողջ աշխարհի արծաթի արտադրութիւնն է 5,695 թօնօ):

Տարագազորճական հարստութիւնն. — Մաքսապաշտպան դրութեամբ, 40 տարիներէ վեր, Ամերիկեան ճարտարութիւնը յոյժ նշանաւոր զարգացում մ'ստացած է: Նոր-Անգլիոյ նահանգներուն մէջ՝ Բոնէքթիքըդ, Մայն, Մասաչուսէդ, Նոր-Համշայր, Բոտ-Այլընտ և վէրմօնդ՝ հիմնուած են մեծագոյն մասը գործարաններ:

րու և ճարտարական հաստատութեանց: 1890 ին, այս վեց նահանգներուն տարազագործները գրած են գրամագլուխ մը իրը 24 երկիրիօն ֆրանքի և կը բանեցնեն 3,650,000 բանուոր, 253,852 ճարտարական հաստատութիւն:

Ժժ. դարուն սկիզբը Միաց. - նահանգները կ'արտադրէին 55 հազար թօնօ երկաթ, յայ և պողպատ, 40 տարի վերջ տասնապատկեցաւ այս թիւը, 1890 ին բարձրացաւ 14,600,000 թօնօյի: 1901 ին Բիէրրօնգ Մօրկան հռչակաւոր միլիտանտէր Ամերիկացին գնեց Պ. ֆարնէճի Ամերիկացիին պողպատի հսկայ գործարանը 80 միլիօն անգլ. ոսկւոյ և ուրիշ նմանօրինակ գործարաններ ընդամեն 230 միլիօն սթեռլինի, (6,650,000,000 ֆր.) և կազմեց աշխարհի ամենամեծ ընկերութիւնը, սրով պիտի տիրէ Պողպատի հրապարակին: Մինակ Պ. ֆարնէճի գործարանները կ'արտադրէին Անգլիոյ արտադրած ամբողջ պողպատին 75% ր: Հիմա Մօրկանի ընկերութիւնը Անգլիոյ արտադրածէն շատ աւելի պիտի շինէ և ինքը Ամերիկայի մէջ պողպատն ուղած գինով ծախելէ զատ, Ամերիկայէ դուրս ահագին մրցում պիտի ընէ Անգլիական, Գերմանական, Պելճիական, Ֆրանսական և ուրիշ պողպատներու դէմ: Ի. Բ. դարու ճարտարագործական ամենամեծ ընկերութիւնն է այս, որուն քով դաճածներ են Ժժ. դարու ընկերութիւնները (Բիւզանդիոն օրութերթ):

Քսաներեք նահանգներ այսօր կը բանին երկաթ, գլխաւորները հաստատուած են Ալլեկանի գաւառին մէջ, ուր առատութեամբ կը գտնուի այրելի նիւթ և հանածոյ, ասոնք են. Բենսիլվանիա, Օհիօ, Միսսուրի, Իլլինուա, Նոր-Եօրք. ֆէնգըքի և:

Ֆիլադելֆիա է Միաց. - նահանգաց մետաղագործական գլխաւոր քաղաքներէն մին, կը պարունակէ բազմաթիւ ձուլարաններ, մեծ նաւարաններ՝ նաւաշինութեան համար, անթիւ գործանոցներ՝ շէնքերէնսներու շինութեան,

որոցմէ ամենէն կարևորներն են, Պ. Պալատ իններու գործանոցները, ասոնք շարաթական կը յանձնեն 10-12 շարաշար (locomotive): Այլ և այլ գործարաններու մէջ կը շինուին Գալլի-Երիւթեղէնէր (quinquaille = խուրտաված) մեծաքանակ, Գոնակ, Խորոս, Խորոսքոթէ Գորթէնէր և:

Էրիէէն Ի Նոր-Եօրք. երկաթուղւոյ դիմին վրայ, Վալէ-Ֆորթ, նշանաւոր է իր բարձր հողներով, թրենթօն Գալլիոններով, Բէթլէհէճմ' որ ունի Միացեալին մետաղագործական հաստատութեանց առաջինները: Բիթսպուրի, Ճօնսթաուն, Քորնուայլ, Քլիվլէնա, նոյնպէս նշանաւոր են այս մասին: Այս արհեստը տակաւին կը տարածուի Զիքալիօ և դէպի արևմուտք:

1890 ին	Երկաթ	Չոյլ	Պողպատ
Միաց-նահանգներ	2,000,000 թ.	9,579,779 թ.	4,466,926 թ.
Անգլիա	2,290,000 »	8,456,000 »	3,570,000 »

Ամերիկայիք ճարտարամիտ հնարողներ են, առաջին անգամ անոնք գործածեցին մեքենականութիւնը՝ երկրագործութեան մէջ. իրենց արօրը, սերմնապարկը (semoire), հօսելին (vannoire), կասիլը, հնձողը և, միջազգային ցուցադրութեանց մէջ կարևոր տեղ կը կը գրաւեն: Առաջին անգամ Ամերիկայիք յղացան գաղափարը մեքենան գործածելու ժամագործութեան մէջ և հնարքը՝ կարի, աւեղնագործի, հիւսքի մեքենաներուն:

Նոր-Եօրքի մօտ՝ Ելիզապէթ՝ աշխարհի մէջ առաջին կեդրոնն է կարի մեքենաներու շինութեան, Զիքալիոյ մէջ՝ Բիւլմէն՝ երկաթուղիի նիւթերու համար:

Նոր-Անգլիոյ պետութեան մէջ ծնած ու յաջողած է բամբակի ճարտարարուեստը: Պօսթընի գրամատերերը շահագործելով Մէրիմաքի աղբիւրները, որ կուտան 12 հազար ձիու ոյժ, լուլլի և Մանչէսթըրի մէջ հիմնեցին բազմաթիւ գործարաններ, և ըրին այս կեդրոնը բամբակի ճարտարարուեստին առաջին կեդրոնը: Նոյն-

պէն մեծ կեդրոն մ'է Լորէնս-Մերիմաքի վրայ: Ուս-
չինկթընի և Խաղաղականի Մայրերը՝ ամբողջ աշխարհի
մէջ գտնուած բամբակի մանարաններուն առաջիններն
ունին: Մասաչուսէթի, Նոր-Եորքի և որիշներու գործա-
րանները անթիւ են: Միացեալք ունին 18,100,000 շամ-
բրակ բամբակի: Բրեյթօնի կողմանէ ալ Ամերիկա մեծ
յառաջգիւմութեան մէջ է, շնորհիւ իր անթիւ նրբամազ
ոչխարին: Լուվր և Ֆիլատելֆիա այս ճարտարարուեստին
առաջին կեդրոններն են:

Ֆիլատելֆիայ մասնագիտութիւնն է նաև գործարան-
ութիւնը: Մեքսիկոյն նոյնպէս բարձր զարգացման մէջ է,
նշանաւոր իր տոկոսնութեամբ և նրբութեամբ: Նոր-
Եորք և Նոր-Ճրրզի, ունին մետաքսեղինաց բազմաթիւ
գործարաններ:

Առաջնակարգ ճարտարութիւն մ'է «Minolerie»ն,
որ ունի ամենագոր և մեծաթիւ աղօրիքներ ջրաշարժ
կամ շոգեշարժ, ի Չիքակո, Նոր-Եորք՝ ազած մտի
պատրաստութեան համար: Չիքակոյի չորս գլխաւոր
տունները իրենց սառնարաններուն պաշար հայթայթելու
համար 1887ին մորթեցին 1,821,407 եզ, 282,148 խոզ,
742,723 ոչխար, իսկ 1889ին Չիքակոյի մէջ մորթուեցան
2,050,627 եզ, 3,203,951 խոզ: Չիքակո և Սինսինատի
մեծ կեդրոններ են կաշեգործութեան, կեդրոնական
երկիրներուն մէջ՝ շաւրէ, գարեջուրէ, ծխախոտի պատրաստու-
թեան և:

